



# Հավերժական ընտանիք

Ուսուցչի ձեռնարկ  
Կրոն 200

Հիմնական դասընթաց



# Հավերժական Ընտանիք ուսուցչի ձեռնարկ

Կրոն 200

Հրատարակված է  
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից  
Սուրբ Լեյք Սիթի, Յուտա

Դիտողություններն ու ուղղումները ողջունվում են: Խնդրում ենք ուղարկել դրանք՝ այդ թվում նաև սխալները, հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services  
50 E. North Temple St., Floor 8  
Salt Lake City, Utah 84150-0008  
USA

Email: ces-manuals@ldschurch.org

Խնդրում ենք նշել ձեր լրիվ անունը, հասցեն, ծուխը և ցիցը:

Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը: Այնուհետև նշեք ձեր դիտողությունները:

© 2015, 2016 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են  
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում  
Տարբերակ 2, 5/16

Անգլերենի հաստատումը. 8/14

Թարգմանության հաստատումը. 8/14

*The Eternal Family Teacher Manual*-ի թարգմանությունը  
Armenian  
12555 201

# Բովանդակություն

«Հավերժական ընտանիք» ուսուցչի ձեռնարկի (Կրոն 200) ներածությունը . . .	V
1 «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրի ստեղծումը . . . . .	1
2 Մարգարեները և Առաքյալները պաշտոնապես հայտարարում են . . .	7
3 Մեր աստվածային ներուժը . . . . .	13
4 Ընտանիքը և Երջանկության մեծ ծրագիրը . . . . .	19
5 Մահկանացու կյանքի պայմանները . . . . .	25
6 Ընտանիքն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում . . . . .	30
7 Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից . . . . .	35
8 Մեռը և հավերժական ինքնությունը . . . . .	41
9 Տղամարդկանց աստվածային դերերը և պարտականությունները . . .	47
10 Կանանց աստվածային դերերը և պարտականությունները . . . . .	54
11 Պատրաստվել հավերժական ամուսնության . . . . .	60
12 Տաճարային արարողություններ և ուխտեր . . . . .	65
13 Կատարելագործել տաճարային երկրպագությունը . . . . .	71
14 Դառնալ ազատիչներ Սիոն սարի վրա . . . . .	77
15 Հավերժական ամուսնություն . . . . .	83
16 Ծնունդ տալու սրբազան գործությունը . . . . .	89
17 Բազմանալու և երկիրը լցնելու պատվիրանը . . . . .	96
18 Ամրապնդել ամուսնական հարաբերությունները . . . . .	102
19 Կառուցել Քրիստոսակենտրոն կյանքեր և տներ . . . . .	107
20 Պահպանել հավատքը և վկայությունը . . . . .	113
21 Երեխաներին դաստիարակել սիրո և առաքինության մթնոլորտում . . . . .	118
22 Ստեղծել հաջողակ ընտանիք . . . . .	124
23 Ապահովել նյութական կարիքները . . . . .	130
24 Եկեղեցու միայնակ ամուրի անդամները . . . . .	136
25 Հավատք կիրառել ընտանեկան բարդ իրավիճակներում . . . . .	142
26 Հաշվետու լինել Աստծո առաջ . . . . .	148
27 Մարգարեական նախագուշացումներ ընտանիքի վերաբերյալ . . .	154
28 Աջակցել ընտանիքին որպես հասարակության հիմնական միավորի . . . . .	159



# Ներածություն Հավերժական ընտանիք ուսուցչի ձեռնարկ (Կրոն 200)

## Ի՞նչ է ակնկալվում կրոնի ուսուցչից:

Ուսուցմանը պատրաստվելիս կարևոր է հասկանալ Մեմֆիսարիայի և Կրոնի ինստիտուտի նպատակը.

«Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը, ապավինել դրանց, արժանի լինել տաճարային օրհնություններին, նախապատրաստվել և նախապատրաստել իրենց ընտանիքներին և մյուսներին՝ իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին» (*Gospel Teaching and Learning: A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion* [2012], x):

Ջանասիրաբար ապրելով ավետարանով, ձեր ուսանողներին ավետարանն արդյունավետ ուսուցանելով և պատշաճ կերպով դասը կամ ծրագիրը մատուցելով դուք կարող եք հասնել այդ նպատակին: Երբ դուք պատրաստվեք և ուսուցանեք ավետարանը, դուք կարժանանաք Սուրբ Հոգու ներգործությանը (տես ՎեՌ 42.14):

Դուք հնարավորություն կունենաք օգնելու ուսանողներին սովորել Հոգով, որպեսզի նրանք կարողանան ամրացնել իրենց հավատքն ու խորացնել իրենց դարձը: Կարող եք օգնել ուսանողներին ձեռք բերել այդ ամենը՝ օգնելով նրանց բացահայտել, հասկանալ, զգալ ճշմարտությունը և դրա կարևորությունը, և կիրառել Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևոր վարդապետություններն ու սկզբունքները:

Ավետարանի ուսուցում և ուսանում ձեռնարկը կարևոր աղբյուր է ուսուցման գործընթացը հասկանալու և հաջողությամբ դասավանդելու համար:

## Որո՞նք են այս դասընթացի նպատակները:

Այս դասընթացը՝ «Հավերժական Ընտանիք» (Կրոն 200) ձեռնարկը, ուսումնասիրում է ընտանիքի հիմնական դերը փրկության ծրագրում, ինչպես ուսուցանված է սուրբ գրություններում և մեր ժամանակների մարգարեների խոսքերում: Դասընթացի վարդապետությունները, թեմաները և սկզբունքները հիմնականում վերցված են «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրից (*Ensign or Liahon*, նոյ. 2010, 129): Դասընթացի ժամանակ կուսումնասիրվեն, կքննարկվեն և կզննատվեն ամուսնության և ընտանիքի վերաբերյալ հարցեր և խնդիրներ՝ ըստ Հիսուս Քրիստոսի ավետարանի համատեքստի:



Այս դասընթացը կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ ուխտեր կապելու և օրհնություններ ստանալու միջև եղած կապն այս կյանքում և գալիք աշխարհում: Կներկայացվեն և կքննարկվեն ամուսնությանը և ընտանիքին առնչվող վարդապետություն և սկզբունքներ, որպեսզի ուսանողները հասկանան, թե ինչպես են դրանք վերաբերում այսօրվա պայմաններին: Ուսանողներն ավելի լավ կհասկանան, թե ինչու նրանք կարող են վստահել և հետևել մեր օրերի մարգարեների ուսմունքներին:

### **Ի՞նչ է ակնկալվում ուսանողներից:**

Ինստիտուտի ավարտական վկայական ստանալու համար ուսանողները պետք է կարդան յուրաքանչյուր դասի սուրբ գրությունների հատվածները, գերագույն համաժողովի ելույթները և Ուսանողի ընթերցարան բաժնում տրված այլ նյութերը: Ուսանողները պետք է նաև բավարարեն հաճախելիության պահանջները և քննություն հանձնելիս բանիմացություն ցուցաբերեն ուսումնական նյութի վերաբերյալ:

### **Ինչպե՞ս են դասերը կառուցված այս ձեռնարկում:**

Այս դասընթացը նախատեսված է մեկ կիսամյակի համար, և բաղկացած է 28 դասից՝ գրված 50-րոպեանոց դասաժամերի համար: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը երկու անգամ, յուրաքանչյուր դասաժամին ուսուցանեք մեկ դաս: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը մեկ անգամ 90-100 րոպեով, յուրաքանչյուր դասաժամի համար միացրեք և ուսուցանեք երկու դաս: Յուրաքանչյուր դասը բաղկացած է չորս բաժնից.

- Ներածություն
- Ընթերցանության օժանդակ նյութեր
- Ուսուցանման առաջարկներ
- Ուսանողի ընթերցարան

### **Ներածություն**

Այս բաժինը հակիրճ ներկայացնում է դասի թեման և նպատակը:

### **Ընթերցանության օժանդակ նյութեր**

Այս բաժինը առաջարկում է օժանդակ նյութեր, օրինակ՝ մեր օրերի մարգարեների և Եկեղեցու այլ ղեկավարների ուղերձներ, որոնք կօգնեն ձեզ ավելի խորը հասկանալ դասի ծրագրում ընդգրկված վարդապետությունները, սկզբունքները և ավետարանի ճշմարտությունները:

### **Ուսուցման առաջարկներ**

Ուսուցման առաջարկներ բաժնում տրված են նյութեր, որոնք կօգնեն ձեզ իմանալ՝ *ինչ* ուսուցանել և *ինչպես* ուսուցանել (տես բաժիններ՝ 4.3.3 և 4.3.4, *Ավետարանի ուսուցում և ուսանում* ձեռնարկում): Առաջարկվող ուսումնական վարժությունները նախատեսված են օգնելու ուսանողներին բացահայտել հասկանալ և կիրառել սրբազան ճշմարտությունները: Կարող եք



օգտագործել որոշ կամ բոլոր առաջարկությունները՝ դրանք համապատասխանեցնելով ուսուցման ձեր անհատական ոճին և բավարարելով ձեր ուսանողների կարիքներն ու պայմանները: Ուսումնական նյութերը հարմարեցնելու համար հետևեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խորհրդին:



«Նախագահ Փաքերը հաճախ է իմ ներկայությամբ ուսուցանել, որ նախ մենք ընդունում ենք, ապա հարմարեցնում: Եթե մենք խորապես ուսումնասիրում ենք տվյալ դասը, որը պետք է մատուցենք, ուրեմն կարող ենք հետևել Հոգուն այն հարմարեցնելու համար: Երբ մենք խոսում ենք այս ճկունության մասին, երբեմն գալթակոչվում ենք սկսել հարմարեցնելուց և ոչ թե ընդունելուց: Սա հավասարակշռություն է: Սա մշտական խնդիր է: Սակայն նախ ընդունելու և ապա հարմարեցնելու մոտեցումը լավ եղանակ է ամուր հիմքի վրա կանգնելու համար» («A Panel Discussion with Elder Dallin H. Oaks» [Seminaries and Institutes of Religion Satellite Broadcast, Aug. 7, 2012]; si.lds.org):

Այս դասընթացը ներառում է Եկեղեցու ղեկավարների ելույթներ, որոնք հավանաբար մատչելի են բազմաթիվ լեզուներով: Ուսուցմանը պատրաստվելիս դուք կարող եք հարմարեցնել դասերը, օգտագործելով Եկեղեցու ղեկավարների այլ մատչելի ելույթներ, որոնք համապատասխանում են դասի թեմային:

Յուրաքանչյուր դասի ուսուցման առաջարկներ մասը պարունակում է թավ տառերով տպված ամնվագն մեկ վարդապետություն կամ սկզբունք պարունակող նախադասություն: Երբ ուսանողները բացահայտեն վարդապետություններն ու սկզբունքները և կիսվեն իրենց սովորածով, նրանց խոսքը միգուցե տարբերվի ձեռնարկում տրված ձևակերպումից: Նման դեպքերում, ուշադիր եղեք, որ նրանց պատասխանները սխալ չհամարեք: Սակայն, եթե արտահայտված միտքը կարող էր ավելի ճշգրիտ լինել, զգուշորեն օգնեք պարզաբանել այն:

Այս ուսումնական ծրագիրը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ավետարանն ուսուցանելու և ուսանելու հիմունքները ներառել թեմատիկ դասընթացի մեջ (տես *Gospel Teaching and Learning*, 10, 23–31, 38–41): Առաջիկա ամիսներին Սեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները կիրատարակեն մի փաստաթուղթ, որը կոչվում է «Թեմատիկ ուսուցումը կրոնի ինստիտուտներում», որտեղ բացատրություններ կտրվեն այն մասին, թե ինչպես ներառել ավետարանն ուսուցանելու և ուսանելու հիմունքները թեմատիկ դասընթացի մեջ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը նկարագրել է ավետարանը թեմաներով ուսումնասիրելու առավելություններից մի քանիսը:



«Մինչ սուրբ գրությունները սկզբից մինչև վերջ կարդալը տալիս է հիմնական ընդհանուր գիտելիքներ, թեմատիկ ուսումնասիրությունը մեծացնում է մեր գիտելիքների խորությունը: Հայտնությունների մեջ կապեր, օրինաչափություններ և թեմաներ փնտրելը ամրապնդում և ավելացնում է մեր հոգևոր գիտելիքը ..., այն մեծացնում է մեր հեռանկարը և փրկության ծրագրի մեր հասկացողությունը:

Իմ կարծիքով կապեր, օրինաչափություններ և թեմաներ գտնելու համար ջանասիրաբար ուսումնասիրելը մի մասն է այն գործընթացի, որն անվանում ենք «սևվել»՝ Քրիստոսի խոսքերով: Այս մոտեցումը կարող է հոգևոր օրհնության մեծ դռներ բացել մեզ համար, Նրա հոգու միջոցով լուսավորել մեր հասկացողությունը, սուրբ գրությունների հակդեպ խորը երախտագիտություն առաջ բերել և հոգևոր պարտավորվածության այնպիսի աստիճան զարգացնել, որ հնարավոր չէ ձեռք բերել մեկ այլ միջոցով: Նման որոնումը մեզ հնարավորություն է տալիս կառուցել մեր Քավիչի վեմի վրա և դիմակայել ամբարշտության քամիների այս վերջին օրերում» («A Reservoir of Living Water» [Brigham Young University fireside, Feb. 4, 2007], 3, speeches.byu.edu):

### Ուսանողի ընթերցանության նյութեր

Այս բաժնում թվարկվում են սուրբ գրությունների հատվածներ, Եկեղեցու դեկավարների ելույթներ և այլ նյութեր, որոնք կխորացնեն տվյալ դասի թեմայի վերաբերյալ ուսանողի հասկացողությունը: Հանձնարարեք և խրախուսեք ուսանողներին ընթերցել այդ նյութերը նախքան դասին ներկայանալը: Այդ ոգեշնչված նյութերն ուսումնասիրելով նրանք ոչ միայն ավելի լավ կնախապատրաստվեն դասարանային քննարկումներին, այլև ավելի լայն և խորը պատկերացում կկազմեն դասընթացի թեմաների վերաբերյալ: Կիսամյակի սկզբում ուսանողներին տվեք Ուսանողի ընթերցարանի ողջ ցուցակը:

### Ինչպե՞ս կարող եմ նախապատրաստվել ուսուցանելուն:

Ուսուցանելուն նախապատրաստվելիս Տերը կօգնի ձեզ: Պատրաստվելու ժամանակ օգտակար կլինի հետևյալ հարցերը տաք ինքներդ ձեզ.

- Արդյո՞ք ես ձգտում եմ ապրել ավետարանով, որպեսզի ընկալունակ լինեմ Հոգուն իմ նախապատրաստությունների և ուսուցման ընթացքում:
- Աղոթե՞լ եմ Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանալու համար:
- Արդյո՞ք ուսումնասիրե՞լ եմ հանձնարարված սուրբ գրությունների հատվածները և ընթերցանության օժանդակ նյութերը:
- Կարդացե՞լ եմ ծրագիրը և պարզել, թե արդյո՞ք կան բաներ, որոնք պետք է հարմարեցնեմ կամ համապատասխանեցնեմ իմ ուսանողների կարիքներին:
- Ինչպե՞ս կարող եմ հետևել ուսանողներին հանձնարարված ընթերցումներին՝ հավաստիանալով, որ ուսանողներն առավելագույնն են քաղում դրանից:

- Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ ուսանողներից յուրաքանչյուրին լիարժեք մասնակցություն ունենալ դասին:

Հետևյալ առաջարկները նույնպես կարող են օգտակար լինել.

- Խրախուսեք ուսանողներին յուրաքանչյուր դասից առաջ կարդալ հանձնարարված սուրբ գրությունների հատվածները և հոդվածները:
- Համոզմունք հայտնեք, որ ուսանողները կկատարեն որպես սովորողներ իրենց դերը:
- Ուսանողներին հաճախակի հնարավորություն տվեք իրենց խոսքերով բացատրել վարդապետությունները և սկզբունքները, կիսվել համապատասխան փորձով և վկայել այն մասին, ինչ գիտեն և զգում են:
- Փոփոխեք ուսումնական վարժությունները և մոտեցումները յուրաքանչյուր դասի համար, ինչպես նաև մնացած օրերի համար:
- Ստեղծեք ուսանելու մթնոլորտ, որը կհրավիրի Հոգին և որտեղ ուսանողները միմյանց սովորեցնելու և իրարից սովորելու հնարավորություն և պատասխանատվություն կունենան (տես Վևու 88.78, 122):
- Դասընթացի ընթացքում դուք կգտնեք սուրբ գրությունների ուսումնասիրության որոշ հմտությունների հղումներ: Օգտվեք այս հնարավորություններից՝ օգնելու համար ուսանողներին դառնալ ավելի ինքնավստահ սուրբ գրությունների իրենց ուսումնասիրությունում և ավելի նվիրված՝ ողջ կյանքում սուրբ գրություններից սովորելուն:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է.



«Հավաստիացեք, որ կա բավարար մասնակցություն, որովհետև ուսանողի կողմից կիրառվող ազատ կամքը թույլ է տալիս, որ Սուրբ Հոգին ուսուցանի: Երբ ուսանողները կիսվում են ճշմարտություններով, այդ ճշմարտությունները հաստատվում են նրանց հոգում և ամրապնդում նրանց վկայությունը» ( "To Understand and Live Truth" [evening with Elder Richard G. Scott, Feb. 4, 2005], 3, si.lds.org):

## Ինչպե՞ս կարող եմ հարմարեցնել դասերը հաշմանդամ ուսանողների համար:

Ուսուցմանը պատրաստվելիս հաշվի առեք հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին: Հարմարեցրեք վարժությունները և սպասելիքները, որպեսզի օգնեք նրանց հաջողության հասնել: Փնտրեք ուղիներ, որպեսզի օգնեք նրանց զգալ սիրված, ընդունված և ներառված: Խրախուսեք վստահություն ձեռք բերել:

Լրացուցիչ մտքերի և աղբյուրների համար օգտվեք [disabilities.lds.org](http://disabilities.lds.org) կայքի Հաշմանդամության ռեսուրսներ էջից և Մեմֆիսի հանրային և Կրոնի

Ինստիտուտների քաղաքականության ձեռնարկի «Հարմարեցված դասեր  
և ծրագրեր հաշմանդամ ուսանողների համար» բաժնից:

## ԴԱՍ 1

# «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրի ստեղծումը

### Նախաբան

1995 թվականի սեպտեմբերին Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը Եկեղեցուն և աշխարհին հղեցին մի հռչակագիր, որը կրում էր «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» վերնագիրը (*Ensign or Liahona*, նոյ. 2010, 129): Այս մարգարեական հռչակագիրն ուսուցանում է Աստծո

հավերժական ծրագրում ընտանիքի աստվածային դերի մասին: Այս դասը կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչու են վերջին օրերի մարգարեները, տեսանողները և հայտնողները հրապարակել այս ոգեշնչված փաստաթուղթը:

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129:
- M. Russell Ballard, “What Matters Most Is What Lasts Longest,” *Ensign or Liahona*, Nov. 2005, 41–44.

### Ուսուցման առաջարկներ

#### Մոսիա 8.15–17, Մովսես 6.26–27, 31–36, 7.16–21

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրը գրվել է տեսանողների կողմից

Ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Մովսես 6.26-27 հատվածները և հրավիրեք դասարանին հետևել նրան՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ ասաց Տերը մարդկանց սրտերի, ականջների և աչքերի մասին:

- Տերն ինչպե՞ս նկարագրեց մարդկանց ամբարշտությունը:
- Ի՞նչ է նշանակում, երբ մարդկանց «սիրտը կարծրացած է, և նրանց ականջները ծանրացած են, որ լսեն, և նրանց աչքերը հեռուն չեն տեսնում»:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 6.31-34:


- Եթե դուք լինեիք Ենովքի փոխարեն, ի՞նչը դուք հուսադրող կգտնեիք Տիրոջ խոսքերում:

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում այն մասին, թե ինչպե՞ս է Տերը գորացնում Իր մարգարեներին:

Ուսանողներին տվեք մի քանի բույս, որ կարդան Մովսես 6.35-36-ը:

- Ի՞նչ կարողացավ տեսնել Ենովսը, երբ լվացավ իր աչքերի կավը:
- Ի՞նչ կարող է ներկայացնել կավը: (Կավը կարող է լինել ունայնության խորհրդանիշը: Խնդրեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ նրանք կկարողանան տեսնել, եթե աշխարհիկ բաները լվացվեն նրանց աչքերից:)
- Ինչպե՞ս է 36-րդ հատվածն օգնում սահմանել, թե ինչ է նշանակում տեսանող: (Պատասխանները պետք է ներառեն հետևյալ ճշմարտությունը. **Տեսանողը կարող է տեսնել բաներ, որոնք տեսանելի չեն սովորական աչքերի համար:** Կարող եք առաջարկել, որ ուսանողները հատված 36-ը համեմատեն Մոսիա 8.15-17 հատվածների հետ:)

Տեսանողի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հաղորդելու համար ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջոն Ա. Վիթսոուի (1872-1952) հետևյալ խոսքերը, և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Տեսանողը նա է, ով տեսնում է հոգևոր աչքերով: Նա ըմբռնում է այն բաների իմաստը, որոնք անհասկանալի են ուրիշների համար. հետևաբար, նա հավերժական ճշմարտության մեկնաբան և պարզաբանող է: ... Նա այն մարդն է, ով տեսնում է, քայլում է Տիրոջ լույսի մեջ բաց աչքերով [տես Մոսիա 8.15–17]» (*Evidences and Reconciliations*, arr. G. Homer Durham [1960], 258):

Կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս սահմանումներից մի քանիսը իրենց սուրբ գրություններում՝ Մոսիա 6.35-36-ի կողքին: Բացատրեք, որ տեսանողները նաև մարգարեներ են:

Ամփոփեք Մոսիա 7.16-21 հատվածները, որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչ պատահեց նրանց հետ, ովքեր ընդունեցին Ենովսին որպես տեսանող և հետևեցին նրա խոսքերին:

- Ինչպե՞ս են այս հատվածները լուսաբանում ժամանակակից մարգարեների և տեսանողների խոսքերին ականջ դնելու կարևորությունը: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ վարդապետությունը. **Մարգարեներն օգնում են մեզ տեսնել բաներն Աստծո տեսանկյունից, և մենք օրհնված ենք, երբ վստահում ենք նրանց խոսքերին:**)

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ս. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը.



«Եղբայրներ և քույրեր, այս տարի լրանում է աշխարհին ուղղված ընտանիքների վերաբերյալ հռչակագրի 10-րդ տարեդարձը, որը հրապարակվել էր Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից 1995 թվականին (տես «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129): Այդ ժամանակ և այժմ էլ այն հանդիսանում է փողի ձայն՝ պաշտպանելու և ամրացնելու

ընտանիքները: ...

Հռչակագիրը մարգարեական փաստաթուղթ է, ոչ միայն այն պատճառով, որ այն հրապարակվել էր մարգարեների կողմից, այլ, որ այն տրվել էր նաև ապագայի համար: Այն նախագգուշացնում է բազմաթիվ բաների մասին, որոնք սպառնացել և վնասել են ընտանիքներին վերջին տասնամյակի ընթացքում և կոչ է անում առաջնահերթություն և կարևորություն տալ ընտանիքներին, եթե դրանք ցանկանում են փրկվել մի միջավայրում, որը թվում է նույնիսկ ավելի թունավոր վերաբերմունք ունի ավանդական ամուսնության և ծնող-երեխա հարաբերությունների հանդեպ:

Հայտարարության պարզ ու հասարակ լեզուն բացարձակ հակադրության մեջ է գտնվում հասարակության խճճված ու անհասկանալի կարծիքի հետ, որը չի կարողանում նույնիսկ ընդհանուր համաձայնության գալ ընտանիքի վերաբերյալ սահմանման հարցում» (*“What Matters Most Is What Lasts Longest,” Ensign or Liahona, Nov. 2005, 41*):

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ունեն էր Երեց Բալլարդը, երբ ասում էր, որ ընտանիքի վերաբերյալ հայտարարությունը «տրվել էր նաև ապագայի համար»:
- Ընտանիքի մասին հայտարարությունն ինչպե՞ս է հաստատում ձեր համոզմունքը, որ Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հանդիսանում են մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Վկայեք, որ քանի որ Երկնային Հայրը սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք նմանվենք Իրեն, Նա ուղարկում է մեզ մարգարեներ և տեսանողներ:

### Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին

#### Ընտանիքի մասին հայտարարության ստեղծումը

Համոզվեք, որ յուրաքանչյուր ուսանող կարող է ձեռք բերել «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրի օրինակը ([lds.org/topics/family-proclamation](https://www.lds.org/topics/family-proclamation)): (Դուք կարող եք տպված օրինակ ապահովել այն ուսանողների համար, ում դա անհրաժեշտ է:) Խրախուսեք ուսանողներին ողջ դասընթացի ընթացքում յուրաքանչյուր դասին բերել ընտանիքի մասին հայտարարության տպված կամ թվայնացված օրինակը: Բացատրեք, որ «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրն առաջին անգամ ներկայացվեց Եկեղեցուն Մարգարե Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) կողմից՝ 1995 թվականի սեպտեմբերի 23-ին Մփոփող Միության գերագույն ժողովի ժամանակ:

- Ի՞նչ է մեզ հուշում վերնագիրը այս հայտարարության նախատեսված լսարանի մասին:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է այս հայտարարությունը հրապարակվել ողջ աշխարհի համար, այլ ոչ միայն Եկեղեցու անդամների համար:



(Ուսանողների պատասխաններից հետո, գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Աստված կանչում է մարգարեներին՝ հայտարարելու Իր ճշմարտությունները Իր բոլոր զավակներին:**)

Բացատրեք, որ Եկեղեցու կազմավորման օրվանից Եկեղեցու ղեկավարները հրապարակել են ընդամենը հինգ հայտարարություններ: Մեկը հրապարակվել է Առաջին Նախագահության կողմից, մեկը՝ Տասներկուսի Քվորումի կողմից, իսկ մյուսները՝ Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի կողմից: Հռչակագրերը պահպանվել են որպես մեծ կարևորություն ունեցող հայտարարություններ: (Եթե ուսանողները հարցնեն այս հինգ հայտարարությունների մասին, նրանց ուշադրությունը հրավիրեք *Մորմոնիզմի հանրագիտարանի* վրա, 5-րդ հատոր [1992], «Առաջին Նախագահության և Տասներկուսի Առաքյալների Քվորումի հայտարարությունները», 3.1151, eom.byu.edu:)


Ասեք ուսանողներին, որ նախքան ընտանիքի վերաբերյալ հայտարարությունը կարդալը, Նախագահ Հինքլին բացատրեց որոշ պատճառներ, թե ինչու Եկեղեցու ղեկավարները ոգեշնչում ստացան հրատարակելու այս կարևոր փաստաթուղթը: Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերը և հրավիրեք մի ուսանողի կարդալ այն.



«Կարիք չկա հիշեցնելու ձեզ, որ աշխարհը, որում մենք ապրում ենք, աղմկոտ և փոփոխվող արժեքների աշխարհ է: Տիան ձայները տարբեր բաներ են աղաղակում ժամանակի ընթացքում փորձված վարքագծի չափանիշներին հակառակ: Մեր հասարակության բարոյական խարխիսները մեծ ցնցումների են ենթարկվել» ("Stand Strong against the Wiles of the World," *Ensign*, Nov. 1995, 99):

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ունենալով Նախագահ Հինքլին, երբ ասում էր, որ «մեր հասարակության բարոյական խարխիսները մեծ ցնցումների են ենթարկվել»: (Կարող եք նշել, որ խարխիսները ճոպաններ կամ օղակներ են, որոնք առարկան պահում են տեղում:)
- Ինչպե՞ս դուք կնկարագրեք այն, թե ինչ է պատահել հասարակության «բարոյական խարխիսների» հետ սկսած 1995 թվականից, երբ Նախագահ Հինքլին խոսեց բարոյական լուրջ շեղումների մասին:

Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ելույթի հետևյալ պարբերությունը: Ուսանողներին ժամանակ տվեք այն կարդալու և բառեր ու արտահայտություններ նշելու համար, որոնք շարունակում են բացատրել խնդիրները, որ Եկեղեցու ղեկավարները տեսնում էին աշխարհում, և այս հայտարարությունը հրապարակելու պատճառները:



«Մեծ ծավալով մոլորեցնող փաստարկների հետ մեկտեղ, որոնք մատուցվում են որպես ճշմարտություն, չափանիշների և արժեքների վերաբերյալ խաբեության, աշխարհի խավար կողմը բռնելու գրավչության և գայթակղության պայմաններում, մենք անհրաժեշտ ենք համարել զգուշացնել և նախազգուշացնել Ձեզ: Այս առիթով մենք՝ Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը այսօր հրապարակում ենք հայտարարություն՝ ուղղված Եկեղեցուն և աշխարհին որպես հռչակագիր և վերահաստատում ընտանիքին վերաբերող չափանիշները, վարդապետությունները և սովորույթները, որոնք պատմության ընթացքում շարունակ սահմանվել են մարգարեների, տեսանողների և հայտնողների կողմից» ("Stand Strong against the Wiles of the World," 100):

Երբ ուսանողները կիսվեն իրենց գտած նյութով, գրատախտակին գրեք հետևյալ պատասխանները: Հնարավոր է գրատախտակն այսպիսի տեսք ունենա.

**Ի՞նչ խնդիրներ են տեսել Եկեղեցու ղեկավարներն աշխարհում:**

*Որպես ճշմարտություն տարածված մոլորություններ*

*Չափանիշների և արժեքների վերաբերյալ խաբեություն*

*Գրավչության և գայթակղության նմանվող աշխարհ*

**Որո՞նք են այն պատճառները, որոնց համար Եկեղեցու ղեկավարները հրապարակեցին այս հայտարարությունը:**

*Զգուշացնելու և նախազգուշացնելու համար*

*Հայտարարելու և հաստատելու չափանիշները, վարդապետությունները և սկզբունքները, որոնք ուսուցանվել են Եկեղեցու ներկայիս և նախկին ղեկավարների կողմից*

- Ի՞նչ է «մոլորությունը»: (Մոլորությունը սխալ դատողություն է, որը ներկայացվել է որպես ճշմարտություն:) Ինչպե՞ս էք նկատել, որ ընտանիքին վերաբերող սխալ գաղափարներն ուսուցանվել են որպես ճշմարտություն: (Դուք կարող եք անդրադառնալ ՎեՌ 89.4-ին որպես մոլորության օրինակ:)
- Նախագահ Հինքլիի ելույթից, ի՞նչ կարող ենք սովորել վերջին օրերի մարգարեների և առաքյալների պարտականությունների մասին: (Ուսանողների պատասխանները պետք է ներառեն հետևյալ ճշմարտությունը. **Մարգարեներն ունեն սրբազան պարտավորություն՝ հայտարարելու Տիրոջ «այն չափանիշները, վարդապետությունները և սովորությունները, որոնք վերաբերվում են ընտանիքին»:**)

Հանձնարարեք ուսանողներին մի քանի ընտանիքի մասին հայտարարությունն աչքի անցկացնելու համար և բացահայտել որոշ պատասխաններ, որոնք այն տալիս է ընտանիքի վերաբերյալ մեր ժամանակներում առաջ եկած հարցերին: Բավարար ժամանակ

հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտած նյութով: Քանի որ այլ դասերի ժամանակ քննարկվելու են հայտարարության մանրամասները, շատ ժամանակ մի տրամադրեք այս վարժությանը:

Վկայեք հետևյալ ճշմարտությունների մասին. Ընտանիքի մասին հայտարարությունը լի է հասարակության խնդիրների վերաբերյալ ոգեշնչված պատասխաններով: Փոփոխվող արժեքների աշխարհում հայտարարությունը ամուր խարիսխ է հանդիսանում անհատների և ընտանիքների համար:

Բացատրեք, որ ընտանիքի մասին հայտարարությունը կարդալուց հետո Նախագահ Հինքլին հայտարարել է.



«Մենք բոլորին պատվիրում ենք ուշադիր կարդալ, խորհել և աղոթել այս հայտարարության մասին: Ցանկացած ազգի ուժը գտնվում է դրա տների պատերի մեջ: Մենք հորդորում ենք մեր ժողովրդին ամենուրեք ամրացնել իրենց տները՝ համաձայն դարերով սրբազործված այս արժեքների» (“Stand Strong against the Wiles of the World,” *Ensign*, Nov. 1995, 101):

- Ձեզ համար ի՞նչ է նշանակում աղոթքով կարդալ ընտանիքի մասին հայտարարությունը:
- Ընտանիքի մասին հայտարարության մեջ գտնվող սկզբունքներն ինչպե՞ս են ազդել ամուսնության և ընտանիքի մասին ձեր զգացողությունների վրա:

Օգնեք ուսանողներին որոշել և կիսվել, թե ինչպես կարող են կիրառել Նախագահ Հինքլիի հորդորը՝ սովորելու և կիրառելու ընտանիքի մասին հայտարարության մեջ գտնվող վարդապետությունները և սկզբունքները (օրինակ՝ անգիր սովորել հայտարարության մի քանի մասերը): Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին և հրավիրեք նրանց աղոթքով խորհել, թե ինչպես կարող են ամրացնել իրենք իրենց և իրենց ընտանիքները՝ կիրառելով «դարերով սրբազործված այս արժեքները»:

### Ուսանողի ընթերցարան

- Եփեսացիս Դ.11–14, Մոսիա 8.15–17, Մովսես 6.26–39, 7.16–21:
- «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129, [lds.org/topics/family-proclamation](http://lds.org/topics/family-proclamation):
- M. Russell Ballard, “What Matters Most Is What Lasts Longest,” *Ensign* or *Liahona*, Nov. 2005, 41–44.

## ԴԱՍ 2

# Մարգարեները և Առաքյալները պաշտոնապես հայտարարում են

### Նախաբան

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրը սկսվում է այս խոսքերով. «Մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք ...» (Ensign կամ *Liahona*, նոյ. 2010, 129): Մարգարեները

յուրաքանչյուր տնտեսությունում պարտավորություն ունեն հայտարարելու Տիրոջ կամքը և նախագգուշացնելու մեղքի հետևանքների մասին: Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ մարգարեների դերը որպես պահապաններ, ովքեր զգուշացնում են մեզ նախատեսվող աղետների մասին:

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- Մ. Ռասսել Բալլարդ, «Մ նացեք նավակի մեջ և ամուր բռնած պահեք» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 89-92:
- Henry B. Eyring, “Finding Safety in Counsel,” *Ensign*, May 1997, 24–26.
- Քերոլ Ֆ. Մակքոնկի, «Ապրենք մարգարենների խոսքերին համաձայն», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 77–79:

### Ուսուցման առաջարկներ

#### Եզնկիել 14.1–7, Վարդապետություն և Ուխտեր 1.4–5, 11, 14

#### Աշտարակի պահապանները



Ուսանողներին ցույց տվեք աշտարակի մի նկար և հարցրեք, թե արդյոք նրանք կճանաչեն պատկերված կառույցը: Բացատրեք, որ այդ կառույցը հնադարյան աշտարակի կրկնօրինակ է: (Ռոպես այլընտրանք կարող եք ցուցադրել «Աշտարակի պահապանը» [lds.org/media-library](https://www.lds.org/media-library) տեսագրության



առաջին բույսեր, եթե այն մատչելի է ձեր լեզվով:) Հարցրեք ուսանողներին, թե ինչպիսի բաների պետք է հետևի պահապանը և ինչու է կարևոր, որ նրանք կատարեն իրենց պարտականությունները:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Եզեկիել ԼԳ.1-3 հատվածները և բացահայտել պահապանի պարտականությունը:

- Ո՞րն է պահապանի պարտականությունը: (Նախագգուշացնել մարդկանց մոտեցող վտանգի մասին:)

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Եզեկիել ԼԳ.4-7 հատվածները:

- Ի՞նչ պարտականություն տվեց Տերը Եզեկիելին:
- Ինչպե՞ս են մարգարեները նման աշտարակի պահապանին: (Ուսանողների համար օգտակար կլինի կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.4-5, 11, 14 հատվածները, որը կօգնի նրանց հասկանալ, որ ժամանակակից մարգարեները ծառայում են որպես պահապաններ: Կարող եք առաջարկել, որ ուսանողները համեմատեն այս հատվածները Եզեկիել ԼԳ.4-7 հատվածների հետ: Նշեք, որ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ս. Ռասսել Բալլարդը հայտարարել է. «Որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալներ, մեր պարտավորությունն է լինել աշտարակի պահապանները» [“Beware of False Prophets and False Teachers,” *Ensign*, Nov. 1999, 62]:)

**Վկայեք հետևյալ վարդապետության մասին. Երկնային Հայրը կանչել է վերջին օրերի մարգարեներին նախագգուշացնելու մոտեցող վտանգների մասին:**

Այս վարդապետությունն ամրացնելու համար ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այն.



«Կարծես անսահման է մեզ՝ դեպի ապահովություն առաջնորդելու Փրկչի ցանկությունը: Եվ մեզ ուղիս ցույց տալիս՝ Նա անփոփոխ է գործում: Նա մեկից ավելի միջոցներ է կիրառում, որպեսզի իր խոսքը հասցնի նրանց, ովքեր ցանկանում են ընդունել այն: Իսկ այդ միջոցներից է հանդիսանում Իր մարգարեների բերանով ուղերձ ուղարկելը, երբ մարդիկ արժանանում են իրենց մեջ Աստծո մարգարեներ ունենալուն: Այդ լիազորված ծառաները միշտ պարտավոր են մարդկանց զգուշացնել՝ նրանց ցույց տալով դեպի ապահովություն տանող ուղին» (“Finding Safety in Counsel,” *Ensign*, May 1997, 24):

- Ե՞րբ եք դուք պաշտպանված զգացել հետևելով մարգարեական խորհրդի:
- Ի՞նչ խորհուրդ եք դուք լսել մեր օրերի առաքյալներից և մարգարեներից, որը կարող է հոգևոր պաշտպանություն բերել ընտանիքներին:
- Ի՞նչ եղանակներով է ընտանիքի մասին հայտարարությունը մեր Երկնային Հոր կողմից նախագգուշացնող ձայն հանդիսանում:

**Ամուլս 3.6-7**

*Մարգարեները և առաքյալներն օգնում են մեզ հասկանալ ընտանիքին վերաբերող Տիրոջ հեռանկարները*

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը. Խնդրեք ուսանողներին փնտրել ուղիները, որոնցով մարգարեները տեղեկանում են այսօրվա աշխարհի վտանգների մասին:



«Ես լսել եմ, որ որոշ մարդիկ կարծում են, որ Եկեղեցու ղեկավարներն ապրում են «վերացական աշխարհում»: Նրանք մոռանում են մի բան, որ մենք փորձառու տղամարդիկ և կանայք ենք, և մենք ապրել ենք մեր կյանքն այնքան շատ վայրերում և աշխատել տարբեր ծագում ունեցող այնքան շատ մարդկանց հետ: Մեր ներկա հանձնարարությունները տառացիորեն տանում են մեզ ողջ երկրագնդով մեկ, որտեղ մենք հանդիպում ենք աշխարհի քաղաքական, կրոնական, գործարար և մարդասիրական ոլորտի ղեկավարների հետ: Չնայած մենք այցելել ենք Սպիտակ տան ղեկավարներին Վաշինգտոնում, և ազգերի ու կրոնների ղեկավարներին ողջ աշխարհում, մենք այցելել ենք նաև երկրագնդի համեստագույն ընտանիքներին և մարդկանց: ...

Երբ դուք ուշադիր մտածեք մեր կյանքի և ծառայության մասին, դուք ամենայն հավանականությամբ կհամաձայնվեք, որ մենք տեսնում ենք և զգում աշխարհը այնպիսի ուղիներով, որ շատ քչերն են կարողանում: Դուք կհասկանաք, որ մենք ավելի քիչ ենք ապրում «վերացական աշխարհում», քան մարդկանց մեծ մասը: ...

... Կա մի բան Եկեղեցու ղեկավարների անձնական և միասնական իմաստության մեջ, որը պետք է տա որոշ մխիթարություն: Մենք տարել ենք այդ բոլորը, ներառյալ հասարակական օրենքների և քաղաքականության տարբերության հետևանքները, հիասթափություններ, ողբերգություններ և մահեր մեր սեփական ընտանիքներում: Մենք մեկուսացած չենք ձեր կյանքից» («Մնացեք նավակի մեջ և ամուր բռնած պահեք» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 90):

- Ինչպե՞ս կարող էին Եկեղեցու ղեկավարների բազմաթիվ փորձառություններն օգնել նրանց որպես պահապան իրենց դերում:


Բացատրեք, որ մարգարեներն ունեն մի բան, որը շատ ավելի կարևոր է, քան կյանքի փորձառությունը, որն օգնում է նրանց իրականացնել իրենց աստվածատուր պարտականությունները: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ամուլս Գ.6-7 հատվածները: Նշեք, որ Ջոզեֆ Սմիթի Թարգմանության մեջ «արած» բառը փոխարինվել է «հայտնած» բառով հատված 6-ում և «եթե» բառը «մինչև» բառով հատված 7-ում (տես այս երկու հատվածների տողատակի ծանոթագրությունները): Այս քննարկումը կարող է հրաշալի հնարավորություն լինել ձեզ համար՝ խրախուսելու ուսանողներին օգտագործել տողատակի ծանոթագրությունները սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության ժամանակ:

- Ի՞նչ են սովորեցնում Ամուլս Գ.6-7 հատվածները մարգարեների մասին:

Ուսանողների հետ կիսվեք հետևյալ սահմանմամբ. Մարգարեն «այն անձն է, որը կանչվում է Աստծո կողմից և խոսում է նրա անունից: Որպես

Աստծո սուրհանդակ մարգարեն ստանում է պատվիրաններ, մարգարեություններ և հայտնություններ Աստծուց: ... Մարգարեն դատապարտում է մեղքը և կանխատեսում դրա հետևանքները» (Guide to the Scriptures, “Prophet,” scriptures.lds.org):

Գրատախտակին գծեք հետևյալ գծապատկերը.



Թույլ տվեք, որ ուսանողները մի քանի բույսեր և քննարկեն գծապատկերը: Դուք կարող եք բացատրել, որ գծապատկերը լուսաբանում է, թե ինչպես է ընտանիքի վերաբերյալ Աստծո հեռանկարն ընդգրկում նախանշանային, երկրային և հետմահու կյանքը: Հայտնության միջոցով մարգարեները ստանում են ավելի լայն հեռանկար, և իրենց հերթին նրանք օգնում են մեզ մեծացնել մեր հեռանկարը և հասկացողությունը:

- Ինչպես է այս գծապատկերը լուսաբանում այն փաստը, թե ինչո՞ւ մենք խելացի կվարվենք՝ ուսումնասիրելով ընտանիքի մասին հայտարարությունը: (Գրատախտակին գրեք հետևյալը . **Ուսումնասիրելով ընտանիքի մասին հայտարարությունը՝ մենք կարող ենք սովորել ընտանիքի վերաբերյալ Երկնային Հոր հեռանկարի մասին:**)

Խնդրեք ուսանողներին բացել «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հայտարարության իրենց օրինակները: Մատնանշեք առաջին արտահայտությունը. «Մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք ...»: Ուսանողներին մի քանի բույսեր ժամանակ տվեք ընտանիքի մասին հայտարարությունն ուսումնասիրելու համար՝ փնտրելով փաստերը, որոնցով ամուսնության և ընտանիքի վերաբերյալ Աստծո հեռանկարը տարբերվում է աշխարհի ունեցած հեռանկարից: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով և գրեք ուսանողների պատասխանները գրատախտակին:



**Վարդապետություն և Ուխտեր 90.1-5**

*Շնտանիքի մասին հայտարարությունում գտնվող մարգարեների խորհրդի հետևելը մեզ ապահովության մեջ կպահի*


Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 90.1-3 հատվածները, և բացահայտել, թե ինչ է Տերը տվել Մարգարե Ջոզեֆ Սմիթին:

- Ի՞նչ տվեց Տերը Ջոզեֆ Սմիթին: (Արքայության բանալիները, որոնք ներկայացնում են նախագահության իրավունքները կամ Աստծո արքայությունը երկրի վրա կառավարելու իշխանությունը:)
- Ո՞վ է կրում այդ նույն բանալիները մեր օրերում: (Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի յուրաքանչյուր անդամը:)

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 90.4-5 հատվածները: Դասարանին խնդրեք փնտրել, թե ըստ Տիրոջ խոստումի, ինչ կտրվեր Եկեղեցուն Մարգարեի միջոցով: (Տերն ասաց, որ Եկեղեցին կատանար «պատգամներ»: Ասեք ուսանողներին, որ «պատգամներ» նշանակում է «հայտնություններ»:)


- Ի՞նչ նախազգուշացում տվեց Տերը Սրբերին 5-րդ հատվածում:
- Ի՞նչ սկզբունք մենք կարող ենք սովորել այս նախազգուշացումից: (Պատասխանները պետք է ներառեն հետևյալ սկզբունքի հասկացողությունը. **Եթե մենք թեթևամտորեն վերաբերվենք հայտնություններին, որ Աստված տալիս է Իր մարգարեների միջոցով, մենք կսայթաքենք և կրնկնենք:** Կարող եք հետևյալ սկզբունքը գրել գրատախտակին:)

Կարդացեք Երիտասարդ Կանանց գերագույն նախագահությունից Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկիի և Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը.



«Մենք կարող ենք անտեսել, կատակաբանել կամ ըմբոստանալ Քրիստոսի խոսքերի դեմ, որոնք կհնչեն Իր կարգված ծառաների կողմից: Բայց Փրկիչն ուսուցանել է, որ ովքեր այդպես վարվեն, կկտրվեն Իր ուխտյալ ժողովրդից [տես 3 Նեփի 20.23]» (Քերոլ Ֆ. Մակքոնկի, «Ապրենք Մարգարեների խոսքերին համաձայն», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 79):

© Busath.com



«Ես հայտնաբերել եմ իմ ծառայության ընթացքում, որ նրանք ովքեր դառնում են կորած [և] շփոթված սովորաբար նրանք են, ովքեր ամենահաճախ են ... մոռանում, որ Երբ Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը խոսում են միասնական ձայնով, դա՝ Տիրոջ ձայնն է այդ ժամանակի համար: Տերը հիշեցնում է մեզ՝ «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով միևնույն է» [Վևու 1.38]» (Մ.Ռասսել Բալլարդ, «Մնացեք նավակի մեջ և ամուր բռնած պահեք» 90):

- Ի՞նչ նշաններ կարող են լինել, երբ մեկը թեթևամտորեն է վերաբերվում ընտանիքի մասին հայտարարության մեջ գտնվող խորհրդին:
- Ի՞նչ օրհնություններ եք դուք կամ ուրիշները ստացել, երբ ականջ եք դրել ընտանիքի մասին հայտարարության խորհրդին:
- Ի՞նչ մտքեր և զգացողություններ դուք ունեք վերջին օրերի մարզարենների վերաբերյալ, որոնցով կարող եք կիսվել դասարանի հետ:

Վկայեք, որ ընտանիքի մասին հայտարարությունը ոգեշնչված հռչակագիր է՝ տրված տասնհինգ մարզարենների, տեսանողների և հայտնողների ձայնով: Խրախուսեք ուսանողներին այս դասընթացի ժամանակ օգտվել հնարավորությունից և աղոթել ընտանիքի մասին հայտարարության մեջ գտնվող ճշմարտությունների վերաբերյալ՝ ավելի խորը վկայություն ձեռք բերելու համար:

### Ուսանողի ընթերցարան

- Եզեկիել ԼԳ.1–7, Ամովս Գ.6–7, ՎեՌու 1.4–5, 11, 14, 37–38, 90.1–5, 124.125–126:
- Henry B. Eyring, “Finding Safety in Counsel,” *Ensign*, May 1997, 24–26.

### ԴԱՍ 3

# Մեր աստվածային ներուժը

## Նախաբան

Երկնային Հայրը պատրաստել է մի ծրագիր, որը մեզ հնարավորություն է տալիս վերադառնալ Նրա ներկայության մեջ և դառնալ Նրա նման: Նախագահ Դիտեր Ֆ. Ուլստորֆը սովորեցրել է. «Մենք Նրա զավակներն էինք նախքան այս աշխարհի գալը, և մենք ընդմիջտ նրա զավակները կլինենք: Այս հիմնարար ճշմարտությունը պետք է փոխի այն, թե ինչպես ենք մենք վերաբերվում ինքներս մեզ, մեր եղբայրներին ու քույրերին

և առհասարակ՝ կյանքին» («Չորս կոչում», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 58): Երբ ուսանողները սկսեն ավելի լավ հասկանալ իրենց աստվածային ներուժը, շատ ավելի հավանական է, որ նրանք ավելի պատշաճ կերպով կարողանան դիմակայել մահկանացու կյանքի իրենց հանդիպած մարտահրավերներին:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դիտեր Ֆ. Ուլստորֆ, «Չորս կոչում», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 58-61:
- Gospel Topics, “Becoming Like God,” [lds.org/topics](https://www.lds.org/topics).

## Ուսուցման առաջարկներ

**Ծննդոց Ա.27, Եսայիա ԾԵ.8–9, Գործք Առաքելոց ԺԷ.29, Եբրայեցիս ԺԲ.9, Ա Հովհաննես Գ.1, 4.8–9, 1 Նեփի 9.6, 2 Նեփի 9.20, Մորոնի 8.18, Վարդապետություն և Ուխտեր 76.4, 88.41, 130.22**

*Մենք Աստծո զավակներն ենք*

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ ոչ անդամ մի ընկեր հարցնում է իրենց, թե ըստ մեր Եկեղեցու համոզմունքների ինչպիսի՞ն է Երկնային Հայրը: Խնդրեք ուսանողներին հակիրճ ձևով կիսվել, թե ինչպես կարձագանքեին:

Հետևյալ սուրբ գրությունները գրեք գրատախտակին կամ բաժանեք տպագիր թերթիկների վրա:

Ծննդոց Ա.27, Վարդապետություն և Ուխտեր 130.22  
 1 Նեփի 9.6, 2 Նեփի 9.20  
 Եսայիա ԾԵ.8–9, Վարդապետություն և Ուխտեր 88.41  
 Ա Հովհաննես Գ.1, 4.8–9  
 Մորոնի 8.18, Վարդապետություն և Ուխտեր 76.4  
 Գործք Առաքելոց ԺԷ.29, Եբրայեցիս ԺԲ.9

Հանձնարարեք ուսանողներին ուսումնասիրել այս սուրբ գրություններից մի քանիսը և բացագահտել, թե ինչ են դրանք ուսուցանում մեր Երկնային Հոր մասին: Համոզվեք, որ բոլոր սուրբ գրություններն էլ հանձնարարված են: Բավարար ժամանակից հետո հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես կարող են նրանք օգտագործել այս սուրբ գրություններից մեկը կամ մի քանիսը, որպեսզի բացատրեն, թե ինչ գիտեն կամ ինչին են հավատում՝ կապված Երկնային Հոր հետ:

- Ինչպե՞ս կարող է Երկնային Հոր այս հատկանիշներն իմանալն օգնել ձեզ երկրպագել Նրան:
- Իմացությունն այն մասին, որ Երկնային Հայրը իրական էակ է, ով ունի փառավորված, հարություն առած մսից ու ոսկորից մարմին և ձեր հոգու Հայրն է, ինչպե՞ս է ազդում Նրա հետ ձեր հարաբերությունների վրա:
- Ինչպե՞ս է մեզ օգնում այն փաստը, որ Աստծուն երկրպագելիս հիշում ենք, որ Նա մեր հոգիների Հայրն է: (Որպես քննարկման մի մաս շեշտեք, որ ելնելով այն բանից, որ Աստված մեր հոգիների Հայրն է, մեր աստվածային ներուժը պետք է նմանվի Նրան: Կարող է օգտակար լինել նաև 1909 թվականին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի [1838–1918] ղեկավարությամբ Առաջին Նախագահության կողմից հրատարակված հայտարարությամբ կիսվելը. «Բոլոր տղամարդիկ և կանայք նման են տիեզերական Հորը և Մորը և բաժիս բուն իմաստով Աստվածության որդիներն ու դուստրերն են» [“Gospel Classics: The Origin of Man,” *Ensign*, Feb. 2002, 29]:)

Բաժանեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետևյալ խոսքերի օրինակները: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ այն և նշել այն արտահայտությունները, որոնք ցույց են տալիս, թե որքան կարևոր է հասկանալ, թե ով է Աստված:



«Եթե մարդիկ չեն ըմբռնում Աստծո բնույթը, նրանք չեն հասկանա, թե ովքեր են իրենք: ...

Աստված ժամանակին եղել է այնպիսին, ինչպիսին հիմա մենք ենք, և վեհացում ձեռք բերած մարդ է, և նստած է գահին այնտեղ՝ երկնքում: ...

Եթե վարագույրը պատռվեր այսօր, և փառահեղ Աստվածը, ով այս աշխարհը պահում է իր ուղեծրում, և ով իր գործությամբ պահում է բոլոր աշխարհները և բոլոր բաները, Իրեն տեսանելի դարձներ, ասում եմ ձեզ, եթե դուք տեսնեիք նրան այսօր, դուք կտեսնեիք նրան մարդու տեսքով, ինչպես որ դուք եք՝ ձեր ողջ անձով, պատկերով և տեսքով՝ որպես մարդ. քանի որ Ադամը ստեղծվեց Աստծո անմիջական տեսքով, պատկերով և նմանությամբ, և հրահանգներ ստացավ և քայլեց և խոսեց ու գրուցեց Նրա հետ, ինչպես մի մարդ հաղորդակցվում է մեկ ուրիշի հետ»

(*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 43):

- Ինչպե՞ս է Երկնային Հոր էությունն ըմբռնելն օգնում մեզ ըմբռնելու ինքներս մեզ: (Երբ ուսանողները պատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալը. **Երբ մենք սկսում ենք հասկանալ մեր Երկնային Հորը, մենք կարողանում ենք ավելի լավ հասկանալ մեր Երկնային Ծնողներին նմանվելու մեր ներուժը:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթին Հ. Օուքսի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Խորհեք «Աստծո զավակն եմ» սիրված երգում ուսուցանվող գաղափարի գործողության շուրջ (Հիմներ և մանկական երգեր, էջ 58): ... Այստեղ տրվում է կյանքի մեծագույն հարցերից մեկի պատասխանը. «Ո՞վ եմ ես»: Ես Աստծո զավակ եմ՝ հոգևոր կապերով կապված երկնային ծնողների հետ: Այդ ծագումով է սահմանվում մեր հավերժական ներուժը: Այդ գորեղ գաղափարը հզոր հակադեպրեսանտ է: Այն կարող է գորացնել մեզանից յուրաքանչյուրին՝ կատարելու ճշգրիտ որոշումներ և փնտրելու լավագույնը, որ կա մեր մեջ» ("Powerful Ideas," *Ensign*, Nov. 1995, 25):

Գրատախտակին գրեք հետևյալը.

*Միտքը, որ ես Աստծո զավակ եմ կարող է օգնել ինձ, երբ \_\_\_\_\_:*

*Միտքը, որ ես Աստծո զավակ եմ, օգնել է ինձ, երբ \_\_\_\_\_:*

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչպես կավարտեն այս նախադասություններից մեկը:

**Հռովմայեցիս Ը.16–17, Ա Հովհաննես Գ.2, 3 Նեփի 12.48**

*Մեր աստվածային ներուժը*

Ասեք ձեր դասարանին, որ երբեմն մենք լսում ենք, որ ինչ-որ մեկն ունի «մեծ ներուժ»:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը:

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները և խնդրեք ուսանողներին ուսումնասիրել դրանք, որպեսզի սովորեն մեր աստվածային ներուժի մասին. Հռովմայեցիս Ը.16–17, Ա Հովհաննես Գ.2, 3 Նեփի 12.48: Կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները խաչաձև հղումներ կատարեն այս սուրբ գրություններին՝ գրելով մյուս երկու հղումները յուրաքանչյուր սուրբ գրության հատվածի լուսանցքում:


- Սուրբ գրությունների լույսի ներքո մենք ուսումնասիրեցինք Աստծո բնութագիրը, ինչ նշանակություն ունի ձեզ համար «Նրա նման կլինենք» արտահայտությունը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «Ժառանգակիցներ» լինել Հիսուս Քրիստոսի հետ: (Որպես Հոր Միածին Որդին մարմնում, Հիսուս Քրիստոսն իրավունք ունի Ժառանգելու ամենը, ինչ ունի Հայրը: Նրանք, ովքեր հնազանդ են և ստանում են Փրկիչի Քավության բոլոր օրհնությունները, նույնպես կժառանգեն այն ամենը, ինչ Հայրն ունի [տես Հռովմայեցիս Ը.14–18, Գաղատացիս Գ.26–29, ՎնՈւ 84.38]: Շեշտեք

հետևյալ սկզբունքը. **Երկնային Հոր ծրագիրը ուղի է պատրաստում մեզ համար դառնալու մեր Երկնային Ծնողների նման:** Շեշտեք, որ չնայած որոշ մարդիկ կարող են քննադատել մեր համոզմունքներն այն մասին, որ մենք կարող ենք նմանվել Աստծուն, այս համոզմունքը հիմնված է Աստվածաշնչի ուսմունքների վրա:)

Հետևյալ հարցը գրեք գրատախտակին.

*Ի՞նչ ուսուցանեց Երեց Դավիթն Հ. Օուքսը մեր մահկանացու կյանքի նպատակի մասին:*

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներին փնտրել գրատախտակին գրված հարցի պատասխանները.



«Ըստ Հիսուս Քրիստոսի վերականգնված եկեղեցու աստվածաբանության՝ մահկանացու կյանքի նպատակն է նախապատրաստել մեզ գիտակցելու մեր ճակատագիրը որպես Աստծո որդիներ և դուստրեր՝ դառնալու Նրա նման: ... Աստվածաշունչը մահկանացուներին նկարագրում է որպես «Աստծո որդիք» և որպես «Աստծո ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ» (Հռովմայեցիս Ը.16–17): Այն նաև հայտարարում է, որ «Եթե՛ նորա չարչարանքներին կցորդ ենք՝ փառքին էլ մասնակից լինինք» (Հռովմայեցիս Ը.17) և «Երբոր նա կյայտնուի, նորան նման կլինենք» (Ա Հովհաննես 9.2): Մենք բառացիորեն ենք ընդունում Աստվածաշնչի այս ուսմունքները: Մենք հավատում ենք, որ մահկանացու կյանքի նպատակն է ձեռք բերել ֆիզիկական մարմին և Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ և օրենքին ու ավետարանի արարողություններին հնազանդվելու միջոցով արժանանալ փառավորված, հարություն առած Երկնային վիճակի, որը կոչվում է համբարձում կամ հավերժական կյանք: ... (Հավերժական կյանքի կամ Աստծո կյանքի այս ճակատագիրը պիտի ծանոթ լինի բոլոր նրանց համար, ովքեր ուսումնասիրել են քրիստոնեության հին վարդապետությունը և հավատամքը աստվածացման կամ փառաբանման վերաբերյալ:) ...

... Մեր աստվածաբանությունը սկսում է Երկնային ծնողներից: Մեր մեծագույն ձգտումն է լինել նրանց նման: Հոր ողորմած ծրագրի ներքո այս ամենը հնարավոր է դառնում Հոր Միածնի՝ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ» (“Apostasy and Restoration,” *Ensign*, May 1995, 86–87):

(Նշում. Դուք կարող եք բացատրել, որ *աստվածացում* և *փառաբանում* բառերը վերաբերում են այն գաղափարին, որ անձը կարող է դառնալ աստված կամ բարձրացվել աստվածային կարգավիճակի:)


Քննարկեք գրատախտակին գրված հարցի վերաբերյալ ուսանողների պատասխանները: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ մտքեր եք ունենում, երբ մտածում եք, որ Երկնային Հոր ծրագիրը ձեզ հնարավորություն է տալիս նմանվել Նրան:
- Ինչո՞ւ է մեզ անհրաժեշտ Քրիստոսի Քավությունը Աստծուն նմանվելու համար:

Այս քննարկումը շարունակելու համար ձեր ուսանողների հետ աչքի անցկացրեք հետևյալ ելույթը.

«Վերջին Օրերի Սրբերը հասկանում են Քրիստոսի Քավության մեծությունը, որը հնարավոր է դարձնում վիթխարի մարդկային ներուժը: Քրիստոսի Քավությունն առաջ է բերում ոչ միայն մեղքի ներում և հաղթանակ մահի դեմ, այլ նաև փրկագնում է անկատար հարաբերությունները, բժշկում է հոգևոր վերքերը, որոնք ճնշում են աճը, և ամրացնում ու հնարավորություն է տալիս անհատներին զարգացնելու Քրիստոսի հատկանիշները [տես Ավմա 7.11–12]: Վերջին Օրերի Սրբերը հավատում են, որ միայն Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ է, որ մենք կարող ենք հաստատ հույս ունենալ հավերժական փառքի համար և որ Նրա Քավության զորությունը լիովին մատչելի է դառնում միայն Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևը ստանալու և Հիսուս Քրիստոսի հրահանգներին և օրինակին հետևելու միջև վերջ համբերելու միջոցով [տես 2 Նեփի 31.20, Հավատո Հանգանակ 1.4]: Այսպիսով, նրանք, ովքեր նմանվում են Աստծուն և մտնում են Նրա փառքի ամբողջության մեջ, նկարագրվում են որպես մարդիկ՝ «Հիսուսի՝ նոր ուխտի միջնորդի միջոցով կատարյալ դարձված, որն իր արյունը հեղելով իրագործեց այս կատարյալ քավությունը» [Վնու 76.69]» [Gospel Topics, “Becoming Like God,” [lds.org/topics](https://www.lds.org/topics)):

Բաժանեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսդորֆի հետևյալ ելույթի օրինակները: Հրավիրեք ուսանողներին կարդալ ելույթը և նշել այն գաղափարները, որոնք նրանց հույս են տալիս, որ նրանք կարող են հասնել իրենց աստվածային ներուժին: Նշեք, որ Նախագահ Ուլսդորֆը այս ելույթով հանդես է եկել գերագույն համաժողովի քահանայության նիստի ժամանակ, սակայն գաղափարները վերաբերում են բոլորին.



«Մի կոչում, որն առավել հիմնարար ձևով բնորոշում է բոլորիս՝ *Երկնային Հոր որդի (կամ դուստր) կոչումն է*: Անկախ նրանից, թե ինչ պետք է մենք անենք կյանքում, մենք երբեք չպետք է մոռանանք, որ մենք, բառացիորեն Աստծո հոգևոր զավակներն ենք: Մենք Նրա զավակներն էինք նախքան այս աշխարհի գալը, և մենք ընդմիջտ Նրա զավակները կլինենք: Այս հիմնարար ճշմարտությունը պետք է փոխի այն, թե ինչպես ենք մենք վերաբերվում ինքներս մեզ, մեր եղբայրներին ու քույրերին և առհասարակ կյանքին: ...

Գիտե՛լիքը, որ Աստծո [զավակ] ես, բայց այդ կոչման չափով չես կարողանում ապրել, կարող է, երբեմն, հուսահատեցնող լինել: Հակառակորդը սիրում է օգտվել այդ զգացումներից: Սատանան ցանկանում է, որ ինքդ քեզ բնորոշես քո մեղքերով, այլ ոչ թե քո աստվածային ներուժով: Եղբայրներ, մի լսե՛ք նրան:

Բոլորս տեսել ենք մանուկին քայլել սովորելիս: Նա մի փոքր քայլ է անում և երերում է: Նա ընկնում է: Արդյո՞ք մենք հանդիմանում ենք նման փորձը: Իհարկե, ոչ: Ո՞ր հայրը կպատժի իր մանուկին սայթաքելու համար: Մենք խրախուսում ենք, ողջունում ենք և զովաբանում ենք, քանի որ յուրաքանչյուր փոքր քայլի հետ երեխան ավելի շատ է նմանվում իր ծնողներին:

Արդ, եղբայրներ, եթե համեմատենք Աստծո կատարելության հետ, մենք՝ մահկանացուներս, նկուն, անվստահ մանուկներ ենք: Բայց մեր սիրող Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք ավելի շատ նմանվենք Իրեն և դա, իմ թանկագին եղբայրներ, պետք է լինի նաև մեր հավերժական նպատակը: Աստված հասկանում է, որ մենք դրան հասնում



Ենք ոչ թե մի ակնթարթում, այլ քայլ առ քայլ» («Չորս կոչում», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 58):

- Ինչպե՞ս կարող է այս հավերժական ճշմարտությունները հիշելն օգնել ձեզ հասնել ձեր աստվածային ներուժին:
- Ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունները հիշելն ազդել այն բանի վրա, թե ինչպես եք դուք վերաբերվում ձեր ընտանիքի անդամներին:
- Ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունների մասին ձեր իմացությունն ազդել ձեր ընտանիքի մահացած անդամների մասին տեղեկություն փնտրելու և նրանց համար տաճարային արարողություններ կատարելու ձեր ցանկության վրա:

Խրախուսեք ուսանողներին հաջորդ շաբաթվա ընթացքում կիսվել ընտանիքի անդամի կամ ընկերոջ հետ, թե ինչ են սովորել և զգացել այս դասի ընթացքում: Նրանք կարող են նաև խորհել, թե ինչ կարող են անել ամեն օր, որպեսզի գիտակցաբար հիշեն, որ իրենք Երկնային Հոր զավակներն են և ծրագրեն գրառել օրագրերում, թե այս սրբազան ճշմարտությունը հիշելն ինչպես է ազդում նրանց արարքների վրա:

### Ուսանողի ընթերցարան

- Ծննդոց Ա.27, Եսայիա ԾԵ.8–9, Գործք Առաքելոց ԺԷ.29, Հռովմայեցիս Ը.16–17, Եբրայեցիս ԺԲ.9, Ա Հովհաննես Գ.1–2, 4.8–9, 1 Նեփի 9.6, 2 Նեփի 9.20, 3 Նեփի 12.48, Մորոնի 8.18, Վարդապետություն և Ուխտեր 76.4, 88.41, 130.22:
- Gospel Topics, “Becoming Like God,” [lds.org/topics](https://www.lds.org/topics).

## ԴԱՍ 4

# Ընտանիքը և Երջանկության մեծ ծրագիրը

### Նախաբան

Ադամի և Եվայի ստեղծմամբ երկրի վրա հաստատվեց մարդկային ընտանիքը: Ադամի և Եվայի Ասկումը հնարավոր դարձրեց, որ երեխաներ լույս աշխարհ գային, իսկ Քավությունն էլ իր հերթին մեզ թույլ է տալիս հաղթահարել Ասկման բացասական ազդեցությունները:

Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ, թե ինչպես են Արարումը, Ասկումը և Քավությունն աշխատում միասին՝ ընտանիքների փրկության համար:

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- M. Russell Ballard, “The Atonement and the Value of One Soul,” *Ensign or Liahona*, May 2004, 84–87.
- Julie B. Beck, “Teaching the Doctrine of the Family,” *Ensign*, Mar. 2011, 12–17.

### Ուսուցման առաջարկներ

#### Մովսես 1.27–39, Վարդապետություն և Ուխտեր 49.15–17

*Մովսեսն իմանում է երկրի արարման նպատակը*

Դասարան բերեք փոքրիկ տարրայով ավագ և մի բաժակ ջուր: Հրավիրեք մի ուսանողի մատը մտցնել ջրի մեջ, ապա՝ ավագի: Այնուհետև խնդրեք ուսանողին հաշվել, թե ավագի քանի հատիկ է կպել մատին:

- Ձեր կարծիքով, ավագի քանի՞ հատիկ կա տարրայի մեջ: Իսկ ծովափո՞ւմ:

Խնդրեք ուսանողներին բացել Մովսես 1, որտեղ տրված են մի շարք տեսիլքներ, որոնք տեսել է Մովսեսը: Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մովսես 1.27-29 հատվածները, և հրավիրեք ուսանողներին փնտրել, թե ինչ Տերը ցույց տվեց Մովսեսին:

- Համաձայն այս հատվածների՝ ի՞նչ տեսավ Մովսեսը տեսիլքում:
- Ի՞նչ մտքեր դուք կունենայիք, եթե դուք տեսնեիք այդ տեսիլքը:

Խնդրեք ուսանողներին կարդալ Մովսես 1.30 և նշել երկու հարցերը, որոնք Մովսեսը տվեց Տիրոջը (*ինչու և ինչպես* ստեղծվեց երկիրը և դրա բնակիչները): Օգնեք ուսանողներին զարգացնել սուրբ գրությունների ուսումնասիրության իրենց անձնական հմտությունները խրախուսելով նրանց ուսումնասիրության ընթացքում փնտրել հարցեր և պատասխաններ սուրբ գրություններում:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Մովսես 1.31-33 հատվածները և փնտրել, թե ինչպես Տերը պատասխանեց Մովսեսի երկու հարցերին:

- Համաձայն հատված 31-ի, ինչո՞ւ Աստված ստեղծեց երկիրը:
- Ի՞նչ են սովորեցնում հատվածներ 32-33 այն մասին, թե ինչպես Երկնային Հայրը ստեղծեց աշխարհները: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ վարդապետությունը. **Հոր ղեկավարությամբ Հիսուս Քրիստոսը ստեղծեց երկիրը և անթիվ աշխարհներ:**)

Հրավիրեք ուսանողներին կարդալ Մովսես 1.36-39 հատվածները և ներկայացնել Մովսեսի ևս մեկ ցանկությունը և Տիրոջ պատասխանը:

- Որ՞ն է Երկնային Հոր նպատակը երկիրը և դրա բնակիչներին ստեղծելու գործում: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ վարդապետությունը. **Երկիրը ստեղծվեց՝ օգնելու առաջ բերել մարդու անմահությունը և հավերժական կյանքը:** Նշեք, որ *անմահությունը* հավերժ ապրելն է հարություն առած վիճակում, մինչդեռ *հավերժական կյանքը* Աստծո նման ապրելն է, այսինքն՝ հավերժ ապրելը որպես հավերժական ընտանիքի մի մաս:)
- Ինչպե՞ս է երկրի արարումն օգնում իրականացնել Երկնային Հոր աշխատանքը և փառքը: (Օգտագործեք Վարդապետություն և Ուխտեր 49.15-17 հատվածները, ցույց տալու համար, որ երկիրը ստեղծվել է որպես մահկանացու բնակության վայր ընտանիքների համար:)

Վկայեք, որ երկիրը ստեղծվեց՝ օգնելու առաջ բերել Աստծո զավակների անմահությունը և հավերժական կյանքը: Ընտանիք միավորը նախատեսված է, որպեսզի օգնի մեզ ձեռք բերել հավերժական կյանք, որը նշանակում է, որ մենք հավերժ ապրում ենք որպես հավերժական ընտանիքի մի մաս՝ կյանք, որով ապրում է Աստված:

**2 Նեփի 2.19–25, Մովսես 3.16–17, 5.9–11**

*Ադամի և Եվայի անկումը Երկնային Հոր ծրագրի կարևոր մասն էր*

Բացատրեք, որ Աստված Ադամին ու Եվային Եդեմի պարտեզում տվեց որոշակի հրահանգներ: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մովսես 3.16-17, այնուհետև հարցրեք:

- Ըստ Տիրոջ խոսքերի՝ ի՞նչ տեղի կունենար Ադամի և Եվայի հետ, եթե նրանք ուտեին արգելված պտուղը:

Բացատրեք, որ երբ Ադամն ու Եվան ճաշակեցին արգելված պտղից, նրանք երկու տեսակի մահ բերեցին մարդկության վրա:

Գրատախտակին գրեք հետևյալը.

*Հոգևոր մահ = բաժանում Աստծուց*  
*Ֆիզիկական մահ = հոգու և ֆիզիկական մարմնի բաժանումը*

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 2.19-25 հատվածները և կազմեք Անկման այլ հետևանքների ցանկը:

- Արգելված պտղից ճաշակելն ինչպե՞ս հնարավորություն տվեց Ադամին ու Եվային և ողջ մարդկությանը ավելի շատ նմանվել Երկնային Հորը:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«Անկումը Երկնային Հոր աստվածային ծրագրի կարևոր մասն էր: Առանց դրա Ադամն ու Եվան չէին ունենա մահկանացու զավակներ, չէր լինի մարդկային ընտանիք, որը կտեսներ ընդդիմություն և աճ, բարոյական ազատ կամք և հարության, փրկության ու հավերժական կյանքի ուրախություն» («The Atonement of Jesus Christ,” *Ensign*, Mar 2008, 35):

Ուսանողների համար կարդացեք Մովսես 5.9–11 հատվածները: Հետևյալ հարցի միջոցով զգնեք նրանց նշել այս հատվածներում գտնվող ճշմարտությունները.

- Ի՞նչ ճշմարտություններ սովորեցին Ադամն ու Եվան Եդեմի պարտեզից դուրս քվելուց հետո: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունները. **Անկման հետևանքով Ադամն ու Եվան կարողացան զավակներ ունենալ և նրանց սերունդները կարողացան առաջ ընթանալ դեպի հավերժական կյանք:**)

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը: Խնդրեք ուսանողներին գտնել պատճառները, թե ինչու էինք մենք ուրախերկիր գալու համար.



«Ձեր կյանքի ամենազվարթ պահերից մեկը, երբ դուք լցված եք եղել սպասումով, հուզմունքով և Երախտագիտությամբ՝ դուք չէք կարող հիշել: Այդ փորձառությունը տեղի է ունեցել նախաերկրային կյանքում, երբ ձեզ տեղեկացրել են, որ ի վերջո եկել է հոգիների աշխարհը լքելու ձեր ժամը, որպեսզի մահկանացու մարմին ունենալով ապրեք երկրի վրա: Դուք գիտեիք, որ անձնական փորձառության միջոցով կարող էիք սովորել դասեր, որոնք երջանկություն կբերեին երկրի վրա, դասեր, որոնք ի վերջո ձեզ կտանեին դեպի վեհացում և հավերժական կյանք՝ որպես փառավորված, երկնային Էակներ՝ ձեր Սուրբ Հոր և Նրա Սիրելի Որդու ներկայության մեջ» («First Things First,” *Ensign*, May 2001, 6):

- Ինչպե՞ս է Անկման և մահկանացու կյանքի նպատակների ըմբռնումն ազդում այս կյանքում կատարած ձեր ընտրությունների վրա:

**2 Նեփի 9.6–12**

*Քավությունը հաղթահարում է Անկման ազդեցությունները*

Բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը.



«Անցած հունվարին օդանավի վթարի արդյունքում մեր ընտանիքը սզում էր մեր թոռնիկի՝ Նաթանի ողբերգական մահը: Նաթանը ծառայել էր Բալթյան Միսիայում, որտեղ ռուսերեն էին խոսում: Նա սիրում էր մարդկանց և գիտեր, որ Տիրոջը ծառայելը մեծ պատիվ էր: Նրա և նրա սիրելի Ջենիֆերի հավերժական ամուսնության ժամանակ պաշտոնավարելուց երեք ամիս անց այս վթարը խլեց նրա կյանքը» (“The Atonement and the Value of One Soul,” *Ensign or Liahona*, May 2004, 84):

Բացատրեք, որ Ադամի և Եվայի Անկման արդյունքում մենք բոլորս ենթակա ենք դժբախտ և ողբերգական փորձառությունների, ինչպիսին այն, ինչ պատահեց Երեց Բալլարդի ընտանիքում: Բարեբախտաբար, Երկնային Հայրը ուղի է նախապատրաստել Անկման ազդեցությունները հաղթահարելու համար:

Ուսանողներին հրավիրեք ուսումնասիրել 2 Նեփի 9.6-12 հատվածները՝ փնտրելով, թե ինչպես կարող է Հիսուս Քրիստոսի Քավությունն օգնել մեզանից յուրաքանչյուրին հաղթահարելու ֆիզիկական և հոգևոր մահը: Կարող եք առաջարկել, որ ուսանողները կարդալու ժամանակ իրենց սուրբ գրություններում նշեն գլխավոր բառերն ու արտահայտությունները: Ապա հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց մտքերով:

- Ի՞նչ վարդապետություն են ուսուցանում այս հատվածներն Ադամի Անկման և Հիսուս Քրիստոսի Քավության միջև եղած կապի մասին: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են հետևյալը. **Հիսուս Քրիստոսի Քավությունը ուղի է պատրաստում Երկնային Հոր բոլոր զավակների համար՝ հաղթահարելու և՛ ֆիզիկական մահը և՛ հոգևոր մահը:** Դուք կարող եք խրախուսել ուսանողներին, որպեսզի իրենց սուրբ գրություններն ուսումնասիրելիս նշեն Անկման և Քավության միջև հաճախակի հանդիպող սուրբ գրքերի հատվածների կապը: Կարող եք կիսվել այս մեջբերմամբ. «Կապը հարաբերություն կամ հղում է գաղափարների, մարդկանց, երևույթների կամ իրադարձությունների միջև: ... Աղոթքով փնտրելը, ուսումնասիրելը և նման կապերի մասին խորհելը ... առաջ է բերում ոգեշնչված մտքեր և թաքնված գիտելիքների զանձեր» [David A. Bednar, “A Reservoir of Living Water” (Church Educational System fireside for young adults, Feb. 4, 2007), 4, lds.org/media-library]:)

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ հետևյալը, որը Երեց Մ. Ռասսել Բալլարդի ելույթի շարունակությունն է.



«Մեր մահկանացու ներկայությունից Նաթանի այդքան հանկարծակի հեռացումը մեզանից յուրաքանչյուրի սիրտը և միտքը դարձրեց դժպի Տեր Հիսուս Քրիստոսի Քավությունը: ...

Փրկչի թանկագին ծնունդը, կյանքը, Քավությունը Գեթսեմանի պարտեզում, չարչարանքները խաչի վրա, թաղումը Հովսեփի գերեզմանում և փառահեղ Հարությունը՝ այդ ամենը մեզ համար դարձան կարծես թե նոր իրականություն: Փրկչի Հարությունը վստահեցնում է մեզանից յուրաքանչյուրին, որ մի օր մենք նույնպես կհետևենք Նրան և ձեռք կբերենք մեր իսկ հարության փորձառությունը:

Ինչպիսի խաղաղություն, ինչպիսի սփոփանք է այս մեծ պարզևը, որը գալիս է բոլոր մարդկանց Փրկիչ և Քավիչ Հիսուս Քրիստոսի սիրող շնորհի միջոցով: Մենք գիտենք, որ Նրա շնորհիվ կարող ենք կրկին լինել Նաթանի հետ» (“The Atonement and the Value of One Soul,” 84):

- Ինչպե՞ս է Երեց Բալլարդի ընտանիքի արձագանքն առ նրանց ընտանիքի անդամի մահը լուսաբանում, թե ինչպես կարող է Հիսուս Քրիստոսի Քավությունն օգնել ընտանիքներին հաղթահարել Անկման համամարդկային հետևանքները:
- Ի՞նչ է Քավությունը հավերժության մեջ հնարավոր դարձնում Նաթանի ընտանիքի և մեզանից յուրաքանչյուրի ընտանիքի համար:

Թույլ տվեք ուսանողներին մի պահ խորհել հետևյալ հարցի շուրջ, և ապա խնդրեք նրանց պատասխանել:

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Քավությունն օգնել ձեր ընտանիքին հաղթահարել Անկման որոշ հետևանքները: (Որպես քննարկման մի մաս բացատրեք, որ միայն նրանք, ովքեր կատարյալ են դարձվել Հիսուս Քրիստոսի Քավության գործողության միջոցով, կկարողանան հավերժորեն ապրել միասին որպես ընտանիքներ և ամուսիններ:)

Վերջում ցուցադրեք Սփոփող Միության նախկին գերագույն նախագահ Քույր Զուլի Բ. Բեքի ելույթը, և հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ այն.



© Busath.com

«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մենք ունենք ընտանիքի աստվածաբանությունը, որը հիմնված է Արարման, Անկման և Քավության վրա: Երկրի Արարման շնորհիվ մի վայր տրվեց, որտեղ ընտանիքները կարող էին ապրել: Աստված ստեղծեց տղամարդուն և կնոջը, ովքեր ընտանիքի հիմնական կեսերն էին: Երկնային Հոր ծրագրի մասն էր, որ Ադամն ու Եվան կնքվեին և հավերժական ընտանիք կազմեին:

Ասկումն ուղի բացեց ընտանիքի աճի համար: Ադամն ու Եվան ընտանիքի ղեկավարներն էին, ովքեր ընտրեցին մահկանացու կյանքը: Ասկումը նրանց համար որդիներ և դուստրեր ունենալու հնարավորություն ընձեռեց:

Քավությունը թույլ տվեց, որ ընտանիքը միասին հավերժ կնքվի: Այն թույլ է տալիս, որ ընտանիքները հավերժական աճ և զարգացում ունենան: Երջանկության ծրագիրը, որը նաև կոչվում է փրկության ծրագիր, ընտանիքների համար ստեղծված ծրագիր էր» (“Teaching the Doctrine of the Family,” *Ensign*, Mar. 2011, 12):

Խրախուսեք ուսանողներին խորհել Արարման, Անկման և Քավության վերաբերյալ իրենց վկայությունների շուրջ և թե ինչ կարող են անել, որպեսզի հրավիրեն Քավության գործողությունը՝ լինելու մեծագույն ուժ իրենց կյանքում և իրենց ընտանիքների կյանքում:

### Ուսանողի ընթերցարան

- Մովսես 1.27–39, 3.16–17, 5.6–12, 2 Նեփի 2.19–25, 9.6–12, Վարդապետություն և Ուխտեր 49.15–17:

- Julie B. Beck, “Teaching the Doctrine of the Family,” *Ensign*, Mar. 2011, 12–17.



## ԴԱՍ 5

# Մահկանացու կյանքի պայմանները

### Նախաբան

Նախաերկրային կյանքում մենք «ընդունել ենք [Երկնային Հոր] ծրագիրը, ըստ որի Նրա զավակները պետք է ֆիզիկական մարմին ձեռք բերեն և աշխարհիկ փորձ կուտակեն դեպի կատարելություն ընթանալու համար» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129): Մեր մահկանացու մարմինները

մեծ օրհնություն են, այնուամենայնիվ, դրանք ենթակա են սատանայի բազմաթիվ փորձություններին: Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք հաղթահարել այդ փորձությունները և վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ:

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- David A. Bednar, “Things as They Really Are,” *Ensign*, June 2010, 16–25.
- David A. Bednar, “The Atonement and the Journey of Mortality,” *Ensign*, Apr. 2012, 40–47.

### Ուսուցման առաջարկներ

#### 2 Նեփի 2.27–29, Աբրահամ 3.25

*Մեր մահկանացու կյանքի փորձառությունը շատ կարևոր է հավերժական կյանքի համար*

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Արդյո՞ք մենք երբևէ իսկապես խորհել ենք, թե ինչու է այսքան կարևոր ֆիզիկական մարմին ունենալը: ... Արդյո՞ք մենք իսկապես հասկանում ենք, թե ինչու է մարմինն այդքան կարևոր Հոր երջանկության ծրագրում: Միգո՞ւցե մենք այնքան հաճախ և պարբերաբար ենք արտաբերել այդ հարցի պատասխանը, որ չենք կարողանում ըմբռնել դրա իրական կարևորությունը: Ես կցանկանայի, որ մենք մի փոքր ավելի խորըսերտեինք հավերժորեն կարևոր այս հարցը, թե ինչո՞ւ է մարմինն այդքան կարևոր: Ի վերջո, պատասխանից է կախված մեր մնացած անելիքը» (“Ye Are the Temple of God,” *Ensign*, Sept. 2001, 14):

- Համաձայն Երեց Բեդնարի, ինչո՞ւ մենք պետք է ձգտենք հասկանալ, թե ինչու են մեր ֆիզիկական մարմիններն այդքան կարևոր:

Հրավիրեք ուսանողներին գրել հետևյալ հարցի պատասխանը. Դասի ընթացքում խրախուսեք նրանց գրել ևս մի քանի մտքեր և գաղափարներ:

- Ինչո՞ւ են մեր ֆիզիկական մարմիններն այդքան կարևոր Երկնային Հոր երջանկության ծրագրում:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրի երրորդ պարբերությունը և փնտրել այն հատվածը, որը պարզաբանում է, թե ինչու է ֆիզիկական մարմինն անհրաժեշտ մեր հավերժական զարգաման համար:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը: Դասարանին հրավիրեք լսել, թե ինչու են մեր մարմինները չափազանց կարևոր Երկնային Հոր ծրագրում: Նախքան կարդալը յուրաքանչյուր ուսանողի տվեք այս ելույթի մեկական օրինակ:



«Մեր ֆիզիկական մարմինները լայնություն, խորություն և ուժգնություն են հաղորդում այն փորձառությանը, որը մենք պարզապես չէինք կարող ձեռք բերել մեր նախամահականացու գոյության ընթացքում: Տասներկու Առաքյալների Թվորումի Նախագահ Բոյդ Զ. Փաքերն ուսուցանել է. «Մեր հոգին և մեր մարմինն այնպես են միավորված, որ մեր մարմինը դառնում է մեր մտքի գործիքը և մեր բնավորության հիմքը» [“The Instrument of Your Mind and the Foundation of Your Character” (Brigham Young University fireside address, Feb. 2, 2003), speeches.byu.edu]: Այսպիսով՝ մեր փոխհարաբերությունները այլ մարդկանց հետ, ճշմարտությունը ճանաչելու և համաձայն դրա գործելու մեր ունակությունը և Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներին և արարողություններին հնազանդվելու մեր ունակությունը զարգանում են մեր ֆիզիկական մարմինների շնորհիվ: Մահկանացու կյանքի դպրոցում մենք զգում ենք քնքշություն, սեր, բարություն, երջանկություն, վիշտ, հիասթափություն, ցավ և նույնիսկ ֆիզիկական սահմանափակումների հետ կապված խնդիրներ, որոնք մեզ նախապատրաստում են հավերժության համար: Պարզ ասած, կան դասեր, որոնք մենք պետք է սովորենք և փորձառություններ, որոնք մենք պետք է ունենանք, ինչպես նկարագրում են սուրբ գրությունները՝ «ըստ մարմնի» (1 Նեփի 19.6, Ավմա 7.12–13)» (“Things as They Really Are,” *Ensign*, June 2010, 16):

- Ի՞նչ ուսուցանեց Երեց Բեդնարն այն մասին, թե ինչու է ֆիզիկական մարմինն անհրաժեշտ մեր հավերժական զարգացման համար: (Չնայած կարող են հնչել տարբեր պատասխաններ, շեշտեք այս ճշմարտությունը. **Ֆիզիկական մարմնի շնորհիվ մենք ենթարկվում ենք մահկանացու կյանքի պայմաններին, որոնք կարող են նախապատրաստել մեզ հավերժության համար:**)
- Ինչպե՞ս են մեր մարմինները հանդիսանում «մեր մտքի գործիքը և մեր բնավորության հիմքը»:
- Ինչպե՞ս է «Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներին և արարողություններին հնազանդվելու մեր ունակությունը զարգանում մեր ֆիզիկական մարմինների շնորհիվ»: (Հնարավոր պատասխաններ. Մարմինը մեզ հնարավորություն է տալիս հնազանդվել բազմաճյուղի և երկիրը լցնելու պատվիրանին: Մարմինը մեզ հնարավորություն է տալիս վայելելու ընտանիքում ապրելու ուրախությունը, որտեղ մենք սովորում ենք և կիրառում ավետարանի սկզբունքները, օրինակ՝ մեր ընտանիքներում մենք սովորում ենք, թե ինչպես կառավարել մեր բարկությունը:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Աբրահամ 3.25 և 2 Նեփի 2.27-29 հատվածները, իսկ դասարանը հետևի,

թե ինչպես են սուրբ գրությունների այս հատվածներն իրար լրացնելով օգնում մեզ ավելի լավ հասկանալ մարմին ունենալու պատճառները:

- Չնայած մարմին ունենալը մեծ օրհնություն է, ինչպես՝ ս է մարմին ունենալը հանդիսանում մեր մահկանացու կյանքի փորձության մի մասը: (Մատանան մեզ ավելի շատ փորձությունների է կարողանում ենթարկել մեր մարմինների պատճառով:)
- «Մարմնի կամքն» ընտրելն ինչպես՝ ս է դեհն «գորություն տալիս գերելու»:

**Մոսիա 3.19, Մովսես 6.49, 53–55**

*«Բնական մարդն Աստծո մի թշնամի է»*

Ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Մովսես 6.53-54 հատվածները և հրավիրեք դասարանին փնտրել և ապա բացատրել, թե այս հատվածներն ինչ են ուսուցանում ծննդյան պահին մեր վիճակի մասին: Բացատրեք, որ «անմեղ» բառը այս համատեքստում նշանակում է Ադամի օրինազանցության ազդեցությունից ազատ:

Ապա խնդրեք որևէ ուսանողի կարդալ Մովսես 6.49 և 55 հատվածները և հարցրեք դասարանի անդամներին.

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում այն մասին, թե ինչպես է մեզ վրա ազդում Ադամի և Եվայի Անկումը մեր մահկանացու կյանքի ընթացքում: (Երբ մենք տեղի ենք տալիս սատանայի գայթակղություններին, մենք ճաշակում ենք մեր ընտրությունների դառը հետևանքները՝ դառնալով մարմնական, զգայական և դիվական: Դուք կարող եք անդրադառնալ Եթեր 3.2-ին, որը սովորեցնում է, որ «անկման պատճառով մեր էությունները շարունակ չար են դարձել»:)

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 3.19 հատվածի առաջին մի քանի տողերը: Հետևյալ հարցերը գրեք գրատախտակին.

*Ի՞նչ է նշանակում բնական մարդ:*  
*Ինչո՞ւ է բնական մարդն Աստծո մի թշնամի:*

Ուսանողներին մի քանի րոպե ժամանակ տվեք, որպեսզի փնտրեն այս հարցերի պատասխանները և մեծացնեն իրենց հասկացողությունը «բնական մարդու» վերաբերյալ՝ ուսումնասիրելով 19-րդ հատվածի տողատակի ծանոթագրությունները (հատկապես *ս* ծանոթագրությունը, ինչպես նաև տողատակի ծանոթագրություններում նշված մյուս հատվածները): Բավարար ժամանակ հատկացնելուց հետո քննարկեք ուսանողների գտած նյութերը. Նշեք, որ այս եզրույթը նկարագրում է մի վիճակ, որը հավասարապես վերաբերում է թե՛ տղամարդկանց թե՛ կանանց:

- Եթե անձնավորությունն ունի բնական մարդու հատկանիշներ, ի՞նչ ազդեցություն կարող է դա ունենալ ամուսնության կամ ընտանիքի վրա:

Խնդրեք նույն ուսանողին շարունակել Մոսիա 3.19 հատվածը և հրավիրեք դասարանին փնտրել այն սկզբունքը, թե ինչպես կարող ենք հաղթել բնական մարդուն: (Երբ ուսանողները պատասխանեն, գրեք այս սկզբունքը գրատախտակին. **Հիսուս Քրիստոսի Քավության ընդունելու և Սուրբ Հոգու հորդորներին ենթարկվելու միջոցով մենք կարող ենք հանել բնական մարդուն և դառնալ սուրբ:**)

Բացատրեք, որ այս համատեքստում *ենթարկվել* նշանակում է ընդունել կամ տեղի տալ Սուրբ Հոգու հուշումներին:

- Ինչպե՞ս կարող է մարդը տարբերել, թե ինչ է Սուրբ Հոգին հուշում իրեն անել:
- Կարո՞ղ եք կիսվել փորձառությամբ, որը չափազանց անձնական չէ, երբ Սուրբ Հոգին հուշել է ձեզ հանել բնական մարդուն:

Վկայեք, որ երբ մենք ենթարկվում ենք Սուրբ Հոգու հորդորներին, մենք զգում ենք Քավության գորությունը:


**Մոսիա 3.19, 16.3–6**

*Կիրառել Քրիստոսի Քավությունը*

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 16.3-6 հատվածները, մինչ դասարանը կհետևի նրան, փնտրելով, թե ինչը կօգնի մեր կյանքում հաղթահարել Անկման ազդեցությունները:

- Երկնային Հոր ծրագրի, ո՞ր դրույթն է մեզ թույլ տալիս հաղթահարել մեր ընկած բնույթը: (Գրատախտակին գրեք հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք փրկագնվել մեր կորած և ընկած վիճակից:**)

Ցուցադրեք Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.




«Բնական մարդու ամեն ախորժակ, ցանկություն, հակում և մղում կարելի է հաղթահարել Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ և միջոցով: Մենք այստեղ՝ Երկրի վրա ենք, որպեսզի զարգացնենք աստվածաման հատկանիշներ և սանձենք մարմնական բոլոր կրքերը» (“We Believe in Being Chaste,” *Ensign or Liahona*, May 2013, 43):

Բացատրեք ուսանողներին, որ երբ մենք հավատում ենք Քավությանը, մենք ստանում ենք Հիսուս Քրիստոսի շնորհը, որը հնարավոր է դարձվել Նրա քավող զոհաբերության միջոցով: *Շնորհ* բառի հիմնական գաղափարը «օգնության կամ ուժի աստվածային գործիք լինելն է, որը տրվել է Հիսուս Քրիստոսի լիառատ ողորմածության և սիրտ շնորհիվ»: Այն «հնարավորություն տվող գորություն է», որն օգնում է մեզ ապաշխարել և զարգացնել հատկանիշներ, որոնք մենք չենք կարող

ինքնուրույն զարգացնել (Տես Աստվածաշնչի բառարան, «Շնորհ»): Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել Քրիստոսանման այն հատկանիշները, որոնք մենք պետք է զարգացնենք, խնդրեք նրանց վերանայել հատկանիշների այն ցանկը, որոնք առաջնորդում են մեզ դեպի սրբեր դառնալը, ինչպես տրված է Մոսիա 3.19-ում:

- Ինչպե՞ս է Փրկիչն օգնել ձեզ զարգացնել այն հատկանիշներից մեկը, որոնք տրված են Մոսիա 3.19-ում:
- Ինչպե՞ս են օրհնվում այն մարդկանց ընտանիքները, ովքեր ունեն այդ հատկանիշներից մեկը կամ մի քանիսը:
- Ինչպե՞ս կարող է Փրկիչի շնորհի հնարավորություն տվող զորության միջոցով այդ հատկանիշներից մեկի կամ մի քանիսի զարգացնելն օգնել ձեզ դառնալ ավելի լավ ամուսին կամ կին, հայր կամ մայր:

Բացատրեք ուսանողներին, որ այսօրվա դասի արդյունքում մեզանից յուրաքանչյուրը պիտի գտնի մի կարևոր հարցի պատասխան: Ցուցադրեք Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներին մտքում կարդալ այն.



«Ուրեմն մահկանացու կյանքի ստուգարքի ճշգրիտ բնույթը կարելի է ամփոփել հետևյալ հարցով. Արդյո՞ք ես կարձագանքեմ բնական մարդու հակամեներին, թե ես կենթարկվեմ Սուրբ շոգու հորդորներին և կհանեմ բնական մարդուն ու կդառնամ սուրբ՝ Տեր Քրիստոսի Քավությամբ (տես Մովսես 3.19): Սա է ստուգարքը» (“We Believe in Being Chaste,” 43):

Ուսանողներին մի քանի բույե ժամանակ տվեք, որպեսզի գրեն Երեց Բեդնարի հարցի պատասխանը: Հրավիրեք նրանց խորհել Մոսիա 3.19-ում տրված Քրիստոսանման հատկանիշների շուրջ և ծրագրել, թե ինչպես սկսել ավելի լիարժեք ձևով զարգացնել այդ հատկանիշներից մեկը:

### Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 2.27–29, Մոսիա 3.19, 16.3–6, Մովսես 6.49, 53–55, Աբրահամ 3.25:
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Քավությունը և մահկանացու ճամփորդությունը», *Ensign*, ապրիլ 2012, 40–47:

## ԴԱՍ 6

# Ընտանիքն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում

### Նախաբան

Մեր օրերի մարգարեները և առաքյալները հայտարարել են, որ «ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129): Այս դասը կօգնի

ուսանողներին հասկանալ, որ եթե «ավելի ջանասեր լինեն և մտահոգվեն տան համար» (ՎնՈւ 93.50), նրանք կարող են իրենց ընտանիքները դարձնել իրենց կյանքի առանցքային մասը:

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- Robert D. Hales, “The Eternal Family,” *Ensign*, Nov. 1996, 64–67.
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Ավելի ջանասեր և մտահոգ տան համար», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 17–20:
- *Ձեռնարկ 2. Եկեղեցում սպասավորելը* [2010], 1.1.1, 1.1.4 և 1.4.1 (եթե մատչելի է):

### Ուսուցման առաջարկներ

#### Ընտանիքն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում

Ձեր դասարանին տեղեկացրեք, որ վերջին գերագույն համաժողովների ժամանակ հնչած բոլոր թեմաների մեջ ընտանիքի թեման ամենահաճախ քննարկվողն է:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են Եկեղեցու ղեկավարներն այդքան հաճախ խոսում ընտանիքի մասին:

Ընտանիքի մասին հայտարարության այս հատվածը գրեք գրատախտակին, և ուսանողներին խնդրեք կիսվել, թե ինչ նշանակություն ունի այն նրանց համար.

«Ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար»:



Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես ընտանիքն առանցքային դեր ունի մեր հավերժական ճակատագրի համար, դասարանին բաժանեք այս դասի վերջում գտնվող թերթիկների օրինակները: Դասարանը բաժանեք փոքր խմբերի:

Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք կարդալ թերթիկների երեք հատվածներից մեկը և քննարկել տրված հարցերը: Համոզվեք, որ բոլոր հատվածներն էլ հանձնարարված են:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք թերթիկի յուրաքանչյուր հատվածն ուսումնասիրող խմբից առնվազն մեկ ուսանողի՝ կիսվելու դասարանի հետ իրենց փոքրիկ խմբի քննարկումներով: Վկայեք հետևյալ ճշմարտության մասին. **Ընտանիքն Աստծո ծրագրի առանցքային մասն է կազմում նախաերկրային, մահկանացու և հավերժական կյանքի համար:**

- Ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել ձեր կյանքում, որոնք օգնել են ձեզ զգալ ընտանիքի կարևորությունն Աստծո ծրագրում:

**Վարդապետություն և Ուխտեր 93.39-50**

*Ընտանիքը դարձնել առաջնահերթություն*

Նախապատրաստեք ուսանողներին ուսուցանվելու Վարդապետություն և Ուխտեր 93 բաժնից, բացատրելով, որ այստեղ այլ բաների շարքում տրվում են երեխաներին «լույսի և ճշմարտության» մեջ մեծացնելու և մեր ընտանիքներն առաջնահերթություն դարձնելու մասին Տիրոջ հրահանգները: Հետևյալ հղումները գրեք գրատախտակին.

*Վարդապետություն և Ուխտեր 93.39-43*  
*Վարդապետություն և Ուխտեր 93.44*  
*Վարդապետություն և Ուխտեր 93.45-48*  
*Վարդապետություն և Ուխտեր 93.50*

Խնդրեք ուսանողներին կարդալ հղումներից առնվազն մեկը (համոզվեք, որ հղումներից յուրաքանչյուրը կարդացվել է առնվազն մեկ ուսանողի կողմից): Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ում էր դիմում Տերը և ինչ հրահանգներ էր տալիս: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել իրենց սովորածը: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ նշված չորս տղամարդիկ Առաջին Նախագահությունը և Օհայոյի Եկեղեցու եպիսկոպոսն էին. այսպիսով այս սուրբ գրությունները հիշեցնում են Եկեղեցու բոլոր անդամներին, նույնիսկ նրանց, ովքեր ունեն դեկավար պաշտոններ, դարձնել իրենց ընտանիքները առաջնահերթություն: Դուք կարող եք խորհուրդ տալ ուսանողներին, որ նրանք նշեն այս հատվածներում գտնվող կրկնությունը կամ օրինաչափությունը՝ Եկեղեցու անդամները պետք է «կարգի բերեն» իրենց ընտանիքները (տես հատվածներ 43, 44 և 50):

- Համաձայն 42, 48 և 50 հատվածների, մենք ի՞նչ կարող ենք անել, որ օգնենք կարգի բերել մեր ընտանիքները: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալը. սովորեցնել երեխաներին լույսի ու ճշմարտության մասին, ապաշխարել, հրաժարվել անարդար բաներից, տանը լինել ավելի ջանասեր և հոգատար և միշտ աղոթել:)

Գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին. **Մենք օգնում ենք իրագործել ընտանիքները կարգի բերելու Տիրոջ պատվիրանը, երբ մենք ավելի ջանասեր ու հոգատար ենք լինում տանը:**

- Ի՞նչ կարող է անել երիտասարդ չափահասը, որպեսզի ավելի ջանասեր և հոգատար լինի տան համար:

Ցուցադրեք Առաջին Նախագահության կողմից 1999 թվականին գրված նամակի հետևյալ հայտարարությունը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«Տունը արդարակյաց կյանքի հիմքն է, և ոչ մի այլ միջոց չի կարող փոխարինել կամ կատարել նրա հիմնական դերը՝ առաջ տանելու Աստծո կողմից տրված այս պարտականությունը:

«Մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին և երեխաներին մեծագույն առաջնահերթություն համարել ընտանեկան աղոթքը, ընտանեկան տնային երեկոն, ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցումը, և ընտանեկան առողջ միջոցառումները: Թեպետ արժանի և պատշաճ այլ պահանջներ կամ միջոցառումներ կարող են լինել, դրանք չպետք է փոխարինեն աստվածայնորեն նշանակված պարտականություններին, որ միայն ծնողները և ընտանիքները կարող են ինչպես հարկն է կատարել» (Առաջին Նախագահության նամակ, փետրվարի 11, 1999թ., մեջբերում. *Ձեռնարկ 2. Եկեղեցում սպասավորելը* [2010], 1.4.1):

- Ելնելով ձեր փորձից, որոնք են «հիմնական դերերը» և «աստվածայնորեն նշանակված պարտականությունները», որոնք լավագույնս իրականացվում են ընտանիքում:

Ցուցադրեք հետևյալ հայտարարությունը և խրախուսեք ուսանողներին խորհել օրհնությունների մասին, որոնք տրվում են, երբ ընտանիքի յուրաքանչյուր անդամը ձգտում է կատարել աստվածայնորեն նշանակված ընտանեկան պարտականությունները.

«Որտեղ էլ որ եկեղեցու անդամներն ապրեն, նրանք պետք է հիմնեն տուն, որտեղ շոգին ներկա կլինի: ...

Սիրող և հավատարիմ ծնողներով տունը լավ միջավայր է, որտեղ առավել արդյունավետ են բավարարվում երեխաների հոգևոր և ֆիզիկական կարիքները: Քրիստոսի վրա կենտրոնացած տունը մեծահասակներին և երեխաներին ապահովում է մեղքերից պաշտպանվելու միջավայր, ապաստան աշխարհից, բուժում է էմոցիոնալ և այլ տեսակի ցավերը, և պարզում է նվիրյալ ու անկեղծ սեր» (*Ձեռնարկ 2. Եկեղեցում սպասավորելը*, 1.4.1):

- Ինչպե՞ս եք ձեր ընտանիքին օգնում ստեղծել Քրիստոսի վրա կենտրոնացած տուն:
- Ի՞նչ է դա փոխում ձեր ընտանիքում:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.





«Դրեք ամեն ինչ, որ դուք անում եք տնից դուրս՝ ի ենթակայություն և ի աջակցություն նրա, ինչ պատահում է ձեր տան ներսում: Հիշեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի խորհուրդը, որ «ամենակարևոր ... աշխատանքը, որ դուք երբևէ կանեք, կլինի ձեր սեփական տան պատերի ներքո» ... իսկ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է. «Ոչ մի այլ հաջողություն չի կարող փոխհատուցել տանը ունեցած ձեր ձախողմանը» («Որպեսզի կորածները գտնվեն», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2012, 99):

Ժամանակ տրամադրեք, որպեսզի ուսանողները գրեն մի քանի բան, որ կարող են անել ավելի ջանասեր և տան համար մտահոգվող լինելու համար և իրենց ընտանիքները դարձնեն իրենց կյանքի ավելի առանցքային կիզակետը: Խրախուսեք ուսանողներին նպատակ դնել, որ իրագործեն իրենց գրած նպատակներից մեկը: Վկայեք, որ երբ ուսանողներն իրագործեն իրենց նպատակը, Տերը կամրացնի նրանց հոգևորապես և կօգնի նրանց տեսնել, թե ինչպես են իրենց գործողություններն ամրացնում նաև իրենց ընտանիքներին:

### Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 93.39-50:
- Robert D. Hales, “The Eternal Family,” *Ensign*, Nov. 1996, 64–67.

# Մեր նախաերկրային, մահկանացու և հավերժական ընտանիքները

## Մեր նախաերկրային ընտանիքը

«Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից: Այն ամենակարևոր միավորն է ժամանակի և հավերժության մեջ: Նույնիսկ մինչև մեր ծնվելն այս աշխարհում մենք եղել ենք ընտանիքի մի մաս: Մեզանից յուրաքանչյուրը «երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է», ունենալով «աստվածային բնույթ և ճակատագիր» [«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129]: Աստված մեր Երկնային Հայրն է, և մենք նախաերկրային կյանքում ապրել ենք Նրա ներկայության մեջ՝ որպես Նրա ընտանիքի մի մաս: Այնտեղ մենք սովորել ենք մեր առաջին դասերը և նախապատրաստվել մահկանացու կյանքին (տես Վևու 138.56)» (*Ձեռնարկ 2. Եկեղեցում սպասավորելը* [2010], 1.1.1):



«Մենք երկրպագում ենք հզոր Աստծուն, ով ստեղծել է տիեզերքը: Նա մեր Հայրն է երկնքում: Մենք արարվել ենք Նրա շնորհիվ. մենք Նրա հոգևոր զավակներն ենք: Մենք որպես ընտանիք ապրել ենք Նրա հետ նախաերկրային կյանքում: Մենք ճանաչել ենք Նրան այնքան մոտիկից և այնքան լավ, որքան մենք ճանաչում ենք մեր մահկանացու հայրերին այս երկրագնդում» (Bruce R. McConkie, *How to Worship*, Brigham Young University Speeches of the Year [July 20, 1971], 2):

Քննարկման հարցեր.

- Ինչպե՞ս էր ընտանիքը հանդիսանում մեր նախաերկրային կյանքի կարևոր մասը:
- Ինչպե՞ս է ձեզ օգնում իմացությունն այն մասին, որ Աստված ձեր Հայրն է և որ դուք նախաերկրային կյանքում եղել եք Նրա ընտանիքի սիրելի անդամը:
- Ձեր պատկերացմամբ, ինչպիսի՞ն են եղել ձեր փոխհարաբերությունները ձեր Երկնային Ծնողների հետ:

## Մեր մահկանացու ընտանիքը

«Մեր Երկնային Հոր ծրագրի համաձայն մենք ծնվել ենք ընտանիքներում: Նա հիմնել է ընտանիքները, որպեսզի մենք երջանիկ լինենք, սովորենք ճիշտ սկզբունքները սիրո մթնոլորտում և պատրաստվենք հավերժական կյանքին: Ծնողները կարևոր պատասխանատվություն են կրում՝ օգնելու իրենց երեխաներին պատրաստվել Երկնային Հոր մոտ վերադառնալուն: Ծնողներն այս պատասխանատվությունը կատարում են՝ սովորեցնելով իրենց երեխաներին հետևել Հիսուս Քրիստոսին և ապրել Նրա ավետարանով» (*Ձեռնարկ 2, Եկեղեցում սպասավորելը*, 1.1.4):



«Աստված ընտանիքի հեղինակն է: Նա նախատեսել է, որ մեծագույն երջանկությունը, կյանքի ամենամեծ բավականություն պատճառող երևույթները, անսահման ուրախությունները պետք է բխեն մեր հարաբերություններից և միմյանց հանդեպ մեր ստախոգություններից՝ որպես հայրեր, մայրեր և զավակներ» (Gordon B. Hinckley, "What God Hath Joined Together," *Ensign*, May 1991, 74):

Քննարկման հարցեր.

- Ինչպե՞ս է ընտանիքը հանդիսանում մեր մահկանացու կյանքի կարևոր մասը:
- Ինչպիսի՞ն կլինեն կյանքը, եթե մենք աշխարհ ուղարկվելիք որպես անհատներ առանց ընտանեկան հարաբերությունների՝ չլինելիս հայր, մայր, ազգականներ, նախնիներ, ոչ էլ ժառանգներ:
- Ի՞նչ փորձառություններ եք ունեցել, որոնք օգնել են ձեզ հասկանալ մահկանացու ընտանիքի դերը և կարևորությունը:

**Մեր հավերժական ընտանիքը**

«Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան հարաբերությունները հարատևեն գերեզմանից այն կողմ» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129):



«Մինչդեռ մեր անձնական փրկությունը կախված է մեր անձնական հնազանդությունից, հավասարապես կարևոր է, որ մենք հասկանանք, որ մեզանից յուրաքանչյուրը հանդիսանում է ընտանիքի կարևոր և անբաժանելի մաս, և ամենամեծ օրհնությունները կարող ենք ստանալ միայն հավերժական ընտանիքում: Երբ ընտանիքները գործում են ըստ Աստծո նախասահմանած կարգի, դրանցում առկա հարաբերությունները դառնում են մահկանացու կյանքի ամենաարժեքավոր երևույթը: Հոր ծրագիրը կայանում է նրանում, որ ընտանեկան սերը և հարաբերությունները շարունակվեն հավերժություններում: Ընտանիքով մեկ լինելը կրում է մեծ պարտավորություն՝ հոգ տանելու, սիրելու, բարձրացնելու և ամրացնելու ընտանիքի յուրաքանչյուր անդամին, որպեսզի բոլորը կարողանան մահկանացու կյանքում արդարակեցությամբ համբերել մինչև վերջ և միասին ապրել ողջ հավերժության մեջ: Բավական չէ լուկ սեփական անձը փրկել: Հավասարապես կարևոր է, որ ծնողները, եղբայրները և քույրերը փրկվեն մեր ընտանիքներում: Եթե մենք մենակ վերադառնանք տուն մեր Երկնային Հոր մոտ, մենք կլսենք հետևյալ հարցը՝ «Որտե՞ղ են ընտանիքի մյուս անդամները»: Ահա, թե ինչու ենք մենք սովորեցնում, որ ընտանիքները հավերժ են: Անհատի հավերժական էությունը դառնում է ընտանիքի հավերժական էությունը» (Robert D. Hales, "The Eternal Family," *Ensign*, Nov. 1996, 65):

Քննարկման հարցեր.

- Ինչպե՞ս է ընտանիքը հանդիսանում մեր հավերժական ճակատագրի կարևոր մասը:
- Որո՞նք են արդար արարքները, որ ընտանիքի անդամները կարող են կատարել, որպեսզի օգնեն իրագործելու մեկը մյուսի փրկությունը:
- Ե՞րբ է ընտանիքի անդամը բարձրացրել կամ ամրացրել ձեզ այնպես, որ ոգեշնչել է ձեզ համբերել մինչև վերջ:





## ԴԱՍ 7

# Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից

### Նախաբան

Երկնային Հայրը Եդեմի պարտեզում Ադամի և Եվայի հետ հաստատեց ամուսնության աստվածային օրինաչափությունը: Մեր օրերում Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հաստատեցին այս օրինաչափությունը՝ հայտարարելով, որ «Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը

հաստատվել է Աստծո կողմից» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129): Չնայած մարդկային օրենքները կարող են փորձել վերափոխել այս սահմանումը, Աստծո օրենքները միշտ նույնն են մնում:

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ինչո՞ւ ամուսնանալ, ինչո՞ւ ընտանիք ունենալ», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2015, 50-53:
- Դավիթ Հ. Օուքս, «Ուրիշ աստվածներ չունենաս», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2013, 72-75:
- Sheri L. Dew, “It Is Not Good for Man or Woman to Be Alone,” *Ensign*, Nov. 2001, 12-14.
- “The Divine Institution of Marriage,” [mormonnewsroom.org/article/the-divine-institution-of-marriage](http://mormonnewsroom.org/article/the-divine-institution-of-marriage).
- Gospel Topics, “Same-Sex Marriage,” [lds.org/topics](http://lds.org/topics).

### Ուսուցման առաջարկներ

#### Վարդապետություն և Ուխտեր 49.15-17, Մովսես 3.21-24:

*Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից*

Գրատախտակին գրեք հետևյալ վարդապետությունը. «Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից»: Հարցրեք ուսանողներին, թե այս նախադասության մեջ ինչ է նշանակում *հաստատել* բառը: (Հնարավոր պատասխաններ. պատվիրել, հրամանագրել կամ նշանակել վերադասի կողմից:) Հարցրեք ուսանողներին, թե ինչպես է այս սահմանումն օգնում նրանց հասկանալ գրատախտակին գրված վարդապետությունը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 49.15-17 հատվածները, որպեսզի գտնեն այս վարդապետության աստվածաշնչյան լրացումները:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մովսես 3.21-24 հատվածները: Դասարանին հրավիրեք փնտրել, թե փրկության ծրագրի որ կարևոր քայլն է նկարագրված այս հատվածներում: (Երբ ուսանողները պատասխանեն, բացատրեք, որ Ադամի կող արտահայտությունը խորհրդանշական է, Աստված իրականում կող չի հեռացրել Ադամից: Կարող եք առաջարկել նաև, որ ուսանողները գրեն *հարել* բառի սահմանումը իրենց սուրբ գրությունների լուսանցքում. «ստեղծել մտերիմ, հարատև և հաստատուն միություն»:)

- Ձեր կարծիքով, ի՞նչ էր Աստված ուզում ուսուցանել մեզ՝ նման կերպով նկարագրելով Եվայի ֆիզիկական արարումը: (Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Կողը, որպես կողքից վերցված մաս, կարծես թե ունի գործընկերության իմաստ: Կողը նշանակում է ոչ թե իշխանություն կամ ստրկամտություն, այլ հավասար հարաբերություններ որպես գործընկերներ՝ աշխատելու և ապրելու կողք կողքի» [“Lessons from Eve,” *Ensign*, Nov. 1987, 87]:)
- Մենք ի՞նչ կարող ենք սովորել Մովսես 3.24-ից: (Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոմ Զրիստոֆերսոնն ասել է, որ Աստված «միավորեց [Ադամին ու Եվային] որպես ամուսին և կին: ... Ոչ մենք, ոչ էլ որևէ մահկանացու էակ չի կարող վերափոխել ամուսնության այս աստվածային կարգը: Դա մարդու կողմից հորինված կարգ չէ» [«Ինչո՞ւ ամուսնանալ, ինչո՞ւ ընտանիք ունենալ», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 52]:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Խնդրեք դասարանին փնտրել մտքեր, թե ինչու է Աստված կարգել, որ ամուսնությունը տեղի ունենա միայն տղամարդու և կնոջ միջև:



«Երկրի ստեղծումից հետո Ադամը դրվեց Եդեմական Պարտեզում: Կարևոր էր, սակայն, որ Աստված ասաց. «լավ չէ, որ մարդը մենակ լինի» (Մովսես 3.18, տես նաև Մոսեոս Բ.18), և Եվան դարձավ Ադամի կինը և օգնականը: Անհրաժեշտ էր ինչպես արական, այնպես էլ իգական սեռի հոգևոր, ֆիզիկական, մտավոր և հուզական կարողությունների առանձնահատուկ միավորում՝ երջանկության ծրագիրը գործարկելու համար: «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տերումը» (Ա Կորնթացիս ԺԱ.11): Տղամարդն ու կինը նախատեսված են, որ միմյանցից սովորեն, զորացնեն, օրհնեն և լրացնեն միմյանց» (“We Believe in Being Chaste,” *Ensign or Liahona*, May 2013, 41-42):

- Ելնելով Երկնային Հոր երջանկության ծրագրի վերաբերյալ ձեր հասկացողությունից՝ ինչո՞ւ է տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը հաստատվել Նրա կողմից:

**Մովսես 3.18, 5.1–5, 12, 16**

*Ամուսինն ու կինը հավասար գուրդներ են*

- Ի՞նչ իմաստ կարող է ունենալ օրինակին հետևելը, երբ օրինակ՝ հազուստ եք կարում:
- Ի՞նչ իմաստ կարող է ունենալ ամուսնության կատարյալ օրինակն ուսումնասիրելը:


Բացատրեք, որ Ադամի և Եվայի ամուսնությունը ներկայացնում է Տիրոջ տված օրինակը, թե ինչպիսին պետք է լինի ամուսնությունը:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մովսես 3.18 հատվածը:

- Ինչպե՞ս եք հասկանում «օգնական» (help meet) եզրույթը: («Help» բառը թարգմանվել է եբրայերեն երկու արմատների համակցումից, որոնցից մեկը նշանակում է ազատել կամ փրկել, իսկ մյուս նշանակությունն է լինել ուժեղ: «Meet» բառը թարգմանվել է եբրայերեն բառից, որը նշանակում է հարմար և հավասար: Այսպիսով, «օգնական» (help meet) բառը նշանակում է հարմար և հավասար գուրդներ, ով ունի փրկելու գործություն: Առաջարկեք, որ ուսանողները գրեն այս սահմանումն իրենց սուրբ գրություններում՝ Մովսես 3.18 հատվածի կողքին: Տես նաև Հովարդ Վ. Հանթեր, “Being a Righteous Husband and Father,” *Ensign*, Nov. 1994, 51:)
- Ըստ այս եզրույթի, ինչպիսի՞ հարաբերություններ պետք է գոյություն ունենան ամուսնու և կնոջ միջև: (Ամփոփեք ուսանողների պատասխանները՝ գրատախտակին գրելով հետևյալ վարդապետությունը. **Երկնային Հայրը հաստատել է, որ ամուսինը և կինը պետք է լինեն հավասար գործընկերներ:**)
- Ձեր կարծիքով, ամուսնու և կնոջ համար ի՞նչ է նշանակում լինել հավասար գործընկերներ:

Դասարանը բաժանեք երեք կամ չորս ուսանողից բաղկացած փոքր խմբերի: Խնդրեք ուսանողներին աչքի անցկացնել Մովսես 5.1–5, 12 և 16 հատվածները՝ փնտրելով այն եղանակները, որոնցով Ադամն ու Եվան աշխատում էին միասին որպես հավասար գործընկերներ, և քննարկեն իրենց մտքերն իրենց խմբերում:

Ցուցադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) և Սփոփող Միության գերագույն նախագահության խորհրդակցաններից Քույր Շերի Լ. Դյուի հետևյալ խոսքերը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Այս ոգեշնչված արձանագրությունից [Մովսես 5.1–2, 4, 12, 16] մենք տեսնում ենք, որ Ադամն ու Եվան տվեցին մեզ ամուսնության փոխհարաբերության ուխտի մի կատարյալ օրինակ: Նրանք աշխատում էին միասին, նրանք երեխաներ ունեցան միասին, նրանք աղոթում էին միասին և նրանք ուսուցանում էին իրենց երեխաներին ավետարանը միասին: Սա է այն

օրինակը, որ Աստված կամենում է բոլոր արդար տղամարդիկ և կանայք ընդօրինակեն» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թավոթ Բենսոն [2014], 219):



«Խորհեք Ադամի և Եվայի սուրբ գրությունների հատվածների շուրջ և ուշադրություն դարձրեք, թե ինչ կուսուցանի ձեզ Տերը, որը կամրացնի ձեր ամուսնությունը և ձեր ընտանիքը: ... Մեր շոր տված օրինակներն օգնում են մեզ խուսափել խաբեություններից: Տղամարդու և կնոջ վերաբերյալ ձեր գաղափարների և կատարյալ օրինակի համար ձեր հայացքն ուղղեք դեպի Տերը, և ոչ թե դեպի աշխարհը» (Sheri L. Dew, "It Is Not Good for Man or Woman to Be Alone," *Ensign*, Nov. 2001, 14):

- Ե՞րբ եք տեսել, որ ամուսինն ու կինը աշխատեն միասին որպես հավասար գործընկերներ:
- Ձեր կարծիքով, ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ ձեր ապագայի վրաս ամուսնության աստվածային օրինակի ըմբռնումը:

Երկու ցանկ կազմելու համար ուսանողներին տվեք մի քանի ըրայե. (1) հատկանիշներ, որոնք նրանք այժմ ունեն, որոնք կօգնեն նրանց հասնել Աստծո կողմից հաստատված ամուսնության, և (2) հատկանիշներ, որոնք նրանք միգուցե պետք է փոխեն, որպեսզի ավելի մոտենան այդ նպատակին: Արտահայտեք ձեր վստահությունը, որ Տերը կօրհնի նրանց ջանքերը:

**Մորմոն 9.9**

*Տիրոջ ուսմունքները միասեռ ամուսնությունների մասին*

(Նշում. Դյուրագգաց եղեք այն ուսանողների հանդեպ, ովքեր այս խնդրի շուրջ այլ կարծիք ունեն: Դասարանի ուշադրությունը հրավիրեք Եկեղեցու Գերագույն Իշխանավորների հայտարարությունների վրա:)

- Ի՞նչ փոփոխությունների ենթարկվեց Աստծո կողմից հաստատված ամուսնության օրինակը, երբ կառավարությունը օրենքներ տարածեց, որոնք օրինականացնում էին վարքագիծը, որը հակասակ է այս օրինակին: (Երբ ուսանողները պատասխանեն, օգտագործեք Մորմոն 9.9 հատվածը, որպեսզի ցույց տաք, որ Աստված և Նրա օրենքներն անփոփոխ են: Աստծո անփոփոխ էությունն օգնում է մեզ վստահություն և հավատք ունենալ Նրա հանդեպ:)

Յուրաքանչյուր ուսանողի տվեք Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի հետևյալ հայտարարության մեկական օրինակ և հրավիրեք ուսանողներին փնտրել այն պատճառները, թե ինչու են Եկեղեցու ղեկավարները խոսել միասեռ ամուսնությունների մասին:

«Բազմաթիվ երկրների իրավաբանական և օրենսդիր մարմինները քաղաքացիական համաձայնություն են տվել միասեռ ամուսնությունների հարաբերություններին, և միասեռ ամուսնությունների հարցը շարունակում է լայնորեն քննարկվել: Մինչ մենք կդիմակայենք



այս և այլ հարցերին, մենք խրախուսում ենք բոլորին իրենց մտքում պահել մեր Երկնային Հոր նպատակները, երբ նա ստեղծեց Երկիրը և տեղ պատրաստեց մեր մահկանացու ծննդյան և այստեղ մեր փորձառությունների համար՝ որպես Իր զավակների [տես Ծննդոց Ա.27–28, Բ.24]: ... Տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և առանցքային է Նրա ծրագրում՝ Իր զավակների և հասարակության բարեկեցության համար: Ամուր ընտանիքները, որոնք առաջնորդվում են սիրող մոր և հոր կողմից, հիմնարար հաստատություն են երեխաներին դաստիարակելու, հավատք սերմանելու և գալիք սերունդներին փոխանցելու բարոյական ուժն ու արժեքները, որոնք կարևոր են քաղաքակրթության համար և էական են հավերժական փրկության համար:

Քաղաքացիական օրենքում փոփոխությունները չեն փոխում, և չեն էլ կարող փոխել Աստծո սահմանած բարոյական օրենքը: Աստված ուզում է, որ մենք հետևենք Նրա պատվիրաններին և պահենք դրանք՝ անկախ հասարակության մեջ տիրող տարամետ կարծիքներից կամ միտումներից: Մաքրաբարոյության Նրա օրենքը պարզ է. սեռական հարաբերությունները պատշաճ են միայն տղամարդու և կնոջ միջև, ովքեր քաղաքացիական և օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին» (Gospel Topics, “Same-Sex Marriage,” [lds.org/topics](https://www.lds.org/topics)):

- Աստծո ծրագրի և վարդապետության ըմբռնումն ինչպե՞ս է մեզ օգնում գիտակցել տղամարդու և կնոջ միջև ամուսնության կարևորությունը:

Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք նաև հետևյալ հայտարարության մեկնական օրինակ, որը վերցված է Եկեղեցու կողմից հրատարակված փաստաթղթից, որը կոչվում է «Ամուսնության աստվածային ինստիտուտը»: Խնդրեք ուսանողներին փնտրել պատճառները, թե ինչու պետք է օրենքներում և քաղաքականությունում պահպանվի տղամարդու և կնոջ միջև ամուսնության սահմանումը.

«Ամուսնությունը հիմնականում անհատների միջև պայմանագիր չէ, որը վավերացնում է նրանց կապը և փոխադարձ պարտավորություններ ապահովում: Փոխարենը, ամուսնությունը և ընտանիքը հանդիսանում են կարևոր գործիքներ երեխաներին մեծացնելու և ուսուցանելու համար, դարձնելով նրանց պատասխանատու չափահասներ: Դարերի ընթացքում բոլոր տեսակի կառավարությունները ընդունել և հաստատել են ամուսնությունը որպես հիմնական ինստիտուտ, պահպանելու սոցիալական կայունությունը և հարատև դարձնելու կյանքը: Անկախ նրանից, թե ամուսնությունը կատարվել է որպես կրոնական ծիսակարգ թե քաղաքացիական արարողություն, գրեթե ամեն մշակույթում ամուսնությունը պաշտպանվել և հաստատվել է կառավարության կողմից, հիմնականում պահպանելով և խթանելով հաստատությունը առավելագույնս կենտրոնական կամ երեխաներին մեծացնելու և նրանց բարոյական արժեքներ ուսուցանելու վրա, որը նպաստել է քաղաքակրթությանը: ...

Հաշվի առնելով սերտ կապերը, որոնք վաղուց գոյություն են ունեցել ամուսնության, երեխաների ծնունդի, սեռի և ծնող լինելու միջև, միասեռ ամուսնությունը չի կարելի համարել պարզապես որպես նոր «իրավունքի» տրամադրում: Այն իրենից ներկայացնում է ամուսնության հենց բուն էության հեռուն զևացող վերափոխման փորձ: Այն հիմնարար փոփոխություն է մատնանշում ամուսնության ինստիտուտում այնպիսի եղանակներով, որոնք հակասում են Իր զավակների համար նախատեսված Աստծու նպատակներին, և ապագայում մեծ վնաս են սպառնում հասարակության շահերին» (“The Divine Institution of Marriage,” [mormonnewsroom.org/article/the-divine-institution-of-marriage](https://www.mormonnewsroom.org/article/the-divine-institution-of-marriage/)):

- Որո՞նք են այն պատճառները, որոնցից ելնելով հասարակությունները ավանդաբար հաստատել և պահպանել են տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը:
- Ինչպե՞ս կարող է անհատը գիտակցել այս կարևոր հարցի շուրջ Եկեղեցու դիրքորոշման ճշմարտացիությունը:

Քաջալերեք ուսանողներին խորհել, թե ինչպես են իրենց կարծիքները համընկնում ամուսնության վերաբերյալ Աստծո ուսմունքների հետ, ինչպես ուսուցանվում են Եկեղեցու ղեկավարների կողմից: Կիսվեք ձեր վկայությամբ, որ ամուսնության վերաբերյալ Աստծո տված օրինակին հավատալը և դրան աջակցելը հավերժական օրհնություններ կբերի:

### **Ուսանողի ընթերցարան**

- Մորմոն 9.9, Վարդապետություն և Ովստեր 49.15–17, Մովսես 3.18–25, 5.1–16:
- “The Divine Institution of Marriage,” [mormonnewsroom.org/article/the-divine-institution-of-marriage](http://mormonnewsroom.org/article/the-divine-institution-of-marriage).

## ԴԱՍ 8

# Սեռը և հավերժական ինքնությունը

### Նախաբան

Մեր սեռը հաստատվել է Նախքան մահկանացու կյանքում ծնվելը և հանդիսանում է մեր հավերժական ինքնության հիմնական բնութագիրը: Եկեղեցու ղեկավարները զանազանում են միևնույն սեռի հանդեպ հակումը, որը մեղսալի չէ, և համասեռամուլ վարքագիծը, որը համարվում է մեղք, քանի որ այն հակասում է մեր վեհացման համար նախատեսված Երկնային Հոր

ծրագրին: Այս դասը կօգնի ուսանողներին տեսնել այս տարբերության մարգարեական հիմքերը և նաև գիտակցել, որ Աստծո բոլոր զավակները հավասարապես սիրելի են և արժանի սիրալիր և բարեկիրթ վերաբերմունքի:

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- Robert D. Hales, “The Plan of Salvation: A Sacred Treasure of Knowledge to Guide Us,” *Ensign*, Oct. 2015.
- Jeffrey R. Holland, “Helping Those Who Struggle with Same-Gender Attraction,” *Ensign*, Oct. 2007, 42–45.
- Dallin H. Oaks, “Same-Gender Attraction,” *Ensign*, Oct. 1995, 7–14.
- Gospel Topics, “Same-Sex Marriage,” [lds.org/topics](https://www.lds.org/topics).
- “Love One Another: A Discussion on Same-Sex Attraction,” [mormonsandgays.org](https://www.mormonsandgays.org). Եթե ուսանողները հարցեր բարձրացնեն համասեռամուլության վերաբերյալ Եկեղեցու քաղաքականության մասին, խնդրում ենք առաջարկել նրանց Եկեղեցու այս պաշտոնական վեբ կայքը:

### Ուսուցման առաջարկներ

#### Վարդապետություն և Ուխտեր 76.24, Մովսես 2.27, «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»


*Սեռը մեր հավերժական ինքնության հիմնական մասն է*

Խնդրեք երեք ուսանողների բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.24, Մովսես 2.27 և «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հոջակագրի երկրորդ պարբերությունը (*Ensign* կամ *Լիսիննա*, նոյ. 2010, 129): Հրավիրեք դասարանին խորհել, թե ինչ են ուսուցանում կամ ենթադրում այս նյութերը սեռի վերաբերյալ:

- Ինչպե՞ս կամփոփեք այն, թե ինչ են ուսուցանում այս նյութերը մեր հավերժական ինքնության մասին: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալը. **Մեր սեռը մեր հավերժական ինքնության և նպատակի հիմնական բնութագիրն է:**)

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ մեր սեռը գոյություն ունի մեր երկիր գալուց դեռևս շատ ժամանակ առաջ: (Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք կիսվել Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի [1876–1972] հետևյալ խոսքերով. «Օննդոցում մենք կարդում ենք. ... «Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց նորան. արու եւ էգ ստեղծեց նորանց»: [Օննդոց Ա.27, շեղագիրն ավելացված է:] Արդյո՞ք հավանական չի թվում, որ իզական սեռի հոգիները ստեղծվել են «Երկնային Մոր» պատկերով: [Answers to Gospel Questions, comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 3:144].)
- Ինչպե՞ս կարող է սեռի հավերժական էության ըմբռնումն օգնել մեզ ապրել Երկնային Հոր երջանկության ծրագրի հետ ներդաշնակության մեջ նույնիսկ այն ժամանակ, երբ հասարակությունը երբեմն ընդունում է վարքագծի այլ չափանիշներ:

Վերը նշված հարցին անդրադառնալու համար կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսի հետևյալ վարդապետական հայտարարությամբ: Կարդացեք յուրաքանչյուր պարբերությունն առանձին-առանձին և քննարկեք, թե ինչ է այն ուսուցանում այն մասին, թե ինչպես է համասեռամոլ վարքագիծը հակառակ Երկնային Հոր ծրագրին, ըստ որի Նրա զավակները պետք է վեհացվեն:



«Մահկանացու կյանքի և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաքելության նպատակն է նախապատրաստել Աստծո որդիներին և դուստրերին իրենց ճակատագրին՝ դառնալու մեր երկնային ծնողների նման:

Մեր հավերժական ճակատագիրը՝ երկնային արքայությունում վեհացումը, հնարավոր է դարձվել միայն Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ (որի միջոցով մենք դարձել ենք և կարող ենք մնալ «անմեղ ... Աստծո առաջ» [Վևու 93.38]) և հնարավոր է միայն տղամարդու և կնոջ համար, ովքեր Աստծո տաճարում մտել են հավերժական ամուսնության ուխտերի մեջ և մնացել հավատարիմ (տես Վևու 131.1–4, 132): ...

Քանի որ սատանան ցանկանում է, որ «բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը» (2 Նեփի 2.27), նրա ամենաեռանդուն ջանքերն ուղղված են խրախուսելու այն ընտրությունները և գործողությունները, որոնք կխափանեն Աստծո զավակների համար նախատեսված ծրագիրը: Նա փորձում է քայքայել անձնական պատասխանատվության սկզբունքը, համոզել մեզ չարաշահել ծնունդ տալու մեր սրբազան գործությունները, արժանի տղամարդկանց և կանանց մոտ հիասթափություն առաջացնել ամուսնանալու և երեխաներ ունենալու հարցերում և շփոթություն առաջ բերել, թե ինչ է նշանակում լինել տղամարդ կամ կին» (“Same-Gender Attraction,” *Ensign*, Oct. 1995, 7–8):

**Վարդապետություն և Ուխտեր 59.6**

*Եկեղեցին տարբերություն է դնում միևնույն սեռի հասնեպ հակում ունենալու և համասեռամոլ վարքագծի միջև*

Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերի մեկական

օրինակ. Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել այդ խոսքերը՝ փնտրելով այնպիսի սկզբունքներ, որոնք Երեց Հովանդն ուսուցանում է այն մարդկանց մասին, ովքեր հակում ունեն միևնույն սեռի մարդկանց հանդեպ և թե ինչպես պետք է սիրով արձագանքել նրանց:



«Մի 20 տարեկան հաճելի երիտասարդ նստած էր իմ դիմաց: Նա հաճելի ժպիտ ուներ, չնայած նա հաճախ չէր ժպտում մեր գրույցի ընթացքում: Իմ ուշադրությունը հատկապես գրավեց նրա աչքերի ցավը:

«Չգիտեմ, թե արդյո՞ք պիտի մնամ Եկեղեցու անդամ», - ասաց նա: «Չեմ կարծում, որ արժանի եմ»:

«Ինչո՞ւ արժանի չես», - հարցրեցի ես:

«Ես համասեռամուլ եմ»:

Կարծում եմ մտածում էր, թե ես հանկարծակիի կգամ: Բայց ես հանկարծակիի չեկա: «Ե՛վ ...», - հարցրեցի ես:

Հանգստության շող անցավ նրա դեմքով, երբ զգաց իմ չմարող հետաքրքրությունը: «Ինձ կանայք չեն գրավում: Ինձ գրավում են տղամարդիկ: Ես փորձել եմ անտեսել այդ զգացումները կամ փոխել դրանք, բայց ...»

Նա հառաչեց: «Ինչո՞ւ եմ ես այսպիսին: Այդ զգացումները շատ իրական են»:

Ես կանգ առա, ապա ասացի. «Պետք է մի քիչ ավելի շատ տեղեկություններ ձեռք բերեմ, նախքան քեզ խորհուրդ կտամ: Հասկանո՞ւմ ես, Նույն սեռի հանդեպ հակումը մեղք չէ, բայց այդ զգացումների հիման վրա գործելը մեղք է, ճիշտ ինչպես կլիներ տարասեռ զգացումների դեպքում: Դու խախտո՞ւմ ես մաքրաբարոյության օրենքը»:

Նա շարժեց գլուխը: «Ոչ, չեմ խախտում»:

Այս անգամ ես թեթևություն զգացի: «Շնորհակալություն, որ ցանկացար պայքարել դրա դեմ», - ասացի ես: Դրա համար խիզախություն էր պետք, և ես քեզ հարգում եմ քեզ մաքուր պահելու համար:

Ինչ վերաբերվում է նրան, թե ինչու ես դու այդպես զգում, ես չեմ կարող պատասխանել այդ հարցին: Կարող եմ ազդել մի քանի գործոններ և դրանք կարող են այնքան տարբեր լինել, ինչպես մարդիկ են տարբեր: Որոշ բաներ, ներառյալ քո զգացումների պատճառը, մենք միզուցե երբեք չիմանանք այս կյանքում: Բայց պատճառը, թե ինչու ես այդպես զգում այնքան կարևոր չէ, որքան այն, որ դու չես օրինազանցել: Եթե քո կյանքը ներդաշնակության մեջ է պատվիրանների հետ, ապա դու արժանի ես ծառայել Եկեղեցուն, վայելել լիակատար ընկերակցություն անդամների հետ, հաճախել տաճար, և ստանալ Փրկչի Զավության բոլոր օրհնությունները»:

Նա մի փոքր ավելի ուղիղ նստեց: Ես շարունակեցի. «Դու ճիշտ չես վերաբերվում ինքդ քեզ, երբ քեզ որակում ես հիմնականում քո սեռական զգացողություններով: Դա քո միակ առանձնահատկությունը չէ, այնպես որ առանձնահատուկ ուշադրություն մի դարձրու դրա վրա: Առաջինը և ամենակարևորը դու Աստծո որդին ես, և Նա սիրում է քեզ» ("Helping Those Who Struggle with Same-Gender Attraction," *Ensign*, Oct. 2007, 42):

- Ի՞նչ սկզբունք դուք բացահատեցիք Երեց Հովանդի խորհրդի մեջ:

Հետևյալ հստակ սկզբունքները գրեք գրատախտակին, երբ ուսանողները կիսվեն դրանցով, և զգուշորեն քննարկեք դրանք:

- Մենք կարող ենք զգալ Աստծո սերը, երբ կենտրոնանանք որպես Նրա որդիներ և դուստրեր մեր ինքնության վրա:

- **Նույն սեռի մարդկանց հանդեպ հակում ունենալը մաքրաբարոյության օրենքի խախտում չէ, սակայն այդ հակումին տեղի տալը խախտում է:** Կարող եք կիսվել Վարդապետություն և Ուխտեր 59.6 հատվածով. «Շնորհում մի արա, ... ոչ էլ նման որևէ բան գործիր», շեշտեք, որ «ոչ էլ նման որևէ բան գործիր» արտահայտությունը վերաբերում է ամուսնական կապերից դուրս ցանկացած սեռական հարաբերության: Համասեռամուլ վարքագիծը մեղք է, ճիշտ ինչպես տարբեր սեռերի միջև հարաբերությունները ամուսնությունից դուրս մեղսալի են: Յուրաքանչյուր ոք, ով մասնակից է դառնում սեռական բնույթի որևէ մեղքի, կարող է ներվել ապաշխարության միջոցով:
- **Անկախ այն պատճառներից, որ որոշ մարդիկ հակում ունեն միևնույն սեռի հանդեպ, բոլոր մարդիկ կարող են ապրել Աստծո պատվիրաններին համահունչ:** Շեշտեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսի հետևյալ հայտարարությունը. «Կան շատ բաներ, որոնք մենք չենք հասկանում այս հարցի վերաբերյալ, այնպես որ լավ կլինի, եթե մենք մոտ մնանք այն ամենին, ինչ գիտենք ըստ Աստծո հայտնած խոսքի: Իսկ մենք գիտենք այն, որ Եկեղեցու վարդապետությունը, որ սեռական հարաբերությունները պետք է տեղի ունենան տղամարդու և կնոջ միջև, ովքեր ամուսնացած են, չի փոխվել և ենթակա չէ փոփոխության» (“What Needs to Change,” mormonsandgays.org):
- **Երբ մենք ապրում ենք Աստծո պատվիրանների համաձայն, մենք կարող ենք վայելել Եկեղեցու անդամության հետ կապված բոլոր արտոնությունները և Փրկիչի Քավության օրհնությունները:** Միզուցե մարդիկ չեն կարող ընտրել, որ նույն սեռի հանդեպ հակում չունենան, նրանք կարող են ընտրել, թե ինչպես արձագանքեն այդ հակվածությանը:

Այդ սկզբունքները գրատախտակին գրելուց հետո հարցրեք.

- Ի՞նչպես կարող են այդ սկզբունքները հուսադրել նրանց, ովքեր հակում ունեն միևնույն սեռի հանդեպ:
- Ի՞նչ այլ սկզբունքներ ենք մենք սովորում Երեց Հովանդի խոսքերից:

**Մատթեոս Է. 12, Հովհաննես Ը. 1–11, 15. 12**

*Մենք պետք է սեր և բարություն ցուցաբերենք ուրիշների հանդեպ*

(Նշում. Դասի այս մասն ուսուցանելիս չմոռանաք շեշտել, որ նրանք, ովքեր հակում ունեն միևնույն սեռի մարդկանց հանդեպ, սակայն տեղի չեն տալիս այդ հակվածությանը, մեղավոր չեն, ինչպես շնության մեջ բռնված կինը: Այնուամենայնիվ, Քրիստոսի վերաբերմունքն այդ կնոջ հանդեպ օրինակ է հանդիսանում, թե ինչպես մենք պիտի վերաբերվենք բոլոր մարդկանց, անկախ նրանց վարքագծի անբարո լինելուց կամ չլինելուց:

Ասեք ուսանողներին, որ Հովհաննես Առաքյալը գրի է առել մի իրադարձություն, երբ Փրկիչը հայտնվել էր մի շատ նուրբ իրավիճակում: Ուսանողներին տրամադրեք մի քանի բույս, որպեսզի ուսումնասիրեն

Հովհաննես Ը.1-11 հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե ինչպես վարվեց Փրկիչը շնության մեջ բռնված կնոջ հետ: Հետևյալ հարցերը հղելով օգնեք ուսանողներին նմանեցնել այս պատմությունը իրենց իսկ վերաբերմունքին և գործողություններին ուղղված նրանց, ովքեր ներգրավված են համասեռամուլ և այլ անբարո վարքագծում:

- Ի՞նչ է Փրկիչն իր արարքներով սովորեցնում այն մասին, թե ինչպես մենք պետք է վերաբերվենք միմյանց: (Չնայած Նա չարդարացրեց կնոջ մեղքը, Նա բարությանը և հարգանքով վերաբերվեց նրա հետ, և ոչ թե դաժանորեն:)
- Ինչպե՞ս կարող ենք կիրառել Տիրոջ օրինակը մեր իսկ վերաբերմունքում և գործողություններում՝ ուղղված մեր համասեռամուլ եղբայրներին և քույրերին, անկախ այն բանից, թե նրանք մասնակից են եղել անբարո վարքագծի: Մինչ ուսանողները պատասխանում են, հետևյալ սկզբունքը գրեք գրատախտակին: **Մենք հետևում ենք Փրկիչի օրինակին, երբ կարեկցանք ենք զգում Աստծո բոլոր զավակների հանդեպ և վերաբերվում ենք նրանց հոգատարությամբ և բարությամբ:** (Տես նաև Մատթեոս Ը.12, Հովհաննես ԺԵ.12:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթի Լ. Օուքսի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Տերն իհարկե չարդարացրեց կնոջ մեղքը: Նա պարզապես ասաց նրան, որ չէր դատապարտում իրեն, այսինքն՝ Նա այդ պահին վերջնական դատաստանի չէր ենթարկում նրան: Այս բացատրությունը հաստատվում է այն խոսքերով, որոնք Նա այնուհետև ասաց փարիսեցիներին. «Դուք մարմնի համեմատ եք դատում. ես չեմ դատում ոչ մեկին էլ» (Հովհաննես Ը. 15): Շնության մեջ բռնված կնոջը ժամանակ տրվեց, որպեսզի ապաշխարեր՝ ժամանակ, որից նրան զրկում էին նրանք, ովքեր ուզում էին քարկոծել նրան» ("‘Judge Not’ and Judging," *Ensign*, Aug. 1999, 8):

Ուսանողների համար օգտակար կլինի իմանալ, որ համաձայն Հովհաննես Ը.11-ի Ջոզեֆ Մմիթի Թարգմանության, Փրկիչի հետ իր հանդիպումից հետո «կիրն փառաբանեց Աստծուն այդ պահից սկսած և հավատաց նրա անվանը» (տրված է Հովհաննես Ը.11-ի *գ*-ի տողատակի ծանոթագրությունում):

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուքի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Եկեղեցիների մեջ, ոչ ոք չպետք է լինի ավելի սիրող ու կարեկցից: Եկեք լինենք առաջինը՝ սեր, կարեկցանք արտահայտելիս և օգնության ձեռք մեկնելիս: Թող որ չունենանք ընտանիքներ, որոնք կվտարեն կամ անհարգալից կվերաբերվեն նրանց հետ, ովքեր ընտրում են այլ ապրելակերպ՝ իրենց սեռի հակոճելու ունեցած զգացումների արդյունքում»

(“Love One Another: A Discussion on Same-Sex Attraction,” mormonsandgays.org):

Հրավիրեք ուսանողներին գնահատել իրենց իսկ վերաբերմունքը և գործողություններն այն մարդկանց հանդեպ, ովքեր հակում ունեն միևնույն սեռի հանդեպ: Արդյո՞ք այդ վերաբերմունքը և գործողությունները ներդաշնակ են Տիրոջ ուսմունքների և օրինակի հետ:

- Ի՞նչ կանեք դուք, եթե հայտնվեք մարդկանց մի խմբում, ովքեր նսեմացնող ակնարկներ են անում այն մարդկանց հասցեին, ովքեր հակում ունեն միևնույն սեռի հանդեպ:

Վկայեք, որ եթե մենք ավելի մեծ սեր և բարություն ցուցաբերենք մեր համասեռամուլ եղբայրների և քույրերի հանդեպ, կյանքերը կարող են փոխվել, ընտանիքները կարող են բուժվել և մարդիկ, ովքեր օտարված են զգում Եկեղեցուց, կարող են ավելի հյուրընկալ վերաբերմունք զգալ Եկեղեցու անդամների կողմից: Հիշեցրեք ուսանողներին, որ Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները մատչելի են բոլոր նրանց համար, ովքեր ձգտում են պահել պատվիրանները և հավատարիմ մնալ ավետարանի ուխտերին:

Հրավիրեք ուսանողներին մտածել իրենց ծանոթ անհատների մասին, ովքեր հակում ունեն միևնույն սեռի հանդեպ և խորհել, թե ինչ կարող են անել, որ ավելի կարեկցի լինեն նրանց հանդեպ՝ մինչդեռ հավատարիմ են մնում Տիրոջ մաքրաբարոյության օրենքին:

### Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս Է.12, Հովհաննես Ը.1–11, 15.12, Վարդապետություն և Ուխտեր 76.24, Մովսես 2.27 և «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրի երկրորդ պարբերությունը, *Ensign* կամ *Լիսինաս*, նոյ. 2010, 129:
- Jeffrey R. Holland, “Helping Those Who Struggle with Same-Gender Attraction,” *Ensign*, Oct. 2007, 42–45:



## ԴԱՍ 9

# Տղամարդկանց աստվածային դերերը և պարտականությունները

### Նախաբան

Որպես Իր երջանկության ծրագրի կարևոր մաս Երկնային Հայրը նշանակեց տղամարդկանց դառնալու ամուսիններ և հայրեր: Այս դասը կենտրոնանում է նրանց պարտականությունների վրա. «Ըստ աստվածային ծրագրի՝ հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և

պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129):

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռիչարդ Գ. Սքոթ, «Ամուսնության հավերժական օրհնությունները», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2011, 94-97:
- Դ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Եկեք տղամարդ լինենք», *Ensign* կամ *Liahonua*, նոյեմբեր 2006, 46-48:
- Լինդա Զ. Բրոքերն, «Մենք միասին կբարձրանանք», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2015, 29-32:
- Howard W. Hunter, “Being a Righteous Husband and Father,” *Ensign*, Nov. 1994, 66-70.
- «Հայրերի և մայրերի սրբազան կոչումները», գլուխ 15, *Եկեղեցու Նախագահների ուսումնառությունը. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 229-34:

### Ուսուցման առաջարկներ

#### Եփեսացի Ե.25

*Տղամարդիկ պետք է ամուսնանան և փայփայեն իրենց կանանց*

Մկեք դասը՝ ուղղելով հետևյալ հարցերը.

- Կա՞ն տղամարդիկ, ովքեր ազդեցություն են թողել ձեր կյանքում: Ինչո՞ւ են նրանք նման ազդեցություն ունեցել ձեզ վրա:

Բացատրեք, որ այս դասի ընթացքում կքննարկվեն տղամարդկանց համար Աստծո կողմից նշանակված դերերը: Չկա ավելի կարևոր դեր տղամարդու համար, քան ամուսնու և հոր դերերը: Երբ տղամարդիկ ձգտում են արդար ձևով կատարել այս դերերը, նրանք ավելի շատ են նմանվում իրենց Երկնային Հորը:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Եփեսացիս Ե.25 հատվածը:

- Ի՞նչ սկզբունք էք սովորում այս հատվածից այն մասին, թե ինչպես պետք է գործեն ամուսինները: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, նրանք պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Ամուսինները պետք է սիրեն իրենց կանանց, ինչպես Հիսուս Քրիստոսը սիրեց Եկեղեցին:**)
- Ի՞նչ ճանապարհներով է Հիսուս Քրիստոսը սեր ցուցաբերում Եկեղեցու հանդեպ:
- Ի՞նչ կարող են անել ամուսինները, որպեսզի հետևեն Հիսուս Քրիստոսի օրինակին՝ իրենց կնոջ հանդեպ վերաբերմունքում:

Ցուցադրեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի (1895-1985) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Քրիստոսն այնպես սիրեց Եկեղեցին և նրա ժողովրդին, որ իր հոժար կամքով տարավ հալածանքներ նրանց համար, ենթարկվեց սարսափելի անարգանքի, անտրտունջ տարավ ցավ և ֆիզիկական բռնություն և, ի վերջո, տվեց իր թանկագին կյանքը նրանց համար:

Երբ ամուսինը պատրաստ է այդպիսի վերաբերմունք ցուցաբերել իր ընտանիքի հանդեպ, ոչ միայն կինը, այլև ողջ ընտանիքը կարձագանքի նրա ղեկավարությանը» (“Home, the Place to Save Society,” *Ensign*, Jan. 1975, 5):

- Ի՞նչ մտքեր էք ունենում, երբ խորհում եք Նախագահ Քիմբալի ասածի շուրջ:
- Ի՞նչ եղանակներով կարող է հայրը գոհաբերություններ անել իր ընտանիքի համար մեր օրերում:

Վկայեք, որ Երկնային Հայրը ցանկանում է, որ տղամարդիկ ձգտեն լինել արդար ամուսիններ:

**Եփեսացիս Ե.23, Վարդապետություն և Ուխտեր 121.36–46**


*Հայրերը պետք է նախագահեն արդարությամբ*

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրի յոթերորդ պարբերությունը, որպեսզի իմանան, թե Երկնային Հայրն ինչ է ակնկալում հայրերից:

- Ի՞նչ է նշանակում *նախագահել* բառը: (Առաջնորդել և ուղղություն ցույց տալ ուրիշներին:)
- Ինչպե՞ս կարող է «ըստ աստվածային ծրագրի» արտահայտությունն օգնել տղամարդուն կատարել այն պարտականությունները, որոնք Աստված տվել է հայրերին:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես պետք է հայրը նախագահի տանը, ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն

կարդալ Եփեսացիս Ե.23 հատվածը: Ապա խնդրեք մեկ այլ ուսանողի կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը.



«Պողոս Առաքյալը նշում է, որ «մարդը կնոջ գլուխն է *ինչպես* Քրիստոսն էլ եկեղեցու գլուխը» (Եփեսացիս Ե.23, շեղագիրն ավելացված է): Սա է մեր օրինակը, որին պետք է հետևենք՝ տանը նախագահելու մեր դերում: Մենք չենք տեսնում Փրկչին կոպիտ կամ դաժան ձեռքով Եկեղեցին առաջնորդելիս: Մենք չենք տեսնում, որ Փրկիչը Իր Եկեղեցուն անհարգալից կամ անփութորեն վերաբերվի: Մենք չենք տեսնում Փրկչին ուժ կամ հարկադրանք գործադրելիս՝ Իր նպատակներն իրականացնելու համար: Ոչ մի տեղ մենք չենք տեսնում Փրկչին որևէ բան անելիս, բացի դաստիարակելուց, բարձրացնելուց, մխիթարելուց և Եկեղեցին վեհացնելուց: ... Նա է օրինակը, որին մենք պետք է հետևենք, երբ ստանձնում ենք մեր ընտանիքների հոգևոր առաջնորդությունը» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թավտ Բենսոն [2014], 235):

- Ինչպե՞ս դուք կձևակերպեք Պողոս Առաքյալի և Նախագահ Բենսոնի ուսուցանած սկզբունքը: (Ուսանողները պետք է ձևակերպեն սկզբունքը նման ձևով. **Երբ տղամարդն իր տանը քահանայությունը գործադրում է արժանապատվորեն, նա կարող է արդար ազդեցություն գործել իր կնոջ և երեխաների վրա:** Ուսանողների հետ կիսվեք նաև այս սկզբունքով. **Երբ տղամարդիկ ձգտում են արդար ձևով կատարել ամուսնու և հոր դերերը, նրանք ավելի շատ են նմանվում իրենց Երկնային Հորը):**

Որպեսզի շարունակեք բացատրել, թե ինչպես պետք է ամուսինը և հայրը նախագահեն տանը, կարող եք կիսվել Նախագահ Հովարդ Վ. Հանթերի (1907-95) հետևյալ խոսքերով.



«Աստվածային նշանակմամբ տանը նախագահելու պատասխանատվությունը դրված է քահանայություն կրողի վրա (տես Մովսես 4.22): Տերը նախատեսել է, որ կինը օգնական լինի տղամարդու համար (*օգնական* նշանակում է հավասար), այսինքն, հավասար անհրաժեշտ զուգընկեր լիարժեք ընկերակցության համար: Արդարությամբ նախագահելն անհրաժեշտություն է առաջացնում պատասխանատվությունը կիսել ամուսնու և կնոջ միջև. միասին դուք գործում եք իմաստությամբ և մասնակցում բոլոր ընտանեկան գործերին: Եթե տղամարդն իր ընտանիքը ղեկավարելիս ինքնուրույն է գործում կամ հաշվի չի առնում իր կնոջ զգացմունքներն ու խորհուրդը ընտանիքը ղեկավարելիս, ապա նշանակում է, որ նա գործադրում է անարդար իշխանություն» ("Being a Righteous Husband and Father," *Ensign*, Nov. 1994, 50–51):

Ուսանողներին խնդրեք բացել Վարդապետություն և Ուխտեր 121.36-46 հատվածները: Առաջարկեք, որ նրանք այս հատվածների հետ զուգահեռ բացեն նաև Եփեսացիս Ե.23, 25 հատվածները: (Հրավիրելով Ուսանողներին անհրաժեշտության դեպքում գտնել խաչաձև հղումները, օգնեք նրանց զարգացնել խաչաձև հղումներ անցկացնելու սուրբ գրությունների ուսումնասիրության հմտությունը:)

Ուսանողներին ժամանակ տրամադրեք, որպեսզի ուսումնասիրեն Վարդապետություն և Ուխտեր 121.36-39 հատվածները և խորհեն, թե ինչպես է այս հատվածներում նկարագրված ղեկավարությունը հակադրվում այն ղեկավարությանը, որի օրինակը տվել է Հիսուս Քրիստոսը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «քահանայության իրավունքները» արտահայտությունը: (Երբ տղամարդը քահանայություն է ստանում, Աստված որոշակի իրավունքներ և իշխանություն է շնորհում նրան: Տղամարդը կարող է կիրառել այս իրավունքները միայն այն դեպքում, երբ նա գործում է արդարությամբ:)
- Ի՞նչ է տեղի ունենում, երբ քահանայություն կրողը չի ապրում արդար կյանքով: (Աստված այդ մարդուց հեռացնում է երկնքի գորությունները և նա այլևս չի կարող գործածել քահանայության իշխանությունը. Սուրբ Հոգին վշտանում է:)

Որպեսզի հասկանաք, թե ինչպես պետք է հայրն առաջնորդի իր ընտանիքին, խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 121.41-46 հատվածները:

- Որո՞նք են այդ տողերում նկարագրված Քրիստոսանման հատկանիշները: Ինչո՞ւ եք կարծում, որ հայրը, ով ունի այդ հատկանիշները, կարող է ունենալ երկնքի գորությունները:
- Ինչպե՞ս կարող են Քրիստոսանման այս հատկանիշներն օգնել հայրերին նախագահել իրենց ընտանիքներում: (Դուք կարող եք հստակեցնել, որ Քրիստոսանման հատկանիշները պետք է զարգանան նաև կնոջ մեջ:)
- Նկարագրեք, թե ինչ է նշանակում լինել մի մարդու կինը կամ երեխան, ով ձգտում է հետևել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի օրինակին, երբ նա առաջնորդում է իր ընտանիքին:

Ցուցադրեք 1973 թվականին Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից գրված հետևյալ հայտարարությունը.

«Հայրությունը ղեկավարություն է, ամենակարևոր ղեկավարման ձևն է: Այդպես է միշտ եղել, այդպես միշտ կլինի: Հա՛յր, ձեր հավերժական զուգընկերոջ աջակցությամբ, խորհրդով և խրախուսմամբ դուք նախագահում եք տանը: Եվ կարևոր չէ, որ դուք լինեք ամենաարժանավորն ու ամենահմուտը, այլ կարևոր է օրենքը և [աստվածային] նշանակումը» (“Father, Consider Your Ways,” *Ensign*, June 2002, 16):

- Քույրեր, ի՞նչ կարող եք դուք անել, որպեսզի խրախուսեք երիտասարդ տղամարդկանց մեծարել իրենց աստվածային դերերը և պարտականություններն իրենց ապագա ընտանիքներում:
- Ձեզանից յուրաքանչյուրը՝ տղամարդ և կին, ի՞նչ կարող է անել այժմ, որպեսզի ավելի լավ պատրաստված լինի առաջնորդելու իր ապագա ընտանիքը:


**Մատթեոս Բ.13–16, Ա Տիմոթեոս Ե.8, Վարդապետություն և Ուխտեր 75.28, 83.2, 4**

*Հայրերը պետք է ապահովեն ընտանիքի կենսական կարիքները և պաշտպանությունը*

Հրավիրեք ուսանողներին կարդալ Ա Տիմոթեոս Ե.8 և Վարդապետություն և Ուխտեր 75.28, 83.2, 4 հատվածները և ներկայացնել հայրերին տրված մեկ այլ կարևոր պարտականություն: (Կարող եք առաջարկել, որ ուսանողները զուգահեռներ անցկացնեն այս հատվածների միջև:)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերն ակնկալում հայրերից ապահովել իրենց ընտանիքի կենսական կարիքները: (Երբ ուսանողները պատասխանեն, նշեք, որ միայնակ մայր ունեցող ընտանիքներում մայրը կարող է ապահովել իր ընտանիքի կարիքները:)
- Ի՞նչ նշանակություն կարող են այս հատվածներն ունենալ երիտասարդ տղամարդու համար, որը դեռ ամուսնացած չէ:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910-2008) հետևյալ խոսքերը.




«Աշխատեք կրթություն ստանալ: Ձեռք բերեք ամեն հնարավոր ուսուցում: Աշխարհն առատորեն կհատուցի ձեզ այն, ինչին ձեզ արժանի կհամարի: ... Ձեր հիմնական պարտականությունն է ապահովել ձեր ընտանիքի կարիքները» ("Living Worthy of the Girl You Will Someday Marry," *Ensign*, May 1998, 50):

Շեշտեք ուսանողներին, որ իրենց ընտանիքների ապագայի ապահովության համար կարևոր է, որ երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք օգտվեն կյանքի այս ժամանակահատվածում իրենց ընձեռնված հնարավորությունից և ձեռք բերեն որքան հնարավոր է շատ կրթություն և աշխատանքային փորձ:

Նշեք, որ ընտանիքի մասին հայտարարությունում Եկեղեցու դեկավարներն ուսուցանել են, որ հայրերը պետք է ապահովեն ընտանիքի կենսական կարիքները և պաշտպանությունը:

- Որո՞նք են այն վտանգները, որ սպառնում են ընտանիքներին այսօր:
- Ինչպե՞ս են արդարակյաց հայրերը պաշտպանում իրենց ընտանիքները:

Ցուցադրեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի (1907–1995) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Արդարակյաց հայրը պաշտպանում է իր երեխաներին իր ժամանակով և ներկայությամբ՝ նրանց սոցիալական, կրթական և հոգևոր գործերում և պարտականություններում» (“Being a Righteous Husband and Father,” *Ensign*, Nov. 1994, 51):

- Ինչպե՞ս կարող եք կիրառել այս խորհուրդը ձեր ապագա ընտանիքում կամ ձեր ներկայիս ընտանիքում:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կամրացնեն և կպաշտպանեն իրենց ընտանիքներին և ապա թող գրի առնեն իրենց մտքերը:

Բացատրեք, որ մենք կարող ենք մի կարևոր սկզբունք սովորել մանուկ Հիտուսի հանդեպ Հովսեփի ցուցաբերած հոգատարությունից: Հանձնարարեք ուսանողներից մեկին կարդալ Մատթեոս Բ.13-16 հատվածները՝ փնտրելով, թե ինչ արեց Հովսեփը, որպեսզի մանուկ Քրիստոսին պաշտպաներ վտանգից:

Ասեք ուսանողներին, որ թերևս քիչ հավանական է, որ իրենց ընտանիքներին պաշտպանելու համար նրանք ստիպված լինեն տեղափոխվել նոր վայր, նրանք կարող են նմանեցնել կամ կիրառել այդ հատվածներն իրենց կյանքում՝ վերլուծելով որոշ կարևոր մանրամասներ.

- Ի՞նչ հայտնեց Տերը Հովսեփին հատված 13-ում:
- Ե՞րբ և ինչպե՞ս Հովսեփն արձագանքեց այս նախազգուշացմանը:
- Ինչպե՞ս կարող են հայրերը հետևել Հովսեփի օրինակին իրենց ընտանիքներին պաշտպանելիս: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են այս սկզբունքը. **Երբ հայրերը փնտրում և հետևում են Տիրոջ առաջնորդությունը, նրանք կարող են ավելի լավ պաշտպանել իրենց ընտանիքներին:**)

### Տղամարդիկ և կանայք պետք է իրականացնեն Տիրոջ ծրագիրը

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Եթե դուք համապատասխան տարիքի երիտասարդ տղամարդ եք և դեռ ամուսնացած չեք, ժամանակ մի ծախսեք դատարկ բաների վրա: Առաջ շարժվեք կյանքում և աշխատեք ամուսնանալու ուղղությամբ: Կյանքի այս ժամանակահատվածը իզուր մի վատնեք: Երիտասարդ տղամարդիկ, ծառայեք արժանի միսիա: Այնուհետև ձեր առաջնահերթ նպատակը թող լինի արժան հավերժական գույքներ գտնելը: ...»

... Ամուսնությունը հիանալի միջավայր է եսասեր կամ եսակենտրոն լինելու ցանկացած հակվածություն հաղթահարելու համար: Իմ կարծիքով, պատճառներից մեկը, որ կյանքում մեզ խորհուրդ է տրվում շուտ ամուսնանալ, այն է, որ մենք չհասցնենք զարգացնել անհամապատասխան բնավորության գծեր, որոնք հետագայում դժվար կլինի փոխել»

(«Ամուսնության հավերժական օրհնությունները», *Ensign* կամ *Լիստոնա*, մայիս 2011, 95–97):

- Մեր ժամանակներում ի՞նչ ազդեցություններ են առկա, որոնց պատճառով երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք հետաձգում են ամուսնությունը:
- Ինչո՞ւ է հակառակորդը ձգտում շեղել երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց այնպիսի հարաբերություններ ստեղծելուց, որոնք կարող են հանգեցնել ամուսնության և երեխաներ ունենալուն:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են Եկեղեցու ղեկավարները մշտապես խորհուրդ տալիս երիտասարդ տղամարդկանց ակտիվորեն հարաբերություններ փնտրել, որոնք կարող են ամուսնության հանգեցնել:

(*Նշում*. Այս քննարկման ընթացքում ուշադիր եղեք այն հանգամանքի հանդեպ, որ հնարավոր է ձեր դասարանի որոշ երիտասարդ տղամարդիկ իրենց վերահսկողությունից դուրս հանգամանքների պատճառով երբեք չամուսնանան կամ դառնան հայրեր:)

Երբ վերջացնեք, մտածեք ձեր ուսանողների հանգամանքների մասին: Ի՞նչ կարող եք խրախուսել ձեր արական սեռի ուսանողներին անել, որ իրականացնեն արդար ամուսիններ և հայրեր դառնալու իրենց նպատակները: Դուք կարող եք հրավիրել ձեր բոլոր ուսանողներին կենտրոնանալ որոշակի Քրիստոսանման առաքիլություն զարգացնելու վրա, ինչպես օրինակ՝ համբերություն կամ ուրիշների հանդեպ սեր ցուցաբերելը, որ օգտակար կարող է լինել իրենց ընտանիքների համար:

## Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս Բ.13–16, Եփեսացիս Ե.23, 25, Ա Տիմոթեոս Ե.8, Վարդապետություն և Ուխտեր 75.28, 83.2, 4, 121.36–46:
- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Եկեք տղամարդ լինենք», *Ensign* կամ *Լիստոնա*, նոյեմբեր 2006, 46–48:

## ԴԱՍ 10

# Կանանց աստվածային դերերը և պարտականությունները

### Նախաբան

Որպես Իր երջանկության ծրագրի կարևոր մաս երկնային Հայրը կանանց տվել է կին և մայր լինելու աստվածային դերերը: «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հոշակագիրը ուսուցանում է, որ «մայրերը, հատկապես,

պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար» և որ հայրերն ու մայրերը պետք է «օգնեն միմյանց որպես հավասար գործընկերներ» (*Ensign* կամ *Lhahonaa*, նոյ. 2010, 129):

### Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dieter F. Uchtdorf, “The Influence of Righteous Women,” *Ensign*, Sept. 2009, 5–9.
- “Understand the Divine Roles of Women,” *Ensign*, Feb. 2009, 67.
- “The Women of the Church,” chapter 20 in *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 214–25.

### Ուսուցման առաջարկներ

#### Վարդապետություն և Ուխտեր 25.1-3, 10, 13-16

*Արդարակյաց Վերջին Օրերի Սուրբ կանանց մեծ ազդեցությունը վերջին օրերում*

Ցուցադրեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի (1895-1985) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Վերջին օրերում եկեղեցում մեծ աճ տեղի կունենա հիմնականում այն պատճառով, որ աշխարհի լավ կանանցից շատերը ... մեծ թվով կմիանան եկեղեցուն: Սա տեղի կունենա այնքանով, որքանով եկեղեցու կանայք արդարակեցություն և միասնություն կցուցաբերեն իրենց կյանքում և որքանով եկեղեցու կանայք աշխարհի կանանցից կտարբերվեն իրենց դրական առանձնահատկություններով» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 222–23):

- Ինչո՞ւ էք կարծում, որ արդարակյաց Վերջին Օրերի Սուրբ կանայք կդառնան եկեղեցու մեծ աճի պատճառը:

Այս գաղափարին ավելի լավ ծանոթանալու համար խնդրեք ուսանողներին ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 25.1-3, 10, 13-16 հատվածները՝ փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են Վերջին Օրերի Սուրբ կանայք աշխարհի



կանանցից տարբերվում իրենց «դրական առանձնահատկություններով»։ Օգնեք ուսանողներին հասկանալ այս հայտնության ենթատեքստը, բացատրելով, որ սա անձնական հայտնություն էր Էմմա Մմիթի համար, սակայն այն վերաբերում է Եկեղեցու բոլոր կանանց։

- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածներից այն հատկանիշների մասին, որ արդարակյաց կանայք պետք է ձգտեն ունենալ։
- Ինչպե՞ս կձևակերպեք Վարդապետություն և Ուխտեր 25 բաժնում ուսուցանված վարդապետությունը կամ սկզբունքը։ (Երբ ուսանողները պատասխանեն, նշեք այս սկզբունքը. **Որպես Տիրոջ աշակերտներ, կանայք կարող են օգտագործել իրենց աստվածային պարզևները և տաղանդները, որպեսզի օգնեն կառուցելու Աստծո թագավորությունը։**)

Կիսվեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի և Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերով.



«Արդարակյաց կին լինելը փառահեղ բան է ցանկացած դարաշրջանում։ Մեր Փրկչի երկրորդ գալստից առաջ, այս երկրագնդի փոթորկոտ տեսարանների ներքո արդարակյաց կին լինելը, հատկապես, ազնվաբար կոչում է։ Այսօր արդարակյաց կնոջ ուժն ու ազդեցությունը կարող է տասնապատիկ լինել՝ ի համեմատ ավելի հանգիստ ժամանակների» (Teachings: Spencer W. Kimball, 217):



«Քույրեր, ձեր ազդեցության շրջանակը յուրահատուկ շրջանակ է, —մի բան, որը չի կարող կրկնօրինակվել տղամարդկանց կողմից։ Ոչ ոք չի կարող պաշտպանել մեր Փրկչին ավելի շատ համոզվածությամբ և զորությամբ, քան դուք՝ Աստծո դուստրեր, որ ունեք այդքան մեծ ներուժ և համոզմունք։ Դարձի եկած կնոջ ձայնի զորությունն անսահման է, և Եկեղեցին ավելի շատ ունի ձեր ձայների կարիքն այժմ՝ քան երբևէ» (M. Russell Ballard, “Men and Women and Priesthood Power,” *Ensign*, Sept. 2014, 33):

Հարցրեք ձեր դասարանի կանանց, թե ինչ մտքեր և զգացումներ են ունենում, երբ խորհում են ազդեցության մասին, որ կարող են ունենալ իրենց տներում, Եկեղեցում և իրենց համայնքներում։ Շեշտեք հիմնական դերերը, որ կանայք ունեն որպես Եկեղեցու ղեկավարներ։

Դուք կարող եք խնդրել ձեր դասարանի եղբայրներին բերել իրենց ծխի կամ ճյուղի կանանց ուժի և ազդեցության մասին օրինակներ, որոնք օգնել են անհատներին ավելի մոտենալ Երկնային Հորը։

**Բ Տիմոթեոս Ա.5, 3.14–15, Ավմա 56.47–48, 57.21**

*Կանանց՝ Աստծո կողմից նշանակված դերը որպես Սիրոնի մայրեր*

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ հայտարարությունը.



«Տղամարդիկ և կանայք ունեն տարբեր շնորհներ, տարբեր կարողություններ և տարբեր տեսակետներ ու հակումներ: Դա է այն հիմնական պատճառներից մեկը, թե ինչու մենք միմյանց կարիքն ունենք: Դա ստիպում է տղամարդուն և կնոջը ստեղծել ընտանիք և դա ստիպում է տղամարդկանց և կանանց իրականացնել Տիրոջ աշխատանքը (“Men and Women and Priesthood Power,” 32):

- Բացի ակնհայտ ֆիզիկական տարբերություններից ուրիշ ինչ տարբերություններ եք նկատում, որոնցով տղամարդիկ ու կանայք հիմնականում տարբերվում են միմյանցից:

Բացատրեք, որ բացի այս ընդհանուր տարբերություններից, տղամարդիկ և կանայք նաև ունեն Աստծո կողմից նշանակված տարբեր դերեր, ինչպես նկարագրված է «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հոչակագրում (տես յոթերորդ պարբերությունը): Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.



«Դուք՝ քույրեր, երկրի արարումից առաջ ընտրվել եք Աստծո զավակներին լույս աշխարհ բերելու և Նրանց մասին հոգ տանելու համար. դա անելով դուք փառաբանում եք Աստծուն (տես Վևու 132.63)» (“What Will You Choose?” *Ensign*, Jan. 2015, 19).

- Ինչպե՞ս կարող են կանայք փառաբանել Աստծուն, երբ նրանք լույս աշխարհ են բերում և հոգ տանում Աստծո զավակների մասին: (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, օգնեք նրանց հասկանալ այս սկզբունքը. **Երբ կանայք իրականացնում են որպես մայրեր Աստծո զավակներին լույս աշխարհ բերելու և նրանց մասին հոգ տանելու դերը, որ նշանակված է Աստծո կողմից, նրանք փառաբանում են Նրան և ավելի են նմանվում մեր Երկնային Ծնողներին:** Բացատրեք, որ երեխաներ լույս աշխարհ բերելը Երկնային Հոր փրկության ծրագրի հիմնական մասն է:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսոնի հետևյալ խոսքերով.



«Այսօր աշխարհում շատ ձայներ նսենացնում են երեխաներ ունենալու կարևորությունը կամ խորհուրդ են տալիս հետաձգել կամ սահմանափակել երեխաներ ունենալը: Իմ դուստրերը վերջերս ուղարկեցին ինձ մի նյութ, որը գրված էր Քրիստոնյա կնոջ կողմից (ոչ մեր հավատքից), ով հիվանդ երեխաներ ունի: Նա գրում է. «Մեծանալով այս քաղաքակրթության մեջ, շատ դժվար է աստվածաշնչյան մտածելակերպ ունենալ մայրության վերաբերյալ: ... Երեխաները դասվում են քոլեջից շատ ավելի ցածր: Միանշանակ, աշխարհով մեկ շրջագայելուց ցածր: Գիշերային ժամանցներ անցկացնելուց ցածր: ... Ցածր ցանկացած աշխատանքից, որը դուք ունեք կամ հույս ունեք ունենալու»: Նա այնուհետև ավելացնում է.

«Մայրությունը հաճելի զբաղմունք չէ, այն կոչում է» («Երեխաներ», *Ensign* կամ *L'haishna*, նոյ. 2011, 28):

- Ի՞նչ է նշանակում «նսեմացնել» երեխաներ ունենալու կարևորությունը:
- Ի՞նչ ճնշումներ եք տեսել, որ գործադրվել են կանանց վրա՝ «նսեմացնելու» երեխաներ ունենալու կարևորությունը:
- Ի՞նչ կարող են անել Եկեղեցու երիտասարդ չափահասները, որպեսզի պատշաճ հեռանկար պահպանեն երեխաներ ունենալու կարևորության վերաբերյալ:

Վստահեցրեք ուսանողներին, որ որոշումները, թե երբ և քանի երեխա ունենան, անձնական բնույթի խնդիրներ են և միայն ամուսնու, կնոջ և Աստծո միջև են: Հաջորդ դասի ժամանակ այս թեման կենթարկվի ավելի մանրամասն քննարկման:

Հրավիրեք ուսանողներին կարդալ և համեմատել Բ Տիմոթեոս Ա.5, Գ.14–15 և Ալմա 56.47–48, 57.21 հատվածները՝ փնտրելով արդարակյաց ազդեցությունը, որ մայրերը կարող են ունենալ իրենց զավակների վրա: (Սուրբ գրությունների հատվածների համեմատությունը սուրբ գրությունների ուսումնասիրության հմտություն է, որն ուսանողները կարող են օգտագործել իրենց ողջ կյանքի ընթացքում:)

- Ի՞նչ են այս հատվածներն ուսուցանում մոր դերի վերաբերյալ: (Շեշտեք հետևյալ սկզբունքը. **Երբ մայրերն իրենց զավակներին ուսուցանում են ավետարանը, նրանք օգնում են իրենց զավակներին հավատք ձեռք բերել և նախապատրաստում են նրանց արդար կյանքով ապրելու համար:**)
- Ինչպե՞ս են այս հատվածները բացատրում, թե ինչու է սատանան ջանասիրաբար աշխատում նսեմացնել մայրերի դերը:
- Ի՞նչ հատկանիշներ ունեն կանայք, որոնք կարող են օգնել նրանց հաջողության հասնել որպես մայրեր իրենց դերերում:

Ուշադիր եղեք այն հանգամանքի հանդեպ, որ հնարավոր է ձեր դասարանի որոշ երիտասարդ կանայք երբեք չամուսնանան, կամ եթե ամուսնանան, միգուցե նրանք չկարողանան երեխաներ ունենալ: Կիսվեք Մփոփող Միության գերագույն նախագահության նախկին խորհրդական Քոյր Շերի Լ. Դյուի հետևյալ խոսքերով, որպեսզի օգնեք ձեր ուսանողներին հասկանալ, որ մոր դերը բոլոր կանանց աստվածային ժառանգությունն է:



«Ճիշտ ինչպես արժանի տղամարդկանց համար էր նախասահմանված կրելու քահանայություն մահկանացու կյանքում, արդար կանայք նախաներկային կյանքում օժտված են եղել մայր դառնալու արտոնությամբ: Մայրությունն ավելին է, քան երեխաներ լույս աշխարհ բերելը, չնայած դա էլ ճիշտ է: Այն որպես կին մեր էության հիմքն է: Դրանով է սահմանվում մեր

բուն իսկությունը, մեր աստվածային կերպարն ու բնությունը և եզակի հատկանիշները, որ մեր Հայրը տվել է մեզ: ...

... Որոշ կանանց խորհուրդ է տրվում սպասել երեխաներ ունենալու հարցում: ... Սակայն մեր հետ կապված Տիրոջ ժամանակացույցը չի ժխտում մեր բնությունը: Մեզանից ոմանք, այդ դեպքում, պետք է պարզապես այլ ուղիներ գտնեն մայրանալու համար: Մեր շրջապատում կան շատերը, ովքեր ունեն սիրո և առաջնորդության կարիք» (“Are We Not All Mothers?” *Ensign*, Nov. 2001, 96–97):

- Ինչպե՞ս են Քույր Դյուրի խոսքերն օգնում ձեզ ավելի լավ հասկանալ մայրության իմաստը:

Հարցրեք ուսանողներին, թե ով կցանկանա կիսվել իր մտքերով և զգացմունքներով՝ կապված իրենց իսկ մայրերի արդար ազդեցության հետ:

Կիսվեք Սփոփող Միության գերագույն նախագահության նախկին նախագահ Ջուլի Բ. Բեքի հետևյալ խոսքերով, ով կանանց հետ խոսեց Աստծո կողմից նրանց տրված դերերը կատարելու անհրաժեշտության մասին: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն և հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ կպատահեր, եթե կանայք թերանային իրենց դերերը կատարելում:



© Busath.com

«Եթե մենք չանենք մեր մասը, ոչ ոք չի անի այն մեր փոխարեն: ... Մենք չենք կարող լիազորել մեկ ուրիշին անելու [Երկնային Հոր երջանկության ծրագրի մեր մասը]: Մենք չենք կարող փոխանցել դա մեկ ուրիշին: Դա մերն է: Մենք կարող ենք մերժել դա, մենք կարող ենք հրաժարվել դրանից, սակայն դա դեռ մեր մասն է, և մենք պատասխանատու ենք դրա համար: Կգա մի օր, երբ մենք բոլորս կհիշենք այն, ինչ գիտեիք դեռ ծնվելուց առաջ: Մենք կհիշենք, որ պայքարում էիք այս հնարավորության համար մի մեծ

ճակատամարտում: Ինչպե՞ս ենք մենք կատարում այդ պարտականությունը: Մենք ամեն օր մեր Եռանդը ներդնում ենք այն աշխատանքի մեջ, որը բացառապես մերն է» (“Understand the Divine Roles of Women,” *Ensign*, Feb. 2009, 67):

- Ի՞նչ մտքեր և զգացումներ ունեք «Եթե մենք չանենք մեր մասը, ոչ ոք չի անի այն մեր փոխարեն» արտահայտության վերաբերյալ:
- Ի՞նչ կկորցնեն ընտանիքները, ձեր ծուլը կամ ճյուղը, կամ աշխարհը, եթե կանայք այլևս չանեն իրենց «մասը»:
- Որո՞նք են այն ուղիները, որոնցով երիտասարդ չափահաս կանայք կարող են իրականացնել իրենց աստվածային դերերը՝ որպես Երկնային Հոր արքայության կանայք:

Վկայեք արդարակյաց կանայք և մայրեր լինելու կանանց սրբազան և կարևոր դերերի մասին և շեշտեք, որ մեր Երկնային Հայրը մի օր Իր արդար զավակներին կտա բոլոր օրհնությունները: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց ճանաչած մի մոր օրհնակով և պատմել, թե որքան են հիանում նրանով այն բանի համար, թե ինչպես է նա իրականացրել իր աստվածային դերը:

Վերջում հարցրեք ուսանողներին, թե ով կցանկանա վկայել այն օրհնությունների մասին, որոնք տրվում են, երբ կանայք իմանում են, թե որն է Երկնային Հոր փրկության ծրագրում իրենց դերը և գործում են ըստ դրա:

### **Ուսանողի ընթերցարան**

- Բ Տիմոթեոս Ա.5, 3.14–15, Ալմա 56.47–48, 57.21, Վարդապետություն և Ուխտեր 25.1–3, 10, 13–16:
- “Understand the Divine Roles of Women,” *Ensign*, Feb. 2009, 67.

# Պատրաստվել հավերժական ամուսնության

## Նախաբան

Երբ Երիտասարդ ամուսիններն ապրում են Հիսուս Քրիստոսի ավետարանով, նրանք կարող են առաջ նայել դեպի ապագան և իրենց կյանքն ապրել հույսով: Երկնային Հայրը կառաջնորդի նրանց հավերժական ամուսնության որոշում կայացնելիս, երբ նրանք

առաջնորդություն փնտրեն Նրանից: Այս դասը կօգնի ուսանողներին ամուսնությանը մոտենալ ավելի մեծ վստահությամբ՝ իմանալով, որ նրանք աստվածային աջակցություն կստանան Տիրոջ կողմից:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dieter F. Uchtdorf, “The Reflection in the Water” (Church Educational System devotional, Nov. 1, 2009), [lds.org/media-library](https://www.lds.org/media-library).
- Jeffrey R. Holland, “Be Not Afraid, Only Believe” (evening with Elder Jeffrey R. Holland, Feb. 6, 2015), [lds.org/broadcasts](https://www.lds.org/broadcasts).

## Ուսուցման առաջարկներ

### Վարդապետություն և Ուխտեր 88.40

#### Նախապատրաստվել ամուսնությանը

Խնդրեք ուսանողներին բարձրացնել իրենց ձեռքերը, եթե կազմել են հատկանիշների ցանկ, որ նրանք փնտրում են ապագա կողակցի մեջ: Մի քանի ուսանողների հրավիրեք կիսվել իրենց ցանկի հատկանիշներով:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Վարձես թե որոշ Երիտասարդներ ունեն հատկանիշների ցանկ, որ ցանկանում են տեսնել զուգընկերոջ մեջ և որով չափում են նրանց ներուժը. «Արդյո՞ք դուք ունեք բոլոր բաները, որոնք ես պահանջում եմ»: Եթե դուք ցանկանում եք ունենալ հավերժական զուգընկեր, ով ունի որոշակի հոգևոր որակներ, ապա դուք պետք է ձգտեք զարգացնել այդ հոգևոր որակները ձեր մեջ: Ապա մեկը, ով ունի այդ որակները, կմղվի դեպի ձեզ»

(“Understanding Heavenly Father’s Plan,” LDS.org):

- Ի՞նչ սկզբունք ենք սովորում Երեց Բեդնարի խոսքերից: (Համոզվեք որ, ուսանողները հասկանում են հետևյալ սկզբունքը. **«Եթե դուք ցանկանում եք ունենալ հավերժական զուգընկեր, ով ունի որոշակի**

**հոգևոր որակներ, ապա դուք պետք է ձգտեք զարգացնել այդ հոգևոր որակները ձեր մեջ»:**

Խնդրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 88.40-ը, ուշադրություն դարձնելով, թե ինչպես է այս հատվածում ամփոփվում նոր ներկայացրած սկզբունքը:

- Ինչպե՞ս կարող են այն անհատները, ովքեր ամուսնանալու նպատակ ունեն, կիրառել այս հատվածում տրված ճշմարտությունները:
- Ինչպե՞ս են այս հատվածի ճշմարտությունները կիրառվում իրենց ընկերների նկատմամբ կայացրաց երիտասարդների որոշումներում:

Խնդրեք ուսանողներին խորհել այն որակների մասին, որոնք կցանկանային տեսնել իրենց ապագա կողակցի մեջ: Հրավիրեք ուսանողներին խորհել, թե արդյոք նրանք ունեն այդ նույն որակները: Խնդրեք նրանց խորհել, թե ինչպես կարող են օգտագործել Վարդապետություն և Ուխտեր 88.40 հատվածում տրված սկզբունքները, որպեսզի ավելի լավ նախապատրաստվեն ամուսնությանը:

**Մարկոս Ե.35–36, Վարդապետություն և Ուխտեր 6.36**

*«Մի վախեցեք, միայն հավատացեք»*

Հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ ակնկալիքներ ունեք ամուսնությունից:
- Որո՞նք են այն հանգամանքները, որոնց պատճառով երիտասարդները կարող են վախենալ ամուսնությունից: (Պատասխանները գրեք գրատախտակին:)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը: Հանձնարարեք դասարանին ուշադրություն դարձնել այն հանգամանքներին, թե ինչու են որոշ երիտասարդներ վախենում ամուսնությունից:



«Ծայրահեղ դեպքերում [երիտասարդները] վախենում են, թե աշխարհը մոտ է կործանվելուն արյան ու աղետների մեջ, մի բան, որին չեն ուզում մասնակից դարձնել իրենց կնոջը կամ երեխային: Ավելի տարածված դեպքերում նրանք վախենում են, որ աշխարհում պարզապես ամեն ինչ շատ ավելի դժվար է դառնում, որ աշխատատեղեր շատ դժվար կլինի գտնել, որ մարդը պետք է ավարտած լինի ուսումը, չունենա պարտքեր, ունենա աշխատանք և տուն նախքան ամուսնության մասին մտածելը: ...

Դեռ ավելին, շատ երիտասարդներ, ում հետ են խոսել եմ, վախենում են, որ եթե իրենք ամուսնանան, ևս մեկ ամուսնալուծության դեպք կավելանա: ... Ձույզը, որը չար կատակներ է անում ամուսնության հաջողությունների մասին, մաքրաբարոյությունը, հավատարմությունը և ընտանեկան կյանքը ենթարկելով անճաշակ, կեղտոտ, հաճախ սատանայական ծաղրի, ինչը պարբերաբար ներկայացվում է ֆիլմերում և հեռուստատեսությամբ, և դուք տեսնում եք խնդիրը» (“Be Not Afraid, Only Believe” [evening with Elder Jeffrey R. Holland, Feb. 6, 2015], [lds.org/broadcasts](https://www.lds.org/broadcasts)):

- Ձեզանից քանի՞սն են ճանաչում մեկին, ով վախենում է ամուսնությունից այն նկատառումներից մեկի պատճառով, որոնք նշել է Երեց Հոլլանդը:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 6.36 հատվածը, և խորհեք, թե ինչպես է Օլիվեր Քատլերիին տրված Տիրոջ խորհուրդը վերաբերում հավերժական ամուսնությանը նախապատրաստվելուն: Այնուհետև հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մարկոս Ե.35-36 հատվածները: Բացատրեք, որ Հայրոսը՝ ժողովրդապետը, եկավ Հիսուսի մոտ այն հույսով, որ Նա կբուժեր իր դստերը: Խնդրեք դասարանին խորհել, թե ինչպես կարող է Հայրոսին հղված Փրկիչի քաջալերանքը վերաբերել նրանց, ովքեր պատրաստվում են ամուսնության:

- Ինչպե՞ս կարող է «բոլոր մտորումներում» Տիրոջը նայելն օգնել մեզ չկասկածել, չվախենալ, երբ մենք խորհում ենք մեր ապագայի վերաբերյալ:
- Ինչպե՞ս կարող են Օլիվեր Քատլերիին և Հայրոսին տրված Տիրոջ խորհուրդներն օգնել անհատներին, ովքեր վախենում են ամուսնությունից: (Երբ ուսանողները պատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Երբ մենք նայում ենք Հիսուս Քրիստոսին հավատքով, մենք կարող ենք հաղթահարել վախը և վստահություն ունենալ ապագայի հանդեպ:**)

Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչու էր Երեց և Քույր Հոլլանդներին անհրաժեշտ հավատք ամուսնության համար:



«Երբ [ես և Քույր Հոլլանդը] ամուսնացանք, մենք դեռ սովորում էինք ԲՅԼ-ում, և մեզանից ոչ մեկի ծնողներն չէին կարող օգնել մեզ ֆինանսապես, դժվար էր նույնիսկ պատկերացնել, որ մեզ կհաջողվեր ավարտել առջևում սպասվող մագիստրատուրան և այս ամենի հետ հանդերձ մենք մեր ամուսնության օրն ունեինք ընդամենը 300 դոլար: Միգուցե դա այժմ չհամարվի ամուսնական կյանք սկսելու կատարյալ սկիզբ, սակայն ինչ հրաշալի ամուսնություն այն եղավ և ինչքան շատ բան կկորցնեինք մենք, եթե սպասեինք նույնիսկ մեկ օր ավել՝ սկսած այն պահից, երբ գիտեինք, որ այդ ամուսնությունը ճիշտ էր: ... Ես սարսափում եմ, երբ մտածում եմ այն մասին, թե ինչ կարող էինք կորցնել, եթե ականջ դնեինք «մեր վախերի խորհրդին», ինչպես Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստը հետագայում պիտի կրկներ, որ ոչ ես և ոչ էլ ուրիշ որևէ մեկը չպետք է երբևէ անենք դա» ("Be Not Afraid, Only Believe"):

- Ինչպե՞ս է Երեց և Քույր Հոլլանդի իրավիճակը նման մեր օրերի շատ երիտասարդների իրավիճակին:
- Ի՞նչ է նշանակում խորհուրդ վերցնել ձեր վախերից: Ինչո՞ւ է դա համարվում որոշումներ կայացնելու սխալ ուղի:

Որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ վկայությունը և խորհուրդը.





«Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մի վախեցե՛ք: Ուրախ եղե՛ք: Ապագան նույնքան պայծառ է, որքան ձեր հավատքը» («Ուրախ եղե՛ք», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2009, 92):


- Ի՞նչ մտքեր և զգացողություններ եք ունենում ապագայի հետ կապված, երբ խորհում եք այս մարգարեական խրատասանքի շուրջ:

Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել դասի այս մասն իրենց կյանքում, հարցրե՛ք, թե արդյոք նրանք ունեն որևէ վախ ամուսնության հետ կապված: Հրավիրե՛ք նրանց խորհել, թե ինչպես կարող են ապագային առնչվող վախերը փոխարինել Տիրոջ հանդեպ հավատքով:

**Վարդապետություն և Ուխտեր 6.22–23, 8.2–3, 9.7–9, 11.12–14**

*Կողակցի ընտրության ժամանակ փնտրել աստվածային առաջնորդություն*

Ցուցադրե՛ք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ խոսքերը, և խնդրե՛ք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Թե ում հետ եք դուք ամուսնանալու կլիկի ձեր կյանքի ամենակարևոր որոշումը: Չկա ոչ մի աշխատանք, որը հավասար լինի տաճարային աշխատանքին: ... Ամուսնացե՛ք ճիշտ անձնավորության հետ, ճիշտ վայրում, ճիշտ ժամանակին» (“Life’s Obligations,” *Ensign*, Feb. 1999, 2).

- Ինչպե՞ս կարող եք ճիշտ կայացնել կողակցին ընտրելու այս ամենակարևոր որոշումը:

Դասարանը բաժանե՛ք զույգերի: Յուրաքանչյուր զույգի հանձնարարե՛ք միասին կարդալ հետևյալ սուրբ գրությունների հատվածները. Վարդապետություն և Ուխտեր 6.22–23, 8.2–3, 9.7–9, 11.12–14: (Այս հատվածները անձնական հայտնություն ստանալու կրկնվող թեմաների օրինակներ են, որոնք կարելի գտնել Վարդապետություն և Ուխտերի առաջին բաժիններում: «Թեմաներն ընդգրկում են, կրկնվող և միավորում են արժեքներ կամ գաղափարներ» [David A. Bednar, “A Reservoir of Living Water” (Brigham Young University fireside, Feb. 4, 2007), 6, speeches.byu.edu:]

Խնդրե՛ք ուսանողներին խորհել հետևյալ հնարավոր դեպքի շուրջ, մինչ նրանք ուսումնասիրում են Վարդապետություն և Ուխտերի հատվածները. Պատկերացրե՛ք, որ ձեր ընկերը որոշ ժամանակ հանդիպում է մեկի հետ և գալիս է ձեզանից խորհուրդ հարցնելու, թե արդյո՞ք նա պետք է ամուսնանա այդ մարդու հետ: Ի՞նչ խորհուրդ կտաք ձեր ընկերոջը:

Հատվածներն ուսումնասիրելու համար ժամանակ տրամադրելուց հետո, յուրաքանչյուր զույգից մեկական ուսանողի խնդրե՛ք խաղալ ընկերոջ

դերը, ով ժամադրությունների է գնում: Զույգերի մյուս ուսանողներին խնդրեք բացատրել, թե ինչպես կարող են այս հատվածներն օգնել ընկերոջը որոշում կայացնել: Այս քննարկումն ավարտելուց հետո համոզվեք, որ ուսանողները հասկանում են որոշումներ կայացնելու վերաբերյալ հետևյալ սկզբունքները. Մենք պետք է «ուսումնասիրենք» որոշումը մեր մտքում, կայացնենք լավագույն որոշումը և հետո հարցնենք Աստծուն, թե արդյոք որոշումը ճիշտ է: Ապա, եթե մեր սրտում և մտքում զգում ենք խաղաղություն և ուրախություն, որոշումը ճիշտ է: Շեշտեք հետևյալ սկզբունքը. **Երբ որոշումները կայացնելիս մենք փնտրում ենք Տիրոջ առաջնորդությունը, Նա կխոսի մեր մտքում և կլցնի մեր հոգիները խաղաղությամբ և ուրախությամբ, եթե մեր որոշումները ճիշտ լինեն:**

- Ինչպե՞ս եք իմացել, որ այն, ինչ ուսուցանվում է այս հատվածներում անձնական հայտնություններ ստանալու վերաբերյալ, ճիշտ է:

Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես նրանք կարձագանքեն հետևյալ իրավիճակում. անձնավորությունը, ում հետ դուք հանդիպում եք, բացատրում է, որ նա հետևել է որոշումներ կայացնելու այս եղանակին և ոգեշնչում է ստացել, որ դուք պետք է ամուսնանաք:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ես լսել եմ մի դեպքի մասին, երբ երիտասարդ տղամարդն ասել է երիտասարդ կնոջը, որ նա պետք է ամուսնանա իր հետ, քանի որ նա հայտնություն է ստացել, որ նա պետք է լինի իր հավերժական զուգընկերը: Եթե դա ճշգրիտ հայտնություն է, դա անմիջապես կհաստատվի կնոջ սրտում, եթե նա ցանկանա դա: Սակայն, կինը պարտավոր չէ ուշադրություն դարձնել դրան: Նա պետք է փնտրի իր անձնական առաջնորդությունը և իր անձնական կարծիքն ունենա այդ մասին: Տղամարդը կարող է հայտնություն ստանալ իր գործողությունները կառավարելու համար, սակայն նա չի կարող պատշաճ կերպով հայտնություն ստանալ կնոջ գործողությունները կառավարելու համար: Կինը չի գտնվում նրա ենթակայության տակ» (“Revelation” [Brigham Young University devotional, Sept. 29, 1981], 6, speeches.byu.edu):

Վկայեք, որ ուսանողները խաղաղություն կզգան, երբ հավերժական ամուսնությանը նայեն հավատքի աչքով: Խրախուսեք նրանց օգտագործել այս դասի ժամանակ քննարկված սկզբունքները, որպեսզի նախապատրաստվեն հավերժական ամուսնության փառահեղ հնարավորությանը:

### Ուսանողի ընթերցարան

- Մարկոս Ե.35–36, Վարդապետություն և Ուխտեր 6.22–23, 36, 8.2–3, 9.7–9, 11.12–14, 88.40:
- Dieter F. Uchtdorf, “The Reflection in the Water” (Church Educational System devotional, Nov. 1, 2009), lds.org/media-library.

# Տաճարային արարողություններ և ուխտեր

## Նախաբան

Վերջին օրերի մարգարեները հայտարարել են. «Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների վերադարձը Աստծո ներկայություն» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Լիա՛հոնա*,

նոյ. 2010, 129): Այս դասի ընթացքում ուսանողները կսովորեն, որ տաճարային արարողությունները ստանալու միջոցով նրանք կարող են վայելել սրբազան օրհնություններ մահկանացու կյանքի ընթացքում և ձեռք բերել հավերժական կյանք:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Բոյդ Բ. Փաքեր, «Սուրբ Տաճարը», *Ensign*, հոկ. 2010, 29-35:
- Դ. Թոդ Բրիստոֆերսոն, «Ուխտերի գորությունը», *Ensign* կամ *Լիա՛հոնա*, մայիս 2009, 19-23:

## Ուսուցման առաջարկներ

### Վարդապետություն և Ուխտեր 97.10-17, 109.12-21, 124.37-40:

#### Տաճարների նպատակները

Դասարանին ցույց տվեք ձեր սիրած տաճարի նկարը և կիսվեք, թե ինչու եք այն ամենաշատը սիրում:

- Ինչո՞ւ մենք տաճարներ ունենք:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, հետևյալ հատվածները գրեք գրատախտակին: Հրավիրեք ուսանողներին կարդալ այդ հատվածներից մեկը՝ փնտրելով պատճառները, թե ինչու է Երկնային Հայրը տաճարներ տալիս:

Վարդապետություն և Ուխտեր 97.10-17

Վարդապետություն և Ուխտեր 124.37-40, 55

- Համաձայն այս հատվածների, որո՞նք են այն պատճառները, որոնց համար Երկնային Հայրը նախատեսում է տաճարներ: (Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքը. **Երկնային Հայրը տալիս է տաճարներ, որպեսզի Նրա գավակները կարողանան ստանալ կարևոր արարողություններ և գիտելիք, և նախապատրաստվեն ապրելու Իր ներկայության մեջ:**)

- Այս հատվածների, ո՞ր արտահայտություններն են ուսուցանում, որ տաճարները նախապատրաստում են մեզ Աստծո ներկայության մեջ ապրելու համար:

Ասեք ուսանողներին, որ Վարդապետություն և Ուխտեր 109 բաժնում տրված է Կիրթլենդի Տաճարի նվիրագործման աղոթքը: Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել Վարդապետություն և Ուխտեր 109.12-21 հատվածները և կազմել ցանկ, թե ինչպես են տաճարները նախապատրաստում մեզ Աստծո ներկայության մեջ ապրելու համար:

- Ըստ այդ հատվածների, ինչպե՞ս են տաճարները նախապատրաստում մեզ Աստծո հետ ապրելու համար: (Ուսանողները կարող են նշել հետևյալը. տաճարներում մենք զգում ենք Տիրոջ գործությունը, սովորում ենք իմաստություն և ստանում ենք Սուրբ Հոգու լիությունը. տաճարում մեզ քաջալերվում են անմիջապես ապաշխարել և մեզանից պահանջվում է լինել մաքուր, երբ մտնում ենք տաճար: Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք ուսանողների ուշադրությունը հրավիրել Ելից ԺԹ.10-14 հատվածների վրա, որտեղ նկարագրվում է, թե ինչպես է Մովսեսը ֆիզիկապես և հոգեպես հնադարյան Իսրայելին նախապատրաստում գալ Տիրոջ մոտ:)

Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի և Նախագահ Բրիգամ Յանգի (1801–1877) հետևյալ խոսքերը.



«Տաճարի հիմնական նպատակը արարողություններ կատարելն է, որոնք անհրաժեշտ են սելենտիալ արքայությունում մեր վեհացման համար: Տաճարային արարողությունները առաջնորդում են մեզ դեպի մեր Փրկիչը և տալիս են մեզ այն օրհնությունները, որոնք տրվում են մեզ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով» (Robert D. Hales, "Blessings of the Temple," *Ensign*, Oct. 2009, 48):



«Ձեր [տաճարային] օժտումը, Տիրոջ տանը ձեզ համար անհրաժեշտ բոլոր արարողությունները ստանալն է, որն այս կյանքից հեռանալուց հետո հնարավորություն կտա ձեզ վերադառնալ Հոր ներկայություն՝ անցնելով որպես պահակներ կանգնած հրեշտակների մոտով» (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 302):

- Ինչպես են այս խոսքերն օգնում ձեզ գնահատել տաճարային արարողություններ ստանալու կարևորությունը:

**Վարդապետություն և Ուխտեր 84.19-21**

*Տաճարներում ստացած քահանայության արարողություններն օգնում են մեզ ավելի շատ նմանվել Աստծուն*

Յուզադրեք հետևյալ ելույթը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«Եկեղեցում արարողությունը սրբազան, կանոնակարգված գործողություն է, որը կատարվում է քահանայության իշխանությամբ: Որոշ արարողություններ կարևոր են մեր վեհացման համար: Այս արարողությունները կոչվում են փրկարար արարողություններ: Դրանք ներառում են՝ մկրտությունը, հաստատումը, Մելքիսեդեկյան Քահանայության կարգումը (տղամարդկանց համար), տաճարային օժտումը և ամուսնության կնքումը» (Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում [2004], 39):

- «Փրկարար արարողություններն» ինչո՞վ են տարբերվում ավետարանի մյուս արարողություններից: (Մյուս արարողությունները, ինչպիսիք են երեխաներին օրհնելը և հիվանդներին սպասավորելը, չեն պահանջվում վեհացման համար:)

Նախքան շարունակելը նշեք, որ որոշ փրկարար արարողություններ, ինչպիսիք են մկրտությունը և Մելքիսեդեկյան Քահանայության կարգումը տեղի են ունենում նախքան տաճարային արարողություններ ստանալը, այնուամենայնիվ, դասի այս մասը կենտրոնանում է փրկարար արարողությունների վրա, որոնք կատարվում են տաճարում:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 84.19-21 հատվածները: Դասարանին խնդրեք փնտրել, թե ինչ կարող ենք ստանալ, երբ մասնակցում ենք արարողություններին, որոնք կատարվում են Մելքիսեդեկյան Քահանայության միջոցով:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «աստվածայնության գործությունը» արտահայտությունը: (Բացատրեք, որ «աստվածայնության գործությունը» աստվածային կամ աստվածանման դառնալու գործությունն է:)
- Ինչպե՞ս կձևակերպեք Վարդապետություն և Ուխտեր 84.20-21-ում ուսուցանված սկզբունքը: (Ուսանողների պատասխաններից հետո, գրատախտակին գրեք հետևյալը. **Տաճարային արարողությունների և ուխտերի միջոցով մենք կարող ենք ավելի շատ նմանվել Աստծուն:**)

Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերի մեկական օրինակ: Խնդրեք ուսանողներին նշել բառեր կամ արտահայտություններ, որոնք ուսուցանում են, թե ինչպես է տաճարային արարողություններին մասնակցելն օգնում մեզ դառնալ ավելի աստվածանման:



«Քահանայության մեծագույն օրհնությունները, որոնք մատչելի են [երիտասարդ տղամարդկանց կամ կանանց] համար, տրվում են տաճարում: Այնտեղ նրանք ստանում են երկնքի մի նշույլ: ... Հավերժության ուրախությունները, որոնք կարող են շատ հեռու թվալ տաճարից դուրս, հանկարծ զգում ենք մեզ շատ մոտ:

Տաճարում բացատրվում է փրկության ծրագիրը և կապվում են սրբազան ուխտեր: Այս ուխտերը, տաճարային սրբազան ներքնաշորերը կրելու հետ մասին, ամրացնում և պաշտպանում են օժտում ստացած անձնավորությանը հակառակորդի գործություններից: ...

Տաճարային ամենավեհ արարողության՝ հավերժական ամուսնության ժամանակ, փենսացուին և հարսնացուին տրվում է խոստում, որ եթե նրանք հավատարիմ լինեն, նրանք կվայելեն ընտանեկան միությունը իրար հետ, իրենց զավակների հետ և Տիրոջ հետ՝ ողջ հավերժությունում: Դա կոչվում է հավերժական կյանք» («Blessings of the Priesthood,» *Ensign*, Nov. 1995, 34).

Քննարկեք ուսանողների նշումները:

- Ինչպե՞ս է տաճարային արարողություններին մասնակցելն օրհնել ձեզ այնպես, ինչպես նկարագրել է Երեց Հեյլսը:

Ժամանակ տրամադրեք, որպեսզի ուսանողները գրեն մի քանի բան, որ կարող են անել տաճարային երկրպագությունն ավելի նշանակալից և ավելի կենտրոնացած դարձնելու համար, որը կօգնի նրանց դառնալ Աստծո նման:

**Ելից ժԹ.3–6, Վարդապետություն և Ուխտեր 109.22–26**

*Տաճարային ուխտերը պահելը*

Տեղեկացրեք ուսանողներին, որ տաճարային երկրպագությունն ունի ևս մեկ կարևոր նպատակ, որը սերտորեն կապված է տաճարային արարողություններ ստանալու հետ: Խնդրեք նրանց լսել այդ նպատակը, երբ դուք կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերով.



«Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում գործում է ծեսերը սպասավորելու քահանայության իշխանությունը, որի շնորհիվ մենք կարող ենք կապող ուխտերի մեջ մտնել մեր Երկնային Հոր հետ Նրա Սուրբ Որդու անունով: Ես վկայում եմ, որ Աստված կպահի ձեզ տված Իր խոստումները, եթե դուք պատվեք Նրա հետ կապած ձեր ուխտերը» («Ուխտերի գորությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2009, 22):

- Երբ մենք ստանում ենք ավետարանի փրկարար արարողությունները, ինչի՞ մեջ ենք մենք մտնում:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի և Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը և հրավիրեք ուսանողներին փնտրել Տիրոջ հետ մեր կապած ուխտերի կարևոր առանձնահատկությունները:



«Ուխտը պայմանագիր է Աստծո և Իր զավակների միջև Երկրի վրա, և կարևոր է հասկանալ, որ Աստված է որոշում բոլոր ավետարանական ուխտերի պայմանները: Ես և դուք չենք որոշում ուխտի կետերի էությունը: Փոխարենը՝ գործադրելով մեր բարոյական ազատ կամքը մենք ընդունում ենք ուխտի պայմանները և պահանջներն այնպես, ինչպես հաստատել է մեր Հավերժական Հայրը» (David A. Bednar, “That We May Always Have His Spirit to Be with Us,” *Ensign or Liahona*, May 2006, 28–29):



«Ուխտը կապող հոգևոր պայմանագիր է, լուրջ խոստում՝ տրված Աստծուն՝ մեր Հորը, որ մենք կապրենք, կմտածենք և կգործենք որոշակի ձևով, Իր Որդուն՝ Տեր Հիսուս Քրիստոսի ձևով: Ի պատասխան՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին խոստանում են մեզ հավերժական կյանքի ողջ փառքը» (Jeffrey R. Holland, "Keeping Covenants: A Message for Those Who Will Serve a Mission," *New Era*, Jan. 2012, 3):

- Ի՞նչն ամենաշատը տպավորվեց ձեր մեջ ուխտերի վերաբերյալ այս ելույթներից:
- Ինչն է կարևոր, որ Աստված սահմանի բոլոր ավետարանական ուխտերի պայմանները: (Քանի որ Նա է մեզ հավերժական կյանք առաջարկողը, Նա իրավասու է հաստատելու պայմանները, որոնց հիման վրա կարող ենք ստանալ այն: Միակ զոհաբերությունը, որ մենք կարող ենք տալ Նրան, մեր ազատ կամքն է, երբ մենք ընտրում ենք հնազանդվել: Որպես այս քննարկման մաս, շեշտեք հետևյալը. **Երբ մենք պահում ենք Տիրոջ հետ կապած մեր ուխտերը, մենք օրհնվում ենք մահկանացու կյանքում և կարող ենք ձեռք բերել հավերժական կյանք):**

Խնդրեք ուսանողներին բաժանվել զույգերի: Յուրաքանչյուր զույգի ուսանողներից մեկին հանձնարարեք կարդալ Ելից ԺԹ.3–6 հատվածները, իսկ մյուսին հանձնարարեք ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 109.22–26: Հրավիրեք դասարանին փնտրել օրհնություններ, որոնք հասանելի են նրանց, ովքեր պահում են իրենց ուխտերը, հատկապես՝ տաճարային ուխտերը: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, զույգերին հրավիրեք քննարկել իրենց մտքերը: (Ինչ վերաբերում է Ելիցի հատվածներին, համոզվեք, որ ուսանողերը հասկանում են, որ սուրբ տաճարներում է, որ մենք սկսում ենք որակվել որպես թագավորներ և թագուհիներ, ովքեր կարող են մի օր դառնալ սուրբ ազգ և ապրել Աստծո ներկայության մեջ. տես նաև Հայտնություն Ա.6, Ե.10, ԺԹ.16, ՎևՈՒ 76.55–56:)

- Ինչպե՞ս են Տիրոջ հետ կապած ուխտերը օրհնություն կամ պաշտպանություն հանդիսացել ձեզ համար:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի (1876-1972) հետևյալ խոսքերը.



«Եթե մենք գնում ենք տաճար, մենք բարձրացնում ենք մեր ձեռքերը և ուխտ կապում, որ կժառանգենք Տիրոջը և կպահենք Նրա պատվիրանները և մեզ անբիժ կպահենք աշխարհից: Եթե մենք գիտակցում ենք, թե ինչ ենք անում, ապա օժտումը պաշտպանություն կլինի մեզ համար ողջ մեր կյանքում՝ պաշտպանություն, որը եթե մարդ չի գնում տաճար, չի ունենում:

Ես լսել եմ, թե ինչպես էր հայրս [Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը] ասում, որ փորձության պահին, գայթակղության պահին, նա մտածում էր խոստումների մասին, ուխտերի մասին, որ նա արել էր Տիրոջ Տանը և դա պաշտպանություն էր նրա համար: ... Մասամբ այս ծիսակատարությունները հենց պաշտպանության համար են: Դրանք փրկում

են մեզ այժմ և դրանք վեհացում են մեզ այս կյանքից հետո, եթե մենք հարգենք դրանք»  
(*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆիլիկզ Սմիթ* [2013], 270):

- Ի՞նչ մտքեր և զգացողություններ դուք ունեք այս դասի ընթացքում, որոնցով կցանկանայիք կիսվել դասարանի հետ:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Զ. Փաքերի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Կյանքը բոլորիս համար էլ տունդարձի ճամփորդություն է, երբ վերադառնում ենք Աստծո ներկայության մեջ՝ իր սելեստիալ արքայություն:

Արարողություններն ու ուխտերը դառնում են մեր լիազորագրերը Նրա ներկայություն ընդունվելու համար: Դրանք արժանիորեն ստանալը կյանքի նպատակ է, դրանք պահելը՝ մահկանացու կյանքի մարտահրավեր»

(“Covenants,” *Ensign*, May 1987, 24):

Վկայեք, որ տաճարային արարողություններ ստանալն իրոք «կյանքի նպատակ է»: Տաճարային արարողություններն օգնում են մեզ ձեռք բերել այն լիազորագրերը, որոնք անհրաժեշտ են Երկնային Հոր ներկայություն ընդունվելու համար:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե արդյո՞ք տաճարում երկրպագելը և արարողություններ ստանալն առաջնահերթություն է իրենց կյանքում: Խնդրեք նրանց գրել, թե ինչ կարող են անել, որ ավելի շատ կենտրոնանան ուխտերի վրա, որոնք կապել են կամ կկապեն տաճարում:

### Ուսանողի ընթերցարան

- Ելից ԺԹ.3–6, Վարդապետություն և Ուխտեր 84.19–21, 97.10–17, 109.12–26, 124.37–40, 55:
- Boyd K. Packer, “The Holy Temple,” *Ensign*, Oct. 2010, 29–35.



# Կատարելագործել տաճարային երկրպագությունը

## Նախաբան

Սուրբ տաճարներում երկրպագելը նախապատրաստում է մեզ դառնալու Հիսուս Քրիստոսի ավելի լավ աշակերտներ, և այնտեղ «կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների վերադարձը Աստծո ներկայություն» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2010, 129): Նախագահ Նովարո Վ.

Հանթերը (1907–95) Եկեղեցու անդամների խրախուսել է տաճարը դարձնել «իրենց անդամության մեծ խորհրդանիշը» (“The Great Symbol of Our Membership,” *Ensign*, Oct. 1994, 2): Այս դասի ընթացքում ուսանողները կսովորեն, թե ինչպես ավելի իմաստալից դարձնեն իրենց տաճարային երկրպագությունը, որի միջոցով մեծ օրհնություններ կբերեն իրենց ընտանիքների կյանքում:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռիչարդ Գ. Սքոթ, «Տաճարային երկրպագություն՝ ամբողջական և զորության աղբյուր կարիքի պահին», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2009, 43–45:
- L. Lionel Kendrick, “Enhancing Our Temple Experience,” *Ensign*, May 2001, 78–79.
- *Պատրաստվել մտնել Սուրբ Տաճար* (գրքույկ, 2002):

## Ուսուցման առաջարկներ

### Սաղմոս ԻԴ. 3–5, Հովհաննես Բ. 13–16, Վարդապետություն և Ուխտեր 109.10-13, 20-22

#### Տաճար մտնելու արժանավորություն

Ցուցադրեք ձեր տանն ամենամոտ գտնվող տաճարի նկարը: Նշեք, որ *Միբություն Տիրոջը* արտահայտությունը փորագրված է յուրաքանչյուր տաճարի մուտքի վերևում: Հրավիրեք ուսանողներին կարդալ Հովհաննես Բ.13-16 հատվածները և խորհել, թե ինչպես է այս տողերում նկարագրվում տաճարների սուրբ բնույթը:

- Ինչպես է այս տողերում նկարագրվում այն վերաբերմունքը, որը մենք պետք է ունենանք տաճարի նկատմամբ:
- Ի՞նչ եղանակներով կարող են մարդիկ այսօր անհարգալից վերաբերմունք ցուցաբերել տաճարի հանդեպ:


Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 109.20 հատվածը, որը Կիրթլենդի Տաճարի նվիրագործման աղոթքի մի մասն է:

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել այս հատվածից: (Ուսանողների պատասխանը պետք է ներառի հետևյալ սկզբունքը. **Աստված պատվիրել է, որ չպետք է թույլ տալ, որ որևէ անմաքուր բան մտնի Իր տուն:** Նշեք, որ սուրբ գրություններում տաճարները միշտ նկարագրվում են որպես մաքուր, անբիծ, սուրբ և արժանավոր վայրեր: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ուշադրություն դարձնել այդ կապակցված մտքերին, մինչ նրանք կարդան տաճարների մասին:)
- Որո՞նք են արժանավորության չափանիշներից մի քանիսը, որոնցով անհատները պետք է ապրեն, որպեսզի կարողանան մուտք գործել տաճար:

Ուսանողներին ժամանակ տրամադրեք, որպեսզի ուսումնասիրեն Վարդապետություն և Ուխտեր 109.10-13, 21-22 և Մաղմուս ԻԴ.3-5 հատվածները և բացահայտեն այն օրհնությունները, որոնք կապված են տաճարում արժանիորեն երկրպագելու հետ: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտնում են:

- Ի՞նչ խոստումներ են այս հատվածներում տրված նրանց, ովքեր արժանի կերպով են մտնում տաճար: (Տիրոջ փառքը կհանգչի Իր ժողովրդի վրա: Նրանք, ովքեր կմտնեն տաճար, կզգան Տիրոջ զորությունը և կհաստատեն, որ դա սրբագործված և սուրբ վայր է: Տաճարներում Տերն Իր անունը կդնի մեզ վրա, և մենք կապրենք՝ զինված նրա զորությամբ: Տաճարներում մենք կարող ենք ստանալ օրհնություններ և արդարություն Տիրոջից:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է այս խոստումների իրականացումը կախված մեր արժանավորությունից:
- Ի՞նչ կասեք մեկին, ով խորհում է, թե արժե ջանքեր ներդնել տաճարային երաշխավորագրին արժանանալու համար:

Որևէ ուսանողի հրավիրեք կարդալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ խոսքերը.



«Ովքեր հասկանում են տաճարից եկող հավերժական օրհնությունները, գիտեն, որ ոչ մի զոհաբերություն այդքան մեծ չէ, ոչ մի գին այդքան ծանր չէ, ոչ մի մաքառում այդքան դժվար չէ, այդ օրհնությունները ստանալու համար: ... Նրանք հասկանում են, որ տաճարում ստացվող փրկող ծեսերը, որ թույլ են տալիս մի օր վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ՝ հավերժական ընտանիք և օժտվել օրհնություններով ու բարձրալի զորությամբ, արժեն ամեն զոհաբերություն և ամեն ջանք» (Սուրբ Տաճար՝ փարոս աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 92):

- Ի՞նչ օրհնություններ եք ստացել, երբ մասնակցել եք տաճարային արարողություններին:

Հորդորեք ուսանողներին ձեռք բերել և պահել գործող տաճարային երաշխավորագիր ողջ կյանքի ընթացքում: Շեշտեք, որ եթե նրանք խոնարհաբար երկրպագեն Տիրոջը Իր տաճարում, նրանք կստանան

օրհնություններ, որոնք հասանելի են միայն Իր սուրբ տան հավատարիմներին:


**3 Նեփի 17.1-3**

*Կատարելագործենք մեր տաճարային երկրպագությունը*

Գրատախտակին գրեք հետևյալը և ուսանողներին հարցրեք, թե ինչպես կլրացնեն այս նախադասությունը.

*Թե ինչ ձեռք կբերենք տաճարում, կախված է \_\_\_\_\_:*

Մի քանի պատասխաններ լսելուց հետո ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բոյո Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.



«Թե ինչ ձեռք կբերենք տաճարում կախված է մեծամասամբ այն բանից, թե ինչ կտանենք տաճար՝ խոնարհություն, ակնածանք և սովորելու ցանկություն: Եթե մենք ցանկանում ենք ուսուցանվել, տաճարում մենք կուսուցանվենք Հոգու կողմից» (*The Holy Temple* [1980], 42):

- Ձեր կարծիքով, ինչպիսի օ՞ ազդեցություն կկրեն տաճարում ձեր ունեցած փորձառությունները, եթե դուք գնաք «խոնարհության, ակնածանքի և սովորելու ցանկության» ոգով: (Երբ ուսանողները պատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Երբ մենք տաճար գնանք խոնարհությամբ, ակնածանքով և սովորելու ցանկությամբ, մենք կուսուցանվենք Հոգու կողմից:**)

Բացատրեք ուսանողներին, որ երբ Փրկիչն այցելեց նեփիացիներին, Նա ուսուցանեց նրանց սուրբ բաները հասկանալու օրինաչափությունը, որին մենք կարող ենք հետևել, երբ այցելում ենք տաճար: Որևէ ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 17.1-3 հատվածները:

- Ի՞նչ ուսուցանեց Փրկիչն Իրեն լսողներին, որը կօգներ նրանց նախապատրաստվելու սուրբ բաները հասկանալուն:
- Ինչպե՞ս կարող ենք հետևել այդ օրինակին, որպեսզի կարողանանք լավացնել տաճարում մեր ունեցած փորձառությունների որակը: (Մենք պետք է խորհենք տաճարում մեր ունեցած փորձառությունների շուրջ, աղոթենք հասկացողության համար, նախապատրաստվենք հաջորդ այցելությանը և վերադառնանք որքան հաճախ որ հանգամանքները թույլ կտան:)

Բարձրաձայն կարդացեք Յոթանասունից Երեց Լ. Լիոնել Կենդրիքի հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել այն արտահայտություններին, որոնք խորհուրդ են տալիս, թե ինչպես մենք կարող ենք զարգացնել մեր տաճարային երկրպագությունը:



«Տարբերություն կա պարզապես տաճար հաճախելու և հարուստ հոգևոր փորձառություն ունենալու միջև: Տաճարի իրական օրհնությունները տրվում են, երբ մենք զարգացնում ենք մեր տաճարային փորձառությունը: Դա անելու համար մենք պետք է զգանք ակնածանքի հոգի տաճարի հանդեպ և երկրպագության հոգի: ...»

Ակնածալից լինել չի նշանակում զուտ լուռ մնալ: Այն ներառում է տեղյակ լինելը, թե ինչ է տեղի ունենում: Այն ներառում է սովորելու և շոգու հուշումներն ընդունելու աստվածային ցանկությունը: Այն ներառում է ձգտում՝ փնտրելու էլ ավելի մեծ լույս և գիտելիք: Ակնածանքի բացակայությունը ոչ միայն անհարգալից վերաբերմունք է Աստվածության հանդեպ, այլ այն նաև անհնար է դարձնում, որ շոգին ուսուցանի մեզ այն բաները, որոնք իմանալու կարիքն ունենք» (*"Enhancing Our Temple Experience," Ensign, May 2001, 78*):

- Այս ելույթի ո՞ր արտահայտությունները յուրահատուկ իմաստ ունեն ձեզ համար: Ինչո՞ւ:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել խորհուրդներին, որոնք նրանք կարող են կիրառել տաճար այցելելիս.



«• Հասկացեք տաճարային արարողություններին վերաբերող վարդապետությունը, հատկապես Հիսուս Քրիստոսի Քավության նշանակությունը:

- Մասնակցելով տաճարային արարողություններին, մտածեք Հիսուս Քրիստոսի հետ ձեր հարաբերությունների մասին և մեր Երկնային Շոր հետ Նրա հարաբերությունների մասին: Այդ հասարակ գործողությունը ավելի մեծ հասկացողություն կպարզի տաճարային արարողությունների գերագույն էության մասին:
- Միշտ աղոթքով երախտագիտություն հայտնենք այն անսխալեղ օրհնությունների համար, որոնք բխում են տաճարային արարողություններից: Ամեն օր ապրեք այնպես, որպեսզի ցույց տաք Երկնային Շորը և Նրա Սիրելի Որդուն, թե ինչ մեծ նշանակություն ունեն այդ օրհնությունները ձեզ համար:
- Պարբերական այցեր պլանավորեք դեպի տաճար:
- Այնպես պլանավորեք ձեր ժամանակը, որպեսզի տաճարի ներսում չչտապեք:
- Փոխեք միջոցառումները, որպեսզի կարողանաք մասնակցել տաճարի բոլոր արարողություններին:
- Տիրոջ տուն մտնելիս հանեք ձեր ժամացույցը:
- Բաց մտքով և սրտով ուշադիր լսեք արարողության բոլոր բաղադրիչների բացատրությունը:
- Մտածեք այն անձի մասին, ում համար կատարում եք փոխարինող արարողությունը: Անընդհատ աղոթեք, որ նա հասկանա արարողությունների կենսական նշանակությունը և արժանի լինի կամ պատրաստվի արժանի լինել դրանից օգտվելու համար» («Տաճարային երկրպագություն՝ ամրության և զորության աղբյուր կարիքի պահին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2009, 43-44):

- Այս գաղափարներից, ո՞րը կարող է ամենաօգտակարը լինել ձեզ համար, երբ կիրառեք:
- Ի՞նչ եք արել դուք կամ ուրիշները, որպեսզի տաճարային երկրպագությունը դարձնեք ավելի նշանակալից: Ի՞նչ է փոխվում, երբ դուք անում եք այդ բաները: (Որպես այս քննարկման մաս կարող եք քննարկել Առաջին Նախագահության հետևյալ հայտարարությունը. «Երբ Եկեղեցու անդամները գտնում են իրենց նախնիների անունները և տանում են այդ անունները տաճար, որպեսզի կատարեն արարողությունները, տաճարային փորձառությունը կարող է մեծապես աճել» [Առաջին Նախագահության նամակ, հոկ. 8, 2012]:)

Խրախուսեք ուսանողներին գրի առնել իրենց ոգեշնչված մտքերը՝ տաճարային փորձառությունները զարգացնելու համար: Խրախուսեք նրանց հետամուտ լինել իրենց գրածին:


**Վարդապետություն և Ուխտեր 109.8**

*Հայտնության վայր*

Բացատրեք, որ Կիրթլենդի Տաճարի նվիրագործման աղոթքի ժամանակ Մարգարե Ջոզեֆ Սմիթը նկարագրել է տաճարի որոշ նպատակները: Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 109.8 հատվածը: Շեշտեք, որ նպատակներից մեկը «ուսման տուն» լինելն է:

- Ի՞նչ մենք կարող ենք ակնկալել, որ սովորենք տաճարներում:

Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Այս սրբազան շինությունը Աստծո հաճելի և սուրբ բաների մեջ դառնում է հրահանգների դպրոց: Այստեղ մենք ծանոթացել ենք սիրառատ Հոր ծրագրի հետ, որը վերաբերում է բոլոր սերունդների Նրա որդիներին և դուստրերին: Այստեղ մենք ուրվագծել ենք մարդու հավերժական ճամփորդության ողիսականը՝ Նախաերկրային գոյությունից մինչև այս կյանքը և հաջորդ կյանքը: Սկզբունքային և հիմնական մեծ ճշմարտություններ են ուսուցանվում պարզ ու հասարակ ձևով, որպեսզի լավ հասկացվեն բոլոր լսողների կողմից» (“The Salt Lake Temple,” *Ensign*, Mar. 1993, 5–6):

- Ինչպե՞ս է տաճարային արարողություններին մասնակցելն օգնում մեզ սովորել Երկնային Հոր ծրագրում սկզբունքային մեծ ճշմարտությունները:
- Ինչպե՞ս կարող է 3 Նեփի 17.1-3 հատվածների օրինակին հետևելն օգնել մեզ սովորել ավելի, քանի դեռ մենք տաճարում ենք:

Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերը.



«Անթիվ բազմություն են կազմում նրանք, ովքեր ընկճված պահերին, բարդ որոշումներ կայացնելու և խառնաշփոթ խնդիրները լուծելու պահերին, տաճար են եկել ծովի և աղոթքի ոգով՝ աստվածային առաջնորդություն փնտրելու համար: Շատերն են վկայել, որ միևչդեռ չեն լավել հայտնության ձայները, զգացել են ոգեշնչող առաջնորդություն այդ պահին կամ ավելի ուշ, որոնք դարձել են նրանց աղոթքների պատասխանները» (“The Salt Lake Temple,” *Ensign*, Mar. 1993, 6):

Վերջում հարցրեք ուսանողներին, թե արդյոք որևէ մեկը կցանկանար կիսվել տաճարի վերաբերյալ իր զգացողություններով և վկայություններով: Շեշտեք, որ ուսանողներն ապրում են իրենց կյանքի ամենակարևոր ժամանակաշրջանում, երբ բազմաթիվ որոշումներ պետք է կայացվեն: Վկայեք, որ Տիրոջ տանը ուսանողները կարող են զգալ Աստծո Հոգին, մխիթարություն և առաջնորդություն:

### Ուսանողի ընթերցարան

- Սաղմոս ԻԴ.3–5, Հովհաննես Բ.13–16, 3 Նեփի 17.1–3, Վարդապետություն և Ուխտեր 109.8–22:
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Տաճարային երկրպագություն՝ ամրության և զորության աղբյուր կարիքի պահին», *Ensign* կամ *Լիսինա*, մայիս 2009, 43–45:

# Դառնալ ազատիչներ Սիոն սարի վրա

## Նախաբան

Տաճարային աշխատանքի միջոցով Տերը հնարավոր է դարձրել բոլորի համար, ովքեր մահացել են առանց Հիսուս Քրիստոսի ավետարանի իմացության, «վերադառնալ Աստծո ներկայություն, իսկ ընտանիքների համար՝ միանալ հավերժության համար» («Ընտանիք՝

հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *L'hahnela*, նոյ. 2010, 129): Այս դասի ընթացքում ուսանողները կտվորեն, թե Եղիայի հոգին ինչպես է մեզ դրդում մասնակցել ընտանեկան պատմության աշխատանքին և դառնալ «ազատիչներ ... Սիոն սարի վրա» (Աբդիա Ա.21):

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դեյվիդ Ա. Բեդնար, «Չավակների սրտերը կդառնան», *Ensign* կամ *L'hahnela*, նոյ. 2011, 24–27:
- Քվենթին Լ. Քուք, «Արմատներ և ճյուղեր», *Ensign* կամ *L'hahnela*, մայիս 2014, 44–48:

## Ուսուցման առաջարկներ

### Վարդապետություն և Ուխտեր 138.27-37, 58-59

*Հիսուս Քրիստոսի ծառայությունը հոգիների աշխարհում*

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե իրենց նախնիներից քանիսն են մահացել առանց ավետարանը լսելու կամ առանց փրկարար արարողությունները ստանալու:

Հիշեցրեք ուսանողներին, որ Փրկիչը մահանալուց հետո հայտնվեց մահացածների հոգիներին: Այս այցելության մանրամասները, ինչպես տեսիլքում տեսավ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը (1838–1918), տրված է Վարդապետություն և Ուխտեր 138-ում: (Նշեք, որ սա մի օրինակ է, թե ինչպես օգնեն ուսանողներին հասկանալ ենթատեքստը, երբ ուսումնասիրում են սուրբ գրությունները:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138.27-37 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով, թե ինչ է Տերն արել հոգիների աշխարհում Իր ծառայության ընթացքում:

- Ինչպե՞ս է Տերը ուղի պատրաստել մահացածների հոգիների փրկության համար: (Շեշտեք հետևյալ ճշմարտությունը. **Փրկիչը լիազորեց, հրահանգեց և նախապատրաստեց արդար հոգիներին քարոզել ավետարանը հոգևոր բանտում գտնվողներին:**)
- Համաձայն հատված 34-ի, ինչո՞ւ պետք է ավետարանի սկզբունքները քարոզվեն հոգևոր բանտում գտնվողներին: (Բացատրեք, որ «դատվելին, ինչպես մարդիկ մարմնի մեջ» նշանակում է, որ Աստծո

բոլոր զավակները՝ ողջերը կամ մահացածները, հնարավորություն կունենան ընդունելու ավետարանը և ստանալու փրկարար արարողությունները, որպեսզի բոլորը կարողանան դատվել նույն չափանիշների համաձայն: Տես նաև ՎևՈւ 137.7-9):

Ուսանողներին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138.31, 58-59 հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ պետք է անեն հոգիները, որոնց ավետարանը ուսուցանվել է հոգևոր աշխարհում, որպեսզի դառնան «փրկության ժառանգներ»:

- Ըստ այդ հատվածների, ի՞նչ պետք է անեն մահացածների հոգիները, որպեսզի դառնան «փրկության ժառանգներ»: (Օգնեք պարզաբանել այս սկզբունքը. **Երբ անհատներին հոգևոր բանտում ուսուցանվում է ավետարանի ուղերձը, նրանք կարող են ընտրել ապաշխարել և ընդունել արարողությունները, որոնք իրենց փոխարեն կատարվել են տաճարներում:**)

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերով.



«Ոմանք սխալ են հասկացել և ենթադրում են, որ մահացած հոգիները «մկրտվում են մորմոնական հավատքում առանց իրենց իմացության» կամ որ «այն մարդկանց վրա, ովքեր մի ժամանակ եղել են մեկ այլ հավատքի մեջ, մորմոնների հավատը կարող է հետադարձ ուժ կիրառել»: Նրանք ենթադրում են, որ մենք ինչ-որ կերպ գորություն ունենք ուժ գործարել հոգու վրա՝ հավատքին վերաբերող հարցերում: Իհարկե, մենք չենք կարող: Աստված ի սկզբանե մարդուն տվել է իր ազատ կամքի ընտրությունը: «Մահացածները, որոնք ապաշխարում են, պիտի փրկագնվեն՝ Աստծո տան արարողություններին հնազանդվելու միջոցով» [ՎևՈւ 138.58], սակայն միայն այն ժամանակ, երբ ընդունեն այդ արարողությունները» (“The Redemption of the Dead and the Testimony of Jesus,” *Ensign*, Nov. 2000, 10):

Հրավիրեք ուսանողներին բաժանվել զույգերի և բեմականացման միջոցով բացատրել ոչ-անդամին, թե ինչպես է Աստծո ծրագիրը հնարավորություն տալիս բոլոր անհատներին՝ ողջերին և մահացածներին, ընդունել ավետարանը և փրկարար արարողությունները:

**Աբդիա Ա.21, Մաղաքիա Դ.5–6, Վարդապետություն և Ուխտեր 110.13–16, 128.18**

*Մենք պետք է դառնանք «ազատիչներ ... Սիոն սարի վրա» (Աբդիա Ա.21)*

Հրավիրեք ուսանողներին ցուցակ կազմել, թե ինչպես մենք կարող ենք մասնակցել ընտանեկան պատմության աշխատանքին: (Գտնելով ընտանիքի անդամների անունները և դրանք տաճար տանելով, ընտանեկան նկարներ և պատմություններ հավաքելով և պահպանելով, տոհմաձագ կազմելով և այլն:)



- Ինչպե՞ս կարող է ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելն ազդել ընտանիքի մահացած անդամների հանդեպ մեր զգացմունքների վրա:

Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել այդ զգացմունքների աղբյուրը, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



« Երեց Ռասսել Մ. Նելսոնը սովորեցրել է, որ Եդիայի Ոգին «Սուրբ Հոգու դրսևորումն է, որ վկայում է ընտանիքի աստվածային էության մասին» ('A New Harvest Time,' *Ensign*, May 1998, 34): Սուրբ Հոգու այս հատկանշական ազդեցությունը մղում է մարդկանց ճանաչել, փաստաթղթավորել և գնահատել իրենց նախնիներին և ընտանիքի անդամներին՝ թե՛ մահացած թե՛ կենդանի: Եդիայի Ոգին ներգործում է Եկեղեցում և Եկեղեցուց դուրս գտնվող մարդկանց վրա» («Ջավակների սրտերը կդառնան», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2011, 25):

Կարող եք «Եդիայի Ոգին» արտահայտության հետևյալ սահմանումը գրատախտակին գրելու մասին.

*Եդիայի Ոգին Սուրբ Հոգու դրսևորումն է, որի ազդեցությունն օգնում է մեզ ճանաչել, փաստաթղթավորել և գնահատել մեր ընտանիքի մահացած և կենդանի անդամներին:*

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մաղաքիա Դ.5-6 հատվածները:

- Համաձայն այս հատվածների, ինչպես է Եդիա մարգարեի խոստացված այցելությունը ներգործելու աշխարհի ընտանիքների և Տիրոջ փրկության աշխատանքի վրա վերջին օրերում: (Հիշեցրեք ուսանողներին, որ հարություն առած Եդիան հայտնվեց Ջոզեֆ Մֆիթին և Օլիվեր Քաուդերիին 1836 թվականի ապրիլի 3-ին Կիրթլենդի Տաճարում և հաստատեց նրանց վրա Մելքիսեդեկյան Քահանայության կնքման բանալիները [տես ՎեՌ 110.13–16]:)
- Ի՞նչ է նշանակում, որ հայրերի և որդիների սրտերը կդառնան իրար:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Ջոզեֆ Մֆիթի (1805-44) բացատրությունն այս հատվածների վերաբերյալ.



«Այժմ, դարձնել բառն այստեղ պետք է թարգմանվի *կապել* կամ կնքել: Բայց ո՞րն է այս կարևոր առաքելության նպատակը, կամ ինչպե՞ս այն պետք է կատարվի: Բանալիները պիտի հանձնվեն, Եղիայի հոգին պիտի գա, ... և Սրբերը գան որպես Սիոն սարի ազատիչներ [տես Աբրիա Ա. 21]:

Բայց ինչպե՞ս նրանք կարող են դառնալ ազատիչներ Սիոն Սարի վրա: Կառուցելով իրենց տաճարները, պատրաստելով իրենց մկրտության ավագանները և առաջ գնալով և ստանալով բոլոր արարողությունները ... բոլոր իրենց նախնիների համար, ովքեր մահացած են և փրկագնել նրանց ... և սրանում է շղթան, որը կապում է հայրերի սիրտը զավակներին և զավակների սիրտը հայրերին, որն իրականացնում է Եղիայի առաքելությունը» (Եվեղեցու: *Նախագահների ուսմունքները*. Ջոզեֆ Սմիթ [2007], 502):

- Ըստ Ջոզեֆ Սմիթի խոսքերի, ի՞նչ դարձանք մենք, երբ տաճարային արարողություններ կատարեցինք մեր մահացած նախնիների համար: (Ազատիչներ Սիոն սարի վրա:)

Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մենք բառիս բուն իմաստով դառնում ենք ազատիչներ Սիոն սարի վրա: Ի՞նչ է դա նշանակում: Ճիշտ ինչպես մեր Զավիչը տվեց Իր կյանքը որպես զոհաբերություն ողջ մարդկության համար, և դա անելով դարձավ մեր Փրկիչը, Նույնպես և մենք, փոքր չափով, երբ տաճարում ներգրավվում ենք փոխարինող աշխատանքում, դառնում ենք ազատիչներ նրանց համար, ովքեր գտնվում են վարագույրի մյուս կողմում, ովքեր չունեն զարգանալու ոչ մի միջոց, եթե միայն այստեղ՝ Երկրի վրա գտնվողները նրանց փոխարեն չանեն ինչ-որ բան» ("Closing Remarks," *Ensign or Liahona*, Nov. 2004, 105):

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը կատարեց Քավություն մեզ համար: Երբ մենք կատարում ենք փոխարինող արարողություններ նրանց համար, ովքեր մահացել են, մենք դառնում ենք «ազատիչներ Սիոն սարի վրա»: «Սիոն սար» եզրույթը կարող է վերաբերել մի շարք վայրերի, ներառյալ՝ Աստծո երկնային քաղաքին կամ Նոր Երուսաղեմ քաղաքին (տես Եբրայեցիս ԺԲ.22, ՎեՌու 76.66, 84.2–4, Գ Թագավորաց Ը.1):

- Ինչպե՞ս կարող է «ազատիչներ Սիոն սարի վրա» արտահայտության ըմբռնումը մեզ դրդել անելու ավելի, որպեսզի օգնենք մեր ընտանիքի մահացած և կենդանի անդամներին ստանալու տաճարային օրհնությունները:

Որպես քննարկման մաս, դուք կարող եք կիսվել Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերով.



«Գտնելով մեր նախնիներին և նրանց համար կատարելով փրկող արարողություններ, որոնք նրանք չէին կարող կատարել, մենք վկայում ենք Հիսուս Քրիստոսի Քավության հասանելիության անսահմանության մասին: Քրիստոսը «ամենի համար մեռաւ» [Բ Կորնթացի Ե. 15] ("The Redemption of the Dead and the Testimony of Jesus," *Ensign*, Nov. 2000, 10):

Բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտեր 128 բաժնում գրված է մի նամակ, որը Մարգարե Ջոզեֆ Մմիթը գրել է Մրբերին, որտեղ նա մեջբերել է Մադաքիա Դ.5-6 հատվածները և ապա տվել է ոգեշնչված մեկնաբանություն այդ հատվածների վերաբերյալ:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 128.18 հատվածը: Խնդրեք նրանց ընդգծել Ջոզեֆ Մմիթի նշած այն պատճառները, թե ինչու մենք պետք է մասնակցենք մեր ընտանիքի մահացած անդամների փրկագնման աշխատանքին: Ուսանողների բացահայտածը քննարկելուց հետո, քննարկեք հետևյալը.

- Ինչպե՞ս կարող են մեր նախնիների համար փրկարար արարողություններ կատարելու ջանքերը փրկություն բերել նաև մեզ:

Գրատախտակին գրեք հետևյալ խոսքերը. *Գտնել, Տանել և Ուսուցանել*:

Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչպես կարող են այս երեք բառերը նկարագրել այն քայլերը, որոնք մեզ խրախուսում են անել, երբ մենք կատարում ենք տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը: (Համոզվեք, որ ուսանողները բացահայտում են հետևյալը. *Գտնել* և պատրաստել անուններ տաճարային արարողությունների աշխատանքի համար, *տանել* այդ անունները տաճար և կատարել փոխարինող տաճարային արարողություններ այդ անհատների համար, *ուսուցանել* ուրիշներին անելու նույնը:)



Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ օրհնությունները, որոնք գալիս են այս քայլերին հետևելուց, ցուցադրեք և ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը, կամ ցուցադրեք «Ընտանեկան Պատմության խոստացված օրհնությունները» տեսագրությունը ([lds.org/topics/family-history/fdd-cook/blessings-video](https://www.lds.org/topics/family-history/fdd-cook/blessings-video)): Երբ ուսանողները կարդան կամ դիտեն, հրավիրեք նրանց փնտրել խոստացված օրհնությունները, որոնք գալիս են ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելուց:



«Ես հրավիրում եմ եկեղեցու երիտասարդներին սովորել Եղիայի Ոգու մասին և զգալ այն: Ես խրախուսում եմ ձեզ սովորել, փնտրել ձեր նախնիներին և պատրաստել ձեր անձերը՝ լինելու փոխանորդ և կատարելու մկրտություններ Տիրոջ տանը *ձեր* մահացած ազգականների համար (տես Վևու 124.28–36): Եվ ես հորդորում եմ ձեզ օգնել այլ մարդկանց իմանալ իրենց ընտանիքի պատմությունները:

Եթե դուք հավատքով արձագանքեք այս հրավերին, ձեր սրտերը կդառնան դեպի հայրերը: ... Ձեր սերն ու երախտագիտությունը ձեր նախնիների հանդեպ կմեծանան: Փրկչի մասին

ձեր վկայությունը և դարձի ընթացքը կդառնան ավելի խորը ու հաստատուն: Եվ ես խոստանում եմ, որ դուք պաշտպանված կլինեք թշնամու սաստկացող ազդեցությունից: Մինչ դուք մասնակցեք այս սուրբ աշխատանքին և սիրեք այն, դուք պաշտպանված կլինեք ձեր երիտասարդության տարիներին և ձեր ողջ կյանքի ընթացքում» («Ձավակների սրտերը կդառնան», 26–27):

- Ի՞նչ օրհնություններ են ստանում նրանք, ովքեր կատարում են ընտանեկան պատմության աշխատանքը:

Հարցրեք, թե արդյոք ուսանողներից մեկը կարող է կիսվել անձնական փորձառությամբ այն մասին, երբ օրհնություններ է ստացել ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելով:

- Ձեզանից նրանք, ովքեր արարողություններ են կատարել նախնիների համար, ի՞նչ զգացողություններով կարող եք կիսվել այս սուրբ փորձառությանը մասնակցելու վերաբերյալ:

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել իրենց ընտանեկան պատմությունը՝ օգտագործելով նյութերը, որոնք մատչելի են FamilySearch.org կայքում և առաջարկեք անհրաժեշտության դեպքում օգնության համար դիմել իրենց ծխի կամ ճյուղի ընտանեկան պատմության խորհրդատուին: Խրախուսեք ուսանողներին կազմել ծրագիր, որպեսզի *գտնեն* իրենց նախնիների անունները, *տանեն* այդ անունները տաճար և կատարեն արարողություններ նրանց համար և *ուսուցանեն* ուրիշներին անելու նույնը:

### Ուսանողի ընթերցարան

- Աբդիա Ա.21, Մադաքիա Դ.5–6, Վարդապետություն և Ուխտեր 110.13–16, 128.18, 138.27–37, 58–59:
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Ձավակների սրտերը կդառնան», *Ensign* կամ *Լիստինա*, նոյ. 2011, 24–27:

# Հավերժական ամուսնություն

## Նախաբան

Հավերժական ամուսնությունը կարևոր է սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում վեհացվելու համար, իսկ դա ձեռք է բերվում միայն համապատասխան իշխանությամբ տաճարում կնքվելու և հետո ուխտերի համաձայն ապրելու միջոցով, որոնց

մեջ մտել են այդ ժամանակ: Այս դասը կվերահաստատի ուսանողների համար, որ ամուսնանալը ճիշտ մարդու հետ, ճիշտ վայրում, ճիշտ իշխանությամբ ամենակարևոր որոշումն է, որ նրանք երբևէ կընդունեն:

## Ընթերցանության օժանդակ նյութեր


- Ռասսել Մ. Նելսոն, «Սելեստիալ ամուսնություն», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2008, 92-95:
- «Պատվավոր, երջանիկ, հաջողակ ամուսնություն», գլուխ 18, *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Մպենսեր Վ. Քիմբալ* (2006), 189-201:
- Cree-L Kofford, “Marriage in the Lord’s Way, Part One,” *Ensign*, June 1998, 7-12:

## Ուսուցման առաջարկներ

### Վարդապետություն և Ուխտեր 132.1-24

#### Հավերժական ամուսնության վարդապետությունը

Բացատրեք, որ ամուսնության կարևորությունը ուսուցանվել է սկսած Եկեղեցու կազմավորման վաղ օրերից: Մակայն հավերժական ամուսնության վարդապետությունը լայնորեն չէր ուսուցանվում Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից մինչև Նավուի ժամանակաշրջանը: Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Փարլի Պ. Պրատի (1807-57) հետևյալ խոսքերը, որոնք նկարագրում են, թե ինչ է նա զգացել, երբ առաջին անգամ իմացել է, որ ամուսնությունը կարող է լինել հավերժ: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«[Ջոզեֆ Սմիթն] էր, որ ինձ ուսուցանեց, որ իմ կինը՝ իմ սրտակից ընկերը, կարող է լինել ինձ հետ ժամանակի և ողջ հավերժության ընթացքում: ... Նրանից էր, որ ես սովորեցի, որ մենք պետք է ձեռք բերենք այդ կապվածությունը և զարգանանք ու աճենք նույն կերպ ողջ հավերժության մեջ, մինչև մեր անվերջ միության արդյունքում կունենանք սերունդ՝ այնքան անթիվ, որքան երկնքի աստղերը կամ ծովի ավազը: ... Ես սիրել եմ նախկինում, սակայն չեմ իմացել, թե ինչու: Բայց այժմ ես սիրում եմ անկեղծորեն՝ բարձրացնող և վեհացնող զգացումով» (*Autobiography of Parley P. Pratt*, ed. Parley P. Pratt Jr. [1938], 297-98):

- Ի՞նչ ազդեցություն ունեցավ Երեց Պրատի ամուսնության նոր ըմբռնումը իր կնոջ հանդեպ իր զգացմունքների վրա:

Բացատրեք, որ հավերժական ամուսնության վերաբերյալ Տիրոջ բազմաթիվ ուսմունքներ գտնվում են Վարդապետություն և Ուխտեր 132 բաժնում: Ուսանողներից որևէ մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.19 հատվածը: Խնդրեք դասարանի անդամներին հետևել, գտնելով, թե ինչ պայմաններ պետք է բավարարել, որպեսզի ամուսնությունը հավերժական լինի:

- Ի՞նչ պայմաններ պետք է բավարարվեն, որպեսզի ամուսնությունը հավերժական լինի: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալը. **Ամուսնությունը հավերժական է նրանց համար, ովքեր ամուսանցած են Աստծո խոսքով, ում ամուսնությունը կնքված է Խոստումի Սուրբ Հոգով, և ովքեր մնում են ուխտի մեջ:**)
- Ի՞նչ է նշանակում «մնալ ուխտի մեջ»: Պահել ամուսնության ուխտի կարգն ու պայմանները: (Երբ մի տղամարդ և կին մտնում են հավերժական ամուսնության մեջ, նրանք հանդիսավոր խոստումներ են տալիս միմյանց և Աստծուն: Կողակցին նրանք խոստանում են, որ իրենք անպայման կսիրեն ու կծառայեն նրան լիակատար հավատարմությամբ: Աստծուն նրանք հանդիսավորապես խոստանում են պահել տաճարում կապված ուխտերի կարգն ու պայմանները:)
- Ի՞նչ է նշանակում, որ ամուսնությունը «կնքվում է խոստումի Սուրբ Հոգով»: (Մտածեք մատնանշել, որ Խոստումի Սուրբ Հոգին Սուրբ Հոգու տիտղոսներից մեկն է: Սուրբ Հոգին ունի շատ տիտղոսներ, ներառյալ Մխիթարիչ կամ Հայտնող: Այս տիտղոսներից յուրաքանչյուրը վերաբերում է Նրա առանձնահատուկ պարտականություններին կամ գործառնություններին:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Խոստումի Սուրբ Հոգի տիտղոսը, ցուցադրեք հետևյալ խոսքերը և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«Սուրբ Հոգին Խոստումի Սուրբ Հոգին է» (Գործք Բ.33): Նա հաստատում է մարդկանց արդար գործերի, արարողությունների և ուխտերի ընդունելի լինելն Աստծո կողմից: Խոստումի Սուրբ Հոգին Հորը վկայում է, որ փրկության արարողությունները կատարվել են պատշաճ ձևով, և որ դրանց հետ կապված ուխտերը պահպանվել են» (Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Խոստումի Սուրբ Հոգի», scriptures.lds.org):

- Ինչպե՞ս են այս խոսքերն օգնում բացատրել, թե ինչու է վեհացումը պահանջում ավելի լին, քան տաճարում կնքված լինելը: Էլ ի՞նչ պետք է տեղի ունենա: (Մենք պետք է նաև ապրենք արդար կյանքով և մնանք հավատարիմ բոլոր փրկարար արարողություններին, ներառյալ՝ մկրտությունը, հաղորդությունը, քահանայության արարողությունները և տաճարային արարողությունները: Միայն այն ժամանակ, երբ մենք մնում ենք հավատարիմ, Սուրբ Հոգին կվկայի Հորը, որ ուխտերը պահվել են:)

Օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ հավերժական ամուսնությունը՝ համեմատելով և հակադրելով այն քաղաքացիական ամուսնության հետ՝ օգտագործելով հետևյալ սխեման: Մխեման արտագրեք գրատախտակին.


<b>Քաղաքացիական ամուսնություն</b>	<b>Սելեստիալ ամուսնություն</b>
<b>Վարդապետություն և Ուխտեր 132.15-18</b>	<b>Վարդապետություն և Ուխտեր 132.19-24</b>

Դասարանը բաժանեք զույգերի: Ջուզբնկերներից մեկին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.15-18-ը, իսկ մյուսին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.19-24-ը: Հրավիրեք ուսանողներին նշել խոսքերն ու արտահայտությունները, որոնք նկարագրում են պայմանները, որոնք սպասում են նրանց, ովքեր ամուսնանում են քաղաքացիական ձևով և օրհնությունները նրանց, ովքեր ամուսնանում են հավերժության համար:

Բավարար ժամանակ տրամարդելուց հետո, խնդրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել իրենց գտած նյութերով: Այնուհետև հարցրեք.

- Մահից հետո, ինչպես են նրանց պայմանները, ովքեր ամուսնանում են քաղաքացիական ամուսնությամբ, տարբերվում նրանցից, ովքեր ամուսնանում են հավերժության համար: (Մինչ ուսանողները պատասխանում են, դուք կարող եք ավելացնել նրանց պատասխանները գրատախտակի սխեմային: Գուցե կամենաք մատնանշել, որ 20–24 հատվածներում նկարագրված պայմանները նույնատիպ են այն օրհնություններին, որոնք խոստացվել էին Աբրահամյան ուխտում [տես Ծննդոց ԺԷ 17.1–7, 22.17]:)

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, մտածեք կիսվել Յոթանասունից Երեց Քրիի-Լ Կոֆֆորդի հետևյալ խոսքերով.




«Իշխանությունը սելեստիալ ամուսնության խոստումների համար գալիս է Աստծուց, և այդ խոստումները պատվելու ձեր ձախողման հետևանքները նույնպես կգան Աստծուց: Քաղաքացիական ամուսնությունում իշխանությունը հարսի ու փեսայի միջև խոստումների համար հավատարմություն է երկու մարդկանց միջև: Այն չի բարձրանում ավելի, քան դա: Այն չի կարող: Դրա իշխանությունը գալիս է մարդուց և ոչ թե Աստծուց» (“Marriage in the Lord’s Way, Part One,” *Ensign*, June 1998, 9):

- Ի՞նչ մտքեր եք ունենում, երբ համեմատում եք գրատախտակի վրայի գրված պայմանները:

- Ի՞նչ օրհնություններ եք տեսել այն մարդկանց տներում, ովքեր ամուսնացել են տաճարում և ձգտում են ապրել հավատարիմ իրենց ուխտերին: Ի՞նչ եք տեսնում այդ գույգերին անելիս՝ իրենց ուխտերը պատվելու համար: (Որպես այդ քննարկման մաս, կարող եք կիսվել Յոթանասունից Երեց Լ. Ուիթնի Քլեյթոնի ամուսնության վերաբերյալ այս հայտարարությամբ. «Որևէ ձևի ոչ մի այլ փոխհարաբերություն չի կարող բերել այդչափ ուրախություն, առաջացնել այդքան բարիք, կամ առաջ բերել այդքան անձնական հղկվածություն» [«Ամուսնություն. Նայեք և սովորեք, *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 83]:)

Բացատրեք դասարանին, որ Վարդապետություն և Ուխտեր 132 բաժինը պարունակում է նաև Տիրոջ որոշ հրահանգները բազմակնության գործադրման վերաբերյալ: Տերը պատվիրել էր Սրբերին գործադրել բազմակնության օրենքը որպես բոլոր բաների վերականգման մի մաս (տես Գործք Գ.21, ՎեՌ 132.45): Եկեղեցու անդամները գործադրեցին այդ օրենքը մինչև 1890 թվականը, երբ Տերը հայտնեց Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆին, որ այլևս Նա չէր պահանջում Եկեղեցու անդամներից այդ անել: Այսօր բազմակնության վերաբերյալ Եկեղեցու դիրքորոշումը պարզաբանելու համար, հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ հայտարարությունը.



«Եթե մեր անդամներից մեկը կիրառում է բազմակնություն, նրան հեռացնում են Եկեղեցուց, որն ամենալուրջ պատիժն է, որ Եկեղեցին կարող է կիրառել: ... Ավելի քան մեկ դար առաջ Աստված հստակ հայտնեց Իր մարգարե Վիլֆորդ Վուդրուֆին, որ բազմակնության կիրառումը պետք է դադարեցվի, որը նշանակում է, որ այժմ այն դեմ է Աստծո օրենքին: Նույնիսկ այն երկրներում, որտեղ քաղաքացիական կամ կրոնական օրենքը թույլ է տալիս բազմակնություն, Եկեղեցին ուսուցանում է, որ պետք է լինի մենամուսնություն և իր անդամության մեջ չի ներառում նրանց, ովքեր կիրառում են բազմակնությունը» (“What Are People Asking about Us?” *Ensign*, Nov. 1998, 71–72):

Եթե ուսանողները հարցեր ունենան բազմակնության վերաբերյալ, նրանց հանձնարարեք կարդալ հետևյալ նյութը *Gospel Topics*, “Plural Marriage in The Church of Jesus Christ of Latter-day Saints,” («Բազմակնությունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում»), [lds.org/topics](https://www.lds.org/topics) կայքում:

**Վարդապետություն և Ուխտեր 131.1-4**

*Հավերժական ամուսնությունը ընտրելու կարևորությունը*


Ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 131.1-4 հատվածները: Խնդրեք դասարանի անդամներին գտնել, թե ինչու է կարևոր մեզ համար ամուսնանալ այն ձևով, ինչպես Տերն է սահմանել:

- Ի՞նչ օրհնություններ են սպասում նրանց, ովքեր ընտրում են մտնել ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են այս սկզբունքը. **Երբ մենք մտնում ենք ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ, մենք կարող ենք վեհացվել սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում:**



Բացատրեք, որ այս ենթատեքստում *նոր* բառը նշանակում է, որ այս ուխտը նոր է վերականգնվել մեր տնտեսությունում: *Հավիտենական* բառը նշանակում է, որ այս ուխտը կտևի հավերժության մեջ և որ դա սահմանված էր նախամահկանացու հոգևոր աշխարհում, որպես փրկության ծրագրի մաս: Դա եղել է Հիսուս Քրիստոսի ավետարանի մասը Ադամի ժամանակից ի վեր: *Աժ* բառի մասին Մարգարե Ջոզեֆ Մմիթն ուսուցանել է, որ նրանք, ովքեր ձեռք են բերել սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանը, «կշարունակեն աճել և կունենան երեխաներ սելեստիալ փառքում» [*History of the Church*, 5:391]:)

Ցուցադրեք Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.




«[Փրկություն] նշանակում է փրկվել ֆիզիկական և հոգևոր մահից: ... [Վեհացումը] վերաբերում է երջանկության բարձրագույն վիճակին և փառքին սելեստիալ թագավորությունում» («Փրկություն և վեհացում», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 8):

«Փրկությունը անձնական հարց է, մինչդեռ վեհացումը ընտանեկան հարց է: Միայն նրանք, ովքեր ամուսնացած են տաճարում և ուն ամուսնությունը կնքված է Խոստումի Սուրբ Հոգով, կշարունակեն կողակիցներ լինել մահից հետո և կստանան սելեստիալ փառքի, կամ վեհացման բարձրագույն աստիճանը» («Սելեստիալ ամուսնություն» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 92):

- Ինչո՞ւ է հավերժական ամուսնությունն այդքան կարևոր: (Երբ ուսանողները պատասխանեն և երբ ուղղորդվեք Հոգու կողմից, գուցե կամենաք շեշտել այսօրվա աշխարհի մարդկանց կործանարար միտումը, ովքեր ընտրում են չամուսնանալ, որովհետև նրանք ավելի են արժևորում այնպիսի բաներ, ինչպես օրինակ կարիերան, քան Աստծո ծրագրի կատարումը իրենց համար: Մերժելով ամուսնությունը, նրանք վտանգի տակ են դնում այն օրհնությունները, որոնք Աստված կկամենար շնորհել նրանց այժմ և հավերժության մեջ:)
- Ինչո՞ւ էք կարծում, որ տաճարային ամուսնությունը զույգին տալիս է ավելի մեծ հնարավորություններ՝ երջանկության համար, քան քաղաքացիական ամուսնությունը, կամ միասին ապրելն առանց ամուսնանալու:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ բոլոր Սրբերն ի վերջո կստանան հավերժական ամուսնության օրհնությունը, քանի դեռ նրանք չեն փոխզիջում իրենց չափանիշները որևէ ձևով, խնդրեք որևէ ուսանողի կարդալ բարձրաձայն Նախագահ Հովարդ Վ. Հանթերի (1907–95) հետևյալ խոսքերը.



«Ոչ մի օրհնություն, ներառյալ հավերժական ամուսնությունը և հավերժական ընտանիքը, չի մերժվի որևէ արժանավոր մարդու: Թեև այս օրհնությանը հասնելու համար ոմանք կարող են սպասել որոշ չափով ավելի երկար, երևի նույնիսկ այս մահկանացու կյանքից այն կողմ, այն չի մերժվի»  
 ("The Church Is for All People," *Ensign*, June 1989, 76):

- Ձեզանից քանի՞սը գիտեն մարդկանց, ովքեր ցանկանում են ամուսնանալ տաճարում, սակայն չունեն այդ հնարավորությունը: Ինչպե՞ս կարող է այդ խոստումը Նախագահ Հանթերի խոսքերում օգնել այդ մարդկանց:

Ավարտեք՝ հրավիրելով ուսանողներին պատասխանել մեկ կամ հետևյալ հարցերից երկուսին էլ՝ գրելով.

- Ի՞նչ որոշում եմ կայացնում ես, որն ինձ կտանի դեպի կնքումը տաճարում:
- Իմ կյանքի ո՞ր ասպարեզներն են, որոնք պահանջում են փոփոխություն և աճ, որպեսզի ես պատրաստ լինեմ կնքվելու տաճարում:

Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են անում իրենք՝ տաճարային ամուսնության պատրաստվելու համար: Կիսվեք ձեր վկայությամբ, որ երբ ամուսինը և կինը պահում են ուխտերը, որոնք նրանք կապել են, երբ կնքվել են տաճարում, նրանք կմիավորվեն հավերժորեն: Կիսվեք, թե ինչպես է այս գիտելիքը օրհնություն եղել ձեր կյանքում:

### Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 131.1-4, 132.1-24:
- Ռասսել Մ. Նելսոն, «Մեղեատիպ ամուսնություն», *Ensign* կամ *Լիստինգ*, նոյ. 2008, 92-95:

# Ծնունդ տալու սրբազան գորությունը

## Նախաբան

«Աստված պատվիրել է, որ ծնունդ տալու սուրբ գորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, ովքեր օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին»: («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129): Աստծո բոլոր զավակների համար,

մաքրաբարոյության օրենքով ապրելը պահանջում է մեզանից լինել առաքինի մեր գործողություններում, ինչպես նաև մեր մտքերում: Ամուսնու և կնոջ միջև մտերմությունը գեղեցիկ է և սրբազան և այն կարգված է Աստծո կողմից՝ ծնունդ տալու և սեր արտահայտելու համար:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դեյվիդ Ա. Բեդնար, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 41–44:
- Դալլին Հ. Օուքս, «Պոռնոգրաֆիա», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2005, 87–90:
- Լինդա Մ. Ռիվս, «Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Քրիստոսակենտրոն տուն», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 15–17:
- «Մեռական մաքրություն», *Երիտասարդներին զորացնելու համար* (գրքույկ, 2011), 35–37:

## Ուսուցման առաջարկներ

**Սաղմոս ԻԴ.3–4, Մատթեոս Ե.8, Հակոբ 2.31–35, Ավմա 39.3–5, 9, Վարդապետություն և Ուխտեր 42.22–24, 121.45–46**

### Մաքրաբարոյության Տիրոջ օրենքը

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը և ուսանողներին հարցրեք, թե ինչպես կավարտեին այն.

«Մեր սերնդի աղետալի մեղքը \_\_\_\_\_»:

Ցուցադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Այս սերնդի աղետալի մեղքը սեռական անբարոյականությունն է: Սա, ասել է Մարգարե Ջոզեֆը, կլինի ավելի շատ գայթակղությունների, ավելի շատ հարվածների և ավելի շատ դժվարությունների աղբյուր Իսրայելի երեցների համար, քան մեկ ուրիշ բան» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էգրա Թաֆտ Բենսոն (2014), 220):

- Ինչպե՞ս են Նախագահ Բենսոնի խոսքերը վերաբերում մեր ներկա հասարակությանը:

Ցուցադրեք հետևյալ խոսքերը «Երիտասարդներին զորացնելու համար» գրքույկից, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն. Մինչ նրանք լսում են, հարցրեք ուսանողներին մտածել, թե ինչպե՞ս նրանք կձևակերպեին Տիրոջ մաքրաբարոյության օրենքը մեկ նախադասությամբ:

«Սեռական մաքրության վերաբերյալ Տիրոջ չափանիշը պարզ է և անփոփոխ: Նախքան ամուսնանալը ոչ մի սեռական հարաբերություններ մի ունեցեք, իսկ ամուսնանալուց հետո միշտ հավատարիմ եղեք ձեր կողակցին: ...

... Նախքան ամուսնությունը մի մասնակցեք կրթոտ համբույրների, պառկեք մեկ ուրիշ անձնավորության վրա, կամ շոշափեք մեկ ուրիշ անձնավորության մարմնի անձնական, սրբազան մասերը, լինի հագնված թե առանց հագուստների: Մի արեք որևէ այլ բան սեռական զգացմունքներ առաջացնելու համար: Մի առաջացրեք այդ զգացումները ձեր մարմնում» (Երիտասարդներին զորացնելու համար [գրքույկ, 2011], 35–36):

- Ինչպե՞ս կամփոփեիք մաքրաբարոյության մասին Տիրոջ օրենքը մեկ նախադասությամբ: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք հետևյալ վարդապետությունը ընտանիքի վերաբերյալ հայտարարությունից. «Աստված պատվիրել է, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, ովքեր օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին» [«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» Ensign կամ Լիստինգ, նոյ. 2010, 129]:)
- Ինչպե՞ս կարող են նախագրույցումները, որոնք ընդգծված են Երիտասարդներին զորացնելու համար գրքույկի մեջբերման երկրորդ պարբերությունում, արգելել ինչ-որ մեկին ավելի լուրջ բարոյական մեղքեր գործել:

Գրատախտակին արտագրեք հետևյալ ցանկը: Դասարանը կիսեք երկու մասի և հրավիրեք մի կեսին ուսումնասիրել «հետևանքներ» վերնագրի տակ գտնվող հատվածները, իսկ մյուս խմբին ուսումնասիրել «օրհնություններ» վերնագրի տակ գտնվող հատվածները: Ուսանողներին հորդորեք դիմել սուրբ գրքերի ծանոթագրություններին, երբ ուսումնասիրում են:

*Մաքրաբարոյության օրենքը խախտելու հետևանքները.*

Հակոբ 2.31-35

Այնա 39.3-5, 9

ՎնՈւ 42.22-24

**Մաքրաբարոյության օրենքով սպրեյու օրհնությունները.**

Սաղմոս ԻԴ.3-4

Մատթեոս Ե.8

ՎնՈւ 121.45-46

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, քննարկեք դասարանի հետ իրենց սովորածը: Ուղղեք հետևյալ տիպի հարցեր.

- Ինչպե՞ս են մաքրաբարոյության օրենքը խախտելու հետևանքները ցույց տալիս այս պատվիրանը պահելու կարևորությունը:
- Ինչպե՞ս եք դուք զգացել մաքրաբարոյության օրենքին հնազանդվելու օրհնությունները:

Ցուցադրեք հետևյալ ճշմարտությունը ընտանիքի վերաբերյալ հայտարարությունից.

**«Մենք հայտարարում ենք, որ երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները դեկավարվում են Աստծո կողմից»** («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129):

- Ի՞նչ է այս հայտարարությունը նշանակում ձեզ համար:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի և Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը՝ օգնելու խորացնել ուսանողների ըմբռնումը այս ճշմարտության վերաբերյալ: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ այդ խոսքերը, մինչ դասարանը լսում է, թե ինչու է մաքրաբարոյության օրենքը հավերժական կարևորություն ունեցող:



«Մարմինը հոգու կարևոր մասն է: Այս հատկանշական և շատ կարևոր Վերջին Օրերի Սրբերի վարդապետությունն ընդգծում է, թե ինչու սեռական մեղքը այդքան լուրջ է: Մենք հայտարարում ենք, որ նա, ով օգտագործում է Աստծո կողմից տրված մեկ ուրիշի մարմինը առանց աստվածային թույլտվության, անարգում է այդ անձնավորության հենց հոգին, անարգում է կենտրոնական նպատակը և կյանքի գործընթացները, կյանքի «հենց բանալին», ինչպես Նախագահ Բոյդ Զ. Փաքերն է մի առիթով կոչել այն: Շահագործելով մեկ ուրիշի մարմինը, որը նշանակում է շահագործել նրա հոգին, այդ մարդը սրբապղծում է Զրիստոսի Քավությունը, որը փրկել է այդ հոգին և որը հնարավոր է դարձնում հավերժական կյանքի պարգևը» (Jeffrey R. Holland, "Personal Purity," *Ensign*, Nov. 1998, 76):



«Ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև լիազորված ուղի է, որի միջոցով նախամահկանացու ոգիները մտնում են մահկանացու կյանք: Ամուսնությունից առաջ սեռական հարաբերությունից ամբողջովին զերծ մնալը և բացարձակ հավատարմությունը ամուսնության մեջ՝ պահպանում են այս սրբազան ուղու սրբությունը:

Ծննդաստեղծ գորությունը հոգեպես կարևոր է: Այս գորության սխալ օգտագործումը խաթարում է Հոր ծրագրերի նպատակները և մեր մահկանացու գոյությունը: Մեր Երկնային Հայրը և Նրա Սիրելի Որդին արարիչներ են և վստահել են մեզանից յուրաքանչյուրին Իրենց արարչագործական գորության մի մասը: ... Թե ինչպես ենք մենք օգտագործում այդ աստվածային ուժը կորոշի մեծամասամբ մեր երջանկությունը մահկանացու կյանքում և մեր ճակատագիրը հավերժության մեջ» (Դեյվիդ Ա. Բեդևար, «Մենք հավատում ենք մաքուր լինելուն», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 42).

- Ինչո՞ւ մաքրաբարոյության օրենքը հավերժական կարևորություն ունի:
- Ուստի, ընտանիքն աստվածային հաստատություն է, ամենակարևորը մահկանացու կյանքում և հավերժության մեջ:

Տվեք ուսանողներին մի պահ՝ գրի առնելու նախազգուշացումները, որոնց նրանք պետք է հետևեն՝ օգնելու հնազանդվել մաքրաբարոյության օրենքին:

**Մատթեոս Ե.27–28, Հռովմայեցիս Ը.6, Վարդապետություն և Ուխտեր 63.16**

*Պոռնոգրաֆիայի վտանգները*

Խնդրեք ուսանողներին կարդալ հետևյալ միտքը. Մատթեոս Ե.27–28, Հռովմայեցիս Ը.6, և Վարդապետություն և Ուխտեր 63.16: Մտածեք խնդրել ուսանողներին գործադրել սուրբ գրությունների ուսումնասիրության հմտություն՝ ստեղծելով սուրբ գրության շղթաներ սկսած առաջին հատվածից, գրելով հղումներ դեպի հաջորդը և այդպես շարունակ մինչև վերջին հատվածը:

- Ի՞նչ վարքագծեր են այս հատվածները արգելում: (Վարքագծերից մեկը, որն ուսանողները պետք է նշեն, պոռնոգրաֆիայի օգտագործումն է:)
- Ի՞նչ հետևանքներ են այս սուրբ գրությունները նշում պոռնոգրաֆիա նայելու ու կարդալու վերաբերյալ:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեցներ Դավիթ Հ. Օուքսի և Ռիչարդ Գ. Սքոթի և Քույր Լինդա Ս. Ռիվսի՝ Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդականի հետևյալ խոսքերը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք և հրավիրեք դասարանին փնտրել պոռնոգրաֆիայի օգտագործման լրացուցիչ հետևանքներ:



«Պոռնոգրաֆիա նայելը վնասում է հակառակ սեռի անձնավորության հետ նորմալ զգացմունքային, ռոմանտիկ և հոգևոր հարաբերություն վայելելու ունակությանը» (Դավիթ Ն. Օուքս, «Պոռնոգրաֆիա», *Ensign* կամ *Liahonah*, մայիս 2005, 89):



«Սատանան դարձել է վարպետ, օգտագործելով պոռնոգրաֆիայի կախվածություն առաջացնող ուժը, սահմանափակելով Հոգու առաջնորդվելու անձնավորության կարողությունը: Այսօր պոռնոգրաֆիայի հարձակումը իր բոլոր արատավոր, քայքայող, կործանարար ձևերով առաջացրել է մեծ վիշտ, տառապանք, կսկիծ և կործանել ամուսնություններ (Ռիչարդ Գ. Աքոթ, «Ձեռք բերել հոգևոր առաջնորդություն», *Ensign* կամ

*Liahonah*, նոյ. 2009, 8):



«[Երեխաները և երիտասարդները] պետք է իմանան պոռնոգրաֆիայի վտանգների մասին և թե ինչպես է այն սկսում դեկավարել մարդկանց կյանքերը, որը պատճառ է դառնում Հոգու կորստի, զգացմունքների խեղաթյուրման, ինքնակառավարման պակասի և գրեթե սպառում է ողջ ժամանակը, միտքը և էներգիան» (Լինդա Ս. Ռիվս, «Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Զրիստոսակենտրոն տուն», *Ensign* կամ *Liahonah*, մայիս

2014, 15):

Խրախուսեք ուսանողներին, ովքեր մաքառում են պոռնոգրաֆիա օգտագործելու կամ այլ տիպի անբարոյականության դեմ՝ այցելել իրենց եպիսկոպոսներին կամ ճյուղի նախագահներին: Հավաստիացրեք նրանց, որ նրանք կարող են գտնել ետադարձի ուղին՝ դեպի խաղաղություն և երջանկություն՝ ապաշխարության միջոցով: Վկայեք հետևյալ ճշմարտության մասին. Պոռնոգրաֆիայից խուսափելը կտանի ավելի մեծ երջանկության այս կյանքում և հավերժության մեջ: Գրատախտակին գրեք հետևյալ Եկեղեցու կայքերը՝ օգնելու ուսանողներին, ովքեր ներքաշված են պոռնոգրաֆիա օգտագործելու մեջ:

[overcomingpornography.org](http://overcomingpornography.org)

[addictionrecovery.lds.org](http://addictionrecovery.lds.org)

### Ծանոց Բ.21-24

#### Ամուսնության մեջ ինտիմ հարաբերությունների դերը

*Ուշադրություն.* Դասի այս մասի նուրբ բնույթի պատճառով, հիմնվեք մարգարեական ուսմունքների վրա և խուսափեք ուսուցանել այստեղ գտնվող բաներից այն կողմ, ներառյալ՝ չկիսվելով մանրամասներ ձեր կողակցի հետ ձեր փոխհարաբերությունների մասին:

Վկայեք, որ ֆիզիկական ինտիմ հարաբերությունները սրբազան են, պատշաճ և առանձնահատուկ, երբ այն տեղի է ունենում ամուսնական կապի մեջ, այն ձևով, ինչպես Աստված է սահմանել:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ծննդոց Բ.21-24 հատվածը:

- Չնայած առանձնապես չի նշվում, այն ինչ ի նկատի ունեն այս հատվածները, նպատակը՝ ֆիզիկական ինտիմ հարաբերությունն է ամուսնու և կնոջ միջև: (Մեկ լինել մեր կողակցի հետ:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«Մարդկային ինտիմ հարաբերությունը պահված է ամուսնացած զույգի համար, որովհետև այն միության բացարձակ գերագույն խորհրդանիշն է՝ ամբողջություն և միություն՝ կարգված և սահմանված Աստծո կողմից: Եղեմի պարտեզից սկսած, ամուսնությունը նախատեսված է նշանակելու տղամարդու և կնոջ լիակատար միաձուլում՝ նրանց սրտերի, հույսերի, կյանքերի, սիրո, ընտանիքի, ապագայի և ամեն ինչի» («Անձնական մաքրություն», *Ensign*, Nov. 1998, 76):

- Ինչպե՞ս է ձեզ օգնում Երեց Հոլլանդի միտքը ավելի լավ հասկանալ ֆիզիկական մտերմությունը՝ ամուսնու և կնոջ միջև: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալը. **Ամուսնության մեջ ինտիմ հարաբերությունը ամրացնում է հոգևոր և էմոցիոնալ կապերը ամուսնու և կնոջ միջև:**)

Մտածեք հետևյալ հայտարարությունները թերթիկների վրա գրված բաժանելու մասին: Տվեք մի օրինակ յուրաքանչյուր ուսանողի և խնդրեք ուսանողներին ընդգծել ամուսնության մեջ ֆիզիկական մտերմության նպատակները:



«Մեռերի միության՝ ամուսին և կին (և միայն ամուսին և կին), գլխավոր նպատակը երեխաներ աշխարհ բերելն է: Մեռական փորձառությունները երբեք Տիրոջ կողմից նախատեսված չեն եղել լինելու խաղալիք կամ պարզապես բավարարելու կրքերն ու տենչերը» (Սպենսեր Վ Քիմբալ, «Տղամարդկանց և կանանց համար Տիրոջ ծրագիրը» *Ensign*, Oct. 1975, 4):



«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ունի սեռական բարոյականության եզակի, անփոփոխ չափանիշ՝ ինտիմ հարաբերությունները պատշաճ են միայն տղամարդու և կնոջ միջև՝ Աստծո ծրագրով սահմանված ամուսնական փոխհարաբերության մեջ: Այդպիսի հարաբերությունները, պարզապես, հետազոտական հետաքրքրասիրություն չեն, ոչ ցանկությունների բավարարման, ոչ էլ հանգստի կամ զվարճության ինչ-որ ձև են՝ եսասիրաբար հետամուտ լինելու համար: ... Ավելի շուտ դրանք մահկանացու կյանքում մեր աստվածային էության և ներուժի գերագույն



արտահայտություններն են և ամուսնու և կնոջ միջև էմոցիոնալ և հոգևոր կապերն ամրացնելու մի միջոց» (Դեյվիդ Ա. Բեդնար, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Ensign* կամ *L'hahonua*, մայիս 2013, 42):

Քննարկեք, թե ինչ նպատակներ ընդգծեցին ուսանողները:

Հրավիրեք նրանց խորհել, թե ինչ իրենք սովորեցին մաքրաբարոյության օրենքի մասին, իսկ հետո գրեն պատասխաններ հետևյալ հարցերին իրենց օրագրերում.

- Ինչպե՞ս է մաքրաբարոյության օրենքը հասկանալի ամրացնում ձեր վճռականությունը՝ սպրել բարոյապես մաքուր կյանքով:
- Որո՞նք են մաքրաբարոյության օրենքով սպրելու պատճառները:

Ավարտեք՝ կիսվելով այս դասին քննարկված ճշմարտությունների վերաբերյալ ձեր վկայությամբ:

## Ուսանողի ընթերցարան

- Ծննդոց Բ.21–24, Մադոնա ԻԴ.3–4, Մատթեոս Ե.8, 27–28, Հռովմայեցիս Ը.6, Հակոբ 2.28, 31–35, Ալմա 39.1–9, Վարդապետություն և Ուխտեր 42.22–24, 63.16, 121.45–46:
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Ensign* կամ *L'hahonua*, մայիս 2013, 41–44:
- «Մեռական մաքրություն», *Երիտասարդներին զորացնելու համար* (գրքույկ, 2011), 35–37:

# Բազմանալու և երկիրը լցնելու պատվիրանը

## Նախաբան

Բազմանալու և երկիրը լցնելու պատվիրանը Երկևային Հոր հավերժական ծրագրի կենսական մասն է և ուժի մեջ է մնում այսօր: Այս դասը կօգնի ուսանողներին տեսնել, որ իրենք կարող են առաջնորդվել երեխաներ աշխարհ

բերելու իրենց որոշումներում, երբ կրակն ուսումնասիրեն ապրող մարգարեների խոսքերը և որոնեն Երկևային Հոր առաջնորդությունը աղոթքի միջոցով:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Նիլ Լ. Անդերսեն, «Երեխաներ», *Ensign* կամ *Լիսինոնա*, նոյ. 2011, 28–31:
- Ռասսել Մ. Նելսոն, «Վիժեցում. հարձակում անպաշտպանների վրա» *Ensign*, հոկ. 2008, 32–37:

## Ուսուցման առաջարկներ

### Ծննդոց Ա.27–28, Թ.1, ԼԵ.11

*Երեխաներ ծնելու պատվիրանը մնում է ուժի մեջ*

Նախքան դասը գրեք հետևյալ տողերը գրատախտակին «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթից.

*Առաջին պատվիրանը, որն Աստված տվեց Ադամին ու Եվային վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Բր գավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը»:*

Դասը սկսեք հետևյալ հարցով.

- Ինչպիսի՞ն են ձեր մտքերը, երբ մտածում եք այս երկու նախադասությունների մասին:

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Ծննդոց Ա.27–28, Ծննդոց Թ.1 և Ծննդոց ԼԵ.11 հատվածները, որոնելով այն անձանց անունները, ում Աստված պատվիրեց շատանալ և լցնել աշխարհը: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին՝ իրենց սուրբ գրություններում կապ ստեղծել այս հղումների միջև՝ դարձնելով սուրբ գրությունների մի շղթա: Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ այս պատվիրանը տրվել է ամեն ավետարանական տնտեսության ժամանակ:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Երեխաներ ունենալու հնարավորություն ունեցող ամուսնու և կնոջ մեծագույն արտոնությունն է մահկանացու մարմիններ ստեղծել Աստծո այս հոգեղեն զավակների համար: Մենք հավատում ենք ընտանիքներին, և մենք հավատում ենք երեխաներին:

Երբ երեխա է ծնվում որևէ ամուսնու և կնոջ համար, նրանք կատարում են երեխաներ աշխարհի բերելու մեր Երկնային Հոր ծրագրի մի մասը»

(«Երեխաներ», *Ensign* կամ *Liahon* նոյ. 2011, 28):

Շեշտեք այս հայտարարության վերջին նախադասությունը՝ ներկայացնելով հետևյալ սկզբունքը: **Երբ որևէ ամուսին և կին երեխա են բերում աշխարհ, նրանք կատարում են Երկնային Հոր երջանկության ծրագրի մի մասը:** Ցույց տալով գրատախտակի վրայի նախադասությունները՝ հարցրեք հետևյալը.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերը Իր ժամանակակից մարգարեների միջոցով կրկնել «շատացեք և լցրեք երկիրը» պատվիրանը մեր ժամանակակից օրերում: (Որպես օրինակ, կարող եք ասել ուսանողներին, որ սկսած 1960թ., Ամերիկայի Միացյալ Նահանգների ամուսնացած մայրերի ծնելիության մակարդակը նվազել է 45 տոկոսով:)
- Որո՞նք են հնարավոր պատճառները, թե ինչո՞ւ է առկա՝ ամուսնացած զույգերի համար ավելի քիչ երեխաներ ունենալու միտումը: (Պատասխանները կարող են ընդգրկել այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ ֆինանսների բացակայությունը, կրթությունն ավարտելը և սպասելը կարիերա սկսելուն:)
- Ինչպե՞ս կարող է Իր զավակների համար Աստծո ծրագիրը հասկանալն օգնել որևէ ամուսնու և կնոջ, ովքեր որոշում են, երբ ունենալ երեխաներ և քանի երեխա ունենալ:

Բացատրեք, որ ամուսիններն ու կանայք կստանան օրհնություններ Աստծուց, որը հնարավորություն կտա նրանց պահել երեխաներ ծնելու պատվիրանը, նույնիսկ դժվարին պայմաններում: Կիսվեք հետևյալ փորձառությամբ Յոթանասունի Քվորումից Երեց Ջեյմս Օ. Մեյսոնի կյանքից, ինչպես պատմել է Երեց Նիլ Լ. Անդերսենը.



Երեց Մեյսոնը մի փորձառություն էր ունեցել իր ամուսնությունից ընդամենը շաբաթներ անց, որն օգնեց նրան որոշել իր ընտանիքի պարտականությունների առաջնահերթությունը: Նա ասել է.

«Մարին և ես պատճառաբանում էինք, որ որպեսզի ես ավարտեմ բժշկական համալսարանը, անհրաժեշտ կլիներ, որ նա շարունակեր աշխատել: Չնայած սա այն չէր, ինչ մենք [ուզում էինք] անել, երեխաները ստիպված կլինեին ավելի ուշ գալ: [Երբ նայում էի Եկեղեցու ամսագրերից մեկը իմ ծնողների տանը,] ես նկատեցի Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Սպենսեր Վ. Քիմբալի կողմից գրված մի հոդված, որը [ուսաբանում էր] ամուսնության հետ կապված պարտականությունները: Ըստ Երեց Քիմբալի, սրբազան պարտականություններից մեկը՝ շատանալն ու երկիրը լցնելն էր: Իմ ծնողների տունը մոտիկ էր Եկեղեցու Վարչության

շեքին: Ես անմիջապես գնացի գրասենյակ և նրա հողվածը կարդալուց 30 րոպե հետո, ես ինձ գտա նստած Երեց Սպենսեր Վ. Քիմբալի գրասենյակի հակառակ կողմում: (Սա այնքան էլ հեշտ գործ չէր լինի այսօր:)

«Ես բացատրեցի, որ ես ուզում էի բժիշկ դառնալ: Չկար այլընտրանք բացի մեր երեխաներ ունենալը հետաձգելը: Երեց Քիմբալը համբերատարությամբ լսելուց հետո, պատասխանեց մեղմ ձայնով. «Եղբայր Մեյսոն, արդյոք Տերը կկամենա՞ր, որ խախտեիք իր կարևոր պատվիրաններից մեկը, որպեսզի դուք դառնայիք բժիշկ: Տիրոջ օգնությամբ, դուք կարող եք ունենալ ձեր ընտանիքը և միաժամանակ դառնալ բժիշկ: Ո՞ր է ձեր հավատքը»:

Երեց Մեյսոնը շարունակեց. «Մեր առաջին երեխան ծնվեց մեկ տարին չլրացած: Մարին և ես տքնաջանորեն աշխատեցինք, և Տերը բացեց երկնքի պատուհանները»: Մեյսոններն օրհնվեցին ևս երկու երեխաներով, նախքան նա կավարտեր բժշկական համալսարանը չորս տարի անց» («Երեխաներ», 29):

- Այդ փորձառության մեջ, ի՞նչը տպավորություն գործեց ձեր վրա: Եեշտեք, որ ամուսնացած լինելը երեխաներ ծնելու կարևոր մասն է կազմում: Կարդացեք ընտանիքի վերաբերյալ հայտարարությունից հետևյալ հատվածը.

«Երեխաները պետք է ծնվեն ամուսնական կապի մեջ և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր հարգում են ամուսնական երդումները լիակատար հավատարմությամբ»:

- Ի՞նչ արտոնություններ ունեն երեխաները, երբ նրանք ծնվում են «ամուսնական կապի մեջ»:
- Ի՞նչ մտքեր և զգացողություններ ունեք այս աշխարհ երեխաներ բերելու միջոցով Իր ծրագիրն իրականացնելու Երկնային Հորն օգնելու վերաբերյալ:

**1 Նեփի 15.11, Վարդապետություն և Ուխտեր 29.6**

*Որոնել Տիրոջ առաջնորդությունը*

Ցուցադրեք Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը և հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այն.



«Երբ ունենալ երեխա և քսնի երեխա ունենալ անձնական որոշումներ են, որոնք պետք է ընդունվեն ամուսնու և կնոջ ու Տիրոջ միջև: Սրանք սրբազան որոշումներ են, որոշումներ, որոնք պետք է կայացվեն անկեղծ աղոթքով և գործի դրվեն մեծ հավատքով» («Երեխաներ» 28, շեղագիրն ավելացված է):


- Ի՞նչ է նշանակում այս որոշումները պետք է «գործի դրվեն մեծ հավատքով»:

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել 1 Նեփի 15.11 և Վարդապետություն և Ուխտեր 29.6 հատվածները, սովորելու որոշ

սկզբունքներ, որոնք ամուսիններն ու կանայք կարող են օգտագործել երբ նրանք պատասխաններ են որոնում հարցերին, որոնք առնչվում են *երբ* ունենալ երեխա և *քանի* երեխա ունենալուն:

- Ի՞նչ սկզբունքներ գտաք այս հատվածներում, որոնք կարող են օգնել ամուսիններին և կանանց որոշել, թե երբ ունենալ երեխա և քանի երեխա ունենալ: (Շեշտեք հետևյալ սկզբունքը. **Երբ ամուսիններն ու կանայք հավատք են գործադրում և որոնում Տիրոջը աղոթով, Նա առաջնորդում է նրանց իրենց երեխա ունենալու որոշումներում:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր ամուսինների և կանաց համար խորհուրդ անել Տիրոջ հետ այս հարցերի կապակցությամբ:


Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսի հետևյալ միտքը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Քանի՞ երեխա պետք է ունենա զուգը: Քանիսի համար որ կարող են հոգ տանել: Իհարկե, երեխաների մասին հոգ տանել՝ նշանակում է ավելի, քան պարզապես նրանց կյանք տալը: Երեխաները պետք է սեր ստանան, դաստիարակվեն, ուսուցանվեն, սնուցվեն, հագուստ ունենան, տնով ապահովվեն և իրենց կարողությունները լավ գործի դնեն, որպեսզի իրենք էլ լավ ծնողներ դառնան» (“The Great Plan of Happiness,” *Ensign*, Nov. 1993, 75):

- Ինչպե՞ս կարող են Երեց Օուքսի ուսմունքներն օգնել զույգին որոշել, թե քանի երեխա ունենան:

Այս դասի ընթացքում զգայուն եղեք այն ուսանողների հանդեպ, ովքեր գուցե հնարավորություն չունենան ծնողներ լինել այս կյանքում: Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը կարող են օգտակար լինել.



«Երեխաներ բերելը կարող է ... վշտալի թեմա լինել արդար զույգերի համար, ովքեր ամուսնանում են և պարզվում է, որ չեն կարող երեխաներ ունենալ, որոնց նրանք այնքան անհամբեր սպասել են, կամ ամուսնու և կնոջ համար, ովքեր ծրագրում են ունենալ մեծ ընտանիք, սակայն օրհնված են ավելի փոքր ընտանիքով:

Մենք չենք կարող միշտ բացատրել մեր մահկանացու կյանքի դժվարությունները: Երբեմն կյանքը թվում է շատ անարդար, հատկապես, երբ մեր մեծագույն ցանկությունը կատարելն է հենց այն, ինչ Տերն է պատվիրել: Որպես Տիրոջ ծառա, ես հավաստիացնում եմ ձեզ, որ այս խոստումը հաստատ է. Հավատարիմ անդամները, ում հանգամանքները թույլ չեն տալիս ստանալ հավերժական ամուսնության և ծնող լինելու օրհնություններն այս կյանքում, կստանան խոստացված բոլոր օրհնությունները հավերժություններում, եթե պահեն Աստծո հետ կապած իրենց ուխտերը[*Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում* (2010), 1.3.3]» («Երեխաներ», 30):

**Սաղմոս ԾԻԷ.3, Վարդապետություն և Ուխտեր 59.6**

*Կյանքի սրբությունը*

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Սաղմոս ԾԻԷ.3 հատվածը:

- Ի՞նչ է նշանակում, որ «որդիքը Տիրոջ ժառանգությունն են»:  
(Երեխաները պարզև են Աստծուց:)

Կարդացեք հետևյալը ընտանիքի վերաբերյալ հայտարարությունից. «Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում»: Վկայեք այս սկզբունքի մասին. **Երբ մենք հասկանում ենք, որ երեխաները պարզևներ են Աստծուց, մենք ավելի լավ ենք հասկանում նրանց կյանքի սրբությունը:** Աշխարհի շատ մասերում արհեստական վիժեցումը համարվում է ընդունելի և միլիոնավոր վիժեցումներ են կատարվում ամեն տարի: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Եկեղեցու քաղաքականությունը վիժեցման վերաբերյալ, կիսվեք հետևյալ հայտարարությամբ և խնդրեք ուսանողներին լսել այն հանգամանքերը, որոնց դեպքում վիժեցումը կարող է արդարացվել:

«Մարդկային կյանքը պարզև է Աստծուց: Ոչ պարտադրված վիժեցումը՝ անձնական և սոցիալական հարմարավետության համար, հակառակ է Աստծո կամքին և պատվիրաններին: ... Վերջին օրերի մարգարեները մերժել են վիժեցումը, հիմնվելով Տիրոջ հայտարարության վրա. «Մի ... սպակիր, ոչ էլ նման որևէ բան գործիր» (ՎնՈւ 59.6): Նրանց խորհուրդը այդ հարցի վերաբերյալ պարզ է. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները չպետք է կատարեն, խրախուսեն, կամ կազմակերպեն վիժեցում, հաստատեն այն կամ վճարեն դրա համար: Եկեղեցու անդամները, ովքեր խրախուսում են որևէ ձևի վիժեցում, կարող է ենթարկվեն Եկեղեցու կարգապահական տույժերին:

Եկեղեցու ղեկավարներն ասել են, որ կան մի քանի բացառիկ դեպքեր, երբ վիժեցումը կարող է արդարացվել՝ դեպքեր, որոնք ներառում են հղիությունը արյունապղծության կամ բռնաբարության արդյունքում, երբ կնոջ կյանքն ու առողջությունը իրավասու բժշկական հեղինակություն ունեցողի կողմից համարվում է լուրջ վտանգի տակ, կամ երբ սաղմը իրավասու բժշկական մասնագետի կողմից համարվում է խիստ թերություններ ունեցող, որոնք թույլ չեն տա երեխային գոյատևել ծննդից հետո: Բայց նույնիսկ այս հանգամանքները ինքնաբերաբար չեն արդարացնում վիժեցումը: Նրանք, ովքեր դիմակայում են այդպիսի հանգամանքների, պետք է մտածեն վիժեցման մասին միայն Եկեղեցու տեղական ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո և լուրջ աղոթքի միջոցով հաստատում ստանալուց հետո» (Gospel Topics, "Abortion," lds.org/topics):

- Ի՞նչ բացառիկ հանգամանքներում կարող է վիժեցումը արդարացվել:
- Եթե նույնիսկ այդ հանգամանքները առկա են, ի՞նչ խորհուրդ պետք է փնտրեն նրանք, ովքեր մտածում են վիժեցման մասին:

Կիսվեք հետևյալ հայտարարությամբ, օգնելու համար ուսանողներին հասկանալ, որ որդեգրումը մի անեսասեր այլընտրանք է վիժեցման համեմատ:

«Մենք ... արտահայտում ենք մեր աջակցությունը չամուսնացած ծնողներին, ովքեր իրենց երեխաներին դնում են մայր և հայր ունեցող կայուն տներում որդեգրման համար: Մենք նաև արտահայտում ենք մեր աջակցությունը ամուսնացած մայրերին և հայրերին, ովքեր որդեգրում են այդ երեխաներին:

... Ապահով, դաստիարակող և հետևողական փոխհարաբերություն ունենալը ինչպես հոր, այնպես էլ մոր հետ, կարևոր է երեխայի բարօրության համար: Երբ ընտրում ենք

որդեգրումը, չամուսնացած ծնողները շնորհում են իրենց երեխաներին այս ամենակարևոր օրհնությունը: Որդեգրումը անեսասեր, սիրո որոշում է, որն օրհնում է երեխային, ծնողներին և որդեգրող ծնողներին այս կյանքում և ողջ հավերժության մեջ» (First Presidency statement, Oct. 4, 2006, as cited in *Ensign*, Oct. 2008, 37):

Երբ ավարտեք դասը, կհավեք ձեր վկայությամբ՝ այն ուրախության մասին, որ երեխաները բերել են ձեր կյանք: Խրախուսեք ուսանողներին արժանի ձևով պատրաստվել երեխաներին այս աշխարհի բերելու սրբազան հնարավորության համար:

### Ուսանողի ընթերցարան

- Ծննդոց Ա.27–28, Թ.1, ԼԵ.11, Սաղմոս ճԻԷ.3, 1 Նեփի 15.11, Վարդապետություն և Ուխտեր 29.6, 59.6, Մովսես 2.27–28:
- Նիլ Լ. Անդերսեն, «Երեխաներ», *Ensign* կամ *Լիստինգ*, նոյ. 2011, 28–31:

# Զարգացնել ամուսնական հարաբերություններ

## Նախաբան

«Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2010, 129): Ներառելով Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին իրենց

փոխհարաբերության մեջ և միասնաբար ապրելով Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներով, ամուսինները և կանայք կարող են ձեռք բերել առավելագույն երջանկություն, որն Աստծո ծրագրի նպատակն է:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռասսել Մ. Նելսոն, «Փայփայել ամուսնությունը», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2006, 36-38:
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Ամուսնությունը կարևոր է Նրա հավերժական ծրագրում», *Ensign*, հունիս 2006, 82-87:
- Լ. Ուիթնի Քլեյթոն, «Ամուսնություն՝ նայիր և սովորիր», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 83-85:

## Ուսուցման առաջարկներ

**Մատթեոս ԺԹ.3-8, Եփեսացի Ե.25, 28-31, Վարդապետություն և Ուխտեր 25.5, 13-15, 42.22**

*Կառուցել հաջող ամուսնություն*

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ամուսնությունը ավելի մեծ հնարավորություններ է բերում երջանկության համար, քան որևէ այլ մարդկային փոխհարաբերություն: Սակայն որոշ ամուսնացած զույգեր չեն հասնում իրենց լրիվ ներուժին: Նրանք թույլ են տալիս, որ իրենց սիրավեպը ժանգոտվի, միմյանց ըստ արժանվույն չեն գնահատում, թույլ տալիս այլ հետաքրքրություններ կամ անտեսման ամպեր մշուշապատեն տեսադաշտը, թե իրենց ամուսնությունն իրականում ինչ կարող էր լինել: Ամուսնություններն ավելի երջանիկ կլինեին, եթե ավելի զգուշորեն փայփայվեին» («Փայփայել ամուսնությունը», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2006, 36):

- Ի՞նչ սովորույթներ կամ վարվելաձևեր ձեր կարծիքով կարող են ամուսնությունը «ժանգոտ դարձնել»:


Բացատրեք, որ զույգերը, ովքեր թույլ են տալիս իրենց ամուսնությունները ժանգոտվեն, երբեմն ընտրում են ավարտել իրենց



ամուսնությունները ամուսնալուծությամբ: Ասեք ուսանողներին, որ Փրկչի ծառայության ընթացքում որոշ Փարիսեցիներ վիճում էին, որ ամուսնալուծությունը արդարացվում էր նույնիսկ չնչին պատճառների համար, և նրանք ձգտում էին ներգրավել Հիսուսին հակաճառության մեջ՝ հարցնելով Նրա կարծիքը ամուսնալուծության մասին: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Սատթեոս ԺԹ.3-8 հատվածները և խնդրեք դասարանին փնտրել ամուսնության հանդեպ Փրկչի և Փարիսեցիների վերաբերմունքի միջև տարբերությունը: Եթե անհրաժեշտ է, բացատրեք, որ արձակման թուղթ գրելը պաշտոնական փաստաթուղթ է, որ մարդը պետք է տար իր կնոջը նախքան նրան տնից արձակելը:

- Ի՞նչ բառեր են հատված 3-ում ցույց տալիս Փարիսեցիների վերաբերմունքը ամուսնության և ամուսնալուծության հանդեպ: (Թույլատրելի էր «արձակել» կամ ամուսնալուծվել «ամեն որ ես է պատճառի համար»):
- Ի՞նչ ուսուցանեց Հիսուսը հատված 8-ում, որը հակադիր էր այս մտածողությանը և հաստատում էր ամուսնության սուրբ բնույթը: (Ադամի և Եվայի ժամանակներից ի վեր, Տերը նախատեսել է, որ ամուսնությունները տևեն հավերժորեն: Ամրապնդելու համար այս վարդապետությունը, մտածեք խնդրել ուսանողներին հղում կատարել հատված 8-ից Ժողովող Գ.14 և Մովսես 4.18 հատվածներին:)

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ խոսքերով.



«Վեհացման համար պահանջվող ամուսնության տեսակը՝ տևողությամբ հավերժական և աստվածանման որակով, չի մտածում ամուսնալուծության մասին: Տիրոջ տաճարներում զույգերը ամուսնանում են որջ հավերժության համար: Բայց որոշ ամուսնություններ չեն առաջադիմում դեպի այդ կատարելատիպը: «[Մեր] քարասրտութեան համար» [Սատթեոս ԺԹ.8], Տերը ներկայումս չի կիրառում սելենտիալ չափանիշի հետևանքները: Նա թույլ է տալիս բաժանված անձանց կրկին ամուսնանալ առանց անբարոյականության բժի, որը սահմանված է բարձրագույն օրենքում» («Ամուսնալուծություն», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2007, 70):

Որպեսզի ուսանողներին օգնեք հասկանալ, թե ինչ կարող են ամուսիններն ու կանայք անել հասնելու վեհացման համար պահանջվող ամուսնության, խնդրեք ուսանողներին կարդալ ընտանիքի վերաբերյալ հայտարարության պարբերությունը վեցի առաջին նախադասությունը:

- Ի՞նչ պարտականություններ ունեն ամուսիններն ու կանայք միմյանց հանդեպ: (Ուսանողների պատասխաններից հետո, գրատախտակին գրեք այս արտահայտությունը ընտանիքի վերաբերյալ հայտարարությունից. **«Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց համար»:**)

- Ի՞նչ է նշանակում ըստ ձեզ, որ ամուսնացած զույգերը «սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց համար:

Օգնելու համար ուսանողներին ավելի լավ հասկանալ այս պատասխանատվությունը, հրավիրեք դասարանի կեսին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 25.5, 13–15 հատվածները, իսկ մյուս կեսին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 42.22-ը և Եփեսացիս Ե.25, 28–31-ը: Խնդրեք ուսանողներին գտնել սկզբունքներ, որոնք ուսուցանում են, թե ինչպես փայփայել ամուսնությունը, իսկ հետո իրենց գտածը գրեն գրատախտակի վրա: Բավական ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին ընտրել գրատախտակին գրված կետերից մեկը և բացատրել, թե ինչ է այն նշանակում իրենց համար:

Կիսվեք Յոթնասուրհի Նախագահությունից Երեց Լ. Ուիթնի Զլեյթոնի հետևյալ խոսքերով և խնդրեք դասարանին լսել *հարել* և *թողնել* խոսքերի հատուկ իմաստները:



«Ամենաներջանիկ ամուսնությունները, որ ես տեսել եմ ճառագում են հնազանդությամբ ամենաներջանիկ պատվիրաններից մեկի հանդեպ, որ մենք «ապրեք միասին սիրով» [ՎևՈՒ 42.45]: Խոսելով ամուսինների հետ Տերը պատվիրել է.«Սիրիր կնոջը քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (ՎևՈւ 42.22): Եկեղեցու ձեռնարկն ուսուցանում է. «*Հարել* բառը նշանակում է լիովին նվիրված և հավատարիմ լինել ինչ-որ մեկին:

Ամուսնացած զույգերը հարում են Աստծուն և միմյանց՝ ծառայելով և սիրելով միմյանց և պահելով ուխտերը լիակատար հավատարմությամբ միմյանց և Աստծո նկատմամբ»: Ամուսինն ու կինը երկուսով «ենտում են թողնում իրենց ամուսնի կյանքը և հաստատում իրենց ամուսնությունը որպես [իրենց] առաջնահերթություն: ... Նրանք թույլ չեն տալիս, որ որևէ ուրիշ անձնավորություն կամ հետաքրքրություն ավելի մեծ առաջնահերթություն ունենա ... քան այն ուխտերը պահելը, որ նրանք կապել են Աստծո և միմյանց հետ» [Ձեռնարկ 2. Սպասավորելը Եկեղեցում (2010), 1.3.1]: Նայեք և սովորեք՝ հաջող զույգերը սիրում են միմյանց լիակատար նվիրվածությամբ» («Ամուսնություն. Նայիր և սովորիր», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 85):

- Որո՞նք են այն բաները, որոնք ամուսիններն ու կանայք կարող է ստիպված լինեն «թողնել ետևում», որպեսզի «հարեն միմյանց»:
- Ինչպե՞ս են ամուսնացած զույգերը, ում դուք ճանաչում եք, ցուցաբերում սեր և հոգատարություն իրենց կողակիցների հանդեպ:
- Ի՞նչ եք անում այժմ, որը կօգնի պատրաստել ձեզ անեսասիրաբար սիրել և հոգ տանել ձեր ապագա կողակցի համար:

**Աբրահամ 5.15-18**


*Դառնալ մեկ ամուսնության մեջ*


Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Աբրահամ 5.15-18 հատվածները: Խնդրեք դասարանի անդամներին հետևել ընթացքում, գտնելով, թե ինչ են այս հատվածներն ուսուցանում ամուսինների և կանանց փոխհարաբերության վերաբերյալ:

- Համաձայն այդ հատվածների, ի՞նչ նպատակ պետք է ամուսինն ու կինը հետապնդեն: (Դառնան «մեկ մարմին»):

Գրատախտակին գծեք հետևյալ գծապատկերը.

Յուրաքանչյուր ուսանողի տվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերի մի օրինակ, և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ առաջին պարբերությունը, մինչև դասարանը փնտրում է, թե ինչ է իրենից ներկայացնում գծապատկերը.





«Տեր Հիսուս Քրիստոսը ուխտով ամուսնական փոխհարաբերության կիզակետում է: Խնդրում են ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Փրկիչը դիրքավորված եռանկյունու գագաթում՝ կինը հիմքի մեկ անկյունում, իսկ տղամարդը հիմքի մյուս անկյունում: Այժմ մտածեք, թե ինչ է տեղի ունենում տղամարդու և կնոջ միջև փոխհարաբերությունում, երբ նրանք անձնապես և հաստատունորեն «գալիս են Քրիստոսի մոտ» և ձգտում

«կատարելագործվել Նրանում» (Մորոնի 10.32): Քավիչի շնորհիվ և Նրա միջոցով տղամարդը և կինը ավելի են մոտենում միմյանց:

Երբ ամուսինը և կինը յուրաքանչյուրը մղվում են դեպի Տերը (տես 3 Նեփի 27.14), երբ նրանք սովորում են ծառայել և փայփայել մեկը մյուսին, երբ նրանք կիսվում են կյանքի փորձառություններով և միասին աճում և դառնում մեկ, և երբ նրանք օրհնվում են իրենց տարբեր եռությունների միավորման միջոցով, նրանք սկսում են հասկանալ իրականացումը, որ Երկնային Հայրը կամենում է Իր զավակների համար: Առավելագույն երջանկությունը, որը հենց Հոր ծրագրի նպատակն է, տրվում է հավերժական ամուսնական ուխտեր կապելու և դրանք հարգելու միջոցով» («Ամուսնությունը կարևոր է Նրա հավերժական ծրագրում», *Ensign*, June 2006, 86):

- Համաձայն Երեց Բեդնարի, ինչն է հնարավոր դարձնում ամուսնու և կնոջ համար միմյանց ավելի մոտենալ: (Ուսանողների պատասխաններից հետո, շեշտեք հետևյալ սկզբունքը. **Երբ ամուսինները և կանայք ձգտում են գալ դեպի Քրիստոս, նրանք կարող են դառնալ մեկ իրենց ամուսնության մեջ:**)
- Ինչպե՞ս է դեպի Քրիստոս գալն օգնում ամուսնուն և կնոջը ավելի մոտենալ միմյանց:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Երեց Բեդնարի խոսքերը: Այնուհետև հարցրեք.

- Համաձայն Երեց Բեդնարի, ինչ պետք է անեն զույգերը ստանալու «առավելագույն երջանկությունը», որն Աստված է կամենում նրանց համար:
- Ինչպիսի՞ քաներ եք տեսել զույգերին անելիս՝ հասնելու միասնության և ուրախության ամուսնության մեջ:

Վարդացեք, իսկ հետո վկայեք հետևյալ խոսքերի ճշմարտության մասին, որոնք ասվել են Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի կողմից(1899–1994).



«Ամուսնությունը պետք է ինքնին համարվի որպես սրբազան ուխտ Աստծո առջև: Ամուսնացած զույգը պարտավորություն ունի ոչ միայն միմյանց հանդեպ, այլ Աստծո առջև: Նա խոստացել է օրհնություններ և րանց, ովքեր պատվում են այդ ուխտը (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն (2014), 183):

- Ինչպե՞ս կարող են կողակիցները տարբեր ձևով գործել, եթե նրանք համարել են ամուսնությունը որպես սրբազան ուխտ, որը կապել են ոչ միայն միմյանց հետ, այլ նաև Աստծո հետ:
- Ի՞նչ կարող էք անել դուք այժմ՝ տաճարային ամուսնության պատրաստվելու համար:

Կոչ արեք ուսանողներին գրել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում այն մասին, թե ինչ են անում իրենք այժմ և ինչ իրենք կարող են անել ապագայում՝ պատրաստվելու հավերժական ամուսնության համար:

### Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս ԺԹ.3–8, Եփեսացիս Ե.25, 28–31, Վարդապետություն և Ուխտեր 25.5, 13–15, 42.22, Աբրահամ 5.15–18:
- Լ. Ուիթնի Քլեյթոն, «Ամուսնություն. Նայիր և սովորիր», *Ensign* կամ *Լիսինս*, մայիս 2013, 83–85:

# Կառուցել Քրիստոսակենտրոն կյանքեր և տներ

## Նախաբան

Մարգարե Շելամանն ուսուցանել է իր որդիներին, որ եթե նրանք կառուցեն իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի ապահով հիմքի վրա, սատանան չի ունենա ուժ նրանց կործանելու համար (տես Շելաման 5.12): Այս դասի ժամանակ ուսանողները կքննարկեն, թե ինչպես

կառուցեն իրենց ընտանիքները Հիսուս Քրիստոսի հիմքի վրա: Երբ ընտանիքի անդամները կենտրոնացնում են իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա, նրանք կարողանում են վերականգնել և ամրացնել հարաբերությունները և գտնել ավելի մեծ երջանկություն:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Հենրի Բ. Այրինգ, «Մեր կատարյալ օրինակը», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2009, 70–73:
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Տան խաղաղության համար», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 29–31:

## Ուսուցման առաջարկներ

### Հովհաննես ԺԵ.1–5, 10–11, Շելաման 5.12

#### Կառուցել Քրիստոսակենտրոն կյանքեր և տներ

Դասը սկսեք՝ գրատախտակին նկարելով մի փոքրիկ տնակ կամ այլ շենք: Քննարկեք հետևյալը ուսանողների հետ.

- Ի՞նչ նշանակություն ունի հիմքը տան կամ այլ կառույցի համար:
- Ինչո՞ւ են որոշ շինարարական նյութեր ավելի ամուր դարձնում շենքի հիմքը, քան մյուսները:

Հիշեցրեք ուսանողներին, որ բոլոր ընտանիքներն էլ ունենում են դժվարություններ որոշ չափով, և սատանան ձգտում է կործանել բոլոր ընտանիքները: Մորմոնի Գրքից մենք սովորում ենք մի ապահով ուղի նվազեցնելու սատանայի ազդեցությունները մեր ընտանիքների վրա:

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել Շելաման 5.12, փնտրելով թե ինչ է այն ուսուցանում հիմքի մասին:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում կառուցել մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վրա:
- Ի՞նչ կարող է ընտանիքն անել, կառուցելու Հիսուս Քրիստոսի հիմքի վրա: (Հնարավոր պատասխանները ներառում են հետևյալը. ուսումնասիրեք և ապրեք Հիսուս Քրիստոսի ավետարանով, ձգտեք

հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին, հնազանդվեք Աստծո պատվիրաններին և հենվեք Քրիստոսի Քավության գործության վրա:)

- Ինչպե՞ս կարող են Հելաման 5.12-ի խոստումները վերաբերել ընտանիքներին, ովքեր ձգտում են կառուցել իրենց հիմքը Հիսուս Քրիստոսի վեմի վրա: (Պատասխանները պետք է ցույց տան հետևյալ սկզբունքի ըմբռնումը. **Երբ ընտանիքները կառուցեն իրենց հիմքը Հիսուս Քրիստոսի վրա, սատանան գործություն չի ունենա կործանելու նրանց:**)


Բացատրեք, որ Իր մահվանից ոչ շատ առաջ Փրկիչը մի համանմանություն տվեց, որը կարող է օգնել ընտանիքներին հասկանալ, թե ինչպես կառուցել իրենց հիմքը Նրա վրա: Հանձնարարեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ Հովհաննես ԺԵ.1-5, 10-11 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում և մտածել, թե ինչպես Փրկչի փոխաբերությունը այս հատվածներում կարող է վերաբերել ընտանիքներին, ովքեր ձգտում են կառուցել իրենց հիմքը Հիսուս Քրիստոսի վրա:

- Եթե Հիսուս Քրիստոսը որթն է և մենք Նրա ճյուղերն ենք, ի՞նչ կարող է իրենից ներկայացնել պտուղը: (Պտուղը կարող է ներկայացնել Հիսուս Քրիստոսի աշակերտների բարի գործերը և արարքները:)

Օգնեք ուսանողներին նկատել, որ Փրկիչը օգտագործել է «մնալ» կամ «կենալ» բառերը մի քանի անգամ Հովհաննես ԺԵ.4-10: Բացատրեք, որ *կենալ* այս ենթատեքստում նշանակում է մնալ և «մնալ, բայց մնալ *հավերժ*», ի նկատի ունենալով, որ մենք պետք է մնանք անսասան և ընդմիջտ կառչած Հիսուս Քրիստոսին և Նրա Եկեղեցուն (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Կացեք ինձանում» *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2004, 32): Դուք կարող եք համառոտակի բացատրել ուսանողներին, որ բառի կրկնությունները նկատելը սուրբ գրության ուսումնասիրության հմտություն է, որը նրանք կարող են օգտագործել իրենց անձնական ուսումնասիրության ընթացքում: Բառի կրկնությունը սուրբ գրություններում հաճախ նշանակում է, որ հեղինակը շեշտադրում է կարևոր գաղափար:

- Համաձայն հատվածներ 5 և 11-ի, որո՞նք են Փրկչում կենալու օրհնությունները: (**Եթե մենք կենանք Փրկչում, մենք կարող ենք շատ պտուղ առաջ բերել և ստանալ ուրախության լիություն:**)
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ օրհնություններ կգան ընտանիքներ, երբ ընտանիքի անդամները ձգտեն կենալ Փրկչում:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը:



«Անկախ ձեր հանգամանքներից դուք կարող եք կենտրոնացնել ձեր տունն ու ձեր կյանքը Հիսուս Քրիստոսի վրա, քանի որ Նա է ճշմարիտ խաղաղության աղբյուրն այս կյանքում» («Տան խաղաղության համար», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2013, 29):

- Ինչպե՞ս կնկարագրեիք որևէ տուն, որը կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի վրա: Ի՞նչ առանձնահատկություններ կդարձնեին տունը Քրիստոսակենտրոն:

Քաջալերեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ կարող են անել, որպեսզի ավելի լիովին կենան Փրկչում, այդպիսով ավելի շատ Փրկչի ազդեցությունը հրավիրելով իրենց տուն: Խրախուսեք նրանց մտածել այն մասին, թե ինչ փոփոխություններ նրանք կարող են կատարել իրենց փոխհարաբերություններում ընտանիքի անդամների հետ:

**Նելաման 14.30–31, 3 Նեփի 11.29–30**

*Վերահսկել մեր հույզերը օգտագործելով մեր ազատ կամքը արդար ձևով*

Անցեք դասի հաջորդ մասին՝ ընդգծելով, որ բոլոր ընտանիքները դիմակայում են մարտահրավերների: Նույնիսկ երբ ընտանիքի անդամները փորձում են կենտրոնանալ Հիսուս Քրիստոսի վրա, նրանք կարող են հանդիպել հանգամանքների, որոնք մարտահրավեր են իրենց արդար ցանկությունների համար: Գրատախտակի վրա գրեք հետևյալը.

«Դու ինձ բարկացրիր»:  
 «Դու ինձ ստիպեցիր կորցնել համբերությունս»:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե այս հայտարարությունները արդյոք հիմնված են ճշմարտության վրա:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նելաման 14.30-31 հատվածները: Հրավիրեք դասարանին մտածել թե ինչպես են այս հատվածները կապված գրատախտակի վրա գրված մտքերի հետ:

- Ի՞նչ կարևոր ճշմարտություն է գտնվում այս հատվածներում, որը կապված է ուրիշների հետ մեր փոխհարաբերությունների հետ: (Շեշտեք հետևյալ ճշմարտությունը. **Քանի որ Երկնային Հայրը մեզ ընտրության ազատություն է տվել, մենք կարող ենք ընտրել արդյոք բարկանալ թե ոչ:** Բացատրեք, որ Երեց Լին Գ. Ռոբբինսը՝ Յոթանասունից, ուսուցանել է. «Բարկանալը գիտակցված ընտրություն է, ուստի, մենք կարող ենք ընտրություն կատարել չբարկանալու: *Մենք ընտրում ենք*»: [“Agency and Anger,” *Ensign*, May 1998, 80].)
- Ի՞նչ խնդիրներ են առաջանում հավատալուց, որ ուրիշների գործողություններն ու խոսքերը կարող են «ստիպել» մեզ բարկանալ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 11.29-30 հատվածները: Մատնացույց արեք Փրկչի ուսմունքը, որ հակառակությունը «պետք է վերացվի» (3 Նեփի 11.30): Հիշեցրեք ուսանողներին, որ կոպիտ խոսելը և այլ անարդար վարվելակերպը, ինչպես օրինակ հուզական և ֆիզիկական բռնությունը երբեք չի արդարացվում:

Հորդորեք ուսանողներին մտածել որոշակի բաների շուրջ, որոնք նրանք կարող են անել՝ օգնելու նրանց հիշել՝ ընտրել չբարկանալը: Հրավիրեք նրանց կիսվել իրենց գաղափարներով: Խնդրեք ուսանողներին պարտավորվել օգտագործելու իրենց ազատ կամքը արդար ձևով ընտրելով չբարկանալ, հատկապես ընտանեկան միջավայրում:

**3 Նեփի 12.22–24, Մորոնի 7.45, 48, Վարդապետություն և Ուխտեր 64.9–11, 88.119, 123–25**

*Ապաշխարությունը և ներումը կարող են բժշկել խաթարված ընտանեկան փոխհարաբերությունները*


Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը.

*«Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա»:*

Ասեք ուսանողներին, որ այս արտահայտությունը գալիս է «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթից (*Ensign* կամ *Լիստենա*, նոյ. 2010, 129):

Ուսանողներին օգնելու համար գտնելու Հիսուս Քրիստոսի մի քանի ուսմունքները, որոնք կարող են ավելի մեծ երջանկություն բերել ընտանիքներին, խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 88.119, 123–25: Առաջարկեք նրանց նշել կարևոր ուսմունքները: Ապա հանձնարարեք ուսանողներին քննարկել, թե ինչպես ընտանիքները կարող են ամրացվել՝ ապրելով այն ուսմունքներով, որոնք գտնվում են այս հատվածներում:

Հիշեցրեք ուսանողներին, որ խնդիրներն ու դժվարությունները հաճախ տեղի են ունենում ընտանիքներում, երբ Հիսուս Քրիստոսի ուսմունքներն անտեսվում են: Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆի հետևյալ միտքը և որևէ ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ այն.



«Լարված և խաթարված փոխհարաբերություններն այնքան հին են, ինչպես ինքը՝ մարդկությունը: ... Ես պատկերացնում եմ, որ յուրաքանչյուր անձնավորություն երկրի վրա ինչ որ ձևով ազդեցության է ենթարկվել հակառակության, վրդովմունքի և վրեժի կործանարար ոգուց: Հավանաբար լինում են ժամանակներ, երբ մենք ճանաչում ենք այս ոգին մեր մեջ»  
 («Ողորմածները ողորմություն կգտնեն») *Ensign* կամ *Լիստենա*, մայիս 2012, 70):

- Տեր Հիսուս Քրիստոսի ի՞նչ ուսմունքներ կարող են օգնել բժշկելու լարված կամ խաթարված փոխհարաբերությունները ընտանիքի անդամների միջև:




Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները:  
 Բացատրեք, որ այս հատվածներից յուրաքանչյուրը պարունակում է  
 ճշմարտություններ, որոնք ուսուցանվել են Փրկչի կողմից, որոնք կարող  
 են ուժեղացնել ընտանեկան հարաբերությունները:

3 Նևիի 12:22-24  
 Մոյսնի 7.45, 48  
 Վարդապետություն և Ուխտեր 64.9-11

Ուսանողներին հանձնարարեք կարդալ այս հատվածները և ապա քննարկել հետևյալը.


- Ի՞նչ ուսմունքներ այս հատվածներից կարող են օգնել բժշկել ընտանեկան փոխհարաբերությունները, որոնք վնասվել են հակառակությունից, անբարյացակամությունից կամ այլ վարմունքներից:
- Ինչպե՞ս եք տեսել, որ ներումը բարեփոխում է ընտանեկան փոխհարաբերությունները:
- Ինչո՞ւ է երբեմն ավելի դժվար ներել ընտանիքի անդամներին, ովքեր վիրավորում են մեզ, քան այլ մարդկանց:

Ցուցադրեք Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆի և Նախագահ Հովարդ Վ. Հանթերի (1907–1995) հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Մեզանից ոչ մեկը առանց մեղքի չէ: Մեզանից յուրաքանչյուրը գործում է սխալներ, ներառյալ դուք և ես: Մենք բոլորս վիրավորվել ենք: Մենք բոլորս վիրավորել ենք ուրիշների:

Մեր Փրկչի զոհաբերության միջոցով է, որ մենք կարող ենք ձեռք բերել վեհացում և հավերժական կյանք: Երբ մենք ընդունում ենք Նրա ուղիները և հաղթահարում մեր հպարտությունը՝ փափկացնելով մեր սրտերը, մենք կարող ենք բերել հաշտեցում և ներում մեր ընտանիքներ և մեր անձնական կյանք» (Dieter F. Uchtdorf, "One Key to a Happy Family," *Ensign*, Oct. 2012, 6):



«Ինչի վրա էլ որ Հիսուսը դնում է Իր ձեռքերը, ապրում է: Եթե Հիսուսը դնում է Իր ձեռքերը ամուսնության վրա՝ այն ապրում է: Եթե Նրան թույլատրվում է Իր ձեռքերը դնել ընտանիքի վրա՝ այն ապրում է» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Հովարդ Վ. Հանթեր [2015], 150):

- Ինչպե՞ս կարող են այսօր քննարկված սկզբունքները թույլ տալ Փրկչին դնել Իր ձեռքերն ընտանիքի վրա:

Հանձնարարեք ուսանողներին մտածել, թե ինչպես ապաշխարության և ներման սկզբունքները կարող են օգնել նորոգել կամ ամրացնել իրենց իսկ ընտանեկան հարաբերությունները: Խրախուսեք նրանց ճիշտ գործել՝ կիրառելով այս սկզբունքներն իրենց ընտանեկան հարաբերություններում:

### **Ուսանողի ընթերցարան**

- Հովհաննես ԺԵ.1–5, 10–11, Հելաման 5.12, 14.30–31, 3 Նեփի 11.29–30, 12.22–24, Մորոնի 7.45, 48, Վարդապետություն և Ուխտեր 64.9–11; 88.119, 123–25:
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Տան խաղաղության համար» *Ensign* կամ *Լիսինա*, մայիս 2013, 29–31:

# Պահպանել հավատքն ու վկայությունը

## Նախաբան

Ընտանիքներն ու անհատները սուրբ պարտականություն ունեն զարգացնել հավատքն առ Հիսուս Քրիստոս և պահպանել ամուր վկայություններ: Փրկիչը նախազգուշացրել է, որ վերջին օրերում, «նույնիսկ ընտրվածները» կարող է խաբվեն (Ջոզեֆ

Սմիթ—Մատթեոս 1.22): Այս դասը կենտրոնանում է վկայությունը զորացնելու վրա՝ պաշտպանվելու հակառակորդի ուժերից, որոնք ջանում են կործանել հավատքը:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Եկեք, միացեք մեզ» *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2013, 21–24:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաւատում եմ, Տէր», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 93-95:

## Ուսուցման առաջարկներ

**Հովհաննես ԺԴ.26–27, Եփեսացիս Դ.11–14, 1 Նեփի 15.23–24, 2 Նեփի 31.19–20, Ալմա 5.45–46, Հելաման 3.28–30, Վարդապետություն և Ուխտեր 11.13–14, 21.4–6**

*Ուժեղ վկայությունները պաշտպանություն են ապահովում հակառակորդի դեմ*

Բացատրեք, որ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը (1917–2008) մի անգամ խոսել է գայլերի ոհմակների մասին, որոնք թափառում էին Ուկրաինայի գյուղական վայրերում շատ տարիներ առաջ: Միակ բանը, որը վախեցնում էր նրանց, կրակն էր: Երբ ճանապարհորդում էին քաղաքներից դուրս, մարդիկ մեծ խարույկներ էին վառում և պահում դրանք վառող գիշերվա ընթացքում գայլերին հեռու քշելու համար:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ հետևյալ միտքը.



«Ճանապարհորդները հասկանում էին, որ ճարճատող խարույկներ սարքելն ու պահպանելը ուղղակի հարմարավետության կամ հանգստության հարց չէր, այն գոյապահպանման հարց էր: ...

Մենք կարիք չունենք պաշտպանվելու գայլերի ոհմակներից, երբ մենք ճամփորդում ենք կյանքի ուղիներում այսօր, բայց հոգևոր իմաստով, մենք իսկապես հանդիպում ենք գայթակղության, չարի և մեղքի տեսքով սատանայի խորամանկ գայլերին: Մենք ապրում ենք վտանգավոր ժամանակներում, երբ այդ գիշատիչ գայլերը թափառում են հոգևոր տեղանքներում որոնելով նրանց, ովքեր գուցե թուլացած են հավատքում կամ տկար իրենց համոզմունքներում: ... Մենք բոլորս խոցելի ենք ընդդեմ հարձակման: Այնուամենայնիվ, մենք կարող ենք ամրացնել մեզ

պաշտպանությամբ, որը գալիս է բոցավառ վկայությունից, որը խարույկի պես, պատրաստվել է պատշաճորեն և պահպանվել զգուշությամբ» («Վկայության հոգևոր խարույկներ», *Ensign*, նոյ. 1992, 34):

- Ինչո՞ւ է ուժեղ վկայություն պահպանելը «գոյապահպանման հարց» այսօրվա աշխարհում: (Որոշ քննարկումից հետո, գրեք հետևյալը գրատախտակին. **Երբ մենք ամրացնում ենք մեր վկայությունները, մենք ավելի քիչ խոցելի ենք դառնում մեր հավատքի վրա հարձակումների ժամանակ:**)
- Ինչպե՞ս կարող է ուժեղ վկայությունն օգնել ձեզ ամրացնել ընտանիքի անդամներին և մյուսներին իրենց հավատքի դեմ հարձակումներից:

Յուզադրեք կամ գրատախտակին գրեք հետևյալ աղյուսակը: Մի ներառեք փակագծերում թավատառերով տպված սկզբունքները. այդ սկզբունքները նախատեսված են ուսուցիչների համար: Խնդրեք ուսանողներին կարդալ սյունակներից մեկում գտնվող հատվածները, որոնցով սկզբունքներ, որոնք օգնում են պաշտպանվել այն ուժերից, որոնք թուլացնում են հավատքը: Հրավիրեք ուսանողներին ամփոփել, ինչ նրանք կարդացել են՝ մի հստակ մտքով կամ վարդապետությամբ, իսկ հետո կիսվել իրենց մտքերով:

<p>2 Նեփի 31.19-20  Հերաման 3.28-30</p>	<p>Եփեսացիս Դ. 11-14  ՎևՈւ 21.4-6</p>	<p>Հովհաննես ԺԴ.26-27  ՎևՈւ 11.13-14</p>	<p>1 Նեփի 15.23-24  Արմա 5.45-46</p>
<p><b>(Երբ մենք պահպանում ենք անասան հավատք առ Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք մղվել առաջ նեղ և անձուկ արահետում, որը տանում է հավերժական կյանք:)</b></p>	<p><b>(Երբ մենք հեռուում ենք Տիրոջ առաքյալներին, մարգարեներին, և Եկեղեցու մյուս ղեկավարներին, մենք կարող ենք պաշտպանված լինել խաբեությունից:)</b></p>	<p><b>(Սուրբ Հոգու միջոցով Տերը կարող է ուղարկել խաղաղություն և ուղղորդում, երբ հարձակման է ենթարկվում մեր հավատքը:)</b></p>	<p><b>(Ծումապահությունը, աղոթքը և սուրբ գրությունների ուսումնասիրությունը ամրացնում են հավատքը և վկայությունը և հնարավորություն տալիս մեզ դիմակայելու մարտահրավերներին:)</b></p>

- Ինչպե՞ս են այս սկզբունքները զորացրել ձեզ կամ ինչ-որ մեկին, ում դուք գիտեք, հավատքի դեմ հարձակումների ժամանակ:

- Ինչպե՞ս կարող եք օգտագործել այս տեղեկությունը զորացնելու ինչ-որ մեկին, ում դուք գիտեք, ով մաքառում է իր հավատքում:

Հիշեցրեք ուսանողներին հետևյալը. «Հախատքը Աստծուց շնորհված ընծա է, որպես պարզև անձնական արդարակեցության համար: Այն միշտ տրվում է, երբ ամկա է արդարակեցությունը, և որքան ավելի մեծ է Աստծո օրենքներին հնազանդությունը, այնքան ավելի մեծ կլինի հավատքի օտոումը» (Bruce R. McConkie, *Mormon Doctrine*, 2nd ed. [1966], 264): Վկայեք, որ հավատք ունենալն ամ Հիսուս Քրիստոս, մարգարեներին հետևելը, Հոգին որոնելը և սուրբ գրություններն ուսումնասիրելը կպաշտպանի և կզորացնի վկայությունները: Երբ մենք ձախողվում ենք անել այս բաները, հավատքը կարող է թուլանալ և վկայությունները կորել:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ հայտարարությունը՝ այս կետը լուսաբանելու համար.



«Իմ լավ միսիոներներից մեկը, ով ծառայեց ինձ հետ, երբ ես Տորոնտոյի միսիայի Նախագահն էի, եկավ ինձ տեսնելու մի քանի տարի անց: Ես նրան հարցրեցի. «Երեց, ինչպե՞ս կարող եմ քեզ օգնել»:

«Նախագահ, - ասաց նա, - ես կարծես կորցնում եմ իմ վկայությունը»:

Ես չէի կարողանում հավատալ դրան: Ես հարցրեցի նրան, թե ինչպես դա կարող էր պատահել:

«Առաջին անգամ է, որ ես կարդացի որոշ հակամորմոնական գրականություն, ասաց նա: Ես ունեմ որոշ հարցեր և ոչ ոք չի կարող պատասխանել դրանց: Ես շփոթված եմ և կարծում եմ ես կորցնում եմ իմ վկայությունը»:

Ես հարցրեցի նրան, թե ինչ հարցեր ունեի, և նա ասաց ինձ: Դրանք սովորական հակաեկեղեցական հարցեր էին, բայց ես կարիք ունեի մի փոքր ժամանակի՝ նյութեր հավաքելու, որպեսզի կարողանայի տալ իմաստալի պատասխաններ: Այսպիսով մենք պայմանավորվածություն ձեռք բերցիք հանդիպելու 10 օր հետո, և ես ասացի նրան, որ կպատասխանեի նրա յուրաքանչյուր հարցին: Երբ նա պատրաստվում էր մեկնել, ես կանգնեցրեցի նրան:

«Երեց, դու ինձ մի քանի հարցեր տվեցիր այսօր», - ասացի ես: «Այժմ մի հարց ունեմ քեզ»:

«Այո, Նախագահ»:

«Որքա՞ն ժամանակ է անցել այն ժամանակից սկսած, երբ կարդացել ես Մորմոնի Գիրքը», - հարցրեցի ես:

Նա աչքերը ներքև խոնարհեց: Նա որոշ ժամանակ նայում էր հատակին: Ապա նայեց ինձ: «Երկար ժամանակ է, Նախագահ», - խոստովանեց նա:

«Դե լավ», - ասացի ես: «Դու տվեցիր ինձ քո հանձնարարությունը: Արդար կլինի, որ ես էլ քեզ տամ քոնը: Ես ուզում եմ, որ դու խոստանաս, որ դու կկարդաս Մորմոնի Գիրքն առնվազն մեկ ժամ ամեն օր այսօրվակից սկսած մինչև մեր հաջորդ հանդիպման միջև ընկած ժամանակահատվածը»: Նա համաձայնվեց, որ կաներ դա:

Տաս օր հետո նա վերադարձավ իմ գրասենյակը և ես պատրաստ էի: Ես հանեցի իմ թղթերը՝ սկսելու պատասխանել նրա հարցերին, բայց նա կանգնեցրեց ինձ:

«Նախագահ, ասաց նա, - դա անհրաժեշտ չի լինելու»: Ապա նա բացատրեց. Ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է»:

«Դեհ, դա հիանալի է», -ասացի ես: «Բայց ամեն դեպքում, դու քո հարցերի պատասխանները կստանաս: Ես աշխատել եմ սրա վրա բավականին երկար ժամանակ, այնպես որ նստիր հենց այնտեղ և լսիր»:

Եվ այսպիսով ես պատասխանեցի բոլոր նրա հարցերին, իսկ հետո հարցրեցի. «Երեք, ի՞նչ սովորեցիր սրանից»:

Եվ նա ասաց. «Տիրոջը պատշաճ ժամանակ տրամադրենք»:

Թող որ մենք փորագրենք այդ միտքը մեր ուղեղներում և տանենք այն մեզ հետ, երբ քայլենք այս մահկանացու կյանքի գործընթացի միջով: Եկեք Տիրոջը պատշաճ ժամանակ տրամադրենք» (“When Shall These Things Be?” *Ensign*, Nov. 1996, 60):

- Ի՞նչ դուք սովորեցիք այս փորձառությունից, որով կհավեց Երեք Բալլարդը:
- Ինչպե՞ս կարող է Տիրոջը «պատշաճ ժամանակ» տրամադրելը՝ ձեր անձնական և ընտանեկան կյանքում, ամրացնել ձեզ և ձեր ընտանիքը սատանայի դեմ:
- Ինչպե՞ս կարող է այս սկզբունքները կիրառելն այժմ նախապատրաստել ձեզ ավելի լավ կողակից և ծնող լինելուն:

Եզրափակեք դասի այս մասը՝ խնդրելով որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Ռիչարդ Գ. Մքոթի հետևյալ միտքը.



«Երբ մենք հետևողականորեն աղոթում ենք առավոտյան և երեկոյան, ուսումնասիրում մեր սուրբ գրություններն ամեն օր, ունենում ամեն շաբաթ տնային ընտանեկան երեկո և կանոնավորապես տաճար հաճախում, մենք ակտիվորեն արձագանքում ենք [Հիսուս Քրիստոսի] «եկեք ինձ մոտ» հրավերին: Որքան ավելի շատ ենք զարգացնում այս ավանդույթները, ավելի շատ է սատանան մտահոգվում մեզ վնասելու համար, բայց ավելի քիչ է նրա ունակությունը՝ այդ անելու համար: Այս գործիքների օգտագործման միջոցով, մենք գործադրում ենք մեր ազատ կամքը՝ ընդունելու Նրա քավող զոհաբերության ողջ պարգևները:

... Ես վկայում եմ, որ երբ մենք ակտիվորեն գալիս ենք Նրա մոտ, մենք կարողանում ենք համբերել ամեն գայթակղության, ամեն կսկիծի, ամեն մարտահրավերի, որին հանդիպում ենք» («Նավատքի գործադրումը դարձրեք ձեր առաջնահերթությունը» *Ensign* կամ *Լիստնա*, նոյ. 2014, 94):

Հարցրեք ուսանողներին, թե նրացից որևէ մեկը կարո՞ղ է կիսվել որևէ փորձառությամբ, որը խիստ անձնական չէ, որի ընթացքում նրանք հաղթահարել են իրենց հավատքի մարտահրավերները:

**Ղուկաս ԻԲ.31–32, 3 Նեփի 18.32, Վարդապետություն և Ուխտեր 108.7–8**

*Ամրացնել ուրիշների հավատքը*

Խնդրեք ուսանողներին բարձրացնել իրենց ձեռքերը, եթե նրանք գիտեն ինչ-որ մեկին, ով մաքառում է պահպանելու իր վկայությունը:

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել և համեմատել Ղուկաս ԻԲ.31–32, 3 Նեփի 18.32 և Վարդապետություն և Ուխտեր 108.7–8 հատվածները, սովորելու այն պարտականությունը, որը մենք ունենք որպես Եկեղեցու հավատարիմ անդամներ: . Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել իրենց սովորածը: Ուսանողները պետք է հասկանան հետևյալ սկզբունքը: **Երբ մենք դարձի ենք գալիս դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը, մենք պարտավորություն ունենք զորացնել ուրիշների հավատքը:**

Կիսվեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ մտքով.



«Ես պարզել եմ, որ երկու հիմնական պատճառներ մեծապես նպաստում են վերադառնալու դեպի ակտիվություն և փոխելու վարքագծերը, սովորությունները և գործողությունները: Առաջինը, մարդիկ վերադառնում են, որովհետև ինչ-որ մեկը ցույց է տալիս նրանց իրենց հավերժական հնարավորությունները և օգնում նրանց որոշել՝ հասնելու դրանց: Քիչ ակտիվները չեն կարող երկար բավարարվել միջակությամբ, երբ որ նրանք տեսնում են, որ գերազանցությունը իրենց հասանելի է:

Երկրորդը, ոմանք վերադառնում են, քանի որ սիրելիները կամ «սուրբերի հետ քաղաքացիներ»-ը [Եփեսացիս Բ.19] հետևել են Փրկչի հորդորին, սիրել են իրենց ընկերներին իրենց անձերի պես և օգնել են մյուսներին իրականացնել իրենց երազանքները և իրենց ձգտումները:

Այս գործընթացի խթանիչ ուժը եղել է և կշարունակի լինել սիրո սկզբունքը» (“Our Responsibility to Rescue,” *Ensign*, Oct. 2013, 5):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է սերն այդքան կարևոր խթան հանդիսանում ուրիշների հավատքն ամրացնելու համար:
- Ի՞նչ եք արել դուք կամ ինչ-որ մեկը, որին դուք գիտեք՝ օգնելու գորացնել մեկի հավատքը, ով հոգևոր մաքառումների մեջ էր:
- Ի՞նչ քայլեր դուք կարող եք կատարել՝ ուրիշների հավատքն ամրացնելու ավելի արդյունավետ լինելու համար:

Եզրափակեք բերելով ձեր վկայությունը, որ ուսանողները կարող են օգնել վերականգնել և զորացնել իրենց ընկերների և ընտանիքի հավատքը, երբ նրանք ցույց են տալիս սեր և հետևում այն սկզբունքներին, որոնք քննարկվեցին այս դասի ժամանակ:

### Ուսանողի ընթերցարան

- Ղուկաս ԻԲ.31–32, Հովհաննես ԺԴ.26–27, Եփեսացիս Դ.11–14, 1 Նեփի 15.23–24, 2 Նեփի 31.19–20, Ալմա 5.45–46, Հելաման 3.28–30, 3 Նեփի 18.32, Վադապետություն և Ուխտեր 11.13–14, 21.4–6, 108.7–8:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաւատում եմ, Տէր», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 93-95:

# Դաստիարակել երեխաներին սիրո և արդարակենցույթյան մեջ

## Նախաբան

«Ծնողները սրբազան պարտականություն ունեն դաստիարակել իրենց երեխաներին սիրո և արդարակենցույթյան մեջ» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129):  
Ծնողներն օգնում են իրականացնել այս

պարտականությունը, երբ նրանք արտահայտում են իրենց սերը և վկայությունը խոսքով և գործով և հաստատում կանոնավոր սովորույթներ՝ անցկացնելով տնային ընտանեկան երեկո, ընտանեկան աղոթք և ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրություն:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռիչարդ Գ. Սքոթ, «Հավատքի գործադրումը դարձրեք ձեր առաջնահերթությունը», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2014, 92-95:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աղոթք երեխաների համար», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2003, 85-87:

## Ուսուցման առաջարկներ

### Դուկաս ԺԵ.11–20, Եփեսացիս 2.4

*Ծնողները պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու իրենց երեխաների համար*

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությամբ.



«Երբ մեր ամենափոքր աղջիկը մոտ չորս տարեկան էր, ես մի երեկո բավականին ուշ տուն եկա հիվանդանոցում իմ պարտականությունները կատարելուց հետո: Ես իմ սիրելի կնոջը գտա շատ շատ հոգնած: ... Այսպիսով ես առաջարկեցի պատրաստել մեր չորս տարեկանին՝ քնելու համար: Ես սկսեցի հրամաններ տալ նրան. «Հանիր հագուստներդ, կախիր դրանք, հագիր քո ննջազգեստը, խոզանակիր ատամներդ, ասա քո աղոթքը և այլն, հրամայելով մի ձևով, որը կսազեր բանակում խստապահանջ սերժանտին: Հանկարծ նա թեքելով գլուխը մի կողմի վրա, նայեց ինձ մտախոհ աչքերով և ասաց. «Պապ, դու իմ սեփականատերն ե՞ս»:

Նա ինձ կարևոր դաս սովորեցրեց: ... Ոչ, մենք մեր երեխաների սեփականատերը չենք: Մեր ծնողական արտոնությունն է սիրել նրանց, առաջնորդել նրանց և թույլ տանք նրանց գնալ» ("Listen to Learn," *Ensign*, May 1991, 22):




- Ի՞նչ սկզբունք ուսուցանեց Երեց Նելսոնը այս փորձառությամբ: **(Ծնողները արտոնություն ունեն սիրելու և առաջնորդելու իրենց երեխաներին:)**

Կարդացեք կամ ցուցադրեք հետևյալը ընտանիքի հայտարարությունից, և խնդրեք ուսանողներին գտնել կակոթ խոսքերն ու արտահայտությունները. «Ամուսինը և կինը միմյանց և իրենց երեխաներին սիրելու և հոգ տանելու լուրջ պատասխանատվություն են կրում: ... Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և արդարակեցության մեջ («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonlu*, նոյ. 2010, 129): Ուսանողներին հարցրեք, թե ըստ իրենց ի՞նչ կարևոր խոսքեր են առանձնանում և ինչո՞ւ: Անհրաժեշտության դեպքում հարցրեք.

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է օգտագործվում «սուրբ» բառը նկարագրելու ծնողների պատասխանատվությունն ու պարտականությունները:

Պատմեք ուսանողներին, որ Փրկիչն ուսուցանել է մի առակ, որը ցույց է տալիս, թե ինչպես երեխան, ով դաստիարակվում է սիրով, կարող է շարունակել վատահել իր ընտանեկան կապերին: Հրավիրեք ուսանողներին լուր կարդալ Դուկաս ԺԵ.11–20, որոնցում սպացույց, որ անառակ որդին գիտեր, որ իր հայրը սիրում էր իրեն: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտած նյութով:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այդ արտահայտության նշանակությունը, հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ հայտարարությունը:



«Անառակ որդու առակում մենք գտնում ենք մի հզոր դաս ընտանիքների և հատկապես ծնողների համար: Փոքր որդին «ինքն իրեն գալով» (Դուկաս ԺԵ.17), ևս որոշեց տուն գնալ:

Ինչպե՞ս ևս իմացավ, որ իր հայրը չէր մերժի իրեն: Որովհետև ևս ճանաչում էր իր հորը: Որդու պատանեկության անխուսափելի թյուրիմացություններից, կոնֆլիկտներից և սխալներից, ես պատկերացնում եմ նրա հորը, որ ևս այնտեղ էր հասկացող և կարեկից սրտով, փափուկ պատասխանով, ունկնդրող ականջով և ներող գրկախառնությամբ: Ես կարող եմ նաև պատկերացնել նրա որդուն՝ իմանալով, որ կարող էր գալ տուն, որովհետև ևս գիտեր, թե ինչպիսի տուն էր սպասում իրեն» («Քնքուշ ծնողի ողջ զգացմունքով. հույսի ուղերձ ընտանիքներին», *Ensign* կամ *Liahonlu*, մայիս 2004, 90):

- Հոր կողմից սիրո ի՞նչ արտահայտություններ է նշել Երեց Հեյլսը: Էլ ի՞նչ ծնողական գործողություններ են առաջնորդում դեպի սիրող, հոգ տանող ընտանեկան մթնոլորտի: (Նկատի ունեցեք օգտագործել Եփեսացիներ Զ.4 այս հարցի շուրջ լրացուցիչ դասարանական քննարկման համար:)
- Ի՞նչ օրինակներ եք տեսել ծնողների, ովքեր ցույց են տվել սեր իրենց երեխաների հանդեպ:

- Ի՞նչ էք դուք անում այժմ պատրաստվելու համար՝ մի օր սիրել և հոգ տանել ձեր սեփական երեխաներին:

**Վարդապետություն և Ուխտեր 68.25-28, 93.36-40**

*Դաստիարակել երեխաներին արդարակեցության մեջ*


Ցուցադրեք ուսանողներին մի փոքրիկ երեխայի նկար, գուցե ձեր սեփական երեխայինը:

- Որո՞նք են հիմնական ուսմունքները, որոնց կարիքը երեխան ունի հոգեպես զարգանալու համար:

Խնդրեք ուսանողներին մտածել այս հարցի շուրջ, երբ նրանք ուսումնասիրեն և համեմատեն ուսմունքները, որոնք գտնվում են Վարդապետություն և Ուխտեր 93.36-40 և 68.25-28 հատվածներում: (*Նշում.* «Սուրբ գրության հատված կամ վարդապետություն կամ սկզբունք հաճախ հասակեցվում է, երբ այն համեմատվում է» սուրբ գրության մեկ ուրիշ հատվածի հետ [*Ավետարանի ուսուցում և յուրացում* (2012), 22]:)

- Ծնողական պարտականությունների վերաբերյալ ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել այս հատվածներից: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Ծնողները հնազանդվում են Տիրոջ պատվիրանին, երբ նրանք դաստիարակում են իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ:** Բացատրեք, որ այս հատվածների ենթատեքստում «լույսը» վերաբերում է հոգևոր գիտելիքին և արդար սկզբունքները հասկանալուն:
- Ինչո՞ւ է կարևոր ծնողների համար Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներն ու արարողություններն ուսուցանել երեխաներին տանը:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերով.



«Սուրբ Գրքերը խոսում են «հավատքի վահանի մասին, որով», - ասում է Տերը, - «դուք կկարողանաք հանգցնել ամբարիշտների բոլոր կրակոտ նետերը» (Վևու 27.17):

Հավատքի այս վահանը լավագույն ձևով արտադրվում է տանը: Չնայած վահանը կարող է փայլեցվել եկեղեցու դասերի և միջոցառումների ժամանակ, այն նախատեսվում է ձեռքով պատրաստել տանը և հարմարեցնել յուրաքանչյուր անձնավորության համար» («Մի վախեցեք», *Ensign* կամ *Լիստինգ*, մայիս 2004, 79):

- Ինչպե՞ս են ծնողները ձեր շրջապատում արդյունավետորեն ուսուցանում իրենց երեխաներին արդարակյաց սկզբունքներ, որոնք տանում են նրանց դեպի լույս և ճշմարտություն:
- Ի՞նչ հետևանքներ են նշված Վարդապետություն և Ուխտեր 68.25-ում ծնողների համար, ովքեր գիտեն Հիսուս Քրիստոսի ավետարանը, բայց ձայնողվում են ուսուցանել իրենց երեխաներին ավետարանի

**սկզբունքները: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Ծնողները, ովքեր գիտեն Հիսուս Քրիստոսի ավետարանը հաշվետու կլինեն Աստծուն, եթե նրանք ձախողվեն ուսուցանել իրենց երեխաներին ավետարանի սկզբունքները:)****

Բացատրեք, որ Եկեղեցու ղեկավարները կրկնողաբար նշել են արդար գործեր կատարելու մասին, որոնք ծնողները պետք է կիրառեն տանը որպեսզի ուսուցանեն իրենց երեխաներին ավետարանի սկզբունքները:



Բաժանեք թերթիկները, որոնք գտնվում են դասի վերջում յուրաքանչյուր ուսանողի և կարդացեք թերթիկների հրահանգները: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, երբ Սուրբ Հոգուց հուշում ստանաք, ուղղեք նմանատիպ հարցեր.

- Ինչպե՞ս են ձեզ օգնել այս երեք ընտանեկան գործելակերպերը:
- Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ է կարևոր աղոթելու, սուրբ գրություններն ուսումնասիրելու և ընտանեկան տնային երեկոներ անցկացնելու սովորույթներ զարգացնել՝ նախքան ամուսնանալը և սկսելը երեխաներ ունենալ:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ կան այլ միջավայրեր, որոնցում ծնողները կարող են ուսուցանել ավետարանի սկզբունքներն իրենց երեխաներին, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի և Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ մտքերով.



«Ծնողները պետք է լինեն զգոն և հոգեպես ուշադիր ինքնաբուխ ձևով առիթներ ծագելիս՝ բերելու վկայություն իրենց երեխաներին: Այսպիսի առիթները պետք չէ, որ ծրագրվեն, պլանավորվեն կամ սցենար գրվի դրանց համար: Դեռ ավելին, որքան քիչ է նախապատրաստված այդպիսի վկայությունով կիսվելը, այնքան ավելի շատ է հավանականությունը դաստիարակության և հարատև ազդեցության համար: ...

Օրինակ, բնականորեն տեղի ունեցող ընտանեկան գրույցները ճաշի ընթացքում, կարող են լինել կատարյալ միջավայր ծնողի համար պատմելու և վկայելու առանձնահատուկ օրհնությունների մասին, որոնք նա ստացել է առօրյա գործերի ընթացքում այդ օրը» (Դեյվիդ Ա. Բեդնար, «Հսկեցեք բոլոր հարատևությամբ», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2010, 42):



«Ապրեք ավետարանով այնքան բացահայտորեն, որքան կարող եք: Պահեք ուխտերը, որոնք ձեր երեխաները գիտեն, որ կապել եք: Տվեք քահանայության օրհնություններ: Բերեք ձեր վկայությունը: Մի ենթադրեք, որ ձեր երեխաները ինչ-որ ձևով կբերվեն ձեր հավատալիքներին ինքնուրույնորեն: ...

... Մեր երախաներն արդյոք գիտե՞ն, որ մենք սիրում ենք սուրբ գրությունները: Նրանք արդյոք տեսնո՞ւմ են մեզ դրանք կարդալիս և նշելիս և դրանցից կառչելիս ամենօրյա կյանքում: Երբևէ մեր երեխաները անսպասելիորեն բացե՞լ են փակված դուռը և գտել մեզ՝ մեր ծնկների վրա աղոթելիս: Արդյոք նրանք լսել են մեզ ոչ միայն աղոթելիս իրենց *հետայլ* նաև աղոթելիս իրենց *համար* ոչ որևէ այլ բանից ելնելով, բացի մաքուր ծնողական սիրուց: Արդյոք մեր երեխաները գիտե՞ն, որ մենք հավատում ենք

Ծոմապահությանը ... Արդյոք նրանք գիտե՞ն, որ մենք սիրում ենք լինել տաճարում ... Արդյոք նրանք գիտե՞ն, որ մենք սիրում և հաստատում ենք տեղական և գերագույն ղեկավարներին, անկատար ինչպես որ նրանք կան ... Արդյոք այդ երեխաները գիտե՞ն, որ մենք սիրում ենք Աստծուն ողջ մեր սրտով և որ մենք ցանկանում ենք տեսնել Նրա Միաձին Որդու երեսը և ընկնել Նրա ոտքերը : Ես աղոթում եմ, որ նրանք իմանան այդ» (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աղոթք երեխաների համար», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2003, 86-87):

- Ինչպե՞ս են ձեր ծնողները կամ ուրիշների ծնողները, ում դուք տեսել եք առիթից օգտվել՝ ինքնաբերվա ձևով օգտագործել հնարավորությունը ուսուցանելու ավետարանի սկզբունքներ:
- Ինչո՞ւ է կարևոր ծնողների համար բացահայտորեն ապրել ավետարանով:
- Ի՞նչ եք անում դուք այժմ խորացնելու ձեր գիտելիքը ավետարանի վերաբերյալ, որպեսզի դուք կարողանաք ուսուցանել ձեր երեխաներին լույս և ճշմարտություն:

Վկայեք, որ ծնողները կարող են «դաստիարակել իրենց երեխաներին սիրո և արդարակեցության մեջ» առաջնորդելով նրանց ետ՝ դեպի իրենց Երկնային Հայրը՝ սիրելով նրանց, ուսուցանելով նրանց ավետարանի սկզբունքներ և լավ օրինակ հանդիսանալով:

### Ուսանողի ընթերցումներ

- Ղուկաս ԺԵ.11–20, Եփեսացիս 2.4, Բ Տիմոթեոս Գ.15, 3 Նեփի 18.21, Վարդապետություն և Ուխտեր 68.25–28, 93.36–40:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աղոթք երեխաների համար», *Ensign* կամ *Liahonua*, մայ. 2003, 85-87:

# Ընտանեկան աղոթքի, ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրության և ընտանեկան տնային երեկոյի օրհնությունները

Երբ կարդաք Եկեղեցու ղեկավարների հետևյալ ուսմունքները, ընդգծեք օրհնությունները, որոնք գալիս են ամենօրյա ընտանեկան աղոթքից և սուրբ գրությունների ուսումնասիրությունից և ամենշաբաթյա ընտանեկան տնային երեկոյից:



Տասներկու Առաքյալների Քվիրումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է.

«Օնոդներ, օգնեք ապահովել ձեր երեխաներին՝ նրանց զինելով առավոտյան և երեկոյան ընտանեկան աղոթքի գործությամբ: . . . Պաշտպանեք ձեր երեխաներին ամենօրյա աշխարհիկ ազդեցություններից՝ ամրացնելով նրանց հզոր օրհնություններով, որոնք առաջանում են ընտանեկան աղոթքից: Ընտանեկան աղոթքը պետք է լինի անսակարկելի առաջնահերթություն ձեր ամենօրյա կյանքում:

. . . Դարձրեք [սուրբ գրությունները] ամենօրյա կյանքի անբաժան մասը: Եթե դուք ուզում եք, որ ձեր երեխաները ճանաչեն, հասկանան և գործեն Հոգու հուշումներով, դուք պետք է ուսումնասիրեք սուրբ գրությունները նրանց հետ: . . . Ամենօրյա, հետևողական սուրբ գրությունների ուսումնասիրության միջոցով, դուք կգտնեք խաղաղություն ձեզ շրջապատող խառնաշփոթության մեջ և ուժ՝ դիմադրելու գայթակղություններին: Դուք կգարգացնեք ուժեղ հավատք Աստծո ողորմածության հանդեպ և կիմանաք, որ Հիսուս Քրիստոսի Քավությամբ բոլորը ճիշտ կդարձվի համաձայն Աստծո ժամանակացույցի» («Հավատքի գործադրումը դարձրեք ձեր առաջնահերթությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 93–94):



Սփոփող Միության գերագույն նախագահությունից Քույր Լինդա Ս. Ռիվսն ասել է.

«Ես պետք է վկայեմ ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրության և աղոթքի և ամենշաբաթյա ընտանեկան տնային երեկոյի օրհնությունների վերաբերյալ: Սրանք հենց այն գործունեություններն են, որոնք օգնում են վերացնել լարվածությունը, ուղղություն տալ մեր կյանքին և պաշտպանություն ավելացնել մեր տներին» (Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Քրիստոսակենտրոն տուն» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 16–17):



Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարել է.

«Ընտանեկան աղոթքը մեղքի դեմ մեծագույն կանխարգելիչն է և ուստի ամենաօգտակար ապահովողը ուրախության և երջանկության» (“Hallmarks of a Happy Home,” *Ensign*, Nov. 1988, 69):

Խորհեք հետևյալ հարցերի մասին.

- Այս օրհնություններից որո՞նք եք դուք զգացել ձեր ընտանիքում կամ տեսել ուրիշ ընտանիքներում:
- Ի՞նչ կարող եք անել այժմ՝ ավելի լիարժեքորեն ստանալու այս օրհնությունները:



# Ստեղծել հաջողակ ընտանիք

## Նախաբան

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» [փաստաթուղթը] նկարագրում է սկզբունքներ, որոնք ծնողները պետք է սովորեցնեն իրենց երեխաներին: Այս դասը կքննարկի ծնողների պատասխանատվությունը ուսուցանելու երեխաներին «հարգանքի, ... սիրո, կարեկցանքի, աշխատանքի ու օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքների» մասին: Այն նաև

կքննարկի ծնողների պարտականությունը ուսուցանել երեխաներին «սիրել և ծառայել միմյանց, պահել Աստծո պատվիրանները և լինել օրինապահ քաղաքացիներ» (*Ensign* կամ *L'haahna*, նոյ. 2010, 129): Այս սկզբունքներն ուսուցանելն օգնում է ծնողներին ստեղծել հաջող ընտանիքներ:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Տես Դավիթ Ն. Օուքս, «Լավ, ավելի լավ, ամենալավ», *Ensign* կամ *L'haahna*, նոյ. 2007, 104–8:
- Սյուզան Վ. Թաններ, «Did I Tell You... » *Ensign* կամ *L'haahna*, մայիս 2003, 73–75:

## Ուսուցման առաջարկներ

### Սկզբունքներ հաջող ընտանիքների համար

Կիսվեք Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի (1873–1970) հետևյալ խոսքերով:



Ոչ մի հաջողություն չի կարող փոխհատուցել տանը ունեցած ձախողմանը» (quoted from J. E. McCulloch, *Home: The Savior of Civilization* [1924], 42; in Conference Report, Apr. 1935, 116).

- Մտածելով այն մասին, թե ինչ սովորեցիք այս դասընթացից, որոնք են այն մի քանի սկզբունքները որոնք նպաստում են հաջող ընտանիքի ստեղծմանը:

Այս հարցին պատասխանելու համար, ցույց տվեք և կարդացեք բարձրաձայն հետևյալ խոսքերը «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթից:

«Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում են և պահպանվում հավատքի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի ու օգտակար և ուժերը վերականգնող հանգստի սկզբունքների վրա»:

Բացատրեք ուսանողներին, որ այս հայտարարության սկզբունքների մեծ մասը քննարկվել են նախորդ դասերում: Կենտրոնանալու համար այն հատկանիշների վրա, որոնք չեն քննարկվել, գրեք հետևյալը գրատախտակին.

*Հարգանք*

*Կարեկցանք*

*Աշխատանք*

*Օգտակար և ուժեղը վերականգնող հանգստի սկզբունքներ*

Դասարանը բաժանեք փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք այս հատկանիշներից մեկը: Խնդրեք նրանց խորհել հետևյալ հարցերի շուրջ.

**Հարգանք**

- Որո՞նք են լավ բաներից մի քանիսը, որոնք տեղի են ունենում ընտանիքներում, երբ ծնողները հարգանք են ցուցաբերում իրենց երեխաների հանդեպ: Ե՞րբ են երեխաները հարգանք ցուցաբերում իրենց ծնողների հանդեպ: Ե՞րբ են ծնողները հարգանք ցուցաբերում միմյանց հանդեպ:
- Ի՞նչ օրինակներ կարող եք կիսել ձեր ընտանիքի փորձառություններից հարգանք ցուցաբերելու վերաբերյալ:

**Կարեկցանք**

- Ի՞նչ եղանակներով անհատները կարող են ուսուցանել երեխաներին կարեկցանք զգալ ընտանիքի մյուս անդամների հանդեպ:
- Կարեկցանք ուսուցանելու ի՞նչ օրինակներ կարող եք դուք բերել ձեր ընտանիքից կամ ընտանիքներից, որոնց դուք ճանաչել եք:

**Աշխատանք**

- Ինչո՞ւ է աշխատանքը հաջող ընտանիքի մաս հանդիսանում:
- Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին հաճույք և բավականություն գտնել աշխատանքում:
- Երեխաներին աշխատել սովորելու ի՞նչ օրինակներ կարող եք բերել ձեր ընտանիքից կամ ընտանիքներից, ում ճանաչել եք:

**Օգտակար և ուժեղը վերականգնող հանգստի սկզբունքներ**

Ասեք այս խմբին, որ երբ ընտանիքները սահմանափակ ժամանակ ունեն միասին անցկացնելու համար՝ ընտանեկան միջոցառումների ժամանակ, իմաստուն է ընտրել այն միջոցառումները, որոնք ամենաարժեքավորն են: Խնդրեք այս խմբին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Դալլին Հ. Օուֆսի հետևյալ խոսքերը և քննարկել հաջորդող հարցերը.





«Երբ մենք մտածում ենք տարբեր ընտրությունների մասին, մենք պետք է հիշենք, որ բավական չէ, որ ինչ որ բան լավ է: Այլ ընտրություններ ավելի լավ են, և դեռ կան ընտրություններ, որ ամենալավն են: ...

Մեր ամենակարևոր ընտրություններից մի քանիսը վերաբերում են ընտանեկան միջոցառումներին: ... Ընտրելով, թե ինչպես ենք մենք ժամանակ անցկացնում որպես ընտանիք, մենք պետք է ուշադիր լինենք, որ չսպառենք մեզ համար մատչելի ժամանակը այն բաների վրա, որոնք բավականին լավն են և քիչ ժամանակ թողնենք նրա համար, որը ավելի լավ է կամ ամենալավը: Ընկերներից մենք իր երիտասարդ ընտանիքին ամռանը տարավ մի շարք արձակուրդային ուղևորությունների, ներառյալ այցելություններ պատմական վայրեր: Ամառվա վերջում նա հարցրեց իր դեռահաս որդուն, թե այդ ամառային լավ միջոցառումներից որն էր նա ամենաշատը հավանել: Հայրը շատ բան սովորեց պատասխանից, և նաև նրանք, ում նա պատմեց դա: «Այս ամառ ես ամենաշատը հավանեցի,- պատասխանեց տղան,- այն գիշերը, երբ դու և ես պառկած էինք մարգագետնին և նայում էինք աստղերին և գրուցում էինք»: Հրաշալի ընտանեկան միջոցառումները կարող են լավ լինել երեխաների համար, բայց դրանք ոչ միշտ են ավելի լավ, քան սիրառատ ծնողի հետ` մեկ մեկու հետ առանձին անցկացրած ժամանակը» («Լավ, ավելի լավ, ամենալավ» *Ensign*, նոյ. 2007, 104–5):

- Ինչպե՞ս կարող է այս հոր և որդու փորձառությունն օգնել մեզ հասկանալ «օգտակար և ուժերը վերականգնող հանգստի միջոցառումների» արժեքը ընտանիքում:
- Ինչպե՞ս կարող է ընտանեկան միասնական աշխատանքը ուժերը վերականգնող հանգստի միջոցառումներն ավելի իմաստավի դարձնել:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին ողջ դասարանի հետ կիսվել իրենց քննարկումների ամփոփումներով:

Ավարտեք դասի այս մասը՝ ցուցադրելով Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դիտեր Ֆ. Ուլստորֆի հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Քանի որ «ոչ մի հաջողություն չի կարող փոխհատուցել [մեր ընտանիքում] կրած անհաջողությանը», մենք պետք է բարձր առաջնահերթություն դնենք մեր ընտանիքների վրա: Մենք կառուցում ենք խորը և սիրող ընտանեկան փոխհարաբերություններ` անելով հասարակ բաներ միասին, ինչպես օրինակ ընտանեկան ճաշ և տնային ընտանեկան երեկո և ուղղակի միասին զվարճանալը: Ընտանեկան փոխհարաբերություններում *սերը* իսկապես հեզվում է *ժ-ա-մ-ա-ն-ա-կ*, ժամանակ: Միմյանց համար ժամանակ հատկացնելը տան ներդաշնակության բանալին է: («Ամենակարևոր բաների մասին» *Ensign* կամ *Լիստոնա*, նոյ. 2010, 21–22):

- Կարող եք կիսվել ձեր փորձառությամբ այն մասին, երբ ծնողը կամ ընտանիքի այլ անդամ իմաստավի ժամանակ է անցկացրել ձեզ հետ:
- Հարցրեք, արդյոք որևէ մեկը ցանկություն կունենա կիսվել մտքերով կամ վկայություններով այն մասին, թե ինչպես գրատախտակի վրա գրված հատկանիշները կարող են օրհնել ընտանիքները:



**Երկրորդ Օրինաց Զ.4–7, Վարդապետություն և Ուխտեր 134.5–6, Հավատո Հանգանակ 1.12**

*Երեխաներին ուսուցանելու ծնողների պարտականությունը*

Խնդրեք ուսանողներին որոնել վեցերորդ պարբերությունը «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» փաստաթղթում, որոնելով առանձնահատուկ բաներ, որոնք ծնողները սրբազան պարտականություն ունեն ուսուցանելու իրենց երեխաներին: Երբ ուսանողները պատասխանեն, հետևյալ արտահայտությունները գրեք գրատախտակին.


*Միտել և ծառայել միմյանց*  
*Հետևել Աստծո պատվիրաններին*  
*Լինել օրինապահ քաղաքացիներ*

**Շեշտեք հետևյալ սկզբունքները. Ծնողներին պատվիրվել է ուսուցանել իրենց երեխաներին սիրել և ծառայել միմյանց, պահել Աստծո պատվիրանները և լինել օրինապահ քաղաքացիներ:**

Խնդրեք ուսանողներին բացել Երկրորդ Օրինաց Զ գլուխը: Բացատրեք, որ այս գլխում արձանագրվել են Մովսեսի հրահանգները Բարայելի զավակներին այն մասին, թե ինչպես պահել պատվիրանները: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Երկրորդ Օրինաց Զ.4–7-ը և վերագրել ուղերձը տեղադրելով իրենց իսկ անունը ամեն անգամ, երբ սուրբ գրությունն ասում է «քեզ», «դու», «քո» կամ «ձեր»:

- Ինչպե՞ս է ձեր սեփական անունով փոխարինելն ազդում այս հատվածների ձեր ըմբռնման վրա:
- Ըստ 7-րդ հատվածի, որքա՞ն հաճախ պետք է ծնողները ուսուցանեն իրենց երեխաներին:

Մատնանշեք «սիրել և ծառայել միմյանց» արտահայտությունը գրատախտակի վրա: Քննարկեք Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Բ. Ֆաուստի (1920–2007) հետևյալ խոսքերը, և տվեք հետևյալ հարցերը.



«Գրեթե յուրաքանչյուր օրը բերում է հնարավորություններ՝ կատարելու անեսասեր գործեր ուրիշների համար: Այդպիսի գործերը անսահմանափակ են և կարող են լինել այնպես պարզ ինչպես մի բարի խոսքը, մի օգնող ձեռքը կամ մի գթառատ ժպիտը» (“What’s in It for Me?” *Ensign* կամ *L’uhuhu*, նոյ. 2002, 21-22):

- Որքա՞ն հնարավորություններ եք ունենում ամեն օր սիրելու և ծառայելու ձեր ընտանիքի անդամներին:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի դարձնեք ձեր ընտանիքի անդամներին ծառայելը ավելի կարևոր առաջնահերթություն ձեր կյանքում:

Ուսանողներին ժամանակ տվեք, որպեսզի խորհեն, թե ինչ կարող են անել, որպեսզի ավելի լավ ծառայեն ընտանիքի անդամներին և սեր ցուցաբերեն նրանց հանդեպ:

Մատնանշեք «պահել Աստծո պատվիրանները» արտահայտությունը գրատախտակի վրա և հարցրեք.

- Ինչո՞ւ պետք է ծնողները լինեն այն մարդիկ, ովքեր գլխավորապես պատասխանատու են ուսուցանելու իրենց երեխաներին Աստծո պատվիրանները:

Կիսվեք Քոյր Սյուզան Վ. Թանների՝ նախկին Երիտասարդ Կանանց գերագույն նախագահի հետևյալ խոսքերով: Բացատրեք, որ այս ելույթում Քոյր Թանները վերհիշում է այն խորհուրդը, որ նա տվել էր իր դստերը, ով վերջերս էր ամուսնացել և սկսել ստեղծել իր սեփական տունը.



«Նայեք ձեր տատ ու պապերի տների օրինակին: Երկու կողմի տատ ու պապերն էլ դաստիարակել են իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ» (Վևու 93.40): [Տունը, որտեղ ձեր հայրն է մեծացել] գիտության տուն էր: Նա ասել է իր հոր թաղման ժամանակ, որ նա երբևէ չէր սովորել որևէ ավետարանի սկզբունք Եկեղեցու ժողովում, որը նա արդեն չէր սովորել իր իսկ տանը: Եկեղեցին հավելում էր իր տանը» (“Did I Tell You ... ?” *Ensign* կամ *Liahona*, մայիս 2003, 73):

- Ինչպե՞ս կրող եք պատրաստվել ստեղծելու գիտության տուն՝ նման այն տներին, որոնք Քոյր Թաններն էր նկարագրել, ձեր ընտանիքի համար: Ի՞նչ մտքեր կարող էիք դուք ունենալ, եթե ձեր ապագա երեխաները այս ասեին այն տան մասին, որում իրենք էին մեծացել:

Մատնանշեք «լինել օրինապահ քաղաքացիներ» արտահայտությունը գրատախտակի վրա: Ասեք ուսանողներին, որ Վարդապետություն և Ուխտեր 134-ը արձանագրել է «կառավարությունների և օրենքների վերաբերյալ հավատքի մի հայտարարություն (134 բաժնի գլխագիր): Օգնեք ուսանողներին հասկանալ այս բաժնի ենթատեքստը հանձնարարելով որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ բաժնի գլխագիրը: Ապա հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 134.5-6 հատվածները, իսկ մեկ այլ ուսանողի կարդալ հավատքի տասներկուերորդ հանգանակը: Դասարանին հանձնարարեք փնտրել, թե Տերն ինչ ուսուցանեց երկրի օրենքների մասին:

- Երկրի կառավարությունների և օրենքների մասին ի՞նչ ուսմունքներ են ամանձնահատուկ ձեզ համար: (Լրացուցիչ հրահանգավորման համար, մտածեք հրավիրել ուսանողներին կարդալ և հղումներ կատարել Վարդապետություն և Ուխտեր 58.21-ի և 98.4-6-ի վրա:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ տունը լինի գլխավոր տեղը երեխաների համար երկրի օրենքներին հնազանդվել սովորելու համար:

Մտածեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի (1926–2004) հետևյալ խոսքերի շուրջ:



«Երբ ծնող գաղափարը անտեսվում է, ոստիկանների կարիքը մեծանում է: Միշտ կլինի ոստիկանների պակաս, եթե առկա է արդյունավետ ծնողների պակաս: Նմանապես, բավականաչափ չեն լինի բանտերը, եթե չկան բավականաչափ լավ օջախներ» ("Take Especial Care of Your Family," *Ensign*, May 1994, 89):

- Ի՞նչ էք կարծում, ինչպես կարող են ծնողներն ուսուցանել երեխաներին հնազանդվել երկրի օրենքներին:
- Գիտե՞ք ինչ-որ մեկին, ով գիտակցաբար հնազանդվում է և ցույց տալիս հարգանք երկրի օրենքների հանդեպ և կառավարության պաշտոնյաների հանդեպ: Ի՞նչ ազդեցություն ձեր կարծիքով այս վերաբերմունքը կունենա այդ մարդու երեխաների վրա:

Խրախուսեք ուսանողներին ժամանակ տրամադրել զալիք օրերում խորհել սկզբունքների մասին, որոնք ծնողները պետք է ուսուցանեն՝ հաջողակ ընտանիք ստեղծելու համար: Խնդրեք նրանց ծրագրեր կազմել, թե ինչպես նրանք պետք է հետևեն այս սկզբունքներին իրենց կյանքում այժմ և կիրառեն դրանք իրենց ընտանիքներում:

## Ուսանողի ընթերցարան

- Երկրորդ Օրինաց Զ.1–7, Յեսու ԻԴ.15, Մոսիա 4.14–15, Վարդապետություն և Ուխտեր 58.21, 98.4–6, 134.5–6, Հավատո Հանգանակ 1.12:
- Տես Դավիթի Հ. Օուքս, «Լավ, ավելի լավ, ամենալավ» *Ensign* կամ *Լիստինա*, նոյ. 2007, 104–8:

# Ապահովել նյութական կարիքները

## Նախաբան

Աստված վստահում է անհատներին՝ իրենց նյութական անձնական կարիքներն ապահովելու և իրենց ընտանիքների հիմնական կարիքները հոգալու պարտականությունը: Օնոդները սրբազան պարտականություն ունեն ապահովել իրենց երեխաների «կյանքի կենսական պահանջները» (Ընտանիք՝

հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129): Այս դասի ընթացքում ուսանողները կսովորեն, թե ինչպես ինքնապահովման սկզբունքը կարող է նպաստել իրենց աշխարհիկ և հոգևոր կայունությանը այժմ և ապագայում:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Մ. Ռասել Բալլարդ, «Դառնալ ինքնապահովող՝ հոգեպես և ֆիզիկապես», *Ensign*, մարտ 2009, 50–55:
- Ռոբերտ Դ. Հեյլս, «Դառնալով տնտեսվար մատակարար՝ աշխարհիկ և հոգևոր», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2009, 7–10:
- Մարվին Ջ. Աշթոն, «Մեկ փողի համար», *Ensign*, սեպ. 2007, 37–39:
- Հեռատես ապրելակերպ կայքէջ, [providentliving.org](http://providentliving.org)

## Ուսուցման առաջարկներ

### Մարկոս 9.1-3, Ղուկաս Բ.51-52

#### Ինքնապահովում

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը. «Ի՞նչ ուղիներով Հիսուս Զրիստոսը նախապատրաստեց Իրեն՝ Իր մահկանացու ծառայության համար»: Հրավիրեք ուսանողներին կարդալ Մարկոս 9.1–3 և Ղուկաս Բ.51–52-ը, փնտրելով ուղիներ, որոնցով Փրկիչը նախապատրաստեց Իրեն Իր վաղ տարիներին Իր ապագա ծառայության համար: Երբ ուսանողները պատասխաններ տան, գրի առեք հետևյալը գրատախտակին.

*Աշխատեց Իր հոր հետ որպես հյուսն (մասնագիտանալով)*

*Աճեց ինաստությամբ (կրթվելով)*


*Մեծացավ հասակով (ֆիզիկապես)*

*Աճեց Աստծո հետ բարեհաճության մեջ (հոգևորապես)*

*Աճեց մարդկանց հետ բարեհաճության մեջ (հասարակական դիրքով)*

- Ինչպե՞ս կարող է Փրկչի օրինակին հետևելը հինգ նշված ասպարեզներում օգնել ձեզ պատրաստվելու բավարարել ձեր սեփական կարիքները և ձեր ապագա ընտանիքին:

Ցուցադրեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի (1895–1985) հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներին լսել Նախագահ Քիմբալի նշումները, որպես յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի պարտականություն.




«Եկեղեցին և նրա անդամները պատվիրվել են Տիրոջ կողմից լինել ինքնապահովող և անկախ: (Տես Վևու 78.13-14:)

Ցուրաքանչյուր անհատի սոցիալական, էմոցիոնալ, հոգևոր, ֆիզիկական կամ տնտեսական բարօրությունը կախված է նախ իրենից, այնուհետև իր ընտանիքից, և ապա Եկեղեցուց, եթե նա Եկեղեցու հավատարիմ անդամ է:

Ոչ մի Վերջին Օրերի Սուրբ, լինելով ֆիզիկապես և էմոցիոնալ առումով ունակ, կամավոր իր սեփական բեռը կամ իր ընտանիքի բարօրությունը չի դնի որևէ մեկ ուրիշի վրա: Քանի դեռ նա կարող է, Տիրոջ ոգեշնչման ներքո և իր իսկ աշխատանքով, նա կմատակարարի իր և իր ընտանիքի հոգևոր և նյութական կենսական կարիքները»  
*(Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ [2006], 116):*

- Նախագահ Քիմբալը ի՞նչ պատասխանատվության մասին է ասել, որն ունի մեզանից յուրաքանչյուրը:
- Ինչո՞ւ է կարևոր դառնալ «ինքնապահովող և անկախ»: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալը. **Երբ մենք ինքնապահովող ենք դառնում, մենք կարող ենք ապահովել ինքներս մեզ և մեր ընտանիքների հոգևոր և նյութական կենսական կարիքները:**)

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ է նշանակում ինքնապահովող լինելն իրենց համար: Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ինքնապահովում նշանակում է պատասխանատվություն ստանձնել մեր անձնական հոգևոր և նյութական բարօրության և նրանց համար, ում Երկնային Հայրը վստահել է մեր հոգաժողովանը: Միայն այն ժամանակ, երբ մենք ինքնապահովող ենք, մենք կարող ենք իսկապես նմանվել Փրկչին ուրիշներին ծառայելիս և օրհնելիս:

Կարևոր է հասկանալ, որ ինքնապահովումը միջոց է նպատակին հասնելու համար: Մեր վերջնական նպատակը Փրկչի նման դառնալն է, և այդ նպատակը բարելավվում է ուրիշներին մատուցած մեր անձնուրաց ծառայությամբ: Ծառայելու մեր ունակությունը մեծանում է կամ փոքրանում ըստ մեր ինքնապահովվածության մակարդակի» («Բարօրության ավետարանական տեսապատկերը. Հավատք գործի մեջ», *Բարօրության և ինքնապահովման հիմնական սկզբունքներ* [գրքույկ, 2009], 1–2):

- Ո՞րն է ինքնապահովման վերջնական նպատակը:
- Ինչպե՞ս է մեր ուրիշներին ծառայելու ունակությունը նվազում, եթե մենք ինքնապահովող չենք:

Որպեսզի օգնենք ուսանողներին ավելի խորը հասկանալ ինքնապահովումը, ցուցադրեք Մփոփող Միության նախկին գերագույն նախագահ Ջուլի Բ. Բեքի հետևյալ խոսքերը.



© Busath.com

«Ինչպե՞ս ենք մենք ինքնապահովող դառնում: Մենք դառնում ենք ինքնապահովող, բավարար գիտելիք, կրթություն և գրագիտություն ձեռք բերելով, փողը և միջոցները խելամտորեն տնօրինելով, լինելով հոգեպես ամուր, պատրաստվելով ծայրահեղ իրավիճակներին և պատահականություններին, ունենալով ֆիզիկական առողջություն, սոցիալական և էմոցիոնալ բարվոք վիճակ» (“The Welfare Responsibilities of the Relief Society President,” *Basic Principles of Welfare and Self-Reliance*, 4):

Գրատախտակի վերևի մասում գրեք հետևյալ խոսքերը. *կրթություն, ֆինանսներ, հոգևոր ուժ, տնային արտադրություն և պահեստավորում, առողջություն և աշխատանք*: Ուսուցանեք ուսանողներին, որ ինքնապահովումը ներառում է հավասարակշռված կյանքի այս վեց ասպարեզները (տես *Ապահովել Տիրոջ ողիտյով. Բարօրության վերաբերյալ ղեկավարի ուղեցույցի ամփոփագիր* [գրքույկ, 2009], 1–2): Որոշ ժամանակ տրամադրեք որպես դասարան քննարկելու, թե ի՞նչ կարող են անել երիտասարդ չափահաս ամուրիները՝ դառնալու ավելի ինքնապահովող այս ասպարեզներից յուրաքանչյուրում, որպեսզի ավելի լավ կարողանան ապահովել իրենց ապագա ընտանիքների նյութական և հոգևոր կարիքները և ծառայել Եկեղեցում: Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին: Գաղափարները կարող են ընդգրկել հետևյալը.

Կրթություն. Ձեռք բերեք գիտական աստիճան կամ վկայական համալսարանից կամ արհեստի ուսումնարանից, բարելավեք հետազոտական հմտությունները, սովորեք լրացուցիչ աշխատանքային հմտություններ, սովորեք կատարել հիմնական տնային և ավտո վերանորոգումներ:

Ֆինանսներ. Վճարեք ազնիվ տասանորդ և ծոմի գոհաբերություն, սովորեք բյուջե կազմել և առաջնորդվեք դրանով, սովորեք ինքնակարգապահություն, խուսափեք ոչ անհրաժեշտ պարտքից, վճարեք պարտքերը, խնայեք որոշ փող ամեն աշխատավարձից:

Հոգևոր ամրություն. Աղոթեք, ուսումնասիրեք սուրբ գրությունները, նպատակով ծոմ պահեք, կանոնավորապես հաճախեք տաճար:

Տնային պահեստ. Սովորեք թե ինչպես պահածոյացնել և պահեստավորել ուտելիքներ, պարտեզ աճեցնել (նույնիսկ ուղղակի մի քանի բույսեր):

Առողջություն. Հնազանդվեք Իմաստույան Խոսքին, կանոնավորապես մարզվեք, առողջ սնվեք, բավականաչափ քնեք, ձեռք բերեք առողջության ապահովագրում:

Աշխատանք. Չարգացրեք աշխատանքային նոր հմտություններ, խթանեք աշխատանքային ուժեղ էթիկա, ձեռք բերեք առաջադեմ հավաստագրեր:

- Ի՞նչ էք արել մեծացնելու ձեր ինքնապահովումը այս ասպարեզներից մեկում: Ինչպե՞ս են այս ջանքերը մեծացրել ձեր ինքնապահովման և ինքնարժեքի զգացումները: Ինչպե՞ս է դա մեծացրել ինքներդ ձեզ ապահովելու և Եկեղեցում ավելի լիովին ծառայելու ունակությունը:

Հրավիրեք ուսանողներին նպատակ դնել բարելավելու այս վեց ասպարեզներից մեկը:

**Մաղաքիա 9.8–12, Մատթեոս 9.19–21, Ա Տիմոթեոս 2.7–10, 2 Նեփի 9.51, Հակոբ 2.13–14, 18–19, Վարդապետություն և Ուխտեր 104.13–18**

*Ֆինանսների տնօրինում*

Հիշեցրեք ուսանողներին, որ եթե նրանք դեռ պատասխանատու չեն, նրանք մի օր իրենց և հնարավոր է ընտանիքի ապահովման համար կլինին պատասխանատու: Ուստի նրանք պետք է սովորեն իմաստուն վարվել իրենց նյութական աղբյուրների հետ:

Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք կարդալ հետևյալ հատվածներից մի քանիսը և գտնել սկզբունքներ կապված ֆինանսական խելամիտ տնօրինության հետ:

Մաղաքիա 9.8–12 (հնազանդվենք տասանորդի և նվիրատվությունների օրենքին)

Մատթեոս 9.19–21 (խուսափենք մեր սրտերը աշխարհիկ ունեցվածքների վրա դնելուց)

Ա Տիմոթեոս 2.7–10 (բավարարվենք նրանով, ինչ ունենք՝ «արծաթասիրտիներ ամեն չարիքների արմատն է»)

2 Նեփի 9.51 (չծախսենք փող կամ աշխատանք անարժան բաների վրա)

Հակոբ 2.13–14, 18–19 (ձգտենք հարստությունների արդար նպատակներով)

Վարդապետություն և Ուխտեր 104.13–18 (առատաձեռն լինենք աղքատներին և կարիքավորներին օգնելիս)

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել իրենց գտած նյութով: Հավաստիացեք, որ ուսանողները հասկանան հետևյալ սկզբունքը: **Կիրառելով իմաստուն ֆինանսական սկզբունքներ, մարդիկ և ընտանիքները կարող են մեծացնել իրենց սեփական ֆինանսական կայունությունը և պատրաստված լինել օգնելու ուրիշներին:** (Դուք կարող եք մատնանշել, որ սուրբ գրություններում Տերը կապ է գծում հարստություններ ձեռք բերելու և աղքատներին և կարիքավորներին օգնելու միջև: Օրինակ՝ տես Հակոբ 2.18–19 և ՎնՈւ 104.18:)

- Ինչպիսի՞ օրհնություններ եք զգացել կիրառելով իմաստուն ֆինանսական սկզբունքներ ձեր կյանքում:

**Վարդապետություն և Ուխտեր 104.78**

*Խուսափել ոչ անհրաժեշտ պարտքից*

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 104.78: Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինի(1917-2008) հետևյալ խոսքերը և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Հիշեք այս պարտքը գերության մի ձև է: Այն ֆինանսական մեծամրջյուն է: Երբ մենք ապառիկ գնումներ ենք կատարում, այն մեզ ընդամենը բարգավաճման պատրանք է տալիս: Մենք կարծում ենք, թե տիրանում ենք իրերի, բայց իրականությունն այն է, որ մեր իրերն են մեզ տնօրինում:

Որոշ պարտքեր, ինչպես օրինակ համեստ տուն, կրթության համար ծախսեր, զուցե անհրաժեշտություն առաջին մեքենայի համար, կարող է հարկավոր լինել: Բայց մենք չպետք է մտնենք ֆինանսական գերության մեջ սպառողական պարտքի միջոցով, առանց ուշադիր կշռադատելու գները» («Երկրային պարտքեր, երկնային պարտքեր», *Ensign* կամ *Liahona*, մայ. 2004, 40–41):

- Ինչո՞ւ է պարտքը համարվում գերության մի ձև: (Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքը. **Ոչ անհրաժեշտ պարտքից խուսափելն օգնում է զերծ պահել անհատներին և ընտանիքներին ֆինանսական գերությունից:**) Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008) ուսուցանել է, որ «Ինքնապահովումը չի կարող [գոյություն] ունենալ, երբ տան վրա կա լուրջ պարտք կախված: Մարդը ոչ անկախություն ունի, ոչ ազատություն գերությունից, երբ նա պարտք է ուրիշներին» (“To the Boys and to the Men,” *Ensign*, Nov. 1998, 53):

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ խոհուրդը.



«Խուսափեք այն փիլիսոփայությունից և պատճառաբանությունից, որ երեկվա ճոխությունները դարձել են անհրաժեշտություններ այսօր: Դրանք անհրաժեշտություններ չեն, մինչև մենք ինքներս չենք դարձնում դրանք այդպիսին: Մեր երիտասարդ զույգերից շատերն այսօր կամենում են սկսել բազմաթիվ ավտոմեքենաներով և այնպիսի մի տնով, ինչպիսին Մայրիկն ու Հայրիկն են ողջ կյանքում աշխատել ձեռք բերելու համար: Չետևաբար,

նրանք երկարատև պարտքի տակ են մտնում երկու աշխատավաճի հիման վրա: Հավանաբար նրանք խիստ ուշ են հայտնաբերում, որ փոփոխություններն իսկապես գալիս են, կանայք երեխաներ են ունենում, հիվանդությունը հետապնդում է որոշ ընտանիքների, կորցնում են աշխատանքը, բնական աղետներ և այլ իրավիճակներ են տեղի ունենում և այլևս հիպոթեքային վարկավճարները, որոնք հիմնված էին երկու աշխատավարձերի վրա, չեն կարող վճարվել: Մեզ համար կարևոր է ապրել մեր միջոցների սահմաններում» («Մնայուն ճշմարտություններ փոփոխվող ժամանակներում» *Ensign* կամ *Liahona*, մայ. 2005, 20):

- Որո՞նք են որոշակի հնարավոր հետևանքները անհատների և ընտանիքների համար, ովքեր ձախողվում են ընդունել տարբերությունը ցանկությունների և կարիքների միջև:



- Որո՞նք են այն ուղիները, որոնցով մենք պետք է տարբերակենք ցանկությունները և կարիքները:

Հրավիրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցերի մասին և գրել պատասխաններն իրենց օրագրում:

- Կյանքի ո՞ր ասպարեզներում դուք կկարողանաք դառնալ ավելի ինքնապահովող:
- Ինչպե՞ս կարող եք ավելի լավ տնօրինել ձեր նյութական ռեսուրսները:

## Ուսանողի ընթերցարան

- Մադաբա Գ.8–12, Մատթեոս Զ.19–21, Մարկոս Զ.1–3, Ղուկաս Բ.51–52, Ա Տիմոթեոս Զ.7–10, 2 Նեվիի 9.51, Հակոբ 2.17–19, Վարդապետություն և Ուխտեր 56.17, 75.28, 104.13–18, 78:
- Ռոբերտ Դ. Հեյլս, «Դառնալով տնտեսվար մատակարար՝ աշխարհիկ և հոգևոր», *Ensign* կամ *L'Espresso*, մայիս 2009, 7–10:

# Եկեղեցու միայնակ ամուրի անդամները

## Նախաբան

Հիսուս Քրիստոսի ավետարանը շեշտում է այն հավերժական օրհնությունները, որոնք ձեռք են բերվում ամուսնության և ընտանեկան փոխհարաբերությունների միջոցով: Այնուամենայնիվ Եկեղեցու շատ անդամներ գտնվում են այնպիսի հանգամանքներում, որտեղ նրանք ներկայումս հնարավորություն չունեն ամուսնության և ընտանիքի համար: Այս դասը շեշտում է, որ Եկեղեցու

անդամները, ովքեր ամուրի են, կարևոր ներդրումներ անեն Տիրոջ արքայության համար: Չնայած ամուսնության և ընտանիքի օրհնությունները երբեմն հետաձգվում են, դրանք երբեք չեն մերժվում նրանց, ովքեր արդարաբար պահում են իրենց ուխտերը Աստծո հետ:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Գորդոն Բ. Հինքլի, «Զրույց չափահաս ամուրիների հետ», *Ensign*, մարտ 1997, 58–63:
- Սպենսեր Ջ. Քոնդի, «Հայցել ամենամեծ և պատվական խոստումները», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2007, 16–18:

## Ուսուցման առաջարկներ


### Ա Կորնթացիս ԺԲ. 12-20, 25-27

*Ամուրի անդամներ ընտանիքի կողմնորոշումով Եկեղեցում*

Հրավիրեք ուսանողներին կիսվել որոշ մարտահրավերներով, որոնք Եկեղեցու ամուրի անդամները կարող են ունենալ, երբ հաճախում են ծովա կամ ճյուղ, որտեղ շատ անդամներ ամուսնացած են և ունեն երեխաներ: (Եկեղեցու ամուրի անդամները կարող են զգալ հուսալքված, մեկուսացած և դուրս մնացած ժողովներից և դասերից, որոնք ուսուցանում են ամուսնության և ընտանիքի մասին:)

- Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարող են Եկեղեցու մյուս անդամներն օգնել ամուրի չափահաս անդամներին ներգրավված զգալ և զնահատված Եկեղեցու ժողովներում և միջոցառումներում:

Ցուցադրեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի (1907–1995) հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Եկեղեցին բոլոր անդամների համար է: ... Մենք բոլորս, ամուրի թե ամուսնացած, ունենք անհատական առանձնահատկություններ և կարիքներ, որոնց շարքում է՝ որպես Աստծո արժանավոր անհատական զավակ նկատված լինելու ցանկությունը: ...»

Սա Հիսուս Քրիստոսի եկեղեցին է, ոչ թե ամուսնացածների կամ չամուսնացածների, կամ որևէ այլ խմբի, կամ անձնավորության եկեղեցի»

(«Եկեղեցին բոլոր մարդկանց համար է», *Ensign*, June 1989, 76):

Բացատրեք, որ Պողոս Առաքյալը համեմատել է Եկեղեցին մարդկային մարմնի հետ, իսկ անհատական անդամներին Եկեղեցու մարմնի մասերի հետ: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ա Կորնթացիս ԺԲ.12–20 հատվածները, մինչ դասարանի մնացած մասը փնտրում է, թե ինչպես է Պողոսը համեմատում ֆիզիկական մարմնի մասերը Եկեղեցու անդամների հետ:

- Ի՞նչ մարտահրավերների կհանդիպե՞ինք մենք, եթե մեր մարմինների մեկ կամ ավելի մասերը բացակայե՞ին:
- Ի՞նչ սկզբունք է Պողոսի համանմանությունն ուսուցանում մեզ Եկեղեցու և նրա անդամների մասին: (Ուսանողները կարող են նշել մի քանի կարևոր սկզբունքներ: Հավաստիացե՛ք, որ շեշտվում է հետևյալ սկզբունքը: **Եկեղեցու յուրաքանչյուր անդամ ունի արժեք և կարող է կարևոր ներդրում կատարել Եկեղեցում**):
- Ի՞նչ ներդրումներ եք տեսել, որոնք ձխի կամ ճյուղի ամուրի անդամները կատարել են Եկեղեցում:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ա Կորնթացիս ԺԲ.25-27-ը: Հրավիրեք դասարանին փնտրել, թե ինչ կարող են Եկեղեցու անդամներն անել միաբանված դառնալու համար:

- Ի՞նչ կարող են անել բոլոր անդամները՝ ամուսնացած և ամուրի՝ օգնելու միմյանց զգալ միաբան ձխի կամ ճյուղի մյուս անդամների հետ:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը.




«Մենք բոլորս պատկանում ենք Սրբերի համայնքին, մենք բոլորս միմյանց կարիքն ունենք, և մենք բոլորս աշխատում ենք նույն նպատակի համար: Մեզանից որևէ մեկը կարող է մեկուսացնել իրեն [մեր ձխի կամ ճյուղի] ընտանիքից՝ մեր տաբերությունների պատճառով: Բայց մենք չպետք է մեկուսանանք կամ զրկենք մեզ հնարավորություններից, այն տաբերությունների պատճառով, որ մենք զգում ենք մեր մեջ: Փոխարենը եկեք կիսվենք մեր պարզևներով և տաղանդներով մյուսների հետ, բերելով հույսի պայծառություն և ուրախություն նրանց համար, և այդ անելով բարձրացնենք մեր իսկ ոգին» ("Belonging to a Ward Family," *Ensign*, Mar. 1996, 16):

- Ինչպե՞ս են կոչումներ ընդունելու և ձեր ծովար կամ ճյուղը հաճախելու ձեր ջանքերը օգնել ձեզ ավելի միաբանված զգալու մյուս անդամների հետ:

**Եբրայեցիս ԺԱ.1, 6, 8-13,16**

*Խոստացված օրհնությունների և սպասելը*

Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ միտքը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

	<p>«Նրանք, ովքեր ամուրի են, պետք է ցանկանան տաճարային ամուսնություն և առաջնահերթ ճիգեր գործադրեն այն ունենալու համար: Երիտասարդությունը և երիտասարդ ամուրիները պետք է դիմադրեն քաղաքականապես ճիշտ, բայց հավերժական տեսանկյունից կեղծ տեսակետի դեմ, որն արժեզրկում է ամուսնանալու և երեխաներ ունենալու կարևորությունը: («Ցանկություն», <i>Ensign</i> կամ <i>Liahonua</i>, մայիս 2011, 45):</p>
---	---

- Ինչո՞ւ էք կարծում, որ որոշ ամուրի անդամներ կարող են հուսալքված զգալ, երբ նրանք խորհեն այն վարդապետության շուրջ, որ «տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր գավակների հավերժական ճակատագրի համար»: («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129):

Բացատրեք, որ չնայած ամուսնությունը և ընտանիքը կատարելատիպն է, Եկեղեցու շատ չափահաս ամուրիներ համոզված չեն, թե արդյոք նրանք երբևէ կամուսնանան: Նրանք, ովքեր ամուսնալուծված կամ այրիացած են, մտածում են՝ արդյոք կրկին կամուսնանան:

Բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոմ Զրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչ է արել Փրկիչը հավերժական օրհնությունները հնարավոր դարձնելու նրանց համար, ովքեր չունեն ամուսնության և ընտանիքի օրհնությունները.



«Ամուսնության և ընտանիքի վերաբերյալ հիմնական ճշմարտությունները հայտարարելը չի նշանակում անտեսել կամ նթերագնահատել նրանց գոհաբերություններն ու հաջողությունները, ում համար կատարելությունը ներկայիս իրականությունը չէ: Ձեզանից ոմանք զրկված են ամուսնության օրհնությունից մի քանի պատճառներով, ներառյալ՝ կենսունակ հեռանկարների բացակայությունը, համասեռամոլությունը, ֆիզիկական կամ հոգեկան խանգարումներ ունենալը կամ պարզապես ձախողման վախը, որ տվյալ պահին առնվազն խամրեցնում է հավատքը: Կամ գուցե դուք ամուսնացել եք, բայց այդ ամուսնությանը վերջ է դրվել, և դուք թողնված եք մենակ հասցնելու այն, ինչը երկուսով միասին հագիվ էիք կարողանում անել: Ձեզանից ոմանք, ովքեր ամուսնացած են, չեն կարող երեխաներ ունենալ, չնայած անհաղթահարելի ցանկությանը և աղերսալի աղոթքներին:

«... Մենք վստահաբար վկայում ենք, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը նախատեսել է և, ի վերջո, կփոխհատուցի բոլոր զրկանքները և կորուստները նրանց համար, ովքեր դառնում են դեպի Նա: Ոչ ոք կանխատեսված չէ, որ ստանա ավելի քիչ, քան այն ամենը, ինչ Հայրն ունի իր զավակների համար» («Ինչո՞ւ ամուսնություն, ինչո՞ւ ընտանիք», *Ensign* կամ *Լիսինուս*, մայիս 2015, 52):

- Ի՞նչ վարդապետություն է Երեց Քրիստոֆերսոնն ուսուցանում այն մասին, թե ով կստանա Աստծո մեծագույն օրհնությունները: (Գրատախտակին գրեք հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր է դարձնում մեզանից յուրաքանչյուրիս համար վերջում ստանալ մեր Երկնային Հոր բոլոր խոստացած օրհնությունները:**)
- Ի՞նչ պետք է անի անձնավորությունը՝ ձեռք բերելու այս վարդապետությունում նկարագրված հույսը:

Ցուցադրեք Նախագահ Սպենսեր Վ. Բիմբալի (1895–1985) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Մենք խոստանում ենք ձեզ, որ որքանով հավերժությանն է վերաբերում, ոչ մի հոգի չի զրկվի հարուստ և բարձր ու հավերժական օրհնություններից որևէ մեկից, որն այդ մարդը չի կարողացել ստանալ, որ Աստված երբեք չի թերանում Իր խոստումներում, և որ ամեն արդարակյաց մարդ կստանա ի վերջո բոլորը, ինչ այդ անձնավորությունն իրավունք ունի և որից նա չի զրկվել իր սեփական մեղքի պատճառով» («Սելեստիալ ամուսնության կարևորությունը», *Ensign*, Oct. 1979, 5):

Չնայած ամուսնության և ընտանիքի օրհնությունները երբեմն հետաձգվում են, դրանք երբեք չեն մերժվում նրանց, ովքեր արդարաբար պահում են իրենց ուխտերն Աստծո հետ:

Խնդրեք ուսանողներին մտածել Աբրահամի և Սառայի օրինակների մասին, ովքեր ստացան խոստումներ Աստծուց իրենց ընտանիքի վերաբերյալ, որն ուշացվեց կամ չիրագործվեց իրենց մահկանացու կյանքի ընթացքում (տես Ծննդոց ԺԳ.14–17, ԺԵ.4–7, ԺԷ.1–8, 15–16): Հիշեցրեք ուսանողներին, որ Աբրահամի և Սառայի նման մեր հավատքը

երբեմն կատուզվի խոստումներով, որոնք հետաձգվում են կամ չեն կատարվում մահկանացու կյանքում:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Եբրայեցիս ԺԱ.1,6 մինչ դասարանը փնտրում է *հավատքի* սահմանումը:

- Ի՞նչ են ուսուցանում այս հատվածները հավատքի իմաստի մասին: (Հիշեցրեք ուսանողներին նայել հատված 1, ծանոթագրություն ք, որը նշում է, որ *նյութը* կարող է նաև նշանակել *համոզվածություն*, *հիմք* կամ *հիմունքներ*: Հիշեք օգնել ուսանողներին զարգացնել սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության հմտություններ, դասի ժամանակ դիմելով ուսումնասիրության միջոցներին:)
- Ի՞նչ է նշանակում «ապացույց այն բաների, որոնք անտեսանելի են» արտահայտությունը: (Հավատքը համոզվածություն է կամ վկայություն անտեսանելի իրողությունների վերաբերյալ: Այս համոզվածությունը հուսացած բաների և անտեսանելի բաների համար գալիս է, երբ մենք գործում ենք՝ հիմնվելով և հնազանդվելով ավետարանի սկզբունքներին, հատակապես, երբ դժվար է այդպես անել: Հավատքը հնազանդ գործողությունն է, որն առաջացնում է վկայության հոգևոր պարզեր: Դա Տիրոջը բավականաչափ հավատալն է ու վստահելը՝ հնազանդվելու Նրան առանց առաջինը տեսնելու վերջնական արդյունքը:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Եբրայեցիս ԺԱ.8–13, 16-ր մինչ դասարանի մնացած մասը փնտրում է, թե ինչպես Աբրահամը և Սառան հավատք գործադրեցին դժվարին հանգամանքների ժամանակ: Առաջարկեք դասարանին, որ գուցե ընդգծեն այն բաներն ու արտահայտությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես Աբրահամը և Սառան հավատք գործադրեցին:

- Հատված 13-ն ասում է, որ չնայած Աբրահամը, Սառան և շատ ուրիշները մահացան առանց «ստանալու խոստումները», նրանք «հեռուանց» տեսան խոստումներն և հավատք ունեցան Աստծո ունակության հանդեպ՝ կատարելու այդ խոստումները: Ինչպե՞ս կարող է այս հնադարյան Սրբերի օրինակը օգնել ժամանակակից Սրբերին, ում հավատքը մարտահրավերի է ենթարկվում, որովհետև նրանք չեն ստանում խոստացված օրհնությունները մահկանացու կյանքի ընթացքում: (Մենք բոլորս պետք է սովորենք հավատք գործադրելու անհրաժեշտությունը և հնազանդվենք Տիրոջ պատվիրաններին, նույնիսկ, երբ մեր հուսացած օրհնությունները թվում է չեն գալիս, երբ մենք ցանկանում ենք դրանք:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ այս հնադարյան Սրբերն ապրեցին որպես «օտարներ եւ պանդուխտներ երկրումը»: (Նրանք գիտեին, որ մահկանացու կյանքը ժամանակավոր էր և որ այս աշխարհը իրենց մշտական տունը չէր:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«Որոշ օրհնություններ գալիս են շուտով, որոշը գալիս են ուշ, իսկ որոշը չեն գալիս, քանի դեռ երկնքում չենք, բայց նրանց համար, ովքեր ընդունում են Հիսուս Քրիստոսի ավետարանը, *դրանք գալիս են*: Այդ մասին ես հաստատում եմ անձնապես» («An High Priest of Good Things to Come,» *Ensign*, Nov. 1999, 38):

- Ինչպե՞ս կարող է իմանալը, որ ոչ մի օրհնություն չի մերժվի հավատարիմներին, օգնել Եկեղեցու անդամներին, ովքեր տխրություն և հուսահատություն են զգում, որովհետև նրանք ամուսնացած չեն, կամ երեխաներ չունեն:
- Կարո՞ղ եք հիշել ինչ-որ ժամանակ, երբ հուսալքված եք զգացել, բայց ընտրել եք գործել հավատքով և ամեն դեպքում առաջ շարժվել ձեր կյանքում:

Եթե ժամանակը ներում է, կիսվեք Երեց Դավիթի Հ. Օուքսի հետևյալ խորհրդով.



«Եթե դուք ուղղակի ժամանակի եք սպասում ամուսնական հեռանկարի համար, դադարեք սպասելը: Դուք գուցե երբեք հնարավորություն չունենաք հարմար ամուսնության համար այս կյանքում, այսպիսով դադարեք սպասել և սկսեք շարժվել: Պատրաստվեք կյանքի համար, նույնիսկ միայնակ կյանքի, կրթությամբ, փորձառությամբ և ծրագրելով: Մի սպասեք երջանկության, որը կնետեն ձեզ վրա: Փնտրեք այն ծառայությամբ և սովորելով: Ստեղծեք կյանք ձեզ համար: Եվ վստահեք Տիրոջը» («Dating versus Hanging Out,» *Ensign*, June 2006, 14):

Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են անել՝ մեծացնելու իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոս և վստահել Նրա ունակությամբ՝ առաջ բերելու խոստացված օրհնությունների իրականացումը:

## Ուսանողի ընթերցարան

- Ա Կորնթացիս ԺԲ.12–20, 25–27, Եբրայեցիս ԺԱ.1, 6, 8–13, 16:
- Գորդոն Բ. Հինքլի, «Զրույց չափահաս ամուրիների հետ», *Ensign*, մար. 1997, 58–63:

# Գործադրել հավատք ընտանեկան դժվարին հանգամանքներում

## Նախաբան

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթում նշվում է, որ «անաշխատունակությունը, մահը կամ այլ [ընտանեկան] հանգամանքներ կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգ տանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են

ապավինել նաև մերձավորների օգնությանը» (*Ensign* կամ *Լիսինա*, նոյ. 2010, 129): Երբ դժվարին հանգամանքներ են ծագում, Հիտուա Քրիստոսի ավետարանը հեռանկար է տալիս և ուժ՝ կատարելու անհրաժեշտ փոփոխություններ:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դեյվիդ Ա. Բեդնար, «Քավությունը և մահկանացու կյանքի ճանապարհորդությունը», *Ensign*, ապր. 2012, 40–47:
- «Տունն ամրացնելը. հանգամանքներին հարմարվելը», *Ensign*, Dec. 2005, 34–35:

## Ուսուցման առաջարկներ

### 1 Նեփի 16.34-39, 17.1-4

#### Հարմարվելը ընտանեկան դժվարին հանգամանքներին

Սկսեք դասը՝ բացատրելով, որ Եկեղեցու ղեկավարներն ընդհանրապես ուսուցանում են մեզ, թե ինչպես հասնել և պահպանել կատարելատիպը՝ ներառյալ կատարյալ ամուսնությունն ու ընտանիքը: Սակայն որոշ դեպքերում, կյանքի հանգամանքները խանգարում են մեզ հասնելու այդ կատարելատիպին: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը.



«Վերականգնված ավետարանի միջոցով մենք սովորում ենք, որ կա *կատարյալ ընտանիք*: Այն ընտանիք է բաղկացած արդար Մելքիսեդեկյան Քահանություն կրողից, արդարակայաց կնոջից, ով կնքված է նրա հետ և երեխաներից, ովքեր ծնվել են ուխտի մեջ կամ կնքվել նրանց հետ: Տանը մոր հետ սիրո և ծառայության միջավայրում, ծնողներն ուսուցանում են իրենց երեխաներին, օրինակի և պատվիրանի միջոցով, Տիրոջ ուղիները և Նրա ճշմարտությունները: Նրանք կատարում են իրենց աստվածայնորեն նշանակված դերերը, որոնք նշված են ընտանիքի վերաբերյալ հայտարարությունում: Նրանց երեխաները հասունանում են՝ ապրելով ուսմունքներով, որոնք սերմանվել են ծննդից սկսած: Նրանք զարգացնում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են հնազանդությունը, ազնվությունը,



Աստժո հանդեպ սերը և Նրա սուրբ ծրագրի հանդեպ հավատքը» (“First Things First,” *Ensign*, May 2001, 7):

- Որո՞նք են մի քանի իրադարձությունները կամ հանգամանքները, որոնք կարող են խանգարել մեզ, առնվազն որոշ ժամանակով, կատարյալ ընտանեկան իրավիճակի հասնելու: (Պատասխանները կարող են ներառել հետևյալը՝ մահը, հաշմանդամությունը, ամուսնալուծությունը, երեխա ունենալու անկարողությունը, աշխատանքի կորուստը և բազմաթիվ աշխատանքներ կատարող ծնողները:)
- Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել ընտանիքի վերաբերյալ հայտարարության յոթերորդ պարբերությունը, փնտրելով, թե ինչ է Երկնային Հայրն ակնկալում մեզանից անել, եթե մեր ընտանեկան իրավիճակը կատարյալ չէ.

«Անաշխատունակությունը, մահը կամ այլ իրավիճակները կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգսանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են ապավինել նաև մերձավորների օգնությանը» («Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129):

Ապա կարդացեք հետևյալ միտքը և խնդրեք ուսանողներին փնտրել փոփոխությունները, որոնց կարիքը ընտանիքները կարող է ունենան, երբ մարտահրավերներ բարձրանան.

«Կատարյալ աշխարհում բոլոր չափահասները երջանիկ ամուսնություն կունենային, բոլոր ամուսնությունները կօրհնվեին երեխաներով և ընտանիքի բոլոր անդամները առողջ կլինեին, հնազանդ և միմյանց աջակցող: Բայց կյանքը հազվադեպ է կատարյալ լինում: Յուրաքանչյուր անձնավորություն ճաշակում է ձախորդություն, և ոչ մի ընտանիքի մահկանացու ճամփորդություն մշտապես փորձանքներից զերծ չէ: . . .

Հիվանդությունը, հաշմանդամությունը, մահը, ամուսնալուծությունը և այլ կործանարար գործոններ կարող են ստեղծել մարտահրավերներ: Այդպիսի իրավիճակներում դերերի «փոփոխությունը» կարող է անհրաժեշտ լինել: Այդպիսի իրավիճակներում հայրը կարող է կարիք ունենալ վերցնել լրացուցիչ տնային և դաստիարակության պարտականություններ, կամ մայրը, ով լիաժամկետ տնային տնտեսուհի է եղել, կարող է կարիք ունենալ մտնելու աշխատանքի: Նույնիսկ երեխաները կարող է կարիք ունենան ստանձնելու նոր պարտականություններ:

Երբ տազնապահարույց իրադարձություններ են տեղի ունենում, մոտիկ ազգականները նույնպես պետք է աջակցեն: Աջակցության շրջանակները կարող են ընդգրկել ֆինանսական օգնություն ցույց տալուց մինչև ժամանակ նվիրաբերելը երեխաներին խնամելու, առօրյա գործեր կատարելու, հիվանդ կամ հաշմանդամ ընտանիքի անդամին հոգ տանելու համար: Մոտիկ ազգականի ներգրավվածության աստիճանը կարող է կախված լինել իրավիճակից և ընտանիքի կարիքներից» («Ընտանիքը գորացնելը. հանգամանքներին հարմարվելը», *Ensign*, Dec. 2005, 34–35):

- Որո՞նք են որոշ փոփոխությունները, որոնք ընտանիքները կամ անհատները կարող է կարիք ունենան անելու, երբ մարտահրավերներ են ծագում:
- Որո՞նք են այն բաները, որոնք դուք տեսել եք ընտանիքներին կամ ամհատներին անելիս՝ հարմարվելու և ուժեղ մնալու համար, երբ հանդիպում եք դժվարության կամ կործանիչ հանգամանքների:
- Ե՞րբ եք տեսել, որ մոտիկ ազգականներն օգնություն են առաջարկել և աջակցություն, երբ կարիք է եղել:

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարգալ Յոթանասունից Երեց Մերիլ Ջ. Բեյթմանի հետևյալ խոսքերը. Հորդորեք դասարանին ուշադիր լսել, թե ինչ է Երեց Բեյթմանն ասում, որ կարող է օգնել ընտանիքներին, ովքեր դժվար հանգամանքների են հանդիպում:



«Փորձություններն ու տառապանքները շատ ձևեր են ընդունում՝ սիրելի մարդու մահ, ամուսնություն, որը սպասածից տարբեր է, ամուսնություն չկա, ամուսնալուծություն, հաշմանդամությամբ ծնված երեխա, երեխաներ չկան, աշխատանքի կորուստ, ծնողներ, ովքեր սխալներ են անում, կամակոր որդի կամ դուստր, վատ առողջական վիճակ: Ցուցակն անվերջ է: Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս Իր ծրագրում հուսահատություն, ցավ, տառապանք

և մահ: ....

Փրկության ծրագիրը, նախամահկանացու կյանքը, երկրային կյանքը և մահից հետո կյանքը հասկանալը տալիս է հեռանկար» ("Living a Christ-Centered Life," *Ensign*, Jan. 1999, 13):

- Ինչպե՞ս կարող է Աստծո ծրագրի ըմբռնումը նախապատրաստել ընտանիքներին մարտահրավերներին դիմակայելու համար: (Գրատախտակյին գրեք հետևյալ սկզբունքը. **Տիրոջ ծրագրի ըմբռնումը թույլ է տալիս ընտանիքներին երկրային դժվարություններին դիմակայել աճող հավատքով և հավերժական հեռանկարով:**)
- Ինչպե՞ս կարող է ավետարանի հեռանկարը տալ մեզ ավելի մեծ քաջություն կատարելու հարմարեցումներ կամ նույնիսկ ստանձնել նոր պարտականություններ մեր ընտանիքներում, երբ անհրաժեշտ է:


Հարցրեք ուսանողներին, թե արդյոք կարող են ընտանիքների օրինակներ մտաբերել սուրբ գրություններից, որոնք դիմակայեցին մարտահրավերների և ստացան աստվածային օգնություն՝ հաղթահարելու կամ դիմանալու այդ մարտահրավերներին: Հիշեցրեք ուսանողներին Լեքիի և Իսմայելի ընտանիքների մասին, ովքեր ճանապարհորդեցին ամայի անապատում, Երուսաղեմը թողնելուց հետո: Հրավիրեք ուսանողներին մտածել որոշ մարտահրավերների մասին, որոնց դիմակայել էին այս ընտանիքները իրենց ճանապարհորդության ընթացքում դեպի խոստացված երկիր, իսկ հետո կիսվել իրենց մտքերով դասարանի հետ:

Մի քանի ուսանողի հրավիրեք հերթով բարձրաձայն կարգալ 1 Նեփի 16.34–39 և 17.1–4- հատվածները: Դասարանին խնդրեք լսել այն օրինակները, թե ինչպես Լեքիի և Իսմայելի ընտանիքի տարբեր

անդամները արձագանքեցին մարտահրավերներին, որոնց իրենք դիմակայում էին:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Լեթիի և Իսմայելի ընտանիքների որոշ անդամներ կարողացան հաստատակամորեն դիմանալ հավատքով և վստահել Աստծուն, մինչդեռ մյուսները տրտնջում էին իրենց դժվարությունների պատճառով:
- Ի՞նչ ուղիներ եք տեսել, որոնցով ավետարանի գիտելիքը և վկայությունն օրհնել են ընտանիքներին, ովքեր դժվարություններ են տարել:

Երբ հուշվեք Հոգու կողմից և ձեր ուսանողների կարիքներից, դուք կարող եք կիսվել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերով.



«Երկրի վրա ձեր կյանքի ողջ ընթացքում, ջանասիրաբար որոնեք կատարել այս կյանքի հիմնական նպատակները *կատարյալ ընտանիքի միջոցով*: Չնայած դուք գուցե դեռ հասած չլինեք այդ կատարելատիպին, արեք այն ամենը, ինչ կարող եք, հնազանդության և հավատքի միջոցով Տիրոջ հանդեպ, հետևողականորեն մոտենալու դրան, որքան կարող եք: Թող ոչինչ չշեղի ձեզ այդ նպատակից: ... Երբեք մի արեք որևէ բան, որը ձեզ անարժան կդարձնի դրան: Եթե դուք կորցրել եք հավերժական ամուսնության հեռանկարը, վերագտեք այն: Եթե ձեր երազանքը համբերություն է պահանջում, ցույց տվեք այն» (“First Things First,” 7):

**Առակաց 4.5–6, Մատթեոս ԺԱ.28–30, Մոսիա 24.8–16, Վարդապետություն և Ուխտեր 121.7–8**

*Երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոսը, Նա զորացնում է մեզ*


Ուսանողներին հիշեցրեք Մորմոնի Գրքի պատմության մասին, որի ժամանակ Ալման և նրա ժողովուրդը փախան Թագավոր Նոյի բանակից և հիմնադրեցին մի արդարակյաց քաղաք: Որոշ ժամանակ խաղաղ պայմաններում ապրելուց հետո, Ալման և իր ժողովուրդը հայտնաբերվեցին Լամանացիների բանակի կողմից, ովքեր նրանց գերության մատնեցին: Երբ Ալման և նրա ժողովուրդը հավատք գործադրեցին և համբերություն, Տերը թեթևացրեց նրանց բեռները և ի վերջո հրաշքով ազատեց նրանց գերությունից:

Մի քանի ուսանողի խնդրեք հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 24.8–16 հատվածները: Խնդրեք դասարանին պատկերացնել, թե ինչպես այդ նշված դժվարությունները կարող էին ազդել Ալմայի և նրա ժողովրդի ընտանիքների վրա: (Նշեք, որ պատկերացնելը սուրբգրքյան ուսումնասիրության հմտություն է, որի օգնությամբ սուրբգրքյան պատմությունը դառնում է ավելի վառ և իրական: ) Խնդրեք դասարանի անդամներին նաև փնտրել, թե ինչ էին Ալման և նրա ժողովուրդն անում՝ իրենց դժվարությունները հաղթահարելու համար:

- Այս հատվածների իրադարձությունները պատկերացնելուց հետո, ձեր կարծիքով, ինչպե՞ս ընտանիքների վրա ազդեցին իրենց հանգամանքները:

- Ի՞նչ արեց Ալմայի ժողովուրդը Տիրոջ օգնությունը ձեռք բերելու համար: (Չնայած ուսանողները կարող է նշեն մի քանի կարևոր սկզբունքներ, շեշտեք հետևյալը. **Երբ մենք հավատք ենք գործադրում և համբերություն մեր չարչարանքների մեջ և կանչում առ Տերը, Նա կարող է գորացնել մեզ՝ մեր բեռները ավելի թեթևությամբ կրելու համար:**)
- Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս Տերը գորացրեց նրանց, որպեսզի նրանք ավելի թեթևությամբ կրեին իրենց բեռները:


Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը, որտեղ նա խոսում է Ալմայի ժողովրդի պատմության մասին.



«Ի՞նչ փոխվեց այս միջադեպում: Բեռը չէր, որ փոխվեց, մարտահրավերները և հալածանքի դժվարություններն անմիջապես չհեռացվեցին ժողովրդից: Բայց Ալման և Նրա հետևորդները գորացվեցին, և Նրանք մեծացած կարողությունն ու ուժը դարձրեցին բեռները, որոնք Նրանք կրում էին, ավելի թեթև: Այս լավ մարդիկ լիազորված էին Զավության միջոցով *գործելու* որպես գործակալներ և ազդեցություն *գործադրելու* իրենց հանգամանքներում: Եվ «Տիրոջ ուժով» Ալման և իր ժողովուրդը այդ ժամանակ առաջնորդվեցին դեպի ապահովություն՝ Ջարահենմլայի երկրում» («Զավությունը և մահկանացու կյանքի ճանապարհորդությունը», *Ensign*, ապրիլ 2012, 44):

- Ինչո՞ւ է կարևոր իմանալը, որ Տերը միշտ չէ, որ հեռացնում է անհատների և ընտանիքների բեռները, վերացնում մեր մարտահրավերները, կամ հնարավորություն տալիս մեզ ունենալու իդեալական հանգամանքներ:
- Ի՞նչ ուղիներով կարող է մեր գիտելիքը Հիսուս Քրիստոսի և Նրա Զավության մասին գորացնել մեզ, գործելու հավատքով, երբ մենք առճակատում ենք ընտանեկան դժվարին հանգամանքների:

Օգնելու համար պատասխանել այս հարցին, ցուցադրեք Յոթանասունից Երեց Սթիվեն Բ. Սնոուի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն:



«Զավության հանդեպ մեր հույսը արտոնում է մեզ հավերժական հեռանկարով: Այդպիսի հեռանկարը թույլ է տալիս մեզ նայել այստեղից այն կողմ և այսուհետ՝ դեպի հավերժությունների խոստումը» («Չույս», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 54):

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները: Հանձնարարեք ուսանողներին ուսումնասիրել այս հատվածները և գտնել խոստումները, որոնք տրվել են նրանց, ովքեր հավատարմորեն են համբերում փորձություններին.

Առակաց Գ.5–6

Մատթեոս ԺԱ. 28–30

Վարդապետություն և Ուխտեր 121.7-8

- Ինչպե՞ս կարող է այս խոստումները հիշելը օգնել ընտանիքներին, ուլքեր մարտահրավերների են առճակատում:

Երբ եզրափակեք, հրավիրեք ուսանողներին մտածել մի ժամանակի մասին, երբ, չնայած դժվարություններին, իրենց ընտանիքները գորացված են զգացել Աստծո հանդեպ հավատքով, կամ օրհնվել են, Հիսուս Քրիստոսի ավետարանի իրենց գիտելիքի շնորհիվ: Հրավիրեք մի քանի ուսանողների, ուլքեր տպավորված են զգում անելու դա՛ կիսվել դասարանի հետ համապատասխան փորձառություններով: Քաջալերեք ուսանողներին գրել իրենց վկայություններն անձնական օրագրում, թե ինչպե՞ս Աստված կարող է օրհնել և գորացնել ընտանիքները:

## Ուսանողի ընթերցարան

- Առակաց Գ.5–6, Մատթեոս ԺԱ.28–30, 1 Նեփի 16.34–39, 17.1–4, Մոսիա 24.8–16, Վարդապետություն և Ուխտեր 121.7–8:
- «Տունն ամրացնելը. հանգամանքներին հարմարվելը», *Ensign*, դեկ. 2005, 34–35:

# Հաշվետու լինել Աստժո առաջ

## Նախաբան

Մարգարեներն ու առաքյալները նախագուշացրել են, որ «ովքեր խախտում են մաքրաբարոյության ուխտերը, ովքեր բռնություն են գործադրում իրենց կողակցի կամ երեխաների հանդեպ, կամ թերանում ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստժո առջև» («Ընտանիք՝ հայտարարություն

աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129): Այս դասը հետագոտում է, թե ինչպես Աստժո օրենքի այս լուրջ խախտումները կբերեն հետևանքներ այս և հաջորդ կյանքում: Այն նաև շեշտում է, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը տալիս է հույս և բժշկություն ապաշխարողին:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հրեշտակների լեզուն» *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2007, 16-18:
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Բժշկել բռնության ավերիչ հետևանքները» *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2008, 40-43:

## Ուսուցման առաջարկներ

### Մատթեոս ԺԸ.1-6, Վարդապետություն և Ուխտեր 42.22–25, 93.39–44

*Մաքրաբարոյության, բռնության, ուխտերը խախտելն ու ընտանեկան պարտականությունների կատարման ճախողումը*

Հիշեցրեք ուսանողներին, որ նախորդ դասերի ժամանակ նրանք սովորեցին ընտանեկան կարևոր պարտականությունների մասին, ներառյալ հետևյալը. (1) ամուսիններն ու կանայք պետք է սիրեն և հոգ տանեն միմյանց, (2) երեխաներին պետք է դաստիարակվեն սիրո և արդարակեցության մեջ և (3) ծնողները պետք է ապահովեն իրենց ընտանիքի կարիքները:

- Ի՞նչ կպատահեր մի ընտանիքում, եթե կողակիցներն ու ծնողները անտեսեին այս պարտականությունները:

Որպեսզի օգնեք ուսանողներին հայտնաբերել, թե ինչ են ասել ժամանակակից մարգարեները ընտանեկան պարտականությունները կատարելու կարևորության վերաբերյալ, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ պարբերություն 8-ը «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթից: Շեշտեք հետևյալ սկզբունքը. «**Այն անձինք, ովքեր խախտում են մաքրաբարոյության ուխտերը, ովքեր բռնություն են գործադրում իրենց կողակցի կամ երեխաների հանդեպ, կամ թերանում ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստժո առջև:**

- Ի՞նչ է նշանակում, որ անձինք, ովքեր կատարում են այս արարքները, հաշվետու կլինեն Աստժո առջև: (Դատաստանի Օրը մենք կկանգնենք

Աստծո առջև և հաշվետու կլինենք Նրան այն մեղքերի համար, որոնցից չենք ապաշխարել, տես Հայտնություն Ի.11–15, 2 Նեփի 9.15–16:)

Կարդացեք Յոթանասունից Երեց Դենիս Բ. Նյունզվանդերի հետևյալ խոսքերը.



«Մեր հաշվետու լինելն Աստծո առջև, որպես մեր Հայր և Արարիչ, ավետարանի ամենահիմնական դասերից մեկն է» («Աճելու ուղի», *Ensign*, Dec. 1999, 15):

- Ինչպե՞ս է մեր գործերի համար Աստծո առջև հաշվետու լինելու սկզբունքը օգնում մեզ հոգեպես աճել:

Հետևյալ բառերը գրեք գրատախտակին որպես վերնագրեր երեք այունակների համար.

<i>Մաքրաբարոյության ուխտերի խախտում</i>	<i>Կողակցի կամ երեխայի հանդեպ բռնություն</i>	<i>Ընտանեկան պարտականությունների կատարման թերացում</i>
---	--	--

Դասարանը բաժանեք երեք խմբի: Դասարանի մեկ երրորդին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 42.22–25, մյուս մեկ երրորդին կարդալ Մատթեոս ԺԸ.1-6, իսկ վերջին մեկ երրորդին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 93.39–44: Խնդրեք ուսանողներին համապատասխանեցնել իրենց սուրբ գրության հատվածները գրատախտակի վրայի ճիշտ վերնագրին: Հանձնարարեք ուսանողներին գտնել այն խոսքերը և արտահայտությունները, որոնք ուսուցանում են այս օրինազանցությունների լուրջ բնույթի մասին: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել իրենց սովորածը: (Ուսանողների պատասխաններից հետո, գրատախտակին գրեք սուրբ գրությունների հղումները համապատասխան վերնագրի ներքո:)

- Ո՞ր բառերն ու արտահայտություններն են այս հատվածներում ուսուցանում այդ օրինազանցությունների լուրջ բնույթի մասին:

Մտածեք մատնանշել գրատախտակի վրայի յուրաքանչյուր վերնագիրը և հարցնել հետևյալ հարցերը կապված յուրաքանչյուր օրինազանցության հետ: Երբ ուսանողները խոսում են, գրեք նրանց պատասխանները յուրաքանչյուր վերնագրի ներքո:


- Որո՞նք են որոշ դիրքորոշումները կամ վարվելակերպը, որոնք եթե չվերահսկվեն, կտանեն մարդուն գործելու այս օրինազանցությունը: (Օրինակ, պատասխանները կողակցի կամ երեխայի հանդեպ բռնության օրինազանցության համար կարող են ներառել՝ անհամբերությունը ուրիշների հանդեպ, միտումը քննադատելու ուրիշներին և տղամարդկանց կամ կանանց վերաբերյալ սխալ կարծրատիպերի հավատալը:)
- Ի՞նչ խորհուրդ կտայիք որևէ մեկին, ով դրսևորում է այդպիսի դիրքորոշումներ կամ վարվելակերպ:
- Ինչպե՞ս կարող է Եկեղեցու անդամը հաղթահարել այս դիրքորոշումները կամ վարվելակերպը: (Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, օգնեք նրանց հասկանալ, որ երբ մենք կիրառում ենք ավետարանի սկզբունքները, ինչպես օրինակ՝ ապաշխարությունը, Քրիստոսանման ծառայությունը, կարեկցանքը, համբերությունը և ներումը, մենք կարող ենք մեզ վրա հրավիրել Քավության բարենպաստ գործությունը:)

**Բ Կորնթացիս Ե.17-21**

*Հուսացեք ապաշխարության, ներման և փոխվելու համար*

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ապահովում է միջոցներ անձանց և ընտանիքների համար հաջողության հասնել և վայելել կյանքի առատություն: Սակայն, մենք բոլորս էլ կատարում ենք վատ ընտրություններ, և դրանցից մի քանիսը կարող են ունենալ հեռու գնացող ազդեցություններ մեր և ուրիշների վրա: Բարեբախտաբար կա հույս:

Բացատրեք, որ որոշ Եկեղեցու անդամներ գոհ են դարձվում ուրիշների կողմից, ինչպես օրինակ անհավատարիմ կողակցի կամ բռնացող կողակցի կամ ծնողի, և զոհերը մտահոգվում են, թե ինչ կարող են իրենց անել իրենց հանգամանքներում: Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը.



«Եթե դուք բռնության եք ենթարկվել, սատանան կձգտի համոզել ձեզ, որ լուծում չկա: Սակայն նա բացարձակապես գիտի, որ կա: Սատանան գիտի, որ բժշկությունը գալիս է Իր զավակների հանդեպ Երկնային Հոր անսասան սիրո միջոցով: Նա նաև հասկանում է, որ բժշկության զորությունը ներհատուկ է Հիսուս Քրիստոսի Քավությանը: Ուստի նրա ռազմավարությունն է անել հնարավոր ամեն ինչ՝ բաժանելու ձեզ ձեր Հորից և Նրա Որդուց: Մի թույլ տվեք, որ սատանան համոզի ձեզ, որ դուք օգնության սահմաններից դուրս եք» («Բժշկել բռնության ավերիչ հետևանքները» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 41):

- Ինչո՞ւ է սատանան փորձում համոզել նրանց, ովքեր բռնության են ենթարկվել, հավատալ, որ չկա լուծում իրենց խնդիրներին:
- Որո՞նք են հետևանքները, երբ մարդիկ հավատում են, որ չկա հույս կամ լուծում իրենց խնդիրներին:



Կիսավեք Երեց Ռիչարդ Գ. Մքոթի հետևյալ վկայությամբ և խորհրդով:



«Ես վկայում եմ, որ գիտեմ լուրջ բռնության զոհերի, ովքեր Քավոյթյան գործության միջոցով հաջող ճանապարհորդություն են կատարել դեպի լիակատար բժշկումը: Իր սեփական մտահոգությունները Քավոյթյան բժշկող գործության հանդեպ հավատքի միջոցով լուծելուց հետո, մի երիտասարդ կին, ով դաժանորեն բռնության էր ենթարկվել իր հոր կողմից, խնդրեց ևս մեկ հարցազրույց ինձ հետ: Նա վերադարձավ մի մեծահասակ գույզի հետ: Ես զգացի, որ նա շատ խորապես էր սիրում այդ երկուսին: Նրա դեմքը ճառագում էր երջանկությունից: Նա սկսեց. «Երեց Մքոթ, սա իմ հայրն է: Ես սիրում եմ նրան: Նա մտահոգված է որոշ բաների վերաբերյալ, որոնք պատահել են իմ վաղ մանկության ընթացքում: Դրանք այլևս խնդիր չեն ինձ համար: Կարո՞ղ եք օգնել նրան: Փրկչի բժշկելու կարողության ինչպիսի՞ հզոր հաստատում : Նա այլևս չէր տառապում բռնության հետևանքներից, որովհետև նա ուներ համապատասխան ընթրում Նրա Քավոյթյան վերաբերյալ, բավականաչափ հավատք և հնազանդ էր Նրա օրենքին: Երբ դուք գիտակցաբար ուսումնասիրում եք Քավոյթյունը և գործադրում ձեր հավատքը, որ Հիսուս Քրիստոսը ունի զորություն բժշկելու, դուք կարող եք ստանալ նույն օրհնյալ սփոփանքը: ...

«Բժշկումը կարող է սկսվել մի խորամիտ եպիսկոպոսի կամ ցցի նախագահի կամ մի իմաստուն մասնագետ խորհրդատուի կողմից: Եթե դուք ունենայիք ջարդված ոտք, դուք չէիք որոշի այն ինքներդ ուղղել: Լուրջ բռնության դեպքում ևս կարող է օգտակար լինել մասնագիտական օգնությունը» («Բժշկել բռնության ավերիչ հետևանքները» 40–42):

- Ինչպե՞ս կարող էր Երեց Մքոթի ոգեշնչված խորհուրդն օգնել ինչ-որ մեկին, ով բռնություն էր տարել:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բոյդ Զ. Փաքերի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Հիսուս Քրիստոսի ողորմածությունը և շնորհը չեն սահմանափակվում միայն նրանց համար, ովքեր մեղքեր են գործում, այլ տարածվում է հավերժական խաղաղության խոստումով բոլոր նրանց վրա, ովքեր կընդունեն և կհետևեն Նրան և Նրա ուսմունքները: Նրա ողորմածությունը հզոր բուժիչ ուժ է, նույնիսկ, անմեղ վիրավորների համար» («Մեր հույսի պատճառը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 7):

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Քավոյթյունը հույս և բժշկություն տալիս: (Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքը. **Բոլոր նրանք, ովքեր հետևում են Հիսուս Քրիստոսին և նրա ուսմունքներին, կարող են ձեռք բերել բժշկություն և հավերժական խաղաղություն Նրա ողորմության և շնորհի միջոցով:**)

Ուսուցանելու համար ուսանողներին, թե ինչպես Հիսուս Քրիստոսի Քավոյթյունը կարող է օգնել անձանց, ովքեր բռնություն են գործադրում ուրիշների հանդեպ կամ վնասում նրանց այլ ուղիներով, միասին կարդացեք Բ Կորնթացիս Ե.17–21 հատվածները որպես դասարան:

- Ի՞նչ է նշանակում դառնալ «նոր ստեղծուած» Քրիստոսում: (Հնարավոր պատասխանները ներառում են այն գաղափարը, որ ի պատասխան

մեր ջանասեր հնագանդության Տիրոջ պատվիրաններին, Նա օրհնում է մեզ Հոգու պարզկներով, որոնք աստվածային հատկանիշներ են: Այս պարզկները առաջացնում են արմատական փոփոխություններ մեր մեջ, և մենք դառնում ենք նոր արարածներ, ովքեր ավելի նման են Աստծուն:)

- Համաձայն հատված 21-ի, ինչն է այս տեղի ունենում: (Հիսուսը բացարձակապես առանց մեղքի էր, բայց Նա վերցրեց Իր վրա մեր մեղքերը, որպեսզի մեր ապաշխարության պայմանով, մենք դառնանք արդարակյաց Նրա միջոցով: Նա դարձավ փոխարինող գոհաբերություն մեզ համար: Երբ մենք ապաշխարում ենք և ձգտում հետևել Նրա օրինակին, մենք կարող ենք մեզ վրա հրավիրել Նրա գործությունը՝ օգնելու մեզ դառնալ նոր արարածներ:)
- Ո՞րն է իմաստը *հաշտեցում* բառի հատված 18-ում: («Հաշտեցումը մարդուն ազատելու գործընթացն է իր մեղքի և հոգևոր խավարի վիճակից և նրա վերականգնումը ներդաշնակության և միասնության վիճակի Աստվածության հետ: Դրա միջոցով Աստված և մարդն այլևս թշնամիներ չեն» (Bruce R. McConkie, *Doctrinal New Testament Commentary*, 3 vols. [1965–73], 2:422):

Ուսանողներին հարցրեք, թե նրանք արդյոք գիտեն որևէ անձանց, ովքեր զգացել են հույս և բժշկություն, որը հնարավոր է դարձել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Հրավիրեք մի քանի ուսանողներին՝ դասարանի հետ կիսվել իրենց օրինակներով, եթե նրանք հարմար զգան և եթե օրինակները խիստ անձնական չեն:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերով.



«Ես չգիտեմ, թե ով է այս վիթխարի լսարանում այսօր կարիք զգում լսելու ներման ուղերձը, որը ներհատուկ է [այգու մշակների առակում, տես Մատթեոս Ի.1–15], բայց որքան էլ կարծում եք, որ ուշացել եք, որքան էլ կարծում եք, որ բաց եք թողել հնարավորությունները, որքան էլ որ շատ սխալներ գործած լինեք՝ ըստ ձեզ, կամ կարծում եք, թե տաղանդներ չունեք, կամ տևից և ընտանիքից ու Աստծուց հեռացած եք զգում, ես վկայում եմ, որ դուք *չեք* հեռացել աստվածային սիրո հասանելիությունից: Ձեզ համար հնարավոր չէ սուզվել ավելի խորը, քան Քրիստոսի Քավության անսահման լույսն և շողում: ...

Այսպիսով, եթե դուք ուխտեր եք կապել, պահեք դրանք: Եթե դուք չեք կապել դրանք, կապեք: Եթե դուք կապել եք և խախտել դրանք, ապաշխարեք և նորոգեք դրանք: *Երբեք* խիստ ուշ չէ, քանի դեռ այգու Տերն ասում է, կա ժամանակ: Խնդրում եմ լսեք Սուրբ Հոգու հուշումը, որն ասում է ձեզ հենց հիմա, այս իսկ պահին, որ դուք պետք է ընդունեք Տեր Հիսուս Քրիստոսի քավող պարզևր և վայելեք Նրա գործին ընկերակցելը» («Այգու մշակները» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2012, 33):

Հրավիրեք ուսանողներին արձանագրել, թե ինչ է Սուրբ Հոգին հաստատել իրենց այսօր:

## Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս ԺԸ.1–6, Բ Կորնթացիս Ե.17–21, Մոսիա 4.30, Ալմա Ե.15–22, 12.14, Վարդապետություն և Ուխտեր 42.22–25, 93.39–44:
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Բժշկել բռնության ավերիչ հետևանքները» *Ensign* կամ *Liahonana*, մայիս 2008, 40-43:

# Մարգարեական Նախագգուշացումներ ընտանիքի վերաբերյալ

## Նախաբան

Ժամանակակից մարգարեները նախագգուշացրել են, որ «ընտանիքի քայքայումը անհատների, համայնքների և ազգերի վրա կբերեն այն աղետները, որոնք կանխագուշակվել են հնադարյան և ժամանակակից մարգարեների կողմից» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129): Այս

դասը շեշտում է, որ ընտանիքները պաշտպանված կլինեն, եթե նրանք հնազանդ լինեն Աստծո պատվիրաններին: Հոգևոր գործություն է խոստացված՝ օգնելու արդարակյաց ծնողներին՝ մեծացնելու իրենց երեխաներին վերջին օրերում:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռասսել Մ. Նելսոն, «Հավատք և ընտանիքներ» *Ensign*, մարտ 2007, 36-41.
- Քվենթին Լ. Քուք, «Երեմիայի ողբերը. «Զգուշացեք գերությունից», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2013, 88-91:
- Բոննի Լ. Օսկարսոն, «Ընտանիքի վերաբերյալ հայտարարության պաշտպանները», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2015, 14-17:

## Ուսուցման առաջարկներ

### Բ Տիմոթեոս Գ.1-7, 13

*Հետևանքները կգան, երբ ընտանիքն անտեսված է*


Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրավիճակների կամ տեղանքների օրինակներով, որտեղ մարդ կարող է ակնկալել դրված նախագգուշացումներ տեսնել (օրինակները կարող են ներառել տրանսպորտային նշաններ, բժշկական շշեր կամ վտանգավոր նյութերով տարրաներ:)

- Որո՞նք են այս նախագգուշացումներն անտեսելու որոշ հնարավոր հետևանքները:
- Որո՞նք են որոշ նախագգուշացումները, որոնք տվել են մարգարեները աշխարհիկ և հոգևոր վտանգների մասին, որոնք գոյություն ունեն մեր օրերում:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Բ Տիմոթեոս Գ.1-7 և 13 հատվածները, մինչ դասարանը կորոնի այն վտանգները, որոնց մասին Պողոս Առաքյալն է նախագգուշացրել, որ գոյություն կունենան վերջին օրերին:

- Վտանգներից որո՞նք եք դուք տեսել կամ որոնց մասին լսել, որ Պողոսը նկարագրում է:
- Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ այդ վտանգները անհատների, ամուսնությունների և ընտանիքների վրա:

Խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ հայտարարությունը: Հրավիրեք դասարանին լսել այն պատճառները, որոնց համար սատանան կենտրոնացած է ընտանիքները կործանելու վրա:



«Երջանկության հավերժական ծրագրի համար ընտանիքի կարևորության պատճառով՝ սատանան վիթխարի ջանքեր է գործադրում կործանելու ընտանիքի սրբությունը, նվազեցնելու տղամարդկանց և կանանց դերի կարևորությունը, խրախուսելու բարոյական անմաքրություն և մաքրաբարոյության սրբազան օրենքի խախտումներ, և հուսալքելու ծնողներին՝ իրենց բարձրագույն առաջնահերթությունը երեխաներ ծնելու և նրանց դաստիարակելու վրա դնելիս:

Այնքան արմատական է փրկության ծրագրի համար ընտանեկան միավորը, որ Աստված հռչակել է մի Նախագուշացում, որ... ընտանիքի քայքայումը անհատների, համայնքների և ազգերի վրա կբերեն այն աղետները, որոնք կանխագուշակվել են հնադարյան և ժամանակակից մարգարեների կողմից» («Հավերժական ընտանիք», *Ensign*, Nov. 1996, 65):

Շեշտեք հետևյալ սկզբունքները. **«Ընտանիքի քայքայումը անհատների, համայնքների և ազգերի վրա կբերեն այն աղետները, որոնք կանխագուշակվել են հնադարյան և ժամանակակից մարգարեների կողմից»** («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 129): Հիշեցրեք ուսանողներին, որ այս նախագուշացումը գալիս է ընտանիքի վերաբերյալ հայտարարությունից:

Գրատախտակին գրեք հետևյալը.

Ընտանիքի քայքայումը	Հետևանքներ
---------------------	------------

Հրավիրեք ուսանողներին մտածել այն ապացույցների մասին, որ իրենք տեսնում են, որ «ընտանիքի քայքայումը» տեղի է ունենում ողջ աշխարհով մեկ: (Մա կարող է ներառել հետևյալը՝ ամուսնալուծությունների, արհեստական վիժեցումների և բռնությունների աճը, ավելի քիչ ամուսնություններ և ավելի քիչ երեխաներ են ծնվում ամուսնացած զույգերից, և ավելի շատ աններդաշնակ ընտանիքներ:.) Խնդրեք նրանց թվել ապացույցները գրատախտակին «Ընտանիքի քայքայում» վերնագրի տակ:

Հրավիրեք ուսանողներին մտածել անհատական և հասարակական հետևանքների օրինակների մասին, որոնք կարող են գալ, որպես արդյունք ընտանիքի քայքայումից: (Մրանք կարող են ներառել հետևյալը՝

Հոգու կորուստը, վիշտ և դժբախտություն, հանցագործության մակարդակի բարձրացում, դեռահասների հանցագործություն և խաղաղության ու կայունության կորուստ հասարակության մեջ:) Խնդրեք նրանց գրի առնել օրինակներ գրատախտակի վրա «Հետևանքներ» վերնագրի տակ:

Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող է ընտանիքի վերաբերյալ հայտարարության վարդապետություններին և սկզբունքներին հարելը օգնել անհատներին, ընտանիքներին, համայնքներին և ազգերին խուսափել այս հետևանքներից:

**1 Նեփի 14.14–17, 22.16–17, Վարդապետություն և Ուխտեր 97.22–28**

*Կա հույս ընտանիքների համար*

Բացատրեք ուսանողներին, որ չնայած ամբարշտությունը գերակշռում է այսօր աշխարհում, դեռ խիստ ուշ չէ ամրացնել ընտանիքները: Նրանք կարող են տարբերություն մտցնել իրենց իսկ ընտանիքներում, ծխերում կամ ճյուղերում և համայնքներում: Վկայեք, որ կա հույս անհատների և ընտանիքների համար, ովքեր հնազանդվում են Տիրոջ պատվիրաններին:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 97.22–28-ը՝ փնտրելով այն բաները, որոնք մենք կարող ենք անել խուսափելու Տիրոջ վրեժխնդրությունից և հետևանքներից, որոնք գալիս են մեղքի պատճառով: (Պարզաբանեք, որ այս հատվածներում *Միմը* վերաբերում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն և նրա անդամներին:) Գուցե կամենաք առաջարկել, որ ուսանողները նշեն *եթե* բառն ամեն անգամ, երբ այն հանդիպի այս հատվածներում: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ պատճառ հետևանքային կամ եթե/այսպես դրույթները գտնելը սուրբ գրությունների ուսումնասիրության օգտակար հմտություն է:)

- Ինչպե՞ս կամփոփեիք այս հատվածները սկզբունքի մի պարզ դրույթով: (Ուսանողի պատասխանները պետք է արտացոլեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հնազանդ լինենք բոլոր պատվիրաններին, մենք կարող ենք ստանալ մեծ օրհնություններ և խուսափել Տիրոջ վրեժխնդրությունից:**)

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) հետևյալ մտքով.



«Մենք չենք ասում, որ բոլոր Սրբերը կխնայվեն և կփրկվեն գալիք օրվա ամայացումից: Բայց մենք ասում ենք՝ չկա խոստում ապահովության և չկա խոստում անվտանգության, բացի նրանց համար, ովքեր սիրում են Տիրոջը և ովքեր ձգտում են անել այն ամենը, ինչ Նա պատվիրում է: ...

Եվ այսպիսով մենք բարձրացնում ենք նախազգուշացնող ձայն և ասում. Զգույշ եղեք, նախապատրաստվեք, աչալուրջ եղեք և եղեք պատրաստ: Չկա

անվտանգություն որևէ գործընթացում, բացի հնազանդության և համապատասխանության և արդարակեցության գործընթացից:

«Քանի որ այսպե՛ս է ասել Տերը. Տիրոջ խարազանը պիտի անցնի գիշերով ու ցերեկով, և դրա մասին լուրը պիտի նեղի բոլոր մարդկանց. այո, այն չի կանգնեցվի, մինչև որ Տերը չգա. ...»

Այնուամենայնիվ, Սիրը խոյս կտա, եթե հետևի, որ կատարի բոլոր բաները, որոնք պատվիրել են նրան» [Վևու 97.23, 25] («Stand Independent above All Other Creatures,» *Ensign*, May 1979, 93–94):

- Ինչպե՞ս կարող են այս խոսքերն օգնել դրդել ընտանիքին հնազանդ լինել Տիրոջ պատվիրաններին:

Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփիին տեսավ մի քանի տեսիլքներ վերջին օրերի վերաբերյալ: Այդ տեսիլքներում նա տեսավ, որ արդարները պաշտպանված կլինեն:

Խնդրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 14.14–17 և 22.16–17, փնտրելով ուղիներ, որոնցով Սրբերը պաշտպանված կլինեն: (*Եղբայրացիք*. Այս հատվածները լուսաբանում են ընդհանուր սուրբ գրքերի թեման, որ հնազանդությունը բերում է պաշտպանության Տիրոջ խոստումը: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը շեշտել է սուրբ գրքերի այդպիսի «կապերի, օրինակների և թեմաների» հետազոտման կարևորությունը» [«Կենդանի ջրի աղբյուր» (Եկեղեցու Կրթական համակարգի հավաքույթ երիտասարդ չափահասների համար, փետր. 4, 2007), 3, lds.org/media-library]: Այս թեման կամ օրինակը հատկապես տարածված է Մորմոնի Գրքում:)

- Ինչպե՞ս են Նեփիի գրվածքները ձեզ հույս տալիս:

Կարդացեք Յոթանասունից Երեց Բրյուս Դ. Փորթերի հետևյալ խոսքերը: Հրավիրեք ուսանողներին լսել օրհնությունները, որոնք կտրվեն հավատարիմ ծնողներին վերջին օրերում.



«Անկախ նրանից, թե ինչ է պահված ապագայում, Աստված կարգել է, որ ժամանակների լրության տևտեսությունում, Եկեղեցու անդամ ծնողներին կտրվի գործություն՝ օգնելու իրենց երեխաներին փրկվել իրենց շրջապատող խավարից: Քանի որ հայրերի և մայրերի սրտերը կդառնան դեպի իրենց երեխաները, իսկ երեխաների սրտերը դեպի իրենց ծնողները, մենք ի վերջո ականատես կլինենք մի սերնդի բարձրացմանը, որը մաքրված և պատրաստված կլինի՝ հանդիպելու Փրկչին Իր գալստյան ժամանակ: Աստուծո թագավորության հաղթանակը վերջին օրերում հաղթանակ կլինի ոչ միայն Եկեղեցու համար որպես կազմակերպություն, այլ տասնյակ հազարավոր անհատական ընտանիքների համար, ովքեր հավատքով հաղթել են աշխարհին» («Պաշտպանել ընտանիքը անհանգիստ աշխարհում», *Ensign*, հունիս 2011, 18):

- Ի՞նչ օրհնություն է խոստացված ծնողներին այս տնտեսությունում, ովքեր ձգտում են մեծացնել իրենց երեխաներին արդարակեցության մեջ:

- Ինչպե՞ս եք ակնհաստես եղել, երբ Տերն ուժ է տվել ծնողներին իրենց ջանքերում՝ զորացնելու և պաշտպանելու իրենց երեխաներին աշխարհի խավարից:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչ ազդեցություններ և ուժեր են գործում կործանելու նրանց՝ իսկ ընտանիքները և ինչպես է սատանան փորձում խանգարել նրանց՝ աշխատել իրենց սեփական ընտանիքներն ունենալու ուղղությամբ՝ ապագայում: Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչ իրենք կարող են անել՝ ձեռք բերելու Տիրոջ օգնությունը ամրացնելու իրենց և պաշտպանելու իրենց ընտանիքները:

### **Ուսանողի ընթերցարան**

- Բ Տիմոթեոս Գ.1-7, 13, 1 Նեփի 14.14-17, 22.16-17, Վարդապետություն և Ուխտեր 97.22-28:
- Բոննի L. Օսկարսոն, «Ընտանիքի վերաբերյալ հայտարարության պաշտպաններ», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2015, 14-17:



# Աջակցել ընտանիքին որպես հասարակության հիմնական միավոր

## Նախաբան

Ժամանակակից մարգարեները հայտարարել են. «Մենք դիմում ենք պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի պայմաններ ստեղծեն ևսփոփոխումներ անցկացնեն ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու

ամրապնդմանը» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129): Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ, թե ինչպես նրանք կարող են հետևել և պաշտպանել այս մարգարեական խորհուրդը:

## Ընթերցանության օժանդակ նյութեր

- Թոմաս Ս. Մոնսոն, «Զորացիր և քաջ եղիր», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2014, 66-69:
- Դալլին Հ. Օուքս, «Հավասարակշռելով ճշմարտությունն ու հանդուրժողականությունը», *Ensign*, Feb. 2013, 24–31:
- Լ. Թոմ Փերի, «Ինչո՞ւ են կարևոր ամուսնությունն ու ընտանիքն ամբողջ աշխարհում», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2015, 39–42:
- «Մամլո ասուլիսի սղագրությունը կրոնական ազատության և անխտրականության վերաբերյալ» (հունվար 27, 2015), [mormonnewsroom.org/article/publicstatement-on-religious-freedom-and-nondiscrimination](http://mormonnewsroom.org/article/publicstatement-on-religious-freedom-and-nondiscrimination):

## Ուսուցման առաջարկներ

### Ալմա 43.9, 30, 45, 48

*Մեր պարտականությունն է պաշտպանել ընտանիքի վարդապետությունը և բարոյական հիմքերը*

Նախապատրաստեք ուսանողներին այս դասի համար՝ նրանց ասելով, որ այն կենտրոնանում է մեր ընտանիքը պաշտպանելու մեր պատասխանատվության վրա: Կիսվեք Յոթանասունից Երեց Բրյուս Դ. Փորթերի հետևյալ մտքով.



Եկեղեցին փոքրիկ հաստատություն է համեմատած աշխարհի հետ ընդհանրապես: Այնուամենայնիվ, Վերջին Օրերի Սրբերը, որպես ժողովուրդ չպետք է թերազնահատենք մեր օրինակի ուժը, ոչ էլ՝ հասարակական կարծիքը համոզելու մեր կարողությունը, բացասական միտումների հակազդելը, կամ որոնող հոգիներին՝ դարպասից ներս մտնելու և Տիրոջ ընտրած ուղով քայլելու հրավերը: Մենք պարտավոր ենք տրամադրենք մեր լավագույն ջանքերը, համագործակցելով համամիտ մարդկանց և հաստատությունների հետ՝ պաշտպանելու ընտանիքը և բարձրացնելու նախագուշացնող և հրավիրող ձայն դեպի աշխարհը» («Պաշտպանել ընտանիքն անհանգիստ աշխարհում», *Ensign*, June 2011, 18):

- Ինչպիսի՞ն են ձեր մտքերը այսօրվա աշխարհում ընտանիքը պաշտպանելու Վերջին Օրերի Սրբերի պարտականության վերաբերյալ:

Պատմեք ուսանողներին, որ տարբեր ժամանակներում Նեփիացիներն իրենց կրոնական ազատությունները և ընտանեկան արժեքները սպառնալիքի տակ էին համարում Լամանացիների կողմից: Ուսումնասիրելով նրանց փորձառությունները, մենք կարող ենք սովորել սկզբունքներ, որոնք կարող ենք նմանեցնել մեր օրերին: (Մուրբ գրությունները մեզ վերագրելը սուրբ գրություններն ուսումնասիրելու հմտություն է, որը դուք կարող եք շեշտել այս դասի ժամանակ:) Բացատրեք, որ Նեփիացիների փորձառություններից մեկը արձանագրված է Ավա 43-ում:

Գրեք *Սրբա 43.9, 30, 45, 48* գրատախտակին և խնդրեք ուսանողներին որոնել խոսքեր և արտահայտություններ, որոնք կօգնեն մեզ հասկանալ ընտանեկան արժեքներն ու կրոնական ազատությունները պաշտպանելու կարևորությունը այսօրվա աշխարհում: Առաջարկեք ուսանողներին, որ նրանք նշեն այս խոսքերն ու արտահայտությունները:

- Ո՞ր խոսքերն ու արտահայտություններն են ցույց տալիս մեր ընտանեկան արժեքներն ու կրոնական ազատությունները պաշտպանելու կարևորությունը: Ի՞նչ սկզբունք սովորեցիք մեր ընտանեկան արժեքներն ու կրոնական ազատությունները պաշտպանելու կարևորության մասին: (Պատասխանները պետք է ընդգրկեն հետևյալ սկզբունքը. **Մենք սրբազան պարտականություն ունենք պաշտպանելու և աջակցելու մեր ընտանեկան արժեքներն ու կրոնական ազատությունները:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր Եկեղեցու անդամների համար աջակցել և պաշտպանել ընտանիքը իրենց համայնքներում:
- Ինչպե՞ս կարող ենք աջակցել և պաշտպանել ընտանիքը օգտագործելով զանգվածային լրատվամիջոցները:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերիի (1922-2015) հետևյալ խոսքերը.



«Մենք ուզում ենք, որ մեր ձայնը լավի բոլոր կեղծիքի և երկրնտրանքային կենսակերպերի դեմ, որոնք ուզում են դուրս մղել ընտանեկան կազմակերպությունը, որն Աստված Ինքն է հիմնադրել: Մենք նաև ուզում ենք, որ մեր ձայնը լավի հաստատելիս այն ուրախությունն ու կայացումը, որն ավանդական ընտանիքներն են բերում: Մենք պետք է շարունակենք արտահայտել մեր կարծիքը ողջ աշխարհով մեկ՝ հռչակելով, թե ինչու ամուսնությունն ու ընտանիքը այդքան կարևոր են, ինչու ամուսնությունն ու ընտանիքն իրոք իսկապես նշանակություն ունեն և թե ինչո՞ւ այն միշտ նշանակություն կունենա» («Ինչո՞ւ են կարևոր ամուսնությունն ու ընտանիքն ամբողջ աշխարհում», *Ensign* կամ *L'haahnaa*, մայիս 2015, 42):

- Համաձայն Երեց Փերիի, ինչ պետք է մենք հայտարարենք ընտանիքի մասին:
- Ի՞նչ եք դուք նկատել ուրիշներին անելիս՝ կանգնելու և հաստատելու ընտանիքի կարևորությունը կամ պաշտպանելու ընտանիքը հարձակումներից: (Նշեք, որ ընտանիքը պաշտպանելը ներառում է ուժեղ ընտանիք ստեղծելը, ինչպես նաև հասարակավ ընտանիքը պաշտպանելը անհրաժեշտության դեպքում:)

Կիսավեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի կողմից պատմած հետևյալ փորձառությամբ.



«Վերջերս, ես գրուցում էի Միացյալ Նահանգներից դափնի խմբին պատկանող մի աղջկա հետ: Ես մեջբերում կանեմ նրա նամակից.  
«Այս անցած տարի իմ ընկերներից ոմանք Facebook-ում սկսեցին դնել իրենց դիրքորոշումը ամուսնության վերաբերյալ: Շատերը կողմնակից էին համասեռ ամուսնությանը, և մի քանի ՎՕՍ երիտասարդներ արտահայտել էին իրենց «հավանությունը» իրենց հայտարարություններում: Ես ոչ մի մեկնաբանություն չարեցի:

Որոշեցի ավանդական ամուսնության մասին իմ համոզմունքը հայտնել խելամիտ ձևով:

Իմ նկարին ես ավելացրեցի հետևյալ միտքը. «Ես հավատում եմ տղամարդու և կնոջ միջև ամուսնությանը»: Գրեթե վայրկենապես ես սկսեցի ստանալ ուղերձներ: «Դուք եսասեր եք»: «Դուք դատապարտող եք»: Մեկը համեմատեց ինձ ստրկատիրոջ հետ: Եվ ես ստացա այս նամակը իմ լավ ընկերոջից, ով Եկեղեցու ուժեղ անդամ է. «Դու պետք է ժամանակի հետ քայլես: Իրավիճակները փոխվում են և դու նույնպես պետք է փոխվես»:

«Ես չսկսեցի վիճաբանել,- ասաց նա,- բայց և չհանեցի իմ հայտարարությունը»:

Նա եզրափակում է. «Երբեմն, ինչպես Նախագահ Մոնսոնն է ասում, «Դու ստիպված ես մենակ կանգնել»: Չուսով եմ, որպես երիտասարդներ, մենք կկանգնենք միասին՝ լինելով հավատարիմ Աստծուն և Նրա ապրող մարգարեների ուսմունքներին» («Չոգևոր պատահողմեր», *Ensign* կամ *L'haahnaa*, մայիս 2014, 19–20):

- Ի՞նչ փորձառություններ եք ունեցել ընտանիքին աջակցելիս և պաշտպանելիս:
- Ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել ձեր խոսքերը կամ գործողությունները ուրիշների վրա:

Վկայեք, որ մենք կարող ենք ունենալ դրական ազդեցություն մեր համայնքների և հետագայում մեր Երկնային Հոր ծրագրի նպատակների վրա, երբ մենք աջակցում ենք և պաշտպանում միջոցառումները, որոնք ամրացնում են ընտանիքները:


**Ալմա 46.10–13, 16, 48.7–13**

*Պաշտպանել ընտանիքը Աստծո օգնությամբ և հարգանքով հանդես ուրիշները*

Պատմեք ուսանողներին, որ Ալմայի 46 և 48 գլուխներում Նեփիացիները կրկին Լամանացիների կողմից սպառնալիքի տակ էին: Դասարանը բաժանեք երկու մասի: Դասարանի մի կեսին հանձնարարեք կարդալ Ալմա 46.10–13, 16 հատվածները, իսկ մյուս կեսին ուսումնասիրել Ալմա 48.7–13-ը: Խնդրեք ուսանողներին նշել, թե ինչպես մենք կարող ենք հետևել զորավար Մորոնիի օրինակին՝ համապատասխան ուղիներով աջակցելով միջոցառումներին, որոնք պահպանում են և ամրացնում ընտանիքը: Բավարար ժամանակ անց օգնեք ուսանողներին նմանեցնել այս հատվածները մեր օրերին՝ ուղղելով հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող ենք Ամադիկիայի և նրա հետևորդների ջանքերը նմանեցնել նրանց ջանքերին, ովքեր այսօր հարձակվում են ընտանիքի վրա:
- Ի՞նչ կարող ենք սովորել Մորոնի Զորապետի օրինակից: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Երբ մենք որոնում ենք Աստծո օգնությունը և ձգտում բոլոր մեր սեփական ռեսուրսներն օգտագործել, մենք կստանանք իմաստություն և ուժ՝ պաշտպանելու մեր ընտանիքները, մեր կրոնը և մեր ազատությունները:**)
- Որո՞նք են այն պատշաճ ուղիները, որոնցով մենք կարող ենք աջակցել միջոցառումներին՝ ամրացնելու և պաշտպանելու ընտանիքները:

Նկատի ունեցեք օգտագործել Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) և Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ մտքերը՝ հավելում կատարելու նախորդ հարցի քննարկմանը.



«Եկեք ներգրավվենք համայնքի բարի գործերում: Կարող են լինել իրավիճակներ, երբ լուրջ բարոյական հարցեր են ներքաշված լինում, մենք չենք կարող հենվել սկզբունքի հիմքերի վրա: Բայց այդպիսի դեպքերում մենք կարող ենք քաղաքավարի չհամաձայնվել առանց անդուր լինելու: Մենք կարող ենք ընդունել նրանց անկեղծությունը, ում դիրքորոշումները մենք չենք կարող ընդունել: Մենք կարող ենք խոսել ավելի շուտ սկզբունքների մասին, քան անձնավորությունների» (Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները [1997], 131).



«Երբ հավատացյալներն առաջ են քաշում իրենց դիրքորոշումները հասարակական հրապարկում, նրանք պետք է միշտ համբերատար լինեն նրանց կարծիքների և դիրքորոշումների հետ, ովքեր չեն կիսում իրենց համոզմունքները: Հավատացյալները պետք է միշտ խոսեն սիրով և դրսևորեն համբերություն, ըմբռնում և կարեկցանք իրենց հակառակորդների հանդեպ: Քրիստոնյա հավատացյալները իրենց մերձավորներին սիրելու (տես Դուկաս Ժ.27) և ներելու հրամանի ներքո են (տես Մատթեոս ԺԸ.21–35): Նրանք պետք է նաև հիշեն Փրկչի ուսմունքը, «օրհնելու նրանց, ովքեր անիծում են [իրենց], և բարի անեն նրանց, ովքեր ատում են [իրենց] և աղոթք անեն նրանց համար, ովքեր չարչարում են [իրենց] և հալածում [իրենց]» (Մատթեոս Ե.44)» (Դալլին Հ. Օուքս, «Հավասարակշռելով ճշմարտությունն ու հանդուրժողականությունը», *Ensign*, Feb. 2013, 30–31):

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս դուք կարող եք կիրառել այն սկզբունքները, որոնք ուսուցանվել են Նախագահ Հինքլիի և Երեց Օուքսի կողմից:

Շեշտեք հետևյալ սկզբունքը. Երբ մենք առաջ ենք քաշում միջոցներ՝ պաշտպանելու և ամրացնելու ընտանիքը, մենք պետք է հարգանք ցուցաբերենք մյուսների հանդեպ և համբերատարություն նրանց կարծիքների հանդեպ:

**Առաջ քաշել միջոցներ, որոնք ամրացնում են ընտանիքը**

Ցուցադրեք հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

Մենք դիմում ենք պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի պայմաններ ստեղծեն ամիջոցառումներ անցկացնեն ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու ամրակնքմանը» («Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2010, 129):

Ասեք ուսանողներին, որ 2015թ. հունվարին, Եկեղեցու ղեկավարները կազմակերպեցին պաշտոնական մամլո ասուլիս, որի ժամանակ նրանք կոչ արեցին կառավարության պաշտոնյաներին սահմանել օրենքներ, որոնք կպաշտպանեն կրոնական ազատությունները և կպահպանեն ընտանիքի սրբությունը: Բացատրեք, որ չնայած Եկեղեցու ղեկավարները առանձնապես դիմում էին կրոնական ազատությունների պաշտպանության համար այս հայտարարության մեջ, նրանց խոսքերը վերաբերում են նաև ընտանեկան արժեքների պաշտպանությանը: Շատ կրոնական ազատություններ ուղղակիորեն կապված են ընտանիքի հետ, ինչպես օրինակ ամուսնության սրբությունը:

Ուսանողների հետ կիսվեք Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ մտքով, որպես ամփոփագիր այն բաների, որոնք ներկայացվեցին այդ մամլո ասուլիսում.



«Եկեղեցին պնդում է հետևյալ սկզբունքները, որոնք հիմնված են Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա և արդար են բոլորի համար, այդ թվում նաև հավատացյալ մարդկանց համար.

1. Մենք պահանջում ենք յուրաքանչյուրի համար Աստծո կողմից և սահմանադրությամբ տրված՝ համաձայն իրենց հավատքի, իրենց սեփական խղճի թելադրանքով , առանց ուրիշների առողջությանը կամ անվտանգությանը վնասելու ապրելու իրավունքը:
2. Մենք գիտակցում ենք, որ նույն խղճի ազատությունը պետք է տրվի տղամարդկանց և կանանց ամենուրեք, հետևելու կրոնական հավատքին իրենց ընտրությամբ, կամ չհետևել ոչ մի հավատքի, եթե նրանք այդպես են նախընտրում:
3. Մենք հավատում ենք, որ օրենքները պետք է ձևավորվեն բոլոր մարդկանց ազատությունը հավասարապես պաշտպանելու համաձայն՝ հարգելով նրանց, ովքեր տարբեր արժեքներ են ընդունում:
4. Մենք մերժում ենք ցանկացած տեսակի հալածանքը և վրեժխնդրությունը, ներառյալ հալածանքը հիմնված ազգային, էթնիկական պատկանելության, կրոնական համոզմունքների, տնտեսական հանգամանքների, սեռի տարբերության կամ սեռական կողմնորոշման վրա» (Դավիթ Հ. Օուքս, «Մամլո ասուլիսի սղագրությունը կրոնական ազատության և անխտրականության վերաբերյալ» [հունվար 27, 2015], [mormonnewsroom.org/article/publicstatement-on-religious-freedom-and-nondiscrimination](http://mormonnewsroom.org/article/publicstatement-on-religious-freedom-and-nondiscrimination)):

- Ի՞նչ սովորեցիք այս հայտարարությունից, որ կարող է օգնել ձեզ աջակցել միջոցառումներին, որոնք ամրացնում են ընտանիքը որպես հասարակության հիմնական միավոր: (Որպես այս քննարկման մաս, շեշտեք, որ երեխաներ մեծացնելը Տիրոջ ուղիներով, ուրիշ ընտանիքներին օգնելը, Եկեղեցու կոչումները մեծարելը և մեր համայնքները ամրացնելը, բոլորը միջոցառումներ են, որոնք աջակցում են ընտանիքին: )

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են անել աջակցելու միջոցառումների, որոնք ամրացնում են և պաշտպանում ընտանիքը:

### Ուսանողի ընթերցարան

- Ալմա 43.9, 30, 45, 48, 46.11–16, 48.9–13:
- Դավիթ Հ. Օուքս, «Հավասարակշռելով ճշմարտությունն ու հանդուրժողականությունը», *Ensign*, Feb. 2013, 24–31:
- Լ. Թոմ Փերի, «Ինչո՞ւ են կարևոր ամուսնությունն ու ընտանիքն ամբողջ աշխարհում», *Ensign* կամ *Liahonliu*, մայիս 2015, 39–42:





ՍԵՄԻՆԱՐԻԱՅԵՐ և  
ԿՐՈՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՅԵՐ

---

ՀԻՍՈՒՍ  
ՔՐԻՍՏՈՍԻ  
ՎԵՐՁԻՆ ԳՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ  
ԵԿԵՂԵՑԻ

